



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՎԱԾՈՒ)


THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA  
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ  
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

13

ՄԵՄՐՈՂ ԱՐԸ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԵԱՐ

86



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

86

ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2012

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Հ 282

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան, պ.գ.դ. Է. Լ. Դանիելյան, պ.գ.դ. Է. Ա. Կոստանոյան, պ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան, պ.գ.թ. Ա. Վ. Մաղայան, պ.գ.թ. Հ. Կ. Սուքիասյան:

**Հ 282 Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշներ/. - Եր.: Պատմ. ինստ., 2012. - 338 էջ:**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի հերթական 13-րդ հատորում զետեղված աշխատությունները սկզբնաղբյուրների, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Ժողովածուում զետեղված են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 33-րդ նստաշրջանի (6-7 հոկտեմբերի, 2012 թ.) զեկուցումները: Նստաշրջանը նվիրված էր ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի 85-ամյակին:

Նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941(479.25)

ISBN 978-99941-73-73-0

ԳՄԴ 63.3 (2Հ)

© Պատմության ինստիտուտ, 2012

ՎԼԱԴԻՄԻՐ  
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

85

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇՆԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
XXXIII ԳԻՏԱԿԱՆ ՆՏԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

2012 թ. հոկտեմբերի 6-7-ը Կոտայքի մարզի Արզակյան գյուղում գտնվող ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական՝ XXXIII գիտական նստաշրջանը: Այն նվիրված էր ժամանակակից նշանավոր պատմաբան, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կլադիմիր Բախշչի Բարխուդարյանի ծննդյան 85-ամյակին:

Հոկտեմբերի 6-ին բացելով գիտական նստաշրջանը՝ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյանը նախ ինստիտուտի աշխատակիվների անունից շնորհավորեց Վ. Բարխուդարյանին, այնուհետև ներկայացրեց գիտական նստաշրջանի նպատակն ու խնդիրները: Վ. Բարխուդարյանի կյանքին և գիտական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը՝ անդրադառնալով անվանի պատմաբանի անցած ուսանելի կյանքի ուղուն և գիտական վաստակին: Նա կարևորեց նաև երիտասարդ կադրերի պատրաստման գործում Վ. Բարխուդարյանի ունեցած ներդրումը:

Ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը հատուկ անդրադարձ կատարեց Վ. Բարխուդարյանի գիտակազմակերպչական գործունեությանը: ՀՀ ԳԱԱ համակարգում զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ՝ հորեյարը վաստակել է գործընկերների սերն ու հարգանքը՝ հայրենանվեր գիտնականի և ազնիվ քաղաքացու հրաշալի օրինակ հանդիսանալով երիտասարդների համար:

Իրենց ելույթներում հոբեյարին բարեմաղթանքներ ուղղեցին Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Էդուարդ Դանիելյանը, Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ., ՊԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, պ.գ.դ. Էմմա Կոստանոյանը, Վ. Բարխուդարյանի նախկին ասպիրանտ, պ.գ.թ. Հովհաննես Ալեքսանյանը և ուրիշներ, ընթերցվեց նաև ՀՀ ՊԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի ողջույնի ուղերձը:

Իր ելույթում ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը շնորհակալական խոսքեր ուղղեց ՀՀ ՊԱԱ նախագահությանը, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքին և Պատմության ինստիտուտի տնօրինությանը՝ երախտագիտություն հայտնելով իր ծննդյան հոբեյանին նվիրված երիտասարդ գիտաշխատողների նստաշրջան կազմակերպելու համար: Այնուհետև նա ջերմ խոսքեր ուղղեց երիտասարդ պատմաբաններին և պատմեց հուշեր ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների առաջին նստաշրջանի վերաբերյալ:

Գիտական նստաշրջանի առաջին նիստում (նախագահող՝ Վ. Խաչատրյան) զեկուցումներով հանդես եկան ինստիտուտի հայցորդ Ալիսա Դումիկյանը («Հայաստանին տրված «Սոմխիթ» անվանման հարցի շուրջ (XIX դ. ֆրանսիական հայագիտության լույսի ներքո)»), հայցորդ Հրաչյա Փանոսյանը («Նախիջևանի վարչաքաղաքական դրությունը հնագույն ժամանակներից մինչև XV դարը»), Մատենադարանի աշխատակից Արմինե Մելքոնյանը («Դավիթ Անհաղթին վերագրվող երկերի վավերականության հարցի շուրջ»):

Նստաշրջանի երկրորդ նիստում (նախագահող՝ Պատմության ինստիտուտի գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյան), ելույթ ունեցան ինստիտուտի ԵԳԽ նախագահ, պ.գ.թ. Արտակ Մաղալյանը («Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատությունը»), հայցորդ Լիլիթ Քոսյանը

(«1890-ական թթ. հայկական կոտորածների արձագանքները «Մուրճ» պարբերականում»), հայցորդ Նարինե Երանոսյանը («Հայկական բարենորոգումների լուսաբանումը եգիպտական «Ալ-Աիրամ» օրաթերթում 1894–1896 թթ.»):

Երրորդ նիստում (նախագահող՝ Ա. Մաղալյան) ելույթ ունեցան ինստիտուտի աշխատակից Ռեզինա Գալուստյանը («Հայոց ցեղասպանության ընթացքում հայ մտավորականության ոչնչացումն ըստ գերմանական և ավստրոհունգարական հրատարակված փաստաթղթերի»), ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը («Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի սպառազինությունը») և հայցորդ Գագիկ Ժամհարյանը («Առօրեականության բովանդակությունն ու խնդիրները»):

Գիտաժողովի եզրափակիչ՝ չորրորդ նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-ին (նախագահող՝ Ա. Մելքոնյան): Նիստի ընթացքում ելույթ ունեցան պ.գ.թ. Համո Սուքիասյանը («Հայկական ԽՍՀ Շահումյանի շրջանը 1939–1958 թթ.»), հայցորդ Նարինե Հովսեփյանը («Խորհրդային Հայաստանի գյուղի առօրյան Հայրենական Մեծ պատերազմի սկզբնական շրջանում»), հայցորդ Տաթևիկ Մանուկյանը («Հայրենադարձների կեցությունն ու առօրյան Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տարիներին») և պ.գ.թ. Հովի. Ալեքսանյանը («Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում՝ ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի տվյալների»):

Գիտաժողովի վերջում ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները, նշելով որ գիտաժողովի լավագույն զեկուցումները կտպագրվեն ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի առաջիկա հատորում:

## ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

«*ԳԱԱ հայագիտության և հասարակական  
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար,  
«*ԳԱԱ ակադեմիկոս**

### ԱՎԱՂԵՄԻԿՈՍ Վ. Բ. ԲԱՐԻՍՈՒՂԱՐՅԱՆԻ ՇՆՆՂՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ակադեմիկոս Վլադիմիր Բարիսուղարյանը ժամանակակից հայագիտության, հատկապես պատմագիտության ականավոր դեմքերից է, վաստակաշատ գիտնական, որի ներդրած վիթխարի ավանդը գիտության զարգացման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, գիտակազմակերպական գործունեության ասպարեզներում արժանիորեն գնահատվել է. նա գիտության դոկտոր, պրոֆեսոր է, «*ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պետական ամենաբարձր պարգևների ասպետ: Գիտական անուրանալի վաստակի գնահատման անուղղակի դրսևորում է նաև իր գործընկերների, հայագետ և պատմաբան գիտնականների խոր հարգանքն ու պատկառանքը նրա անձի ու գործի նկատմամբ:*

Վերջերս հոբբեյարի հետ գիտական գործուղման էինք Ղոնի Ռոստով քաղաքում: Այդտեղ գործող Նոր Նախիջևան պատմական հայկական քաղաքին նվիրված թանգարանի տնօրենը ծնկաչոք, ձեռքը համբուրելով դիմավորեց «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» երկհատոր արժեքավոր մենագրության հեղինակին: Այդ տպավորիչ և հուզիչ տեսարանը Վ. Բ. Բարիսուղարյանի մեծ վաստակի և անհատականության գնահատման յուրօրինակ դրսևորում էր:

Ակադեմիկոս Վ. Բ. Բարիսուղարյանն իր ավելի քան 60-ամյա գիտամանկավարժական գործունեության 50 տարիների ըն-



թացքում վարել է զանազան գիտակազմակերպական պաշտոններ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական քարտուղարից մինչև ՀՀ ԳԱԱ փոխնախագահ: Իբրև գիտության կազմակերպչի՝ մշտապես նրան բնորոշ են եղել բարձր պատասխանատվությունը հանձնարարված աշխատանքի նկատմամբ, պարտաճանաչությունը, անսահման հոգատարությունը ենթակաների և իր բազմաթիվ սաների հանդեպ: Այսօր էլ նա իր վառ անհատականությամբ զարդարում է ակադեմիական գանազան միջոցառումներ, իմաստուն դատողություններով մասնակցում ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերին, գիտաժողովներին, պարտաճանաչությամբ կատարում ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդականի և էթիկայի հանձնաժողովի նախագահի պարտականությունները:

Ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը հայրենասեր քաղաքացի է, ինչը հատկապես ակնառու դրսևորվեց արցախյան շարժման առաջին տարիներին. նա մշտապես առաջին գծում էր թե՛ անհրաժեշտ գիտական մշակումների գործում, թե՛ քաղաքական միջոցառումներին ակտիվ մասնակցության առումով: Վերջին տարիներին, երբ արցախյան հիմնախնդրի լուծումը թևակոխել է բանակցային փուլ, դրան զուգահեռ կարևորվում է մեր պատմության և մշակույթի պաշտպանությունը օտարների ոտնձգություններից, նորից վաստակաշատ գիտնականը առաջին գծում է. նրա ակտիվ մասնակցությամբ և ղեկավարությամբ ծավալվում է քաղաքական հայագիտության զարգացումը թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանյան հայագիտական կենտրոններում:

Ջերմորեն շնորհավորելով ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանին ծննդյան 85-ամյակի առթիվ՝ մաղթում են նրան առողջություն, ստեղծագործական նոր նվաճումներ, երջանկություն իր օրինակելի և խաղաղ ընտանեկան կյանքում:

## ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒՂԱՐՅԱՆ

(Ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության  
65-ամյա հոբելյանների առթիվ)

Գիտության յուրաքանչյուր բնագավառում կան գործիչներ, ովքեր, ընտրելով իրենց մասնագիտությունը, գիտական գործունեության ողջ ընթացքում շարունակել են հավատարիմ մնալ իրենց կոչմանը, տասնամյակներ շարունակ նվիրվելով աշխատել են սիրված միևնույն հաստատությունում, ծանրակշիռ ներդրում ունեցել տվյալ ոլորտի զարգացման գործում և, դրանով իսկ, խոշոր ծառայություն մատուցել հայկական գիտությանը, հետևապես՝ հայրենիքին: Այդ առումով հաստատապես կարող ենք արձանագրել, որ այսօր այդպիսի ճանաչված գիտնականներից է ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 65 տարին բոլորած անվանի պատմաբան, «ՉԱՍ ակադեմիկոս Վլադիմիր Բախչիի Բարխուդարյանը:

Նա հայրենիքում և սփյուռքում վաղուց ճանաչում է ձեռք բերել որպես նշանավոր պատմաբան, լրջախոհ գիտնական, գիտության փորձառու կազմակերպիչ, ազնիվ քաղաքացի, մեր ժողովրդի ու հանրապետության հոգսերին մշտապես ականջալուր հայ մարդ, հայեցի նկարագիր ունեցող ընտանիքի հայր: Մեր հանրապետության քաղաքացիները քաջածանոթ են նրա գիտական աշխատություններին, արցախյան շարժման ծանր օրերին՝ քաղաքացիական արհիության վառ օրինակ հանդիսացող գործունեությանը, անկախ ժամանակի քաղաքական վայրիվերումներից՝ հատուկ մարդկային շիտակությանը, սեփա-

կան հավատամքին անդավաճան մնալու անսահման կարողությանը:

Խորհրդային տարիներին, երբ ժամանակի գաղափարական կապանքների պատճառով հայրենաբնակ գիտնականներն ի գորու չէին ձեռնամուխ լինել մեր ազգային թեմաների հետազոտությանը, Վլադիմիր Բարխուդարյանն իր գործարած աներևակայելի ջանքերի և ճկուն գործելակերպի շնորհիվ ճանապարհ էր հարթում հայրենական պատմության անաչառ ուսումնասիրության, ազգային գիտության զարգացման համար, հանգամանք, որը մասնավորապես դրսևորվեց հայ ժողովրդի պատմության ութհատորյակի ակադեմիական հրատարակության ժամանակ:

Հատկանշական է, որ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը շուրջ վեց ու կես տասնամյակների անդուլ հետազոտական աշխատանքի շնորհիվ հայ հասարակության դատին հանձնեց բազմաթիվ ծանրակշիռ հետազոտություններ հայ գաղթավայրերի, սփյուռքի, ազգային-սոցիալական շարժումների, միջնադարյան Հայաստանի և գիտաճանաչողական մեծ նշանակություն ունեցող այլ խնդիրների վերաբերյալ: Առանձնակի հիշատակության արժանի է նրա երկհատոր կոթողային աշխատանքը Նոր Նախիջևանի գաղութի մասին, որը յուրահատուկ նշանակություն ունեցավ արտերկրի հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության մեթոդաբանության մշակման հարցում:

Գիտական արդյունաշատ գործունեությանը զուգընթաց, երկար տարիներ զբաղեցնելով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրենի, Հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի, փոխնախագահի, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պատասխանատու

պաշտոնները՝ նա անգնահատելի ավանդ ունեցավ և ունի մասնավորապես հայագիտության զարգացման գործում:

Վ. Բարխուդարյանը հասարակական իր աշխույժ գործունեությունն այժմ էլ շարունակում է Մայր աթոռ Ս. Էջմիածնի Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամի կարգավիճակում:

Անհնարին է շրջանցել ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի գործունեության մեջ այնպիսի մի կարևոր բնագավառ, որպիսին հանրապետության կրթական կյանքում նրա ունեցած մեծ ավանդն է: 1990-ական թթ. նրա ղեկավարությամբ գիտնականներից ու մանկավարժներից բաղկացած մասնագետների խմբի շնորհակալ աշխատանքի արդյունքում ծնվեցին դպրոցական նոր դասագրքերը, որոնցում Հայոց պատմության շատ վիճահարույց խնդիրներ ստացան իրենց հայեցակարգային լուծումները: Տասնամյակներ շարունակ դասավանդելով Երևանի պետական համալսարանում՝ Վ. Բարխուդարյանը մեծ նպաստ բերեց երիտասարդությանը կրթելու, հայրենասիրական ոգով դաստիարակելու այնքան անհրաժեշտ գործին:

Կրկին ընդունեք մեր սրտագին շնորհավորանքները Ձեր պանծալի հոբելյանի կապակցությամբ: Ձեր բազմաթիվ գործընկերները մաղթում են երկար տարիների կյանք, քաջառողջություն, արևշատություն, գիտամանկավարժական ու հասարակական հետազա բուռն գործունեություն, նոր պրպտումներ, անսպառ ու բեղուն գրիչ՝ ի փառս հայրենական գիտության զարգացման և հայրենիք-սփյուռք գիտակրթական կապերի հետազա ամրապնդման:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻՍ

Հարգելի բարեկամներ, սիրելի երիտասարդ գործընկերներ, կարծում եմ, հոբեյանի նշումը իմ պարագայում՝ արդեն պատկառելի հասակում, որքան որ հաճելի, նույնքան պարտավորեցնող մի հաշվեկշիռ է, երբ անհրաժեշտություն է դառնում ետ նայել անցած ուղուն, և քննախույզ հայացքով վերադասության ենթարկել տարիների վաստակը. հաշիվ տալ ինքը քեզ թե որտե՞ղ ես հաջողել, խիզախել, կամ ո՞ր վրիպել ու նահանջել: Մյուս կողմից՝ հոբեյանի գաղափարը մեծ իմաստ և խորհուրդ է պարունակում իր մեջ, հատկապես երիտասարդների համար: Այն մղում է լավատեսորեն նայել կյանքին, գոհունակություն ունենալ, որ տարիների, տասնամյակների աշխատանքը ոչ միայն ուշադրության է արժանանում, այլև գնահատվում է, արժևորվում: Այս մտորումներով էի համակված բոլոր այն պահերին, երբ լսում էի իմ մասին գնահատանքի ու մեծարանքի խոսքերը, և երբ առաջարկվեց ինձ էլ՝ որպես հոբեյար, սրտի խոսք գրել, հարմար դատեցի երկարամյա կյանքի լավ ու վատ երևույթների, ապրված իրողությունների շուրջ որոշ դիտարկումներ փոխանցել երիտասարդ գործընկերներին:

Ավելի քան վեց տասնամյակ աշխատելով Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում, որից 40 տարին՝ Պատմության ինստիտուտում, իսկ վերջին երկու տասնամյակը՝ նախագահությունում, շփվել, հարաբերվել եմ տարբեր սերունդների, տարբեր աշխարհայացք ու խառնվածք ունեցող անձնավորությունների հետ: Մանավանդ որ այդ տարիները բոլոր առումներով տարաբնույթ ու բեկունային են եղել: Պատ-

մության ինստիտուտի 40 տարիները խորհրդային կարգերի ժամանակաշրջանն էր, իսկ նախագահության քսան տարին՝ Հայաստանի անկախության շրջան: Վստահորեն կարող եմ ասել և՛ խորհրդային ժամանակաշրջանում, և՛ անկախության շրջանում փորձել եմ ամեն կերպ տուրք չտալ կեղծ, անցողիկ արժեքներին, այլ հավատարմորեն ծառայել իմ կոչմանն ու մասնագիտությանը:

Երկար տարիների փորձով մի պարզ ճշմարտության եմ հանգել, որը որքան հարկավոր, նույնքան անհրաժեշտ նախապայման է հատկապես գիտությամբ զբաղվողների համար: Ամեն մի գործ իրականացնելու, հատկապես բարձր որակով կատարելու համար պահանջվում է նվիրում: Այն ավելի է կարևորվում գիտական աշխատանքի պարագայում, որովհետև գիտությունը չի կարող ոչ լիարժեք կամ անկատար լինել: Իսկ նվիրում նշանակում է այն աստիճանի տարվել, խորանալ քեզ զբաղեցնող հիմնահարցերի մեջ, որ այն հետապնդի, հանգիստ չթողնի քեզ, անգամ եթե կողմակի այլևայլ հարցերով ես շրջապատված, միևնույնն է՝ ենթագիտակցության մեջ քեզնից անբաժան մնա: Առանց նվիրվելու, առանց քո զբաղմունքը, մասնագիտությունը սիրելու, նրանով ապրելու, անհնար է բարձր որակ ակնկալել, առավել ևս՝ մեծ արդյունքների հասնել:

Հաճախ եմ լսել այս կամ այն անվանի գիտնականի մասին խոսակցություններ, երբեմն նաև դժգոհություններ տարօրինակությունների կամ անսովոր պահվածքի վերաբերյալ: Իրականում նրանց միտքն այնքան է զբաղված իրենց հետաքրքրող գիտական հարցերով, որ, կարելի է ասել, կտրվում, վերանում են առօրյա աշխարհից:

Ինստիտուտի տարեց աշխատակիցները հիշում են, որ խորհրդային Հայաստանի առաջին լուսավորության ժողկոմ (1920–1921), կոմունիստական կուսակցության կենտրոնական

կոմիտեի առաջին քարտուղար (1922–1927 թթ.), մեծանուն պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը 1937 թ. ենթարկվել էր բռնաճնշումների, Գևորգյան ձեմարանի իր աշակերտ Անաստաս Միկոյանի միջնորդությամբ բանտից ազատվել էր և 1954 թ. աշխատում էր Պատմության ինստիտուտում՝ նախ որպես գիտաշխատող, ապա՝ Նոր Պատմության բաժնի վարիչ: Նրա ներկայությունը դրականորեն փոխեց ինստիտուտի ընդհանուր մթնոլորտը: Որպես ինստիտուտի գիտական քարտուղար՝ հաճախ էի շփվում նրա հետ, մանավանդ որ փոխտնօրենի հաստիք չկար, իսկ տնօրենը բռնաճնշումների տարիներին կոմերիտականի ակտիվությամբ մամուլում դատապարտող հոդվածով էր հանդես եկել Աշոտ Հովհաննիսյանի դեմ, ուստի խուսափում էր նրա հետ հանդիպել: Արդեն որոշ դժգոհություններ լսել էի ինստիտուտի աշխատակիցներից, և մեկ անգամ տուն ուղեկցելու ճանապարհին համարձակություն ունեցա նրան հայտնելու, որ մեր գործընկերներից ոմանց մեջ այն կարծիքն է ձևավորվել, որ ինքը մարդկանց վերևից է նայում, անգամ դրսում հանդիպելիս չի բարևում: Շատ զարմացավ և մի փոքր տարակուսած փորձեց պարզել իրավիճակը՝ նկատելով, թե այդպես է պատահում, երբ իր միտքն ամբողջովին կլանված է լինում այդ պահին իրեն մտահոգող գիտական հարցերով և հնարավոր է, որ նույնիսկ կողքից անցնողներին չնկատի:

Այս միջադեպը հիշեցի, որպեսզի ասեմ, որ գիտությանը նման ձևով նվիրվելու շնորհիվ կարելի է հասնել բարձրունքների: Նման ինքնամոռաց նվիրումով էր, որ Աշոտ Հովհաննիսյանը մեր պատմագիտությունը հարստացրեց այնպիսի ծանրակշիռ աշխատություններով, մենագրություններով, որոնց գիտական արժեքը չի խամրել անգամ մեր օրերում:

Նա մեզ՝ այն ժամանակվա երիտասարդներիս, հորդորում էր հրաժարվել պատմությունը շարադրելու ընկալյալ կարծրա-

տիպերից, ամեն առիթով շեշտում էր, որ պատմական դեպքերն ու եղելությունները պետք է ընթերցողին մատուցել ոչ թե չոր ու ցամաք, անջիղ, անկորով ոճով, այլ հակառակը՝ որքան կարելի է պատմական համարժեք փաստերով հարստացնել, իմաստալից, հյութեղ դարձնել շարադրանքը: Ինչպես նաև՝ ընթերցողին մտածելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու հնարավորությունից չզրկել: Այդ շատ կարևոր, բայց հաճախ անտեսվող մոտեցումը հարկ է հաղթահարել: Այսինքն՝ նյութը պետք է մատուցել այնպես, որ ընթերցողի միտքն աշխատի, հետաքրքրությունը միշտ վառ մնա:

Հումանիտար մասնագետի, մասնավորապես պատմաբանի ընդհանուր զարգացման համար անհրաժեշտ է, որ նա մոտ կանգնած լինի գեղարվեստական գրականությանը, որը պատմագրության քույրն է: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է մարդուն, առավել ևս՝ երիտասարդի հոգեմտավոր աշխարհը: Խորհրդահայ հայագիտության առաջին սերնդի մեծանուն ներկայացուցիչները՝ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը, Հովսեփ Օրբելին, Գրիգոր Ղափանցյանը և մյուս ականավոր դեմքերը և՛ լեզվաբան էին, և՛ պատմաբան, և՛ գրականագետ: Արդի պայմաններում դա անհնար է, բայց անհրաժեշտ պահանջ է գեթ ընդհանուր զարգացում ունենալ, կարողանալ հարցերը քննարկել լայն տեսադաշտի վրա և ներկայանալ ոչ միայն գիտական խոր ու փաստարկված դիտարկումներով, այլ նաև գրավիչ, պատկերավոր լեզվով:

Հայտնի է, որ, ի տարբերություն ճշգրիտ գիտությունների, հումանիտար առարկաներով զբաղվող մասնագետները կարճ ժամանակի մեջ չեն կարող մեծ ձեռքբերումների հասնել: Մեր ընտրած ասպարեզը պահանջում է երկար և համբերատար,



հարատև աշխատանք, նաև ծագում՝ անընդհատ առաջընթացի, կուտակման: Ժամանակի ընթացքում դա տալիս է իր շոշափելի արդյունքները և աննկատ չի անցնում, հասարակական ընդհանուր կարծիք է ձևավորվում: Այդպես հասունանում է նաև գիտական կոչումներ, աստիճաններ ստանալու ժամանակը, որի մասին նախապես միայն երազել կարելի էր: 1950-ական թվականների սկզբներին, երբ ընկերներով ասպիրանտ էինք կամ զբաղեցնում էինք կրտսեր գիտաշխատողի պաշտոն, եթե մեզ ասեին, որ մեզ սպասում է գիտության դոկտորի, պրոֆեսորի, ակադեմիկոսի տիտղոսները, դա միայն անհասանելի երազ կարող էր թվալ:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի և Պատմության ինստիտուտի ղեկավարությանը, զեկուցումներով, ելույթներով հանդես եկած բոլոր գործընկերներիս՝ գնահատանքի և նման մեծ պատվի արժանացնելու համար:

Գոհունակություն եմ ապրում, որ ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողները, ներկայիս դժվարությունները հաղթահարելով, նվիրվել են ազգային պատմությունը լուսաբանելու պատվաբեր գործին: Ուրախ և հպարտ եմ երիտասարդների հետ միևնույն կոլեկտիվում աշխատելու համար: Ի շահ գործի, ի շահ արգասավոր սերնդափոխության հույժ՝ կարևոր է, որ ի գորու լինենք երիտասարդ և տարեց աշխատակիցների միջև թեկուզ և տարիքային մեծ անջրպետը հաղթահարելու, համագործակցելու և անկաշկանդ հաղորդակցվելու, որ երկուստեք օգտակար է: Դրանով է պայմանավորված մեր հաջողությունը՝ ապահովել սերունդների արդյունավետ հերթափոխը:

# ՀՈԴԿԱՏՆԵՐ

Հ. Ա. ԱՄԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՐԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԿԱԾ  
 «ՍՈՄՆԻԹ» ԱՆՎԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԵՎ  
 XIX դ. ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ  
 ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Վրաց սկզբնաղբյուրներում Հայաստանին տրված *Սոմխիթ* անունն իր ընդհանուր և մասնավոր նշանակությամբ վերաբերում է Հայաստանի տարածքին<sup>1</sup>, սակայն վրաց պատմագրությունում գերիշխում է *Սոմխիթին* տարբեր «էթնո-քաղաքական» իմաստներ տալու մոտեցումը<sup>2</sup> Հայաստանի Գուգարք նահանգի հյուսիս-արևելյան տարածքը «վրացականացնելու» նպատակով<sup>3</sup>:

<sup>1</sup> Խ. Թորոսյանը, հետազոտելով «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն համառոտ (ենթադրվում է X դ. առաջ) խմբագրությունը, Արսեն Սափարեցու (IX դ.) «Յաղագս բաժանման վրաց և հայոց», Ջուանչերի (XI դ.) «Վախթանգ Գորգասալի կյանքը», ինչպես նաև «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» և այլ երկեր, նշել է, որ դրանցում օգտագործվել է *Սոմխիթի* անվանաձևը՝ «միշտ Հայաստան իմաստով» (Թորոսյան Խ., «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 120–122, 161):

<sup>2</sup> Տե՛ս Թորոսյան Խ., Կոլոնիալիզմ «Сомхити» в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 24–35.

<sup>3</sup> Այնպես, ինչպես, օրինակ, որոշ վրաց պատմաբաններ, աղավաղելով հայկական Ջավախքի, Կղարջքի, Տայքի անվանումները, «ստեղծում» են գեղեր՝ «ջավախներ, կղարջներ, տայքիներ» և ներկայացնում իբրև, ի թիվս այլոց, «վրաց ազգը» ձևավորած ազգակից գեղեր (Бердзенишвили Н., Джавахатилия И., Джавахаша С., История Грузии, под ред. С. Джавахаша, Тбилиси, 1946, с. 6, հմմտ. Рамишвили П., Социально-политическая история Грузии – տե՛ս Очерки истории стран Южного Кавказа, Мультиперспективный взгляд на историю, Ереван, 2009, с. 75, 80 և այլն):

Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը (1791–1832 թթ.) Հայաստանի պատմությանը և աշխարհագրությանը նվիրված իր աշխատությունում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի տեղադրության մասին գրելով, որ այն «հյուսիսից սահմանակից էր վրացիների երկրին, իսկ արևելքից և արևմուտքից ողողվում էր Կուր գետով»<sup>4</sup>, այնուհետև վկայում է, որ օտար զավթումների հետևանքով կատարված քաղաքական բաժանումներն իր ժամանակի առումով հանգեցրել էին առկա վարչատարածքային իրավիճակին: Ըստ Սեն-Մարտենի՝ Գուգարքի արևմտյան հատվածը հայտնվել էր «Ախլցխայի փաշայի» կառավարած «վերին Վրաստանի արևմտյան մասում, իսկ արևելյանը՝ «Ռուսաստանի կայսրության ենթակայության տակ<sup>5</sup> գտնվող վրացական՝ *Սոմխիթի* կամ հայերենով *Սոմխտեթ*<sup>6</sup> նահանգի» մեջ, ինչն ուղեկցվում էր հայկական տարածքների պատմաաշխարհագրական անվանումների խեղաթյուրմամբ<sup>7</sup>: Սեն-Մարտենը

<sup>4</sup> Saint-Martin M. J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 79.

<sup>5</sup> XIX դ. առաջին երկու տասնամյակներում Հյուսիսային Հայաստանի, Արևելյան Վրաստանի, Արևելյան Այսրկովկասի տարածքները անցել էին Ռուսական կայսրությանը (տես Մելքոնյան Ա., Զավախք XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 154):

<sup>6</sup> Թ. Խ. Հակոբյանը, Ստ. Կ. Մելիք-Բախշյանը և Հ. Խ. Բարսեղյանը նշում են. «Սոմխեթ - գավառ Թիֆլիս նահանգում: Ոմանք վրաց աղբյուրներում ողջ Հայաստանին տրված այս անվամբ կոչում են նաև Թիֆլիսից հարավ ընկած Գուգարք աշխարհի Ծորոփոր գավառը (տեսն Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Կ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1998, հ. 4, էջ 657):

<sup>7</sup> Սեն-Մարտենը Հայաստանի, մասնավորապես, նրա հյուսիսային նահանգների տեղանունների վերաբերյալ հաղորդել է, որ իր ժամանակ «գավառների մեծ մասի անուններն ամբողջությամբ մոռացված են՝ բացառությամբ *Տաշիր, Զավախք, Թեղք, Արտասիս* տեղանունների» (Saint-Martin M. J., op. cit., p. 76, 83):

«Սոմխիթի»-ից ծագած է համարել «սոմեխի անվանումը, որով վրացիներն անվանում են հայերին»<sup>8</sup>:

Ֆրանսիացի հայագետ և վրացագետ Մարի Բրոսեն (1802–1880 թթ.) «Քարթլիս ցխովրեբա»<sup>9</sup> և Վախուշտիի (1696–1757 թթ.)<sup>10</sup> «Քարթլիի աշխարհագրական նկարագրություն» երկերի ֆրանսերեն թարգմանությունների մեկնություններում<sup>11</sup> անդրադառնալով վրաց մատենագրությունում Հայաստանին տրվող անվանման խնդրին՝ գրել է, որ «Սոմխեթ անունը վրացերենում ունի երկակի նշանակություն. նախ՝ բուն Հայաստանն է, որի 15 նահանգները նկարագրել է Մովսես Խորենա-

<sup>8</sup> Saint-Martin M. J., op. cit., p. 79.

<sup>9</sup> Մ. Բրոսեն «Քարթլիս ցխովրեբա» («Քարթլի կյանքը») ժողովածուն հրատարակել է «Վրաստանի պատմություն» անտիկ ժամանակաշրջանից մինչև XIX դ.» վերտառությամբ աշխատությունում: Նա նշել է, որ իր թարգմանած այդ ժողովածուն Վրաստանում հայտնի է (Ֆառաջոն ցեօջրեժա) («Քարթլի կյանքը») վերնագրով, որը «տրվել է այս ոճի մի պատմությանը XIII դարում, քանզի հայ հեղինակ Ստեփանոս Օրբելյանը այն հիշատակում է իր տոհմի պատմության մեջ (Բրոսեն Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը այստեղ հիշատակել է Սեն-Մարտենի հետազոտության միջոցով, տե՛ս Saint-Martin M. J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 64): Այնուամենայնիվ, ժամանակագրությունները, ընդհանուր առմամբ, բոլոր վրաց պատմաբանների կողմից անվանված են ցեօջրեժա՞՞ «կյանք» (վրացերենում նշված է հոգնակի ձևով): Եթե ես փոխարինել եմ «կյանք» բառը մեկ այլ բառով, դա ոճի խնդիր է: Ինչ վերաբերվում է *Քարթլիին*, որը փոխարինում եմ *Վրաստան* բառով, ապա՝ XV դարից առաջինն ունի առանձնակի նշանակություն, իսկ երկրորդն ավելի ընդարձակ՝ ընդհանրական. այս երկուսը պետք է շփոթել» (Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, I partie, Histoire ancienne, jusqu'en 1469 de J.-C., S.-Petersbourg, 1849, p. 1, com. 1):

<sup>10</sup> Մ. Բրոսեն Վախուշտի մահվան տարեթիվը նշել է 1770 թ. հետո (Description géographique de la Géorgie par tsarévitch Vakhoucht d'après l'original autographe par M. Brosset, S.-Petersbourg, 1842, p. IX):

<sup>11</sup> Մ. Բրոսեն Վախուշտիի «Քարթլիի աշխարհագրական նկարագրությունը» ֆրանսերեն թարգմանությունը հրատարակել է վրացերեն բնագրով՝ օգտվելով «հեղինակի բնագրային ձեռագրից» (Ibid., p. X):

ցին (V դ.)<sup>12</sup> իր Աշխարհացույցում»<sup>13</sup>: Այնուհետև, Բրոսեն նկատի ունենալով Հայաստանի հյուսիս-արևելյան մասում հետագայում Վրաստանի (Géorgie) կատարած զավթումները, գրել է, որ «Սոմխեթ է» նաև այն երկրամասը, որը «հաճախ անցել է մի ազգից մյուսին...»<sup>14</sup>: Բրոսեն նշել է, որ «վրաց արքաների» իշխանության տակ գտնվող տարածքների սահմանները հստակ չէին, քանի որ «դրանք հազվադեպ և երբեք որոշակի ժամանակով չեն միավորվել նրանց գավազանի ներքո, քանզի շատ թույլ էին, որպեսզի ամբողջությամբ հաստատեին իրենց անկախությունը. այս արքաները իմացել են միայն օգտվել իրենց տիրակալների թուլությունից, իրենց ազատագրման համար»<sup>15</sup>:

Վախուշտին «Սոմխիթի» տերմինը, ընդհանուր առմամբ, օգտագործել է Հայաստանի առումով<sup>16</sup> և, մասնավորապես, նրա հյուսիս-արևելյան<sup>17</sup> այն մասի կապակցությամբ, որը Դեբեդից և Բոլնիսից<sup>18</sup> արևելք գտնվող փոքր լեռան միջև է՝ Քրիա-

---

<sup>12</sup> Brosset M., Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha, Histoire en trois parties, St.-Petersbourg, 1870, p. 3:

<sup>13</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, S.-Petersbourg, 1858, p. X.

<sup>14</sup> Ibid.

<sup>15</sup> Ibid., p. X-XI.

<sup>16</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, II<sup>e</sup> partie, Histoire moderne, S.-Petersbourg, 1856, p. 13, 29.

<sup>17</sup> *Սոմխիթը* մասնավոր նշանակությամբ՝ որպես Գուգարքի հյուսիս-արևելքում գտնվող տարածք, հիշատակված է վրաց Շահնավազ (Վախտանգ Ե) թագավորի կողմից՝ Սանահնի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս Արղությանին ուղղված նվիրագրում (տես՝ Մուրադյան Պ., Հայ եկեղեցու պատմության սկզբնաղբիւններ Ա, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քթօթուկը), Ս. Էջմիածին, 2007, էջ 186–187):

<sup>18</sup> Բոլնիսը (Բոլնիս-Խաչեն գյուղը) Գուգարաց աշխարհի Բողոնփոր գավառի կենտրոնն էր (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 45):

յից մինչև «Լելվար» (Լավվար) և Լոք լեռները: Վախուշտին նույն այդ մասի կապակցությամբ օգտագործել է նաև «ներկայիս Քարթլի-Սոմխիթի» (ქართლი-სომხეთი) արտահայտությունը, որն ըստ Մ. Բրոսեի, պետք է հասկանալ այն «Սոմխեթ»-ը<sup>19</sup>, որը «վրացական Հայաստանն» է (Arménie géorgienne)<sup>20</sup>: Այսինքն՝ Բրոսեն նկատի ունի Հայաստանի հյուսիս-արևելյան մասի վարչաքաղաքական դրությունը՝ Վախուշտի նկարագրած ժամանակաշրջանի առումով:

Կարևոր է Սարի Բրոսեի կարծիքը, համաձայն որի՝ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանաձևը ծագել է «հարավ» («le sud») նշանակություն ունեցող «սամխեթի» (სამხრეთი)<sup>21</sup> բառից, որն ըստ նրա «կարող է մատնանշել երկու ազգերի փոխադարձ դիրքը», այնպես ինչպես հայերն էլ «վրացիներին» են անվանել «Վիրք», որը հնարավոր է համարել՝ առաջացած հայերեն «վեր» բառից<sup>22</sup>:

*Սոմխիթ/Սոմխեթ* անվան ծագման կապակցությամբ հետազայում հայտնվել են տարբեր կարծիքներ, այն կապելով սեպագիր աղբյուրներում հիշատակված *Սուխմե* տեղանվան հետ: Գ. Խալաթյանը Հայաստանին և հայերին տրվող «Սոմխեթ» և «սոմեխ» վրացերեն անվանաձևերն ենթադրաբար ծագած է համարել ասորեստանյան արձանագրությունների

---

<sup>19</sup> Մ. Բրոսեն Վախուշտի տեքստերի թարգմանություններում «Սոմխիթի» (სომხეთი) անվանաձևը նշել է «Սոմխեթի» (Somkheti) ձևով (Description géographique de la Géorgie ..., p. 140–141, 146–147, Histoire de la Géorgie..., II<sup>e</sup> partie, p. 12–13, 29):

<sup>20</sup> Description géographique de la Géorgie..., p. 145.

<sup>21</sup> სამხრეთი («հարավ»), სამხრეთისა («հարավային») (տե՛ս Գորգաձե Ռ. Վ., Վրացերեն-հայերեն բառարան, Երևան, 2005, էջ 491).

<sup>22</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, I partie, S.-Pétersbourg, 1849, p. 15, com. 5.

«Սուխմե երկրի»<sup>23</sup> անվանումից<sup>24</sup>, որը տեղադրվում էր Արածանիից դեպի հյուսիս<sup>25</sup>, որտեղ, ըստ նրա «գտնվում էր բուն հայկական շրջանը»<sup>26</sup>:

Ն. Մառը գտնում է, որ «Սոմեխիա», այսինքն՝ «Somqeq» վրացերեն նշանակում է Հայաստան: Ինչ վերաբերում է անվան ստուգաբանությանը<sup>27</sup>, ապա նրա առաջարկած ենթա-

<sup>23</sup> Խեթական սեպագիր արձանագրություններում «Ցուխմա» (տե՛ս Хачатрян В. Н., Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, с. 114, Арутюнян Н. В., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 174), Սուխապա (Սուխմա), որը տեղորոշվել է Խուսվայի (Սուխք) և Հայասայի հարևանությամբ (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 104–105, Ղազարյան Ռ., Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, էջ 68): Սեպագիր սկզբնաղբյուրներում Սուխապայից հյուսիս և արևելք ոչ մի վկայություն չկա «վրացական ցեղերի» վերաբերյալ:

<sup>24</sup> Այն հիշատակվում է Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115–1077) և Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858–824) ասորեստանյան սեպագիր արձանագրություններում (տե՛ս Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту. - Вестник древней истории, 1951, N 2, с. 280, 295, այսուհետև՝ АВИИУ):

<sup>25</sup> Հմմտ. Пятканов К., Ванские надписи и значение их для истории Передней Азии, С. Петербург, 1881, с. 132, 141.

<sup>26</sup> Халатьянц Г. А., О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей, (Б. м. и г.), с. 7.

<sup>27</sup> Ն. Մառը նախ՝ նշելով, որ Թամար թագուհու (1184–1213) դարաշրջանում նրա գահակալության առաջին տասնամյակներին հիշատակվող «մեխ» (mesq) կամ «մեխ» (meq)-ը նշանակում էր «զավառական վրացի», գրել է. «Ավելի հին ժամանակներում վրացիների մոտ այդ տերմինի հետ կապվել է թեպետև քարթեր (քարթվել) - վրացիներին ազգակից, սակայն մի ինքնուրույն ցեղի մասին պատկերացում»: Նա ենթադրել է, որ meq-ի (<\*mehq-i //mesq-i) տերմինից է առաջացել so-meq-i, նշանակելով «մեխ»-երի կամ «մեխ»-երի երկիր», և «իրենց համար էկզոտիկ այդ ձևը փոխառնելով վրացիները... դրանից հասցրեցին ձևավորել տեղանվան քարթական ձևը—e ածանցով»՝ Somq-eθ-i, Somq-iθ-i՝ վրացիների մոտ Հայաստան նշանակությամբ (որի համար ինքը նշել է Somq-eθ-i անվանաձևը), իսկ someq-i՝ *haj* (Март Н. Я., О языке и истории абхазов, Москва-Ленинград, 1938, с. 51. см. Академия наук СССР, Грузинский филиал, Труды института Абхазской



դրություններում առկա են էթնիկական հասկացությունների անհամապատասխանություններ:

Գ. Մելիքիշվիլին, հետևելով Գ. Խալաթյանի կարծիքին, ենթադրել է, որ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանաձևը, ամենայն հավանականությամբ, առաջացել է ասորեստանյան և խեթական սկզբնաղբյուրներում հիշատակվող *Սուխմի* երկրանունից (նրա ենթադրությամբ՝ «Սոխմի» արտասանությունից), ինչը Մելիքիշվիլին բացատրել է վրացական ցեղերի մերձավորությամբ *Սուխմի* երկրին: Այսպիսի մոտեցմամբ, ըստ նրա տեսակետի, *Սուխմե* երկիրն «Արածանիից ձգվում էր դեպի հյուսիս-արևելք՝ մինչև ներկայիս Էրզրումը»: Նրա կարծիքով՝ արևելավրացական ժողովրդի կորիզը հանդիսացող վրացական ցեղերը բնակվել են «ներկայիս Վրաստանից արևմուտք՝ Ճորոխի ակունքների մոտ»<sup>28</sup>: Նմանապես, առանց որևէ սկզբնաղբյուրային հիմքի, Գ. Մելիքիշվիլին «վրացական ցեղերին» նշել է մ.թ.ա. II հազարամյակի կե-

---

культуры им. акад. Н. Я. Марра, вып. X, հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1971, հ. I, էջ 240): Ի. Ղյակոնովը ենթադրել է, որ «մոսխ» տերմինը ընդհանրապես ցեղանուն չէ, այլ տարբեր ցեղերին տրված մականուն է (Дзяконов И. М., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 217–218): Կարելի է տեսնել, որ *Սոմխիթ/Սոմխեթ* անվանման ստուգաբանությունը «մեսխ» կամ «մեխ» բաղադրատարրերով անհիմն է, քանզի պայմանավորված է իրարամերժ ենթադրություններով:

<sup>28</sup> Գ. Մելիքիշվիլին անհիմն կերպով «մուշկերին» համարել է «վրացայտս ցեղեր», իսկ «քարթվեցների» ինքնանվանումը համադրել Կորդվաց լեռների «կարդուխներ լեռնային ցեղերի հետ», ինչպես նաև «վրացայտս ցեղերի» ներկայություն է ենթադրել Կիլիկյան Տավրոսում մ.թ.ա. I հազարամյակի սկզբին (Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 78, 108): Ի. Ղյակոնովը քննադատաբար նշել է, որ անհնարին է «Տարալ» և «իբեր» տերմինների համադրումը՝ «տիբարեններ» տերմինի միջոցով (տե՛ս Дзяконов И. М., Предыстория армянского народа, с. 218):

սերին «Եփրատ գետի վերին հոսանքում գտնվող» Հայասայի հարևանությամբ<sup>29</sup>:

Ի. Ղյակոնովը Սալմանասար III-ի արծանագրություններում հիշատակված Սուխմուի վերաբերյալ գրել է, որ այն պետք է փնտրել ներկայիս Մազկերտի-Էրզինճանի (պատմական Երիզա-Երզնկա)<sup>30</sup> շրջանում՝ միաժամանակ նշելով՝ «հմմտ. վրաց. Սոմխեթի - Հայաստան»<sup>31</sup>, «սոմեխի՝ «հայ» նշանակում է վերին Եփրատի վրա գտնվող Սուխմու շրջանի բնակիչ»<sup>32</sup>:

Ս. Երեմյանը, ասուրական արծանագրություններում հիշատակված Սուխմե երկիրը տեղադրելով Արածանիի հովտում, Բալու քաղաքի շրջանում, գրել է. «Գ. Խալաթյանցի այն պնդումը, թե someh-i տերմինը ծագում է Zuhma կամ Suhmu (աքքադերեն) երկրի անունից, որը պաշտպանեցին Բ. Բ. Պիտրովսկին և Գ. Ա. Մելիքիշվիլին առկա փաստերով չի հաստատվում...»<sup>33</sup>:

Հայ մատենագրության մեջ Հայաստանին վրացիների կողմից տրվող «Սոմխիթի» անվանումը հիշատակվել է «Սոմխեթ» ձևով: Այսպես՝ Վարդան Արևելցին (XIII դ.), պատմելով

---

<sup>29</sup> Меликишвили Г. А., К истории древней Грузии. с. 170-171.

<sup>30</sup> Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց (կենտրոնը՝ Երիզավան) և Ծոփաց աշխարհի Պաղնատուն (որի հյուսիսում Մազկերտ բերդն էր) գավառների տարածքում (տես Հովհաննեսյան Հ. Միքայել, Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար, 1970, էջ 2, 108):

<sup>31</sup> АВИИУ, с. 296, прим. 12.

<sup>32</sup> Дьяконов И. М., Предыстория армянского народа, с. 196. Ի. Ղյակոնովը նշել է, որ «Սուխմու շրջանը, որ խեթական ժամանակներից հայտնի էր «Ցուխմա» անվամբ, հավանաբար մտել է հայ ժողովրդի կազմավորման շրջանի մեջ, որպես նրա հյուսիսային սահման, քանզի դրանով նրա հյուսիսային հարևան վրացիները՝ կազմել են «սոմեխի» «հայ» բառը» (История древнего Востока. Часть вторая, Москва, 1988, с. 109, прим. 2).

<sup>33</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 240, ծան. 34:

Սմբատ Բ Տիեզերակալի (977–989) կրտսեր եղբոր՝ Գուրգենի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևելքում ժառանգած տիրույթների և նրանից սերած հայ Բագրատունիների ճյուղավորման՝ Կյուրիկյանների Տաշիր-Չորագետի թագավորության մասին գրել է. «Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անույ շինեաց, եւ զկաթուղիկէն հիմնարկէ. եւ կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդովքն Չորոյգետին. եւ զԿայեն եւ զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի եւ Խոռակերտ, եւ զԲագունիք՝ որ է Բագկերտ ի գաւառն Տաշրայ. եւ այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխէթ կոչեն: Եւ ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ<sup>34</sup>, Աբաս եւ Կիրիկէ»<sup>35</sup>:

Ղ. Ինճիճյանն, անդրադառնալով Վարդան Արևելցու հաղորդմանը, «Սոմխէթ» տեղանվան առնչությամբ նախ ընդհանուր առմամբ նշել է. «Յայս անուն կոչեն Վիրք զՀայաստան... և այս չէ ինչ նոր սովորութի, զի և Վարդան զբազում տեղիս Հայաստանեաց յիշեալ յատուրս Գուրգենայ եղբոր բ. Սմբատայ՝ ՚ի տասներորդ դարուն, ՚ի Վրաց կոչին ասէ Սոմխէթ, յորմէ յայտ է թէ նաև ՚ի գիրս նոցա կոչի այնպէս»<sup>36</sup>: Այնուհետև Վար-

<sup>34</sup> Գուրգեն I-ի որդին՝ Դավիթ Անհողին (989–1048):

<sup>35</sup> Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 90: Հովհաննես Դրասխանակերտցին պատմելով Սմբատ I Բագրատունու (890–914) և Գագիկ I Արծրունու (908–943) (տե՛ս Վարդանյան Վ. Մ., Վասպուրականի թագավորության սահմանները IX-XI դարերում, ՊԲՀ, 1969, N 4, էջ 234) ժամանակների մասին՝ Սևորդիներին հիշատակել է որպէս Ուտիք աշխարհի Ուտի գավառի տեր (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127): Իսկ, ինչպէս հետևում է Վարդան Արևելցու հաղորդումից Սմբատ Բ Տիեզերակալի ժամանակաշրջանում նրանց իշխանական տիրույթների մեջ էր նաև Չորագետը, որը Գուրգեն I-ը միավորեց իր նորաստեղծ՝ Տաշիր-Չորագետի կազմի մեջ:

<sup>36</sup> Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. I, Վենետիկ, 1835, էջ 9:

դան Արևելցու նույն հաղորդման մեջ Կայան բերդի հետ հիշատակվող Կայծոն բերդի<sup>37</sup> կապակցությամբ Ղ. Ինճիճյանը գրել է, որ Գուրգենին ժառանգություն հասած զավառների տարածքն է անվանվել «Սոմխեթ»: Մեկ այլ հատվածում նա նշում է. «Կայծոն: Յիշատակ է գայս Վարդան երկիցս, և ցուցան է լինել ի կողմանս Գուգարաց՝ զի աս է. «Եւ կրտսեր եղբայրն (ք. Սմբատայ) ժառանգ է զՏաշիր Սևորդուվքն Չորոզետին, և զԿայեան, և զԿայծոն... ի գաւառն Տաշրայ, և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ՝ զոր Վիրք Սոմխեթ կոչեն»<sup>38</sup>:

Անհիմն կերպով տարբերակելով «Սոմխիթ» և «Սոմխեթ»<sup>39</sup> անվանաձևերը որպես տարբեր պատմաաշխարհական և էթնիկական իմաստ արտահայտող հասկացություններ՝ վրաց պատմագրության մեջ գերակայում է այն տեսակետը, թե «Սոմխիթ» նշանակում է «Ստորին Քարթլի»<sup>40</sup>: Պ. Չոբանյանը, քննա-

<sup>37</sup> Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ «Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ» բերդերը կառուցել էր Պահլավունյաց տոհմից Հոլում Վասակը՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը (Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 57–58): Մ. Հովհաննիսյանի կարծիքով Հոլում Վասակը ոչ թե ամբողջությամբ էր կառուցել Կայան և Կայծոն բերդերը, այլ ի թիվս շատ այլ բերդերի՝ նորոգել և վերակառուցել էր (< Միքայել Վ. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 578):

<sup>38</sup> Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վնէտիկ, 1822, էջ 524: Դավիթ Շինարար թագավորի կողմից հայկական հողերի գավթելու մասին վրաց սկզբնաղբյուրում նշված է, որ նա «գրավեց Հայքի (Սոմխիթի) բերդերը, Գագ, Տերունական, Նոր բերդ, Մանիցգոմ...» (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, Խ. Ա. Երևան, 1934, էջ 218):

<sup>39</sup> Ըստ Ա. Շանիձեի, «-յօ (-եթ) վերջածանցը աշխարհագրական անունների հատուկ ածանցիչ է, օր.՝ Լճնջօ - Հայաստան, ԵՅճնջօ - Պարսկաստան» (Շանիձե Ա., Հին վրացերենի քերականություն, վրացերենից թարգմ. Հ. Գ. Մարգարյան, Պ. Ա. Չոբանյան, Երևան, 1983, էջ 68):

<sup>40</sup> Վրաց պատմագրության մեջ այս տեսակետի և դրանից բխող կեղծիքների մանրամասն քննադատությունը տե՛ս Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 150–166:

դատորեն մոտենալով այսպիսի տեսակետին, նշում է, որ XVIII դարից այդպիսի մոտեցում է մշակվել վրացական պաշտոնական փաստաթղթերում և պատմագրության մեջ: 1770 թ. Հերակլ II-ի Ռուսական արքունիք ուղարկված մարդահամարի ցուցակում «Սոմխիթի» անվան հետ արիեստական նույնացվել է «Ստորին Քարթլի» անվանումը<sup>41</sup>: Պ. Չոբանյանը նշել է, որ վրաց իրականության մեջ Կրաստանի թագավորի տիտղոսաշարը՝ երբեք պատմական բովանդակություն ունեցող բանաձևի չվերածվելու ավանդույթը «խախտելու վճռական քայլ կատարվեց ժԸ դարի երկրորդ կեսին... ինչը և շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից ետադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը վերածելով այն բանավեճային խնդրի»<sup>42</sup>:

Ս. Երեմյանը, նկատի ունենալով «Աշխարհացոյց»-ի հաղորդումը Հայքի և Կիրքի միջև Կուր գետի սահման լինելու մասին («Աշխարհի Կիրք, յելից կալով Եգեբայ, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն...»<sup>43</sup>), այսինքն՝ Կիրքի Կուրից հյուսիս գտնվելու հանգամանքը, քննադատել է Ի. Ջավախաշ-

---

<sup>41</sup> Հերակլ II-ի (1745–1798) ուղարկած մարդահամարի ցուցակի այդ հատվածը քննելով՝ Պ. Չոբանյանը նշել է, որ վրացերեն բնագրի խնդրո առարկա հատվածի («Եւ այս Սոմխիթը (Հայք) ու Սաբարաթաշվիլոն հավասարեցված (նույնացված – Պ. Չ.) են Քարթլին, կիսով Քարթլի են անվանում և այժմ կոչում են Ստորին Քարթլի [Ստորին Կիրք]») ռուսերեն թարգմանության մեջ հրատարակողը «թույլ է տվել բնագրի ընկալման ազատություն» (Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ժԸ դարերի երկրորդ կեսին, Ս. Էջմիածնին, 2006, էջ 135–136):

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 134–135:

<sup>43</sup> Երեմյան Ս. Տ., նշվ. աշխ., էջ 104: Հմմտ. «Եւ գիին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Կրաց, որ է ինքն մեծ գետն Կուր...» (Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 322):

վիլի հրատարակած «Վրաստանի պատմական քարտեզում» ներկայացված Վիրքի բաժանման համակարգը, նշելով որ «հնում «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») հասկացողություն չի եղել... Վրաց աշխարհի այս բաժանումը՝ *Վերին, միջին և ստորին* մասերի հնում գոյություն չի ունեցել և այս երկրի կենտրոնական մասն է միայն կոչվել «Վերին աշխարհ Վրաց»...»<sup>44</sup>:

Խ. Թորոսյանը, քննելով սկզբնաղբյուրների հաղորդումները նշել է, որ վրաց սկզբնաղբյուրներում ոչ միայն չկա «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») արտահայտությունը, այլև՝ «հին հեղինակների գործերում չկա «Սոմխեթի» ձևը, այլ միայն՝ «Սոմխիթի» տեղանունն է: Մինևույն ժամանակ, ըստ նրա կարծիքի, ««Սոմխեթի» և «Սոմխիթի» նույն բառն է, նույն բառի երկու տարբերակը», որը նշանակում է Հայաստան<sup>45</sup>:

«Վրաստանի դարձը» երկի վրացերեն տեքստը հայտնաբերվել է 1888 թ., որը 1890–1891 թթ. հրատարակել է Ե. Թաղաշվիլին: 1900 թ.<sup>46</sup> լույս տեսած երկի ռուսերեն թարգմանությունում Ալեքսանդր Մակեդոնացուն առնչված հաղորդման մեջ մի շարք երկրների շարքում հիշատակված *Сомхитыя* երկրա-

<sup>44</sup> Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 83: Պ. Մուրադյանը գրել է, որ «մի դեպքում վրաց տեքստի «Սոմխիթ»-ը համապատասխանում է ստորին Քարթլիի մի մասին, մյուս դեպքում՝ Հայաստանին առհասարակ, իր հյուսիսային մասով» (Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագր. Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 31):

<sup>45</sup> Торосян Х., Топоним «Сомхити» в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 122–124; Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 123, 149, 152, 160, 161, Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 38, Չոբանյան Պ., նշվ. աշխ., էջ 132: Տես նաև՝ Ղազթյան Հ. Կրկին հյուսիսային Գուգարքի տեղանունների շուրջ, ՊԲՀ, 2012, N 3, էջ 120–122:

<sup>46</sup> Обращение Грузии, перевод с древнегрузинского Е. С. Такайшвили. – տե՛ս Такайшвили Е. С., Источники грузинских летописей. Три хроники. – СМОМПК, вып. XXVIII, 1900, с. 1–216.

նունը Ե. Թաղայշվիլին ծանոթագրել է. «Сомнития иначе Ар-  
мения...»<sup>47</sup>, իսկ Տրդատ III-ի ժամանակների առումով ուղղակի  
նշել է Армения-Հայաստան<sup>48</sup>: 1989 և 2008 թթ. այդ երկը վերա-  
հրատարակվել է Ռ. Կ. Կիկնաձեի խմբագրությամբ և երկու  
դեպքում էլ տեքստի թարգմանությունում իրավացիորեն նշվել  
է Армения-Հայաստան երկրանունը: Սակայն թարգմանության  
13-րդ ծանոթագրությունում խմբագիրը գրել է. «Տվյալ հուշար-  
ձանում վկայված «Սոմխիթի» տեղանունը հավասարազոր է  
«Սոմխեթի» - Հայաստան: Սակայն համեմատաբար ավելի ուշ  
սկզբնաղբյուրներում «Սոմխիթի» առավելապես նշանակում է  
Հայաստանին սահմանակից Վրաստանի նահանգ»<sup>49</sup>: Այնինչ  
Ե. Թաղայշվիլու մոտ խոսքը միայն Հայաստանին տրված  
«Սոմխիթ»-ի անվան մասին է: «Սոմխիթ»-ին «Սոմխեթ»-ից  
տարանջատումով, և, նույնիսկ «Ստորին Քարթլի» անվանման  
հորինումով, «Սոմխիթի»-ն Վրաստանի նահանգ համարելը,  
սկզբնաղբյուրներով չհիմնավորված և քաղաքականացված  
տեսակետ է:

Այսպիսով, Հայաստանին տրված «Սոմխիթ» վրացական  
անվանումը (և նրա «Սոմխեթ» անվանաձևը) ծագումնաբանու-  
րեն էթնիկական հիմք չունի և իր ընդգրկմամբ սկզբնաղբյուր-  
ներում կիրառվել է Վիրքի էթնոաշխարհագրական միջավայ-  
րից և Կուր գետից հարավ գտնվող տարածքի կապակցու-  
յամբ: Այս տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել  
Մ. Բրոսեի այն կարծիքին, ըստ որի, Սոմխիթ/Սոմխեթ անվան-  
ումը ծագել է հայերին վրացիների կողմից տված «սոմխիթ»  
անվան՝ «սամխոեթի» (სამხრეთი), «հարավ» նշանակությամբ

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 8, ծան. 1.

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>49</sup> <http://lib.rus.ec/b/132065/read#t1>:

բառից: Ուստի, Սոմխիթ/Սոմխեթ անվանաձևերի կիրառման երկու դեպքում էլ խոսքը Վիրքից հարավ ընկած տարածքի մասին է՝ թե՛ ամբողջ Հայաստանի և թե՛ նրա հյուսիսային նահանգի՝ Գուգարքի արևելյան գավառների առումով:

АЛИСА ДУМИКЯН

К ВОПРОСУ О НАЗВАНИИ “СОМХИТИ” ДАННОГО  
АРМЕНИИ ГРУЗИНАМИ И ПОДХОДЫ  
ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ XIX ВЕКА

РЕЗЮМЕ

В грузинских источниках Армения упоминается как *Сомхити*. Согласно мнению Мари Броссе, происхождение данного армянам со стороны грузин названия “сомехи”, связано с грузинским словом “самхрети” (სამხრეთი), означающее “юг”.

При применении форм названия *Сомхити/Сомхет*, необходимо иметь ввиду, что речь идет об армянской территории к югу от Иверии (южная граница которой к северо-востоку от Армении проходила по р. Куре), т.е. как, в целом, о территории, всей Армении, так и о восточных гаварах ее северной провинции Гугарк.



**ON THE QUESTION OF THE NAME "SOMKHITI"  
GIVEN TO ARMENIA BY GEORGIANS AND THE  
APPROACHES OF THE 19<sup>th</sup> CENTURY FRENCH  
ARMENOLOGISTS**

**SUMMARY**

The name of *Somkhiti* is given to Armenia in the Georgian sources. According to the opinion of Mari Brosset, the origin of the name «Somekhi» given to Armenians by Georgians, is connected with the Georgian word «samkhreti» (სამხრეთი), which means «south».

While using the forms of the name *Somkhiti/Somkhet*, it is necessary to take into consideration that the Armenian territory to the south of Iberia (the southern border of which to the north-east of Armenia passed along the Kura River) is meant, i.e. as the territory of entire Armenia, as well as - eastern *gavars* of Armenia's northern province of Gugark.

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ  
պատմական գիտությունների թեկնածու

ԿԱՄԲԵՃԱՆ ԳԱՎԱՌԻ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ինչպես Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մի շարք նահանգների, այնպես էլ Կամբեճան գավառի պատկանելիության խնդիրը գտնվել է պատմաբանների սեռում ուշադրության կենտրոնում:

Խորհրդային իշխանության գոյության ամբողջ տարիներին, ունենալով ԽՍՀՄ ժողովուրդների պատմության համահարթեցմամբ զբաղվող խորհրդային կենտրոնական մարմինների խրախուսանքը, վրացի ու ադրբեջանցի պատմաբաններն իրենց աշխատություններում Կրաստանի և Աղվանքի պատմությունը շարադրել են արիեստականորեն ուռճացված սահմաններով՝ փորձելով հավակնություններ ներկայացնել հարևան պետությունների՝ մասնավորապես Մեծ Հայքի թագավորության տարածքների նկատմամբ: Սակայն, ինչպես ցույց են տալիս հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրները, Կամբեճան գավառը եղել է Մեծ Հայքի անբաժան մասը:

Կամբեճան գավառի մասին առաջին հաղորդումը պատկանում է Ստրաբոնին, ըստ որի՝ «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»<sup>1</sup>: Մեկ այլ առիթով

<sup>1</sup> Страбон, География, пер., статья и комментарии Г. А. Стратановского, М., 1964, (այսուհետև՝ Страбон), XI, IV, I. Տե՛ս նաև՝ Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Օտար աղբյուրները հայերի մասին, «Հունական աղբյուրներ», N 1, Երևան, 1940, էջ 35–37: Հակառակ Ստրաբոնի՝ վերը նշված հաղորդում-

հույն հեղինակը գրում է. «Անցումը Իբերիայից Աղվանք ձգված է Կամբեճանի անջուր և քարքարոտ գավառով դեպի Ալազան գետը»<sup>2</sup>: Երրորդ անգամ Ստրաբոնը Կամբեճանին անդրադառնում է Հայաստանի նկարագրության մեջ. «Հայաստանի ծայրագավառներից է Փավենեն, ինչպես Կոմիսենեն և Օրքիստենեն...: Խորձենեն և Կամբեջանը ամենից հյուսիսայիններն են և առավել ծյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կոլխիդային»<sup>3</sup>:

Այսպիսով՝ Ստրաբոնը երեք անգամ անդրադառնալով Կամբեճանին, երկու անգամ այն նկարագրում է որպես Հայաստանի գավառ, իսկ երրորդ անգամ նշում, որ նրա վրայով է ձգվում Իբերիա – Աղվանք ճանապարհը<sup>4</sup>: Ելնելով Ստրաբոնի հաղորդումներից՝ միանգամայն հստակ կարելի է ասել, որ պատմական Հայաստանի այս գավառը գտնվել է Կուր գետից հյուսիս՝ Աղվանքի և Իբերիայի մեջտեղում:

Կամբեճանի պատկանելիության մասին տեղեկություններ ենք գտնում նաև Պլուտարքոսի և Դիոն Կասիոսի աշխատություններում: Պոմպեոսը դեպի Աղվանք արշավելիս անցել է

---

ների՝ Դ. Մուսխելիշվիլին, «հենվելով» Ստրաբոնի այս հաղորդման վրա, նշում է. «Այդ տեղեկության արժեքը կայուն է այնքանով, որ պարտադրում է պատկերացնել թե Արևելա-Վրացական ցեղերը մ.թ.ա. I դարից մի քանի դար առաջ խորացել էին Կամբեճանի հյուսիսարևելյան մասում» (տե՛ս *Мусхелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шакя и Гогарена), с. 18*): Այդ հաղորդման մեջ Ստրաբոնն ընդհանրապես չի հիշատակում վրացական ցեղերին: Բայց Դ. Մուսխելիշվիլին, փորձելով հող նախապատրաստել իր համար շահեկան եզրակացության համար, նախ Կամբեճանի մի մասը, ապա գավառն ամբողջությամբ հայտարարում է վրացական տարածք, թեպետ սկզբնաղբյուրներում չկան համապատասխան հաղորդումներ:

<sup>2</sup> Տրաբон, XI, IV, 5.

<sup>3</sup> Նույն տեղում, XI, XIV, 4:

<sup>4</sup> Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 49–50:

Կամբեճանով և հետո միայն Ալազան գետի մյուս ափին, ինչ-որ տեղ հանդիպել աղվանական բանակին<sup>5</sup>: Հարց է ծագում, եթե գավառը պատկանում էր Աղվանքին, ապա ինչու՞ աղվանները չէին պաշտպանում այն և հռոմեացիներին թողնում են անարգել անցնել դրա միջով: Կարծում ենք, որ Կամբեճանը Հռոմի «բարեկամ և դաշնակից» Մեծ Հայքի տարածքն էր, և լեզոններն անարգել անցել են գավառով ու Ալազանն անցնելուց հետո միայն շփման մեջ մտել աղվանների հետ:

Ըստ VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի, Կամբեճանն Աղվանքի գավառներից էր: Թվարկելով երկրի գավառները, Անանիա Շիրակացին Եխնի (Խենի) գավառից հետո նշում է՝ «Եւ Քամբէճան առ Կուրաւ»<sup>6</sup>: Սակայն ինչպես վերը տեսանք, այլ աղբյուրները, այդ թվում և անտիկ շրջանի, Կամբեճանին վերագրում են այլ պատկանելիություն:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում Կամբեճան գավառը հիշատակվում է Աղվանքի գավառների շարքում, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դարում, իսկ Կամբեճանը Մեծ Հայքի կազմում եղել է մինչև V դարի կեսերը<sup>7</sup>: Աշխարհագրական այս իրողությունն էլ արձանագրել է Անանիա Շիրակացին՝ իր վերոհիշյալ հաղորդմամբ: Իսկ որ դա այդպես է եղել, ցույց է տալիս Ղևոնդ պատմիչն ու շ ժամանակների իրադարձությունները մատնանշելիս՝ Կամբեճանը համա-

<sup>5</sup> Плутарх, Сравнительные жизнеописания. Помпей, т. II, М., 1963, XXXV, Ղիոն Կասիոս, Հռոմեական պատմություն, թարգ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, XXXVII, III, 6:

<sup>6</sup> «Աշխարհացոյց» Մովսես Խորենացույ յալելուածովք նախնեաց (այսուհետ՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881, էջ 29:

<sup>7</sup> Վարդանյան Ա., Աղվանքը մ.թ.ա. I – մ.թ. VI դդ. (Պատմաաշխարհագրական ցննություն), «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2010, էջ 14:

րելով Աղվանքի գավառներից: Նա գրում է՝ «(Խազարները – Ա. Վ.) սփռեալ զասպատակս իւրեանց, ըստ հիւսիսոյ գետոյն հօրագունի, որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարզպանեան<sup>8</sup>, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲէխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաղ»<sup>9</sup>, շեշտելով, որ թվարկված գավառներն Աղվանից աշխարհում են: Ինչպես կտեսնենք ստորև, Աղվանից մարզպանության տրոհումից հետո Կամբեճանը գտնվել է հայ իշխանական ընտանիքների տիրապետության ներքո:

Հետագա ուսումնասիրողները միակարծիք չեն Կամբեճանի պատկանելիության հարցում: Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը, ելնելով աղբյուրների մանրակրկիտ քննությունից, գտնում է, որ Կամբեճանը «Հայաստանի ամենեն հյուսիսային ծյունաշատ մեկ տեղն էր...»<sup>10</sup>: Ա. Մնացականյանն ու Բ. Ուլուբաբյանը գավառը տեսնում են Մեծ Հայքի կազմում<sup>11</sup>: Հենվելով Ստրաբոնի վերը հիշատակված տեղեկությունների վրա՝ Ա. Տեր-Ղևոնդյանը փաստում է. «Կամբեճանը եղել է հայ Արշակունիների թագավորության մի մասը և նրա բնակչությունը հայկական է եղել»<sup>12</sup>: Հ. Սվազյանը գտնում է, որ մինչև մ.թ. II դարը Կամբեճանը մաս է կազմել Մեծ Հայքին, ապա անցել է Աղվան-

<sup>8</sup> Ստ. Կանայանցն առաջարկում է այս երեք անվանումները կարդալ որպես մեկ գավառի անուն՝ Քապաղա Ոստան ի Մարզպանեան (տե՛ս Կանայեանց Ստ., Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Էջմիածին, 1914, էջ 172):

<sup>9</sup> Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 132:

<sup>10</sup> Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Հ. Բ. Պիլէգիլճեան, Վիեննա, 1907, էջ 18–19:

<sup>11</sup> Մնացականյան Ա, նշվ. աշխ., էջ 48–55, Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, (V–VII դդ.), Երևան, 1981, էջ 31:

<sup>12</sup> Ter-Ghevondian A., Notes sur le Saké-Kambečan (I<sup>e</sup>-XIV<sup>e</sup> s). Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 673:

քին<sup>13</sup>: Ա. Հակոբյանը գավառը համարում է Աղվանից թագավորության մաս<sup>14</sup>: Գ. Ստեփանյանը Կամբեճան գավառը համարում է Մեծ Հայքի թագավորության մաս<sup>15</sup>: Հ. Խորիկյանը վերջերս լույս տեսած իր աշխատանքում գտնում է, որ Կամբեճանը մ.թ.ա. I (գուցե II դարից) – մ.թ. I դարերում է գտնվել Հայաստանի կազմում: Եվ շարունակելով եզրակացնում, որ II դարում Կամբեճանը անցնում է Աղվանքին<sup>16</sup>: Գ. Մելիքիշվիլին և Դ. Մուսխելիշվիլին կարծում են, որ գավառը բաժանված է եղել երեք հարևանների միջև<sup>17</sup>: Ի դեպ, հետագա աշխատանքներում վրաց հեղինակները նախ գտնում են, որ Կամբեճան գավառը մինչև մ.թ.ա. III դարը չէր կարող չպատկանել Վրաստանին, քանի որ այդ ժամանակաշրջանը համարում են Վրացական թագավորության շրջան, ապա շարունակելով՝ գրում են. «Կամբեճանը Հայաստանի նահանգ դարձավ վերջինիս հզորացման ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. II – մ.թ.ա. I դարերի կեսերին»<sup>18</sup>: Ադրբեջանցի հեղինակները և, մասնավորապես, Ֆ. Մամեդովան ինչպես սահմանային մյուս հարցերում, այնպես էլ Կամբեճանի խնդրում, առանց հաշվի առնելու անտիկ հեղինակների հաղորդումները, գավառը հայտարարում է «աղվանական մարզ»<sup>19</sup>:

<sup>13</sup> Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (ինագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 70:

<sup>14</sup> Տե՛ս Աкопян А., *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, էջ 28–30:

<sup>15</sup> Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 6, ժան. 2:

<sup>16</sup> Տե՛ս Խորիկյան Հ., Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Երևան, 2011, էջ 72:

<sup>17</sup> Տե՛ս Меликишвили Г., *К истории древней Грузии*, Тбилиси, 1959, с. 123, Мусхелишвили Д., նշվ. աշխ., էջ 19:

<sup>18</sup> Տե՛ս «Очерки истории Грузии», т. I, Тбилиси, 1989, с. 270.

<sup>19</sup> Мамедова Ф., *Политическая история и историческая география Кавказской Албании*, Баку, 1986, с. 93–94.

Այս առումով, նախ, ճիշտ չենք համարում վրաց հեղինակների տեսակետը, քանի որ Գ. Մելիքիշվիլին Կամբեճանը սկզբնապես համարում էր վրացական, ապա, իբր թե, Տիգրան II-ը այն նվաճել է վրացիներից: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ նա գրում է. «Նշանավոր Տիգրան II-ից հետո Հայաստանը թուլացավ...: Դրան համապատասխան հայկական իշխանությունն այդ գավառի վրա, ըստ երևույթին, մոտենում էր իր վախճանին, իսկ քարթլիները (վրացիները – Ա. Կ.) ամրապես տիրում են նրան (Կամբեճանին – Ա. Կ.)»<sup>20</sup>: Այս տեսակետը, սակայն, քննադատության չի դիմանում, քանի որ, ինչպես ցույց տվեցինք, մեր թվարկության սկզբում Ստրաբոնը Կամբեճանը ճանաչում է Մեծ Հայքի մաս<sup>21</sup>: Նրա այս տեղեկության հիման վրա է Ա. Մնացականյանը Կամբեճանի զբաղեցրած տարածքն անվանում Անդրկուրյան Հայք, որը «Իրենից ներկայացնում է այն աշխարհագրական վայրը, որով Հայաստանը շփվում է Կրաստանի և Աղվանքի հետ: Ուստի և պատմական Հայաստանի այս գավառը ոչ այլ ինչ է, քան Անդրկուրյան Հայքի մի ընդարձակ մաս»<sup>22</sup>:

Հնարավոր չենք համարում նաև Խործենե - Կղարջքի շրջանում մեկ այլ Կամբեճանի գոյությունը, որին իբր թե վերաբերում է Ստրաբոնի հաղորդումը<sup>23</sup>:

Իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, թե Կամբեճանը մինչև մ.թ.ա. III դարը գտնվել է Կրաստանի կազմում, ապա դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ սկզբնաղբյուրներում այդպիսի հաղորդում չկա:

Ֆ. Մամեդովան, իրեն հատուկ ձևով, այն է՝ կամայական մեկնաբանություններով ինչ-որ դեպքեր յուրովի բացատրելով

<sup>20</sup> Меликишвили Г., նշվ. աշխ., էջ 127:

<sup>21</sup> Стрбон Страбон, XI, IV, I; XI, IV, 5; XI, XIV, 4:

<sup>22</sup> Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

<sup>23</sup> Стрбон Ажопян А., նշվ. աշխ., էջ 29–30:

փորձում է Կամբեճանի պատկանելիությունը լուծել հօգուտ Կովկասյան Ալբանիայի<sup>24</sup>:

Ընդունելի չէ նաև Հ. Սվազյանի տեսակետը, ըստ որի մ.թ. II դարում հռոմեացիներն Այսրկովկասում կատարեցին վարչական փոփոխություններ և Կամբեճանն անցավ Աղվանքին<sup>25</sup>:

Իսկ ինչ վերաբերում է Հ. Խորիկյանի տեսակետին, ապա գտնում ենք, որ մ.թ. I դարում Կամբեճանը չէր կարող անցնել Աղվանքին, քանի որ այդ ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած հույն աշխարհագրագետ Ստրաբոնն իր աշխատությունում Կամբեճան գավառը համարում է Մեծ Հայքի մաս:

Աղբյուրների քննությունից ելնելով՝ կարելի է նշել, որ Կամբեճան գավառը հայկական պետականության ողջ ընթացքում և մինչև V դ. երկրորդ կեսը եղել է Մեծ Հայքի կազմում ու նրանից դուրս է եկել այն ժամանակ, երբ տարածաշրջանում ստեղծվեց նոր վարչական միավոր՝ Աղվանից մարզպանությունը: Վերջինիս տրոհումից հետո, արաբական տիրապետության ժամանակաշրջանում Կամբեճանի հայությունը հիմնականում ենթարկվում էր Հայոց Արևելից կողմանց իշխանական տներին<sup>26</sup>:

IX դարում գավառը գտնվում էր Առանշահիկների իշխա-

---

<sup>24</sup> Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 137-143.

<sup>25</sup> Սվազյան Հ., նշվ. աշխ., էջ 70:

<sup>26</sup> Տե՛ս Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 31: Իրավացի է Բ. Ուլուբաբյանը՝ նշելով, որ հայ իշխանների տիրապետության տակ եղած Աղվանից աշխարհը Հայոց Արևելից կողմանց երկու նահանգներն էին՝ իյուսիսում Կուր գետի սահմանով և Կամբեճան գավառի ընդգրկումով (տե՛ս Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ. էջ 246): Կամբեճան գավառի մասով հեղինակները հիմնականում հիմնվում են Մովսես Կաղանկատվացու տեղեկության վրա. «... իւ սահմանս յայնկոյս գետոյն Կուրայ ի Կամպիճանն գաւառ» (տե՛ս Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԹ, էջ 178):



նապետության ներքո: Առանշահիկ Սահլ Սմբատյանի<sup>27</sup>, մանավանդ նրա թոռ Գրիգորի իշխանության օրոք վերստին այդ տոհմին է անցնում անդրկուրյան Կամբեճանը<sup>28</sup>:

X դ. սկզբին Հայոց Արևելից կողմերում Համամ իշխանի ջանքերով ստեղծվում է թագավորություն. «Ապա բարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն»<sup>29</sup>: Համամի ստեղծած թագավորությունը որոշ ժամանակ անց բաժանվում է նրա որդիների միջև: Ատրնբրսեհին<sup>30</sup> բաժին է ընկնում Շաքե-Կամբեճանը, որի մասին արաբ պատմիչ Մասուդին վկայում է. «Շաքեցիների թագավորը Ատրնբրսե իբն Համամն է»<sup>31</sup>:

Համամ Բարեպաշտի ստեղծած թագավորությունը ժամանակի հայ պետական կազմավորումներից մեկն էր և ընդգրկված էր Բագրատունյաց Հայաստանի գերագույն իշխանության ներքո գտնվող ֆեոդալական համակարգի մեջ:

Կամբեճան գավառի տեղադրությունն Անդրկուրյան Հայքում ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել: Գավառն Աղուան (Ալազան) գետով սահմանակից էր Եխնի և Բեխ գավառներին, իսկ արևելքից՝ Գետառու գավառին: Կամբեճան և Գետառու գավառների հատման կետում գտնվում էր Գվգավ քաղաքը: Հարավից գավառը Կուր գետի երկարությամբ սահմանակցում էր հայկական Ուտիքին, իսկ

<sup>27</sup> Տե՛ս Եղիազարեան Ա., Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, «Հանդէս Ամսօրեայ», 2009, թիւ 1-12, էջ 154:

<sup>28</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 87:

<sup>29</sup> Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքեյանի, Երևան, 1983, Գ, գլ. ԻԲ, էջ 335:

<sup>30</sup> Համամի որդի Ատրնբրսեհը սկսել է իշխել 910 թ. (տե՛ս Բ. Ուլուբաքյան. Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 82):

<sup>31</sup> СМОМПК, вост. 38, с. 57.

հյուսիս-արևմուտքում՝ Վիրքին: Գավառի մեծ մասն իր բնակլի-  
մայական պայմանների պատճառով անմարդաբնակ է եղել,  
քանի որ, ըստ «Աշխարհացոյց»-ի տեղեկության, Կուդրաթ գյու-  
ղաքաղաքից «Վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ...»<sup>32</sup>:

Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ  
գավառի բնակչության հոծ զանգվածները կենտրոնացած են  
եղել Կուր գետի և գավառի միջով հոսող Կամբեճ գետի շրջա-  
կայքում: Կամբեճանի բնակչության գերակշիռ մասն Անանիա  
Շիրակացու օրերում եղել են հայերը: Ղա հաստատվում է նաև  
IX դ. վրաց մատենագիր Արսեն Սափարացու հաղորդած տե-  
ղեկություններով. պատմիչը, խոսելով VII դ. հայ մատենագիր  
Հովհան Մայրավանեցու գործունեության մասին, նշում է.  
«Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները... Լեռ-  
նականները նրան չէին ընդունել, քանի որ վերջիններս կռա-  
պաշտներ էին, և անցավ Կամբեջ[ով]ան տիրելով փոքր ծորին,  
որ Հայոց (Սոմխեթի) ծոր է կոչվում...»<sup>33</sup>: Ասվածից պարզ  
երևում է, որ VII դարում ևս Կամբեճանը հայաբնակ էր, ու նրա  
ծորերից մեկը կոչվում էր Հայոց ծոր<sup>34</sup>:

Այս հարցի կապակցությամբ բոլորովին այլ վարկած է  
առաջադրում Դ. Մուսխելիշվիլին: Նա ճգնում է ապացուցել, որ  
Կամբեճանում Արսեն Սափարացու հիշատակած «Հայոց ծո-  
րը» ոչ թե բնակավայր է, այլ կիրճ<sup>35</sup>: Ապա շարունակելով,  
վրաց հեղինակը վերափոխում է պատմիչների հաղորդումը՝  
նշելով. «Կամբեճանում բացակայում էր հայ բնակչությունը, լա-  
վագույն դեպքում փոքրամասնության տեսքով էր, քանի որ Ար-  
սեն Սափարացին նշում է, որ «Հայոց կիրճը» Կամբեճանում

<sup>32</sup> «Աշխարհացոյց», էջ 29:

<sup>33</sup> Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների  
մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 46–47:

<sup>34</sup> Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 53:

<sup>35</sup> Տե՛ս Мусхелишвили Д., նշվ. աշխ., էջ 27:

«փոքր կիրճ էր»<sup>36</sup>: Նախ, ինչպես վերը տեսանք, Արսեն Սափարացին հիշատակում է ոչ թե «Հայոց կիրճ», այլ «Հայոց ծոր», իսկ Կամբեճանում հայ բնակչության վերաբերյալ վրաց մատենագիրը ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Կամբեճանը հայաբնակ էր նաև հետագա դարերում: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին X դ. կեսերին ուղևորվում է Հայոց Արևելից կողմերը. «...մաքրել զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց»<sup>37</sup>: Կաթողիկոսը հանգրվանում է Հերեթի կողմերում, իսկ «Հերեթ» ասելով հասկացվում է Կամբեճան գավառը<sup>38</sup>, որտեղ թագավորում էր քաղկեդոնական դավանանքի անցած Իշխանիկը, որի իշխանության սահմանները Կամբեճանից հասնում էին Խաչեն. «Ծագեաց ի սիրտս հզօրացն Աղուանից ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսէհի, և Սենիքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նորին և տեառն Սենիքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի և Տեառն Կաչագանայ Գորոգուաց իշխանի և այլ բազում մեծամեծաց...»<sup>39</sup>:

Կամբեճան գավառի բնակչության մեծամասնությունը մինչև XV դարը կազմել են հայերը<sup>40</sup>:

Գավառը սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև «Անդրկուրյան Հայք», «Փոքր Հայք» անվանումներով: Այդ մասին կարևոր վկայության ենք հանդիպում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս ընդ որոյ մէջ գետն Սէրոջ դէպ ի հարաւոյ ըստ

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Անանիա Մոկացի, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն (այսուհետև՝ Մոկացի), «Արարատ», մարտ 1897, էջ 144:

<sup>38</sup> Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 211:

<sup>39</sup> Մոկացի, էջ 144:

<sup>40</sup> Տե՛ս Ter-Ghevondian A., նշվ. աշխ., էջ 678–679:

փոքր Հայոց»<sup>41</sup>: Այսինքն՝ Անանիա Շիրակացուն հայտնի է Կուր գետից հյուսիս, Աղվանից աշխարհի սահմաններում «Փոքր Հայք» կոչվող մի տարածություն, որի սահմաններից մեկը Սեբոզ գետն է<sup>42</sup>: Եվ «Փոքր Հայք» կոչվող տարածությունը Կամբեճան գավառն է՝ Աղվանքի հարավ-արևմտյան սահմաններում: Կամբեճան գավառի ընդհանուր տարածությունն էր շուրջ 7510 կմ<sup>2</sup><sup>43</sup>:

Գավառի մի շարք բնակավայրերում հայկական եկեղեցիները մահմեդականների կողմից ենթարկվել են ավերածությունների: Այդ առիթով Մ. Բարխուտարյանը գրում է. «Վերնայարկն ըստ ամենայնի ունի Հայաստանեայց տաճարների բոլոր յատկութիւնները: Կամարներն շինուած են կոփածոյ չիչ քարով»<sup>44</sup>:

Այսպիսով՝ ինչպես վերը նշել ենք, Կամբեճան գավառը Մեծ Հայքի թագավորության գոյության ընթացքում եղել է նրա անբաժան մասը և միայն 461 թ., երբ ստեղծվեց Աղվանից մարզպանությունը<sup>45</sup> Կամբեճան գավառը կարճ ժամանակահատվածով միացավ Աղվանքին: Սակայն մարզպանության տրոհման հետևանքով գավառը վերստին անցավ հայ իշխանական ընտանիքների տնօրինության ներքո:

<sup>41</sup> «Աշխարհացոյց», էջ 29:

<sup>42</sup> Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 56:

<sup>43</sup> Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, 1963, էջ 57, 120:

<sup>44</sup> Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 139:

<sup>45</sup> Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանից մարզպանության կազմավորումը, «ԼՀԳ», 2010, թիվ 1-2, էջ 101-106:

## К ВОПРОСУ О ПРИНАДЛЕЖНОСТИ ПРОВИНЦИИ КАМБЕЧАН

### РЕЗЮМЕ

Как явствуют греко-римские и армянские первоисточники, провинция Камбечан входила в состав государства Великая Армения. Страбон, трижды упоминая о Камбечане, дважды описывал его как армянскую провинцию. О принадлежности провинции находим информацию в трудах Плутарха, Диона Кассия, Анания Ширакаци и Гевонда. В 461 г. в результате образования Агванкского марзпанства Камбечан на протяжении короткого исторического отрезка была присоединена к Агванку. Однако в результате раздробления марзпанства провинция Камбечан вновь оказалась под властью армянских княжеских фамилий и была (подвластной верховной власти) частью феодальной системы Багратидской Армении.

ARGISHTI VARDANYAN

*PhD in History*

ON THE PROBLEM OF  
KAMBECHAN PROVINCE BELONGING

SUMMARY

As the Greek-Roman and Armenian primary sources testify, Kambechan province was part of the state of Great Armenia. In 461, though, it was annexed to Aghvank as a result of the formation of Aghvank region. However, as the region was divided again, Kambecha appeared under the rule of Armenian princely dynasties and made a part of the feudal system of the Bagrationi Armenia.

## ՂԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻՆ ԿԵՐԱԳՐՎՈՂ ԵՐԿԵՐԻ ՎԱՎԵՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋ

Միջնադարյան հայ մատենագրության ամենահետաքրքրական և խորհրդավոր հեղինակներից մեկի՝ Ղավիթ Անհաղթ փիլիսոփայի (V-VI դդ.) անունով մեզ են հասել տարաբնույթ, ամենայն հավանականությամբ տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների կողմից գրված և թարգմանված երկեր: Հայագիտության մեջ բազմիցս քննվել է դրանց հեղինակային պատկանելության և վավերականության հարցը՝ առաջադրվելով իրարամերժ և տարակարծիք տեսակետներ: Սույն հոդվածում անդրադառնալու ենք Ղավիթ Անհաղթի գրական ժառանգությանը ոչ թե ժամանակակից գիտական մոտեցման, այլ միջնադարյան ընկալման տեսանկյունից՝ հիմնականում քննելով նրան երկերի վերագրման սկզբունքները և հնարավոր պատճառները:

Ղավիթ Անհաղթը «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի» երկի սկզբում խոսում է հեղինակային պատկանելության, երկերի վավերականության և իսկության մասին՝ առաջ քաշելով երկերի կեղծումների հնարավոր չորս պատճառ<sup>1</sup>: Նա կարևորում է ցանկացած գրվածքի հավաստիության քննությունը՝ միառժամանակ փաստելով, որ ընթերցողները գոհունակությամբ են կարդում հանրաճանաչ հեղինակների գործերը: Ըստ այդմ, քանի որ ոչ բոլորը կարող են տարբերել սուտն ու ճշմարիտը, օգտակարն ու անօգուտը՝ երկերն ընտրում են

<sup>1</sup> Նման բովանդակությամբ մի հատված առկա է նաև Ղավիթ Անհաղթի «Արիստոտելի Ստորոգությունների մեկնության» մեջ (տե՛ս Էլիասի իմաստասիրի Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, Ի լոյս եւած Յ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 148):

ըստ հեղինակի հայտնի լինելու. «Յիրաւի և հարազատութիւնն խնդրի. վասն զի գիտելով՝ եթէ հարազատ է առաջիկայ շարագրածն, զգիտութեան փառս ունողի վարդապետին յօժարութեամբ ընթեռնումք, վասն զի բազումք ոչ գոլով կարողք զճշմարիտն և զսուտն որոշել՝ զպիտանացուն և զանպէտն, լաւ համարին վասն պատուոյ և ճոխութեան վարդապետին յօժարագոյնս ընթեռնուլ, և որպէս սիրելի ինչ վարկանին զհետևիլն կարծեաց վարդապետին»<sup>2</sup>:

Ըստ Դավթի՝ երկերը կարող են կեղծ լինել «վասն հոմանունութեան շարագրողաց, և կամ վասն հոմանունութեան շարագրածաց»: Խոսելով հեղինակների համանունության մասին՝ նա բերում է հետևյալ օրինակը. երբ նույն անունն ունեցող երկու անձնավորություններից մեկն աշխատություն է գրում «Հոգու մասին», մյուսը՝ «Երկնքի մասին», կամ էլ եթե երկու տարբեր հեղինակներ գրում են կամ հոգու, կամ երկնքի մասին, այսինքն՝ միևնույն նյութի վերաբերյալ, այդ դեպքում «ոչ ոք կարող գոյ որոշել՝ կամ զնորայն սորա կարծելով, կամ զսորայն նորա»: Երկրորդ դեպքում սնափառ, պատվասեր հեղինակները, ովքեր, սակայն չունեն փառք և համբավ, իրենց զրվածքների վրա դնում են որևէ հայտնի վարդապետի անունը՝ փորձելով տարածել դրանք: Երրորդ դեպքում Դավիթն օրինակ է բերում պատմությունից: Ցանկանալով հավաքել Հոմերոսի բոլոր բանաստեղծությունները՝ Աթենքի կառավարիչ Պիսիստրատը դրանք հայտնաբերողներին և իրեն տրամադրողներին առատ վարձատրություն էր տալիս: Շահադիտական նկատառումներով շատերն իրենք էին բանաստեղծություններ հորինում՝ դրանք ներկայացնելով որպես Հոմերոսինը: Իսկ չորրորդ՝ մեզ անավելապես հետաքրքրող եղանակն այն է, երբ «վասն բա-

<sup>2</sup> Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 107-108:



րեմտության աշակերտաց առ իւրեանց վարդապետսն. գրեն շարագրածոսն ոմանս, և մակագրեն զանուն վարդապետին». ինչպես Պլատոնն իր ստեղծագործությունների վրա դրեց Սոկրատի անունը, իսկ այլութագորականները՝ Պյութագորասի անունը «Ոսկի առակներ» կոչված երկի վրա: Այնուհետև Դավիթը նշում է, որ կեղծ ստեղծագործությունները կարելի է զատորոշել և ճանաչել ըստ նյութի և ըստ ձևի, այսինքն՝ ըստ կառուցվածքի, բառապաշարի և ըստ հեղինակի մտածելակերպի<sup>3</sup>:

Փաստորեն՝ միջնադարում գործել են երկի վերագրման հստակ օրենքներ, և հետաքրքրական է, որ թվարկվում են նաև դրանք բացահայտելու հստակ մեթոդները: Ինչպես տեսնում ենք Դավթի մատնանշած օրինակներից, կեղծ հեղինակային պատկանելության հարցը, ինչպես նաև դրանց բացահայտման մեթոդները միայն զուտ քրիստոնեական երևույթ չեն: Ի դեպ, այս հարցին քրիստոնեական պատմագրության օրինակով անդրադարձել է պատմաբան Էռնա Շիրինյանը<sup>4</sup>:

Փորձենք պարզել, թե, վերոնշյալ վերագրման կանոններից որոնք և ինչ սկզբունքով են կիրառվել Դավիթ Անհաղթի դեպքում:

XIV–XV դդ. աստվածաբան, տաղերգու Առաքել Սյունեցու «Պատճառ Սահմանաց գրոց»-ում կարդում ենք. «Թէ քանի՞՞ զիրք գրեաց (Դավիթ Անհաղթը – Ա. Մ.). այսինքն Ե (5). ա. զՍահմանքս, բ. զԲարձրացուցէքն, գ. զՊէտքն. դ. Չմեկնութիւն Քերականին, ե. զՄեկնութիւն Պորփիրի եւ զԱրիստոտելի»<sup>5</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>4</sup> Տե՛ս Շիրինեան Մ. (է.), Փոխարկութիւնները քրիստոնեական պատմագրութեան մէջ, "Bnagirq Yisatakac (documenta memoriae)", a cura di Valentina Calzolari, Ann Sirinian, Boghos Levon Zekyan, Bologna, 2004, էջ 241–253:

<sup>5</sup> Առաքել Սիւնեցոյ Մեկնութիւն Սահմանաց գրոցն Դաւթի, Մաղրաս, 1797, էջ 169–172:

Իսկ «Սահմանք իմաստասիրութեան» երկի պատճառներից մեկում ասվում է. «Եւ թէ ոք հարցանէ, թէ ի վերնագիրն զիր անունն ընդէր ոչ է եղեալ, թէ նորա արարած է այս գիրք: Վասն զի ոչ ունէին հպարտ ազգս հայոց զիմաստս վարդապետաց իրեանց, ոչ եդ զանունն, զի մի կորուսցեն եւ կամ մի առաւել պատուեսցեն այլք: Իսկ ի Բարձրացուցեացն սկիզբն յետոյ եղին զնորա անունն եւ Սահմանաց գիրս ոչ զտեալ եղեւ յայնժամ եւ այլ յետոյ չարարին փոյթ դնել զանուն նորա: Ասաց սա չորս գիրքն. առաջին՝ զԲարձրացուցէքն, երկրորդ՝ զՍահմանացն, երրորդ՝ զՔերականին մեկնիչն, չորրորդ՝ զՊէտքն, գոն եւ առանձինն այլ ճառեր, արար իհնգերորդ՝ եւ սաղմոսին պատճառ, եւ զի ոչ գոյր փափագանօք խնդրող, վասն այն եւ նա ոչ արար գիրք այլ, զի մի նախատեսցի, որպէս յառաջդ ասացաք: Ապա թէ ոչ իմաստուն էր առաւել քան զառաւել»<sup>6</sup>: Ինչպէս տեսնում ենք, միջնադարում նույնպէս քննել են, թե արդյո՞ք այս երկերը Ղափթին են պատկանում, թե՛ ոչ, և եթե նրանն են, ինչու՞ վերնագրում նշված չէ նրա անունը, այլ հետագայում է ավելացվել: Տրվող բացատրությունը հետևյալն է՝ որպէսզի նրա երկերը կորստյան չմատնվեն իր հակառակորդների կողմից, կամ էլ առավել պատվի չարժանանան իրեն սիրողների կողմից: Այդուհանդերձ, կարևոր է այն հանգամանքը, որ «հունաբան դպրոցի անձնվեր ներկայացուցիչները կարևոր չէին համարում նշել իրենց անունները»<sup>7</sup>, իրենց գործն աստվածահաճո համարելով:

Բացի վերոնշյալ պատճառներում նշված երկերից («Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ», որ առավել հայտնի է սկսվածքի առաջին բառով՝ «Բարձրացուցէք», «Սահմանք

<sup>6</sup> Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, XXXIII–XXXIV.

<sup>7</sup> Շիրինյան Մ. (ե.), Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, Երևան, 2005, էջ 117:

իմաստասիրութեան», Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ Զերականութեան» երկի մեկնության, «Գիրք Պիտոյից», «Մեկնութիւն *Ստորոգութեանցն* Արիստոտելի» և «Վերլուծութիւն *Ներածութեանն* Պորփյուրի», Սաղմոսների մեկնություն), Դավթի անունով հայտնի են նաև Կաթողիկե եկեղեցուն նվիրված ներբողը, «Առածք հինգ» և «Վասն բաժանման» մանր գրվածքները: Նրան վերագրվում են նաև «Եակաց գիրքը», ինչպես նաև՝ Պորփյուրի «Ներածության», Արիստոտելի «Ստորոգությունների» և «Յաղագս մեկնութեան», Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» երկերի թարգմանությունները: Անշուշտ, այս երկերից որոշների հեղինակն իսկապես Դավիթ Անհաղթ փիլիսոփան է, սակայն ոչ բոլորինը: Այսօր մասնագետների կողմից հիմնականում ընդունվում է չորս հայտնի փիլիսոփայական երկերի («Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն *Ներածութեանն* Պորփիւրի», «Մեկնութիւն ի *Վերլուծականն* Արիստոտելի» և «Մեկնութիւն *Ստորոգութեանցն* Արիստոտելի») Անհաղթի հեղինակ լինելը:

Ե՞րբ, ու՞մ կողմից են գրվել կամ թարգմանվել և ինչ սկզբունքով են վերոնշյալ երկերը վերագրվել Դավիթ Անհաղթին: Հիմնվելով «Վերլուծութիւն *Ներածութեանն* Պորփիւրի» երկում նշված մեթոդների վրա՝ կարող ենք ենթադրել, թե գուցե՞ ոմանք փառասիրության պատճառով են իրենց երկերի վրա դրել Դավթի անունը, կամ, հնարավոր է, որ Դավթի աշակերտներն<sup>8</sup> իրենց ուսուցչի հանդեպ ունեցած բարեմտության պատճառով նրա անունն էին դնում իրենց երկերի վրա: Հիշենք նաև, որ միջնադարում տարբեր Դավիթներ են ապրել,

---

<sup>8</sup> Աշակերտ ասելով նկատի ունենք նաև հետագա դարերում նրանից ազդված հեղինակներին:

որոնք միաժամանակ փիլիսոփաներ են եղել<sup>9</sup>, ինչը հետագա դարերի մատենագիրների երկերում կարող էր շփոթմունքի պատճառ դառնալ: Մեկ այլ, մեր կարծիքով շատ հավանական, տարբերակ է այն, որ դավանաբանական աշխատությունները պետք է տարածվեին և ճանաչվեին փիլիսոփայական, ըստ ավանդության նաև դավանաբանական վիճաբանություններում հաղթած փիլիսոփայի անունով, ով հայտնի էր նաև Հայաստանի սահմաններից դուրս: Այսինքն՝ տվյալ դեպքում նույնիսկ նրան երկերի վերագրումը որոշակի նպատակ է հետապնդել:

Հետաքրքրական կլինի պարզել նաև, թե Դավթին վերագրված երկերից յուրաքանչյուրը մոտավորապես որ շրջանից է հանդես գալիս ձեռագրերում նրա անունով: Իհարկե, այս հարցը միայն մասամբ կարող է գտնել իր պատասխանը, եթե հաշվի առնենք, որ դարերի ընթացքում հազարավոր ձեռագրեր են կորել: Կարծում ենք՝ այս փաստը կարող է սերտորեն կապված լինել որևէ ժամանակաշրջանում դավանաբանական վեճերի սրման և այս նպատակով կրկին Դավթին «վերհանելու» կարևորության հետ:

Այս տեսակետից ուշագրավ է նաև ձեռագիր ժողովածուների կազմման սկզբունքները, ինչը ևս քիչ ուսումնասիրված հարց է գիտության մեջ: Բացի փիլիսոփայական ժողովածուներից, Դավթին վերագրվող թե՛ փիլիսոփայական, թե՛ կրոնական երկերը ներառված են նաև դավանաբանական-աստվածաբանական բնույթի ժողովածուներում՝ հատկապես հակաքաղկեդոնական երկերի կողքին: Բացի զուտ դավանաբանական կարևորությունից, նրա փիլիսոփայական երկերին տրվել են բարոյագիտական, աստվածաբանական ուղղվածություն և

---

<sup>9</sup> Տարբեր Դավիթների մասին տես Չալոյան Վ., Դավիթ Անհաղթ (բանասիրական ակնարկ), «Պատմա-բանասիրական հանդես», 1980, N 1, էջ 52-62:

նույնիսկ փիլիսոփայական երկերն ուղղակիորեն դրվել են «քրիստոնեական կաղապարի մեջ»: Այսպես՝ գրեթե բոլոր ծեռագրերում «Սահմանք իմաստասիրութեան» երկին հաջորդում է «Նորին (Դաւթի Անյաղթի – Ա. Մ.) Ամենայն չար տանջելի» փոքրիկ գրվածքը<sup>10</sup>, որը կարծես դիտվել է որպես «Սահմանք»-ի ուղղակի շարունակություն և երբեմն նույնիսկ հանդես է գալիս առանց խորագրի<sup>11</sup>: «Սահմանք իմաստասիրութեան» երկն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «...որպէս զի մի սուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք և մի չար գործեսցուք»<sup>12</sup>: Այստեղ շատ «համահունչ է» «Ամենայն չար տանջելի» խորագրով կամ, ավելի ճիշտ, սկսվածքով երկը, որն ավարտվում է այսպես. «Այս գծածք հանդիսադիր խմբի յառաջագոյն տառից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ներքողեալ ի Դաւթէ եռամեծէ ենթադրեցաւ»<sup>13</sup>: «Ենթադրեցաւ» եզրը, որը հաճախ հանդիպում է նաև «ընթադրեցաւ» ձևով, հունարեն «*υποθετω*» բառն է և նշանակում է կարգել, հանգուցանել, հաստատել<sup>14</sup>: Այսինքն՝ թեև խորագրում նշվում է «Դաւթի Անյաղթի...», վերջին հատվածից և հատկապես «ենթադրեցաւ» եզրից կարելի է հասկանալ, որ Դավիթը ոչ թե հեղինակել, այլ «կարգել է» այս գրվածքը որպես «Սահմանք իմաստասիրութեան» երկի շարունակություն կամ հաջորդող

<sup>10</sup> Հունական և լատինական աղբյուրներում այս երկը հայտնի է Գրիգոր Նյուսացու անունով:

<sup>11</sup> Ներսես Շնորհալիւն մեկնել է «Ամենայն չար տանջելի»-ն որպես «Սահմանք իմաստասիրութեան» երկի վերջին գլուխ (Տե՛ս «Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և ատուածաբան վարդապետի, Կ.Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու», 1731 թ., էջ 287–290):

<sup>12</sup> Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, էջ 104:

<sup>13</sup> Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 216:

<sup>14</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Ա, Վենետիկ, 1836, էջ 658:

երկ<sup>15</sup>: Իհարկե, այս կաղապարն այնքան էլ օտար չէ նորալատոնական փիլիսոփա Ղավթին, ում համար փիլիսոփայությունն ինքնանպատակ չէ, այլ միտված է մարդու հոգին մաքրելու, բարձրացնելու, առավել բարի դարձնելու, դեպի աստվածանմանություն տանելու:

Ուշադրության արժանի են նաև ձեռագրերում Ղավթի երկերի խորագրերը, որոնք անշուշտ, հետագա հավելումներ են և միջնադարյան հեղինակների՝ Ղավթի հանդեպ ունեցած վերաբերմունքի շատ խոսուն վկայություն են հանդիսանում: Բացի «Անյաղթ փիլիսոփա» պատվանունից, օրինակ՝ «Սահմանք իմաստասիրութեան» երկի խորագրում Ղավթին անվանվում է «աստվածասեր և աստվածախոհ փիլիսոփա»: Այսինքն՝ Ղավթի ղիտվել է որպես քրիստոնյա-աստվածաբան-փիլիսոփա: Մեր կարծիքով՝ շատ կարևոր է այն հանգամանքը, որն, ի դեպ, հաճախ անտեսվել է մասնագետների կողմից, որ Ղավթի ղիտվում է Վայ եկեղեցու կողմից: Ղավթի տոնը նշվում է Թարգմանչաց կանոնի մեջ՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու հետ միասին: Ե՞րբ, ինչու՞ և ու՞մ կողմից է սրբադասվել Ղավթի Անհաղթը: Հայոց եկեղեցում սրբադասման հստակ կանոնի բացակայության պատճառով այս հարցը շատ խրթին է, այնուամենայնիվ հետագայում փորձելու ենք ինչ որ լուծումներ և հնարավոր տարբերակներ առաջարկել:

---

<sup>15</sup> Ամենայն հավանականությամբ այս երկը ոչ թե Ղավթի կողմից, այլ ավելի ուշ շրջանում է կցվել Սահմանքին, սակայն այս դեպքում էլ երկի «կարգումն» է վերագրվում Ղավթին: «Ամենայն չար տանջելի»-ն տեղ է գտել Մխիթարյան հայրերի կողմից լույս ընծայված Ղավթի Անհաղթի մատենագրության մեջ՝ հաջորդելով «Սահմանք իմաստասիրութեան» երկին (տե՛ս Կորիւն վարդապետի, Մամբրէ Կերժանողի եւ Ղաթի Անյաղթի մատենագրութիւնը, էջ 215–216): Սեն Արևշատյանի կազմած քննական բնագրում այս հատվածը ներառված չէ՝ չնայած օգտագործված ձեռագրերում այն առկա է (Ղաթի Անյաղթ, Երկասիրութիւնը փիլիսոփայականը, Երևան, 1980):

Սակայն, այժմ անդրադառնանք այն հարցին, թե Ղափիթն ինչու կարող էր սրբադասվել եկեղեցու կողմից:

Ղափիթ Անհաղթը Հայաստանում փիլիսոփայական դպրոցի հիմնադիրն էր: Այդ դպրոցի շնորհիվ թարգմանվեցին, մեկնվեցին երկեր, որոնցում մշակվեցին այն սկզբունքները, փիլիսոփայական եզրերը, որոնց շնորհիվ Հայոց եկեղեցին կարողացավ ունենալ ամուր դավանաբանական համակարգ: Չպետք է մոռանալ, որ միջնադարում ամեն բան արվել է Հայոց եկեղեցու դավանաբանությունը պաշտպանելու նպատակով: Փիլիսոփայական երկերի թարգմանությունը, փիլիսոփայական տերմինների յուրացումը նույնպես նպատակ ուներ ամրապնդել եկեղեցու դավանաբանությունը, որով նա պետք է արիստոտելյան և պլատոնյան փիլիսոփայության հզոր զենքերով պաշտպանվեր քաղկեդոնական եկեղեցու և նրան աջակցող Բյուզանդական կայսրության ուժեղ ազդեցությունից: Սակայն արդյո՞ք փիլիսոփայական երկերի առկայությունը բավարար պայման կարող էր լինել Ղափիթի սրբադասման համար: Տրամաբանական է, որ նա պետք է ունենար նաև աստվածաբանական բնույթի երկեր և այդպիսիք կան մեր մատենագրության մեջ: Տվյալ դեպքում կարևոր չէ, թե Ղափիթ Անհաղթին վերագրվող աստվածաբանական երկերն իսկապես նրա գրչին են պատկանում, թե՛ ոչ, այլ այն, որ եկեղեցին սրբադասել է հենց այդ երկերի հեղինակ Ղափիթին:

Միջնադարյան հեղինակները, ընդունելով հանդերձ Ղափիթ Անհաղթ փիլիսոփայի բացարձակ հեղինակությունը, այնուամենայնիվ, փորձել են ճշտել նրա անձի և գրական ժառանգության հետ կապված խնդրները: Ի դեպ, այդ հեղինակները (Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Վարդան Հաղբատեցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Ներսես Շնորհալի, Առաքել Սյունեցի և այլք), որոնց երկերն այժմ մեզ համար աղբյուր են

հանդիսանում, իրենց ժամանակներում Ղափի Անհաղթին առնչվող «մութ» հարցերի ուսումնասիրողներ են եղել: Նրանք փորձել են գրավոր աղբյուրներից, բանավոր ավանդազրույցներից գտնել և վերհանել Ղափի մասին ճշմարտությունը:

Այսպիսով, կարևոր է Ղափի Անհաղթ փիլիսոփայի թե՛ կյանքին և թե՛ գրական ժառանգությանն առնչվող խնդիրներն ուսումնասիրելիս հաշվի առնել միջնադարյան ընկալումները, մոտեցումները և դրանք քննել միաժամանակ պատմական, աստվածաբանական, բանասիրական, տեսանկյուններից:

АРМИНЕ МЕЛКОНЯН

## К ВОПРОСУ О ПОДЛИННОСТИ ТРУДОВ ПРИПИСЫВАЕМЫХ ДАВИДУ АНАХТУ

### РЕЗЮМЕ

В средневековой армянской литературе многие философские и богословские сочинения были приписаны философу Давиду Анахту (Непобедимый). Его канонизация со стороны Армянской церкви означает, что кроме философских трудов он является также автором богословских трудов. В статье рассматривается вопрос аутентичности и атрибуции некоторых произведений Давида Анахта. Касаясь принципов составления армянских рукописей отмечается, что кроме философских, также и философско-теологические работы Анахта включены в догматические-богословские сборники. Даже если Давид Анахт и не является автором приписываемых ему всех философских и богословских сочинений, это имело особое значение и цель.



ON THE PROBLEM OF AUTHENTICITY OF THE  
WORKS ATTRIBUTED TO DAVID THE INVINCIBLE

SUMMARY

In the medieval Armenian literature many philosophical and theological writings have been attributed to David the Invincible philosopher. His canonization by the Armenian church implies that he must have made a significant contribution to the Armenian Church: it also raises the question that except philosophical writings he is the author of theological works as well. Touching upon the principles of composing Armenian manuscripts, it is noticed that except the philosophical collections David's works (both philosophical and religious) are included in the dogmatic-theological miscellanies especially with the anti-Calcedonian writings. Even if David is not the author of all the philosophical and theological writings attributed to him, the ascription had a special purpose and importance.

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ V–XIV ԴԴ.

Միջնադարյան Հայաստանում վերահսկողության գործառույթներ էին իրականացնում պետական կառավարման բարձրագույն մարմինները՝ «գործակալությունները», իսկ հոգևոր ոլորտներում՝ Հայոց առաքելական եկեղեցու կառույցները՝ կաթողիկոսի գլխավորությամբ:

«Գործակալությունների» գլուխ էին կանգնած «իշխանք», «գաւառապետք», «պետք և բռնաւորք», «հազարաւորք», «կուսակալք», «աւագ նախարարք»<sup>1</sup>: Վերահսկողական ծառայություններ կատարողներ էին «նախարարք մեծամեծք», «աւագք», «կուսակալք», «դատաւորք», «պետք», «իշխանք»<sup>2</sup>:

Արշակունիների Հայոց թագավորության մեջ արքունիքում բարձր պաշտոններ՝ «գործեր» ստացած նախարարներն իրենցից կախման մեջ գտնվող պաշտոնյաների («գործակալք») միջոցով վերահսկում էին երկրում տեղի ունեցող պետաիրավական և ֆինանսատնտեսական գործընթացները:

Հայաստանում գերազդեցիկ գործառնությամբ օժտված «հազարապետություն» գործակալությունն Ամատունի կամ Գնունի նախարարական տոհմերի գլխավորությամբ իրականացնում էր երկրի տնտեսական բարեկարգման, ֆինանսների, շինարարական աշխատանքների, պետական պարիակների և

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 428:

<sup>2</sup> Տե՛ս Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 46:

հարկահանության նկատմամբ պետական վերահսկողությունը: Եղիշե պատմագրի հավաստմամբ «հազարապետն էր աշխարհին, իբրև գհայր վերակացու»<sup>3</sup>:

Հազարապետն իր տրամադրության տակ ուներ հարկահանությանն առնչվող գործառույթները վերահսկող հատուկ պաշտոնյաներ («գործակալք»), որոնք հետևում էին, որպեսզի գյուղահամայնքների գլուխ կանգնած տանուտերերը ժամանակին ու անթերի կատարեին գյուղացիներից պետական հարկերի գանձումը: Հազարապետին էին ենթարկվում նաև քաղաքների թագավորական տնտեսները՝ «շահապները», որոնք վերահսկում էին քաղաքաբնակներից պետական հարկերը գանձելու գործառույթները:

Հազարապետությունը վերահսկում էր նաև հասարակական աշխատանքների (պետական պարիակների) կատարման ընթացքը: Հազարապետի ստորակա պաշտոնյան՝ «գարիկպետը» հավաքագրում ու կազմակերպում էր աշխատողներին և իրականացնում համերկրային և պետական կարևորություն ունեցող աշխատանքները՝ քաղաքների ամրություններն ու կամուրջների կառուցումը, ջրանցքների անցկացումը, ճանապարհաշինությունը, անտառատնկումները<sup>4</sup>:

Հայաստանում վերահսկողական գործառնությամբ էր օժտված նաև «մարդպետություն» գործակալությունը, որը վերահսկում էր Արշակունիների արքունիքի, թագավորական ամրությունների, բերդերի պահպանությունը, արքունի գանձերին, կալվածներին առնչվող գործերը: Հայր մարդպետը վերահիշակում էր թագավորական տան սեպուհների (արքայազների)

<sup>3</sup> Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 23:

<sup>4</sup> Տես Մանանդյան Հ., Երկեր, հ. 7, Երևան, 1981, էջ 241-244:

դաստիարակության գործը: Մարդպետներն իրենց տրամադրության տակ ունեին հատուկ («սեպուհական» կամ «մարդպետական») զորաբաժին և մեծ ազդեցություն ունեին արքունիքում: Նրանց վերահսկողական իրավազորությունը զգալի էր նաև այլ բնագավառներում (Հայոց թագավորի կանանոցի, հանդերձարանի հսկողությունը):

Համերկրային վերահսկողական գործառնություն էր իրականացնում Հայոց եկեղեցին: Յուրաքանչյուր եկեղեցաթեմում վերահսկողական ծառայությունը գլխավորում էր թեմակալ եպիսկոպոսը: Վերջինիս ենթարկվող քորեպիսկոպոսներն իրականացնում էին վերահսկողությունը տեղերում: Փավստոս Բուզանդը հիշում է Դանիել քորեպիսկոպոսին, որը տեսչական այցելություն էր կատարում իր իրավասությանը ենթակա Եկեղյաց գավառում<sup>5</sup>: «Քորեպիսկոպոսդ տեսուչ գաւառի ասի», կարդում ենք Հայոց Կանոնագրքում<sup>6</sup>: Քորեպիսկոպոսները հսկում էին հոգևոր-եկեղեցական գործառնոյթները գյուղերում<sup>7</sup>: Սահակ Պարթևի կանոնների Դ հոդվածով «տեսուչ քորեպիսկոպոսն պարտի համառատել զամենայն եկեղեցիս»<sup>8</sup>: Քորեպիսկոպոսները պարտավոր էին նաև հսկել իրենց ենթակա կրոնի սպասավորների վարքուբարքը և ժամերգություններն ու պատարագներն ըստ պատշաճի կատարելու գործընթացները: Թ կանոնով սահմանվում էր, որ «...տեսուչ քորեպիսկոպոսն, զլաւս եւ զաջողակս պատուոյ եւ մեծարանաց առնել արժա-

<sup>5</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 31:

<sup>6</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 163:

<sup>7</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 212:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 369:

նի»<sup>9</sup>: Եպիսկոպոսը, համաձայն Թադեոս առաքյալի Բ կանոնի, պետք է նշանակեր գավառների ու քաղաքների տեսուչներ<sup>10</sup>:

Եկեղեցական տեսուչ հսկողները գործ ունեին հավատացյալների հոգիների մեղսագերծմանն առնչվող խնդիրների հետ: Նրանց հսկողության տակ էին նաև դպրոցները, ուսումնագիտական հաստատությունները: Սահակ Պարթևի Ժ կանոնով քրեաէպիսկոպոս-տեսուչները պարտավոր էին վերահսկել դպրոցներում ընթացող ուսումնական գործընթացները, բացահայտել օրինախախտումները: Թադեոս առաքյալի Ա կանոնը պահանջում է, որպեսզի վերահսկողությունն իրականացնող եպիսկոպոսները լինեն անբիծ վարքի տեր, ուսուցանող, անարժաթասեր, հրաժարվեն կաշառքից<sup>11</sup>: Հովհան Մանդակունի կաթողիկոսից (V դար) մեզ հասած կանոնում ասվում է, որ «տեսուչ ժողովրդեանն» պարտավոր է «ողջ պահել զժողովուրդն և ապրեցուցանել զնոսա»<sup>12</sup>: Իսկ Թադեոս առաքյալի Բ կանոնը պատվիրում էր, որպեսզի վերահսկողություն իրականացնելիս չցուցաբերվի խտրական վերաբերմունք, կրկնակի ստուգել, քննել օրինազանցների արարքները՝ նախ առանձին, ապա երկու կամ երեք վկաների, վարդապետների մասնակցությամբ<sup>13</sup>:

Ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց կաթողիկոսը պարտավոր էր «կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատատանաց և այլ աշխարհական կարգաց»<sup>14</sup>: Կաթողիկոսը հսկում

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 372:

<sup>10</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1971, էջ 23:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 20:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>14</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 350:

էր դատական գործառնութեամբ օրենքների խստով կատարումը, քանի որ օրենքները սահմանվում էին եկեղեցու կողմից՝ ազգային-եկեղեցական ժողովներում: Այդ ժողովներին միշտ մասնակցում էին նախարարները, անշուշտ, իրենց նպաստը բերելով կանոնական որոշումների ընդունմանը, քանի որ աշխարհական գործերը վերահսկվում, հանցապարտների նկատմամբ պատիժներ և տուգանքներ էին սահմանվում ու գործադրվում աշխարհիկ դատարանների կողմից:

Վերահսկողական բացառիկ իրավագործությամբ էր օժտված «թագադիր և թագակապ ասպետության» գործակալությունը, որը Բագրատունի նախարարական տոհմի ժառանգական մենաշնորհն էր: Թագադիր ասպետը թագ էր դնում Արշակունի Հայոց թագավորի գլխին, նաև հսկում պալատական շքակարգի ու վարվելակերպի բնագավառում սահմանված կանոնակարգի պահպանումը:

Վերահսկողական ծառայությունների առջև ծառայած խնդիրները քննարկվում և որոշումներ ընդունվում էին ազգային-եկեղեցական ժողովներում: Կաթողիկոսն էր Հայոց եկեղեցու գերագույն դատավորը, վերջնական վճիռ կայացնողը: Նրա կայացրած վճիռը բողոքարկման ենթակա չէր: Նա կարող էր բանադրել թագավորին, նախարարներին:

Քրիստոնեությունը 301 թ. պետական կրոն հռչակելուց հետո Հայաստանում Հայոց եկեղեցին սահմանեց սեփական կանոնախմբեր, որոնք հաստատվում էին ազգային-եկեղեցական ժողովներում: Դրանցից առաջինը գումարվեց Տարոնի Աշտիշատ ավանում 354 թ.: Ժողովի սահմանած կանոնների գործադրմանը հսկելու էր եկեղեցին, որը հեթանոսաբարո սովորույթները վերացնելու համար խիստ հսկողություն սահմանեց: Ժողովի որոշումների կատարման վերահսկողությունն իրականացվում էր Ներսես կաթողիկոսի բարձր հովանավորությամբ:

Նա, ինչպես հավաստում է պատմագիրը, աշխարհի վերակացությունը կատարում էր իր ամբողջ կյանքի ընթացքում<sup>15</sup>: Բարեգործական հաստատությունների վրա անմիջական վերահսկողությունն իրականացնում էին Խաղ եպիսկոպոսը և ուրիշներ<sup>16</sup>:

447 թ. Շահապիվանում կայացած երկրորդ ազգային եկեղեցական ժողովն իր սահմանած կանոններով ոչ միայն վավերացրեց Աշտիշատի ժողովի որոշումները, այլև հաստատեց Նիկիայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ., Եփեսոսի 431 թ. տիեզերական ժողովներում ընդունված կանոնական որոշումները, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի ու Մաշտոցի, ապա նաև օտար՝ առաքելական կանոնները: Ժողովում օտարամույծ կանոնները երանգավորվեցին ազգային գույներով:

Ժողովի կանոններն ընդունվեցին հոգևոր և աշխարհիկ տերերի միակամ որոշմամբ: Ընդունված կանոնները խիստ պատիժներ էին սահմանում նաև եկեղեցականների կանոնազանցումների համար: Ժողովի ընդունած առաջին հոդվածով, եթե եպիսկոպոսը բռնվեր բարոյազանց արարքներում, զրկվելու էր աթոռից ու իշխանությունից և 1200 դրամ տուգանք էր վճարելու՝ կարոտյալներին բաշխելու համար<sup>17</sup>: Պատիժ և տուգանք էր նախատեսվում նաև հանցապարտ քահանաների ու սարկավազների համար: Դրանց գործադրմանը հետևում էր եկեղեցին՝ իրականացնելով իրավական վերահսկողություն: Ելնելով երկրում ստեղծված վիճակից՝ Շահապիվանի ժողովում Եկեղեցին սահմանեց դաժան պատիժ՝ հավատուրացնե-

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 67:

<sup>16</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 279-280:

<sup>17</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 429:

րի, կախարդների և այլ կարգի չարագործների քարկոծում (Ը կանոն):

Վասակ Սյունին գլխավորում էր հարկային գերատեսչությունը և վերջինիս գործակալներին<sup>18</sup>: Նրանք առաջնորդվում էին նաև Եկեղեցու սահմանած օրինադրություններով ու կանոններով, որոնք պատիժներ կամ տուգանքներ էին սահմանում նաև ընտանեկան հարաբերությունները կարգավորելու համար:

Հայաստանում պահպանվում և Սասանյանների կողմից հովանավորվում էին հեթանոսական որոշ սովորույթներ՝ հատկապես ազգականների հետ ամուսնությունը: Շահապիվանի ժողովի ժԲ կանոնով արգելվում էր այրիացած հարսի ու եղբոր կնոջ հետ ամուսնությունը: Կարգը խախտողները ենթակա էին նզովքի ու ապաշխարանքի, տուգանքի: Մինչև չորս աստիճանը («պորտը») արգելվում էր ազգականների ամուսնությունը<sup>19</sup>: Քանի որ նզովքն ու ապաշխարանքն եկեղեցու կողմից էին պարտադրվում, ուստի դրանց իրականացումը վերահսկում էին եկեղեցականները: Տուգանքը վերահսկում էին աշխարհիկ կառույցները: Նույն ժողովի ժԵ կանոնը պահանջում էր, որպեսզի կրոնավորող միայնակյացներն ու արեղաներն ապրեն սրբակեցությամբ, իսկ ժԶ կանոնի համաձայն, եթե եպիսկոպոսը, քահանան կամ «ազատ ոք ի դատաւորաց» և շինականը ցանկանում են հոգևոր առաջնորդներ կարգել, պատրաստել եկեղեցու սպասավորներ, նշանակել «ժողովրդապետս եւ արինսդիրս», պետք է հրաժարվեն կաշառք վերցնելուց և ընտրությունն արդարությամբ կատարեն՝ ի տես և ի խրատ մյուսների: Իսկ այն պաշտոնյան, որը կաշառք էր վերցնում, նզով-

<sup>18</sup> Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրությամբ՝ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 83:

<sup>19</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 445-446:



վում ու գրկվում էր իշխանությունից: Նույն կանոնով գավառի եպիսկոպոսի վերահսկողության տակ էին նաև գավառի վանքերը, վանաց երեցները և անապատականները<sup>20</sup>:

Հայոց եկեղեցին նախանձախնդիր էր հայոց դավանական ինքնորոշման պահպանմանը: 506 թ. Բաբկեն Ա Ռթմսեցի կաթողիկոսի նախագահությամբ Դվինում կայացած ժողովում դրվեց հայոց դավանության հիմնաքարը: Այդ որոշումն ուներ նաև ազգապահպան հույժ կարևոր նշանակություն: Այն կենսագործելու համար Եկեղեցին հետևողականորեն գործի էր դնում իր վերահսկողական իրավագործությունը, անշուշտ, թիկունքում ունենալով հայ նախարարներին:

Հայոց կաթողիկոս Ներսես Բ-ի (548–557) օրոք՝ 554 թ. Դվինում կայացած ժողովում ընդունվեցին 37 կանոններ: Առաջին կանոնով պատվիրվում և հսկողություն էր սահմանվում քահանաների կողմից սեղանի հացը և զանազան նվիրատվություններ եկեղեցի ուղարկելու վրա<sup>21</sup>: Երրորդ կանոնում նշվում էր, որ երբ որևէ մեկը չի կարողանում եկեղեցուն տրվող տուրքը վճարել, որոշ քահանաներ թույլ են տալիս այն հետագայում վճարել, սակայն պահանջում են նաև վաշխը (տոկոսը): Հինգերորդ կանոնի համաձայն՝ եկեղեցու տգետ պաշտոնյաները պետք է կարգալույծ արվեին և վերադառնային հայրենի հողին ու՝ ջրին, վճարեին արքունի հարկը և իրենց որդիներին դպրոց ուղարկեին: Հասկանալի է, դրանք իրականացվելու էին եկեղեցու վերահսկողության ներքո: Հողվածներից մի քանիսում խոսվում է քահանաների զանազան կանոնազանցումների մասին, որոնք ևս ենթակա էին եկեղեցական վերահսկողությանը: ԺԳ կանոնը պահանջում է, որպեսզի բնակչության կող-

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 445–448:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 478:

մից տրված տուրքը («պտղի») բերվի եկեղեցի, և քահանաներն այն բաժանեն միմյանց միջև, բաժին հանելով նաև այրի կանանց՝ եթե նրանք պարկեշտ են<sup>22</sup>: Լե կանոնով պատիժ էր նախատեսվում վաճառականությամբ ու վաշխառությամբ զբաղվող հոգևորականների նկատմամբ<sup>23</sup>:

Այդպիսով, հայոց պետականության բացակայության պայմաններում Եկեղեցին պահպանում էր իր օրինակարգող և վերահսկող գործառնությունը: Սահմանելով իրավանորմեր ու օրինադրույթներ, Եկեղեցին նաև վերահսկում էր դրանց կատարման ընթացքը: Նախարարական պետականության գոյության պայմաններում Եկեղեցին նախկինի պես աշխարհական գործերի վերահսկողությունը թողնում էր աշխարհիկ իշխանություններին: Հայ եկեղեցին կարգի էր հրավիրում, դատի կանչում բոլոր զանցառուներին և պատվիրում էր պատժել: Դատողը Հայոց կաթողիկոսն էր: Նա էր նաև ընդհանուր վերահսկողական գործառնության կենսագործողը: Նա էր օրենսդրական մարմնի առաջնորդը, որին վերապահված էր շնորհման, ներման իրավունքը: Բայց Եկեղեցու օրենսդրական իրավունքը պատկանում էր ազգային-եկեղեցական ժողովին: Երբ կաթողիկոսը կանոններ էր սահմանում, դրանք հաստատվում էին ժողովում: Եկեղեցական կանոնները կիրառվում էին քաղաքացիական օրենքներին զուգահեռ: Երկուսն էլ հաշվի էին առնում քրիստոնեացված սովորության իրավունքը և համազոր իրականացնում վերահսկողական գործառնություններ, քննում օրիանախախտումները, որոշում հանցավորության չափը և ներկայացնում համապատասխան մարմիններին: Աշխարհիկ

---

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 483:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 490:

իշխանություններին թույլ չէր տրվում կասեցնել վերահսկող մարմինների որոշումները:

Եկեղեցու և աշխարհիկ մարմինների վերահսկողական գործունեությունը նպաստում էր երկրի ինքնուրույնության ամրակայացմանը, միասնական իրավակեցության պահպանմանը:

Կարևոր որոշումներ ընդունեց Դվինի 645 թ. ժողովը, որը նզովեց քաղկեդոնականությունը: Ներսես Գ Շինարար կաթողիկոսի նախագահությամբ կայացած այս ժողովում ընդունվեցին 12 կանոններ, որոնք վերահսկողություն էին սահմանում ինչպես հոգևոր դասի գործունեության, այնպես էլ բարոյական մաքրագործման վրա: Առաջին կանոնը պահանջում էր, որպեսզի եկեղեցու առաջնորդները՝ եպիսկոպոսները սրբությամբ ու արդարությամբ կատարեն իրենց պաշտոնը և օրինակ ծառայեն ժողովրդի համար՝ «ամենայն բարեծեւութեամբ»<sup>24</sup>: Գ կանոնը պահանջում էր, որպեսզի եպիսկոպոսը չհափշտակի ուրիշ եպիսկոպոսի թեմը և չվերցնի իրեն չպատկանող հատույթները: Դ կանոնով սահմանվում էր, որ եպիսկոպոսները պարտավոր են իրենց թեմերում վանքերի, դպրոցների նկատմամբ «տեսչություն և հոգաբարձություն», այսինքն՝ վերահսկողություն կատարել ոչ թե բռնությամբ ու ազատությամբ, այլ վայելուչ ձևով: Նրանք պարտավոր էին նաև «տկարանոցս հայել և տեսչաւորել», տուգանել զանցառուներին: Թերացողների հանդեպ վերահսկողություն էր սահմանվում, որի ընթացքում եպիսկոպոսը որպես տվյալ եկեղեցաթեմի (վիճակի) առաջնորդ ու վերահսկող, պետք է խրատեր և զանցառուներին բերեր «ի կարգ յուղղութեան»<sup>25</sup>: Զ կանոնով եպիսկոպոսն իր վե-

<sup>24</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 202:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 204–205:

րահսկողական իրավագործությամբ կարող էր կարգազանցին գրկել քահանայությունից:

Խստիվ վերահսկողություն էր սահմանվում անժառանգ եկեղեցականի ունեցվածքի նկատմամբ: Վերջինս իրավունք չուներ հօգուտ ազգականների կամ որդեգրի իր «հողից ու ջրից» բաժին տալ՝ կտրելով եկեղեցու տիրույթներից: Բայց նա կարող էր իր շարժական գույքը տալ ում որ կամենար, նաև վաճառել, կտակել (Ը կանոն): Թ կանոնով արգելվում էր քահանաների հողաբաժինները գյուղացիների հողերին հավասար կարգով ազգականների կողմից հարկման ենթարկելը: Հաջորդ՝ Ժ կանոնում ասվում է, որ ազատներից ոմանք վանքերի նկատմամբ իշխանություն են գործադրում, նշանակում կամ արձակում են իրենց ցանկացած վանականին: Կանոնը պատվիրում էր վանքերի ու եկեղեցիների «տեսչությունը», իմա՝ վերահսկողությունը վերապահել եպիսկոպոսներին: Ազնվական դասը ևս վերահսկում էր վանքերն ու եկեղեցիները: ԺԱ կանոնում նշվում էր, որ ազնվականներից ոմանք անգամ իշխանություն են իրականացնում հիվանդանոցների նկատմամբ, վերահսկող գործակալներ են նշանակում հիվանդների ուտելիքի, ընպելիքի վրա, նեղում, բռնությամբ հարկ են պահանջում նրանցից<sup>26</sup>: Հասկանալի է, որ ազատանին ավելի խստաշունչ վերահսկողություն էր գործադրելու աշխարհականների նկատմամբ, օգտվելով նաև պատժելու իր իրավունքից (իրեն ենթակա գավառներում): Ժողովական ազնվականները վերահսկողական գործառույթներ կենսագործելիս պետք է ընդունեին կանոնականացված այդ պահանջները: Փաստորեն Դվինի 645 թ. ժողովում շոշափվում էին նաև պետական-վերահսկողական և հասարակական սուր հնչեղություն ունեցող խնդիրներ, որոնք

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 211:

միտված էին եկեղեցու իշխանության և նախարարական պետականության ամրապնդմանը:

Արաբական խալիֆայության կողմից Հայաստանի վերջնական նվաճումից (701) հետո հայ ազնվականության ու եկեղեցու առջև ծառայցավ իսլամի, որպես կրոնական հզոր ուժի և օրինակարգի հորձանքին դիմակայելու, երկրի ինքնավար իրավունքների, քրիստոնեական իրավակարգի ու կենսակերպի պահպանման անհրաժեշտությունը: Իսլամի ազդեցությունը պատնեշող հաստատուն կռվան դարձավ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի (717–728) կողմից Հայոց կանոնագրքի ստեղծումը, որի շնորհիվ վերահսկողական գործառնությունը ավելի հաստատուն հիմքերի վրա դրվեց: 719 թ. Դվինում իրավիրված ժողովում Օձնեցին շեշտեց, որ երկրում առկա է «անկարգութիւն բազմացեալ», որի պատճառով ժողովուրդը դարձել է «բազմահետք և բազմաշաւիղք»<sup>27</sup>: Այդ ժողովում հաստատվեցին Օձնեցու հեղինակած 32 կանոնները, որոնք կոչված էին պաշտպանելու Հայոց եկեղեցու դավանաբանական համակարգը «և ոչ խոնարհել յայլ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս»<sup>28</sup>: Ավելի ամրապնդվեցին եկեղեցու վերահսկողական գործունեության իրավական հիմքերը:

истинную связь с Традицией могут претендовать только “компаньонаж и масонство, т.е. инициатические формы, основанные, по крайней мере, у своих истоков, преимущественно на занятиях ремеслом, и следовательно, особыми методами, символическими и ритуальными, непосредственной связанными с этим ремеслом”<sup>33</sup>. Для ремесленников предназначались инициатические формы, основанные на занятиях ремеслами. Иначе говоря, в древних ремесленных организациях (союзах) ремесло человека было его дорогой к Богу, ремесло, как и принадлежность к какой-то касте, являлись не сословной закрепленностью, а “выражением индивидуальной природы человека со всем набором предрасположенностей, слитых с этой природой и предназначающих каждого к выполнению определенных обязанностей (профессия)”<sup>34</sup>. Эту идею прекрасно выразил Г. Майринк в знаменитом романе “Белый доминиканец”: “Сейчас твои руки должны научиться тому, что позднее предстоит совершить твоему Духу, – сказал он. – Как бы незначительна ни была профессия, она станет самой благородной, если твой Дух сумеет овладеть ею. Работа, не направленная на покорение души, не достойна того, чтобы тело принимало в ней участие”<sup>35</sup>. Отсюда вполне закономерное предположение, что такое сложнейшее высокое искусство, как создание хачкаров, целенаправленно формировалось и передавалось мастерами, знавшими Традицию и желавшими сохранить и донести ее до следующих поколений. Таким образом, сжатый анализ сакраль-

---

<sup>33</sup> Генон Р., Кризис современного мира, М., 2008, с. 226, 365.

<sup>34</sup> Генон Р., там же, с. 82.

<sup>35</sup> Майринк Г., Белый доминиканец [http://lib.aldebaran.ru/author/mairink\\_gustav/mairink\\_gustav\\_belvi\\_dominikanec/](http://lib.aldebaran.ru/author/mairink_gustav/mairink_gustav_belvi_dominikanec/).

ной символики хачкаров позволяет заключить, что хачкары являлись тщательно продуманной наглядной манифестацией основных законов мироздания, сакральным воплощением идеи бессмертия через прохождение нижнего мира (смерть) и второго рождения в "жизнь вечную". Их задачей было через символику направлять к сверхъестественному, Высшему, поскольку природа символов такова, что они воздействуют на людей, даже не имеющих представления об их истинном сакральном содержании.

## ԻՐԻՆԱ ՀԱՅՈՒԿ

*փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

### ԽԱՀՔԱՐԵՐԻ ՍՐԲԱԶԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

#### ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խաչքարերը հայկական և համաշխարհային մշակույթի եզակի երևույթ են: Դրանց ստեղծումը կապված է Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն ընդունման հետ 301 թ.: Խաչքարերի վրա առկա բազմապիսի խորհրդանիշների (սիմվոլիկայի) համաչափ օգտագործումը, նրանց տեղադրման բնույթը վկայում են, որ խաչքարերի մշակույթը սերտորեն առնչվում է նախաքրիստոնեական շրջանի հայկական կրոնական համոզմունքների հետ: Խաչքարերի ստեղծման ավանդույթը չի առաջացել պատահական կամ տարերայնորեն, այլ գիտակցաբար ձևավորվել է արհեստակցական միություններում Հայաստանում քրիստոնեության գոյության առաջին դա-

րերում: Այդ մասին է վկայում ոչ միայն վարպետների չափազանց մեծ հմտությունը, այլև, և ամառին հերթին, խորհրդանիշների եզակի, հարուստ, հագեցած և բարդ ամբողջությունը՝ ընդգրկված խաչքարի տիեզերական սրբազան միջավայրում: Խաչքարերի վրա առկա հիմնական խորհրդանիշներն են տարբեր ձևի և վարկածների խաչերը (ուղիղ, թեք, կելտական, սվաստիկա և այլն), արևը, բույսերը՝ խաղողի վազ և ողկույզ, կիպարիս, թռչունները, լաբիրինթոսը, աստղը (հատկապես ութանկյուն), վիշապները և այլն:

**IRYNA HAYUK**

*PhD in Philosophy*

## **SACRAL SYMBOLISM OF KHACHKARS**

### **SUMMARY**

The article analyses some aspects of the development of sacral symbolism of Khachkars. The author shows historical tradition which influenced the formation of the field of symbols of Khachkars as a holistic image of Universe. The author also analyzes the main types of symbols and changes of their interpretation during historical development.



## ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՓԵՂԿՈՒՄԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱՂԱՏԱՑՈՒ ԱԹՈՈԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խաչատուր Գաղատացին Կիլիկիո նվիրապետության հակասական ղեկավարներից մեկն է եղել: Կերջինս առաջին վեհապետն էր սեբաստացի երեք կաթողիկոսների 25-ամյա աթոռակալումից հետո: Սակայն, հենց նրա անվան հետ է կապվում Հայոց եկեղեցու պառակտման հերթական փորձը, որը կարող էր դառնաղետ հետևանքներ ունենալ հայ ժողովրդի և մասնավորապես առաքելական եկեղեցու համար: Նրա աթոռակալման շրջանը համընկավ Հայոց եկեղեցու պատմության մեջ հակասական կերպարի համարում ունեցող Եղիազար Այնթապցու գործունեության հետ: Խաչատուրի ծննդյան թվականը ցավոք հայտնի չէ, դատելով նրա Գաղատացի կոչվելուց վերջինս ծնունդով Գալաթիայից է: Նրա վաղ շրջանի գործունեությունից հայտնի է, որ 1626 թ. Կ. Պոլսում ուսում է առել Կղեմես Գալանոսի մոտ: Ըստ Բ. Կյուլեսերյանի, հենց այս շրջանում է, որ Խաչատուրը անդամակցում է հայ հոգևորականության «լատինասեր» հոսանքին<sup>1</sup>: Ընդհանրապես, 17-րդ դարի առաջին կեսը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանում աչքի ընկավ այսպես կոչված «ազգային» և «լատինասեր» խմբավորումների պայքարով, որտեղ իր մասնակցությունն ունեցավ նաև Գաղատացին: 1642–1643 թթ. Խաչատուրը զբաղեցնում է Կ. Պոլսի պատրիարքի աթոռը, ան-

<sup>1</sup> Տե՛ս «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչև մեր օրերը)», գրեց Բաբգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, սյուն 383 (այսուհետ՝ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ):

շուշտ այս ընթացքում նման բարձր և պատասխանատու պաշտոն զբաղեցնելու համար նա պետք է որ լուրջ ազդեցություն ձեռք բերած լիներ, մանավանդ, որ նրա ընտրությունը այսպես կոչված «լատինասեր» հոսանքի հաղթանակն էր<sup>2</sup>: Սակայն նրա պաշտոնավարումը կարճ տևեց: Նախկին պատրիարք Դավթին շուտով հաջողվում է վերստին գրավել պատրիարքական աթոռը՝ այնտեղից հեռացնել տալով խաչատուրին: Ընդհանրապես, Գաղատացու գործունեության վաղ շրջանում Կիլիկիայում գտնվելու վերաբերյալ որևէ տեղեկություն չկա, որը հիմք է տալիս ենթադրել, որ ի տարբերություն նախորդ աթոռակալների նա շատ ավելի քիչ է կապված եղել Սսի նվիրապետության հետ: Ցավոք, վերջինիս պատրիարքությունից հեռացումից հետո ընկած ժամանակահատվածում գործունեության վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան: Սակայն, հաշվի առնելով պատրիարք Դավթի հետ ունեցած թշնամական հարաբերությունները, ամենայն հավանականությամբ Կ. Պոլսից վտարվելուց հետո նա տեղափոխվել է Կիլիկիա: Այնուամենայնիվ, որևէ ստույգ տեղեկություն խաչատուրի հետագա գործունեության վերաբերյալ ընդհուպ մինչև 1656 թ. չկա: 1656 թ. հուլիսին խաչատուրը ղեկավարում է Կ. Պոլսում գումարված սինոդը, ուր կարողանում է լուրջ հարված հասցնել Հակոբ Ջուղայեցի Ամենայն Հայոց կաթողիկոսին. ժողովի որոշմամբ վերջինիս անունը պատարագի ճամանակ այլևս չէր հիշատակվելու<sup>3</sup>: 1657 թ. Կիլիկիո կաթողիկոսության պատմության մեջ աննախադեպ իրադարձություն է տեղի ունենում. նույն թվականի ապրիլին Կ. Պոլսում վախճանվում է նվիրապետա-

<sup>2</sup> Տե՛ս Ազգապատում, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ս. Էջմիածին 2001, Բ հատոր, սյուն 2931 (այսուհետև՝ Ազգապատում):

<sup>3</sup> Տե՛ս Օրագրութիւն Երեմիա Չելեպի Զէօմուրճյանի: Հավելված թուղթեր, ուղերձներ, գանձեր և ողբեր: Երուսաղեմ, 1939, էջ 198-199 (այսուհետև՝ Օրագրութիւն):

կան այցով այդտեղ գտնվող Կիլիկիո Թորոս Սեբաստացի կաթողիկոսը և նրա փոխարեն Սսի աթոռի նոր նվիրապետ է օծվում Խաչատուր Գաղատացին: Խաչատուրի ընտրության վերաբերյալ ուշագրավ աղբյուր է հանդիսանում Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի թողած հիշատակությունը, ըստ որի «Յաւուրս յայսոսիկ պատրաստութիւն ետես Խաչատուր վարդապետն աշակերտ Տեառն Ռհաննու Եդեսացոյ՝ վասն կաթողիկոսութեան Տանն Կիլիկեայ, և ոմանք ի չարեաց առաջնոցն աղմուկս հանեալ չկամելով զայն: Այլ առաջակայք քաղաքիս ասացին. Տացես մեր եկեղեցեայս Ճական դուրուշ և գնացեալ առցես. և նա զտալն յանձն էառ հանդերձ ձեռագրաւ, բայց և կրկին չարքն զայն խափանեցին և ոչ տվին կամս սահմանեալ զաղմուկն, բայց նա ի լուռ լեալ գնաց եհան հրաման ի թագաւորէն որպէս օրէն էր, և գնացեալ անդ ի Կիլիկիա»: Փաստորեն, ըստ ժամանակակցի՝ Գաղատացու ընտրությունը կայացել է միայն սուլթանի բարեհաճության արդյունքում և այդ գործընթացին Կիլիկիո աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչները որևէ դերակատարում չեն ունեցել: Նյութի լավագույն գիտակներից Բ. Կյուլեսերյանը կարծիք է հայտնում, որ. «Իրաւասութեամբ կամ ոչ, բայց ամեն պարագայի մէջ, համակրանքով է որ Կ. Պոլիս և Սիս կապուած են իրարու: Կ. Պոլսեցիք ձայն կամ կամք ունին Կիլիկիոյ կաթողիկոսաց ընտրութեան մեջ և ի հարկին Կիլիկիոյ կաթողիկոսներ կը մտնեն կ'ելլեն ազգային-եկեղեցական գործեր կարգադրելու համար»<sup>4</sup>: Բացի դա, ամենայն հավանականությամբ, երջանկահիշատակ կաթողիկոսի ձեռքի տակ է եղել Ե. Քյոմուրճյանի աշխատության ոչ ամբողջական տարբերակը, որն էլ նրան հիմք է տվել Խաչատուրի աթոռակալումը կապել պոլսեցի մեծատունների ցանկության հետ: Սակայն, ինչպես պարզ դարձավ Քյոմուրճյանի հաղորդումից՝

<sup>4</sup> Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 387:

մեծատուն պոլսեցիների առաջարկին համաձայնվելուց հետո ինչ-ինչ հանգամանքներից ելնելով Խաչատուրը չի ստանում վերջիններիս համաձայնությունը և ի վերջո կորզում է այն օսմանյան սուլթան Մեհմեդ IV-ից: Անշուշտ, ակներև էր այս երկու հոգևոր հաստատությունների սերտ կապն ու փոխազդեցությունը հատկապես 16-րդ դարավերջից սկսյալ, սակայն դրանով հանդերձ Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը մինչ այդ երբևիցե չէր կայացվել առանց տեղի հայկական վերնախավի ներկայության և ցանկության: Բացի դա Կ. Պոլսի թեմը իրավականորեն ենթակա էր Էջմիածնի կաթողիկոսությանը, բայց ելնելով քաղաքական շահերից օսմանյան իշխանությունները հաճախ Կիլիկիո նվիրապետության ներկայացուցիչների համար առավել բարենպաստ պայմաններ էին ստեղծում մայրաքաղաքում: Այս իրադարձության շատ փաստեր ցավոք հայտնի չեն և հնարավոր չէ տալ եղելության ամբողջական պատկերը, սակայն եղածն էլ բավարար է պնդելու, որ սա սոսկ հոգևոր ու քաղաքական կապվածության արդյունք չէր կարող լինել և որ այստեղ առավելապես օգտագործելով իր ունեցած կապերն արքունիքում Խաչատուրը կարողացել է այսպիսի աննախադեպ հրաման կորզել սուլթանից:

Խաչատուրի աթոռակալումն անցավ ժամանակաշրջանի ընդհանուր օրինաչափություններին համապատասխան և նրա գործունեությունը սերտորեն փոխկապակցված էր հայոց եկեղեցու պատմության մեջ բավական բացասական դերակատարում ունեցած Եղիազար Այնթապցու անվան հետ: Եղիազարն օսմանյան հայաբնակ շրջաններում մեծ հասարակական ու ֆինանսական ազդեցություն ունեցող հոգևորական էր, 1659 թ. նա նույնիսկ Կ. Պոլսի պատրիարք օծվելու հնարավորություններ ուներ, սակայն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով ի վերջո հրաժարվում է այդ բավական ազդեցիկ դիրքից հօգուտ Մար-

տիրոս Կաֆացու<sup>5</sup>: Այդուհետ Եղիազարը տեղափոխվում է Երուսաղեմ, որպես ընդհանուր վերակացու և Կ.Պոլսի պատրիարքի ներկայացուցիչ: Այնթապցին իր էությանը լինելով խիստ փառասեր ու իշխանատենչ անձնավորություն, բնականաբար, կարճ ժամանակամիջոցում կարողանում է առանցքային դերակատարում ստանձնել Երուսաղեմում: Դեռ Փիլիպպոս Աղբակեցու վախճանից հետո Եղիազարը փորձեր է կատարում զբաղեցնել Ամենայն Հայոց կաթողիկոսի գահը, սակայն դրա ծախսողունից հետո նա փաստացիորեն չիրաժարվելով այդ գաղափարից իր հետագա գործունեությունն ուղղում է դրա իրականացմանը: Փաստացիորեն, իր ձեռքը վերցնելով Սբ. Հակոբի վանքի կառավարումը՝ նա լայն շինարարական աշխատանքներ է ձեռնարկում: Հատկապես արժանահիշատակ է նրա կողմից Սբ. Հակոբի վանքի կից կամարակապի վերածումը եկեղեցու և օժումը էջմիածին անվամբ: Սրանով նա բացահայտորեն ի ցույց դնելով իր կաթողիկոսական նկրտումները՝ միաժամանակ հասկացնում էր, որ սեփական փառասիրության բավարարման համար ամենևին էլ պարտադիր չի լինի իր ներկայությունը Մայր Աթոռում և որ այդ դեպքում հայոց հոգևոր կենտրոնի դերակատարում կարող է ստանձնել նաև Սբ. Հակոբի վանքը: Սակայն, մինչ այդ Եղիազարը փորձեր կատարեց էջմիածնում հիմնավորվելու ուղղությամբ, մասնավանդ, որ այդ հարցում նա ուներ նաև դաշնակիցներ ի դեմս էջմիածնի մի շարք միաբանների, մասնավորապես՝ Օնոփրիոս Երևանցի վարդապետի<sup>6</sup>: Սակայն այս փորձը հաջողությամբ չի ավարտվում և Այնթապցին, ի վերջո, հանգում է իր գլխավորությամբ էջմիածնի և Սսի կաթողիկոսություններից առանձին նվիրապե-

<sup>5</sup> Տե՛ս Ազգապատում, սյուն 2933:

<sup>6</sup> Տե՛ս Ջաքարիա Քանաքեռցի, Պատմագրություն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 71:

տական աթոռ հիմնելու գաղափարին: Այս հարցում որպես Եղիազարի դաշնակից հանդես է գալիս Խաչատուր Գաղատացին: Չնայած, որ Եղիազարը և Խաչատուրը ոչ վաղ անցյալում հանդես էին գալիս որպես կատաղի հակառակորդներ, այնուամենայնիվ հենց միջև է կայացվում համաձայնություն: 1663 թ. Երուսաղեմ այցելած Կիլիկիո նվիրապետը փաստացիորեն տալիս է իր համաձայնությունը: Ըստ նախնական պայմանավորվածության՝ Սսի կաթողիկոսի իրավունքներն իր վիճակների վրա պահպանվում էին, էջմիածնական թևի ենթակայության տակ էին շարունակելու մնալ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական և հայաբնակ գավառները: Նորաստեղծ հակաթոռ կաթողիկոսության ենթակայության տակ էին հայտնվելու օսմանյան պետության մեջ մտնող մնացյալ՝ Կիլիկիո թեմերից դուրս գտնվող հատվածը: Խաչատուրի համաձայնությունը և նրա կողմից օրհնություն ստանալը Եղիազարի համար խիստ կարևոր էին, քանզի միայն այդ ճանապարհով հնարավոր կլիներ իրավական առումով հիմք նախապատրաստել նման մեծ հավակնություններին: Անշուշտ, առաջին հայացքից տարակուսելի է Խաչատուրի համաձայնությունը, որքան էլ որ վերջինիս համար անընդունելի լիներ էջմիածնի գերակայությունն ընդհանրապես, այնուամենայնիվ, նոր հովվապետության ձևավորումն օսմանյան պետության սահմաններում խիստ անցանկալի պետք է լիներ առաջին հերթին Կիլիկիո աթոռի համար: Խաչատուրի համաձայնությունը մի շարք հեղինակներ փորձել են հիմնավորել, այսպես Մ. Չամչյանի կարծիքով. «Եւ զի Խաչատուր էր պարզամիտ...»<sup>7</sup>: Իր հերթին, Հ. Անասյանը Խաչատուրի այս որոշումը փորձում է մեկնաբանել, որպես հակաթորքական ճակատ կազմելու նա-

<sup>7</sup> Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հ. 9, Երևան, 1984, էջ 697:

խագծի մի մաս<sup>8</sup>, սակայն կարծում ենք, որ որքան էլ ներսից փտած պետություն լիներ Օսմանյան կայսրությունը, Եղիազարի աթոռակալումը չէր կարող իրականանալ, եթե այն ունենար թեկուզև թաքցված հակաթուրքական ուղղվածություն: Ընդհակառակը, կայսրության տարածքների համար նախատեսված հակաթուր նվիրապետության գոյությունը բխում էր առաջին հերթին հենց Բարձր Դռան շահերից և այս համատեքստում Հ. Անասյանի առաջ քաշած վարկածը թույլ հիմքեր ունի: Բ. Կյուլեսերյանը որակում է վերջինիս գործունեությունը որպես «անխոհեմ և վտանգաւոր»<sup>9</sup>: Տ. Սավալանյանցը խաչատուրին ներկայացնում է որպես միամտացած անձ, քանզի «խաչատուր կը հաւանէր՝ առանց թափանցելու ազգային ամբողջութեան սպառնացող վտանգն...»<sup>10</sup>: Կարծում ենք, որ այստեղ դերակատարում կարող է ունեցած լինել Եղիազարի ունեցած հարստությունը, որը կարող էր պատճառ դառնալ խաչատուրի տված համաձայնությունը հասկանալու հարցում: «Խաչատուր համոզուեցաւ, քանի որ իրեն վնաս պիտի չհասներ, էջմիածին պիտի տկարանար, եւ անշուշտ ծառայութեանը փոխարէն պատշաճ վարձն ալ սակարկուած էր...»<sup>11</sup>: Սակայն, սա Սսի կաթողիկոսի միակ սխալը չէր, եթե նախորդ քայլով նա երկպառակչություն սերմանեց հայոց եկեղեցում, ապա նրա հաջորդ քայլը նման իրադրություն ձևավորեց նաև ասորական եկեղեցում: Ընդառաջ գնալով ասորի Անդրեաս Եպիսկոպոսի խնդրանքներին՝ նույն 1663 թ. Հալեպում վերջինիս օծում է կաթողիկոս, այսպիսով ձևավորելով հակաթուր ասորական նվիր-

<sup>8</sup> Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 250–254:

<sup>9</sup> Պատմութիւն Կիլիկիո կաթողիկոսաց, սյուն 389:

<sup>10</sup> Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, առաջին հատոր, Երուսաղէմ, 1931, էջ 608:

<sup>11</sup> Ազգապատում, սյուն 2962:

րապետություն և: Անշուշտ, այստեղ դերակատարում ունի նաև այն հանգամանքը, որ Անդրեասի օծման հարցում օգնել է նաև տեղի Մուրթազիմ փաշան<sup>12</sup>: Որևէ ստույգ փաստեր ցավոք պահպանված չկան, սակայն կարելի է ենթադրել, որ այս անգամ ևս դերակատարում է ունեցել Սսի կաթողիկոսի դրամասիրության հանգամանքը: Ահա այս վերջին ձեռնարկն էլ առիթ հանդիսացավ երկպառակչության համար արդեն Կիլիկիո կաթողիկոսի նվիրապետության սահմաններում: Բերիայի եպիսկոպոս Ղավիթ Կարկառեցին պատճառ բերելով հայության շրջանում Խաչատուրի ընկած հեղինակությունը կարողանում է Հովհաննես պատրիարքից համաձայնություն ստանալ Կիլիկիո կաթողիկոս օծվելու հարցում: Ղա տեղի ունեցավ 1663 թ. Կ. Պոլիս կատարած նրա այցի ընթացքում: Վերադառնալով Հալեպ ստանալով նաև ասորիների բուն կաթողիկոսի աջակցությունը Կարկառեցին օծվում է կաթողիկոս<sup>13</sup>: Անշուշտ, այս պայքարը զերծ էր որևէ տեսակի գաղափարական կռվանից, այն ընդամենը պայքար էր ազդեցության և իշխանության համար, որի դառնադետ հետևանքներն իրենց բացսական լուրջ հետևանքներն էին ունենալու թե՛ հայոց եկեղեցու և թե՛ պետականազուրկ հայ ազգի համար: Սա արդեն հարվածում էր Կիլիկիո կաթողիկոսի կենսական շահերին, ուստի լուրն ստանալուն պես Խաչատուրը շտապեց Կ. Պոլիս՝ այնտեղ կաթողիկոսության հարցերը լուծելու համար: Այս հանգամանքը, որ կաթողիկոսական հարցի լուծման բանալին գտնվում էր արդեն Կ. Պոլսում, Խաչատուր Գաղատացու անհեռատես ու եսամոլական քաղաքականության լավագույն ցուցիչն է: Եվ դա ցուցանում է այն հանգամանքը, որ գեթ այս շրջանում Կիլիկիո կաթողիկոսությունը լիովին կորցրել էր իր նախկին ազդեցութ-

<sup>12</sup> Տե՛ս Պատմութիւն Կիլիկիո կաթողիկոսաց, սյուն 390:

<sup>13</sup> Տե՛ս Ազգապատում, սյուն 2961:



յունն ու դիրքը: Սա արդեն երկրորդ հակաթու կառկառեցի կաթողիկոսն էր Կիլիկիո նվիրապետության պատմության մեջ: Ինչևէ, Կ. Պոլիսը վերածվել էր հայոց արևմտյան հատվածի հոգևոր կենտրոնի և Դավիթը ևս ստիպված էր ստանալ այդ աթոռի համաձայնությունը: Իրավամբ ձևավորվել էր բավական անտրամաբանական մի իրավիճակ, երբ Կ. Պոլսի աթոռն իրավականորեն, թեկուզև հաճախ ձևական շարունակում էր հանդիսանալ էջմիածնին ենթակա հաստատություն: Դրանով հանդերձ գերակա դիրք էր գրավել իրենից աստիճանակարգով ավելի բարձր նվիրապետության հանդեպ: Ուստի Կարկառեցին ևս իր շահերը պաշտպանելու համար շտապեց ներկայանալ մայրաքաղաք: Նման պայմաններում Կ. Պոլսի պատրիարք Հովհաննեսը, ելնելով իր իսկ աթոռի շահերից, կայացրեց բավական հեղիեղուկ որոշում, այն է՝ երկու կաթողիկոսներն էլ շարունակելու են պաշտոնավարել յուրաքանչյուրը Կիլիկիո կաթողիկոսության իր հատվածում: Սրանով փաստորեն իրավական ճանաչում տրվեց կաթողիկոսության երկփեղկմանը<sup>14</sup>: Անշուշտ այս որոշումը հետագայում պատրիարքին հնարավորություն կտար իրեն ցանկալի ժամանակահատվածում միջամտել Կիլիկիո նվիրապետության գործերին: Խաչատուրն, ըստ էության, ստիպված էր համաձայնել: Վերջինիս հաշտվողականությունը Մ. Օրմանյանը բացատրում է այս շրջանում Ե. Այնթապցու ձեռնարկած հերթական ծրագրով<sup>15</sup>: Բանն այն է, որ այս նույն շրջանում Եղիազարը, որը չէր հաշտվել առանձին կաթողիկոսություն հիմնելու գաղափարի ծախողման հետ, նորովի է գործի լծվում և կարողանում է օսմանյան արքունիքին կաշառելով համոզել և ստանալ Երուսաղեմ կենտրոնով նոր կաթողիկոսություն հիմնելու հրաման: Նորաստեղծ աթոռի ենթա-

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, սյուն 2964:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, սյուն 2965:

կայության տակ էր լինելու կայսրության հատվածի հայությունը, բացառությամբ Կիլիկիո թեմերի: Անշուշտ, սա օսմանյան կառավարության համար բավական ձեռնուռ գործարք էր, քանզի սրանով հաստատվում էր իրենց, ըստ էության, ուղղակի կառավարումը հայության հոգևոր կյանքում: Իսկ Խաչատուրի գիջողականությունը, այս պարագայում, կարծում ենք, պայմանավորված էր ոչ այնքան հայ եկեղեցին հերթական, երկպառակչական խմորումներից զերծ պահելու ցանկությամբ, որքան որ պոլսեցի հայ երևելիների, մասնավորապես՝ Ե. Չ. Ջյոմուրճյանի կամքով: Այդուհետ կորզելով համաձայնությունն Եղիազարը շտապեց Բերիա և այնտեղից էլ նամակով դիմեց դեռևս մայրաքաղաքում գտնվող Խաչատուրին՝ իր գործակցին հրավիրելով շտապ վերադառնալ Բերիա: Ահա այստեղ, ըստ Ս. Օրմանյանի «Որչափ ալ Խաչատուր արդէն իր գործակցութիւնը խոստացած էր, բայց երբ գործադրութեան վայրկեանը հասաւ, յանկարծ վարանեցաւ եւ կերպով մը խղճի խայթէ ազատուելու համար, ուզեց գաղտնի խորհուրդ քանի մը խելահասներու հաղորդել»<sup>16</sup>: Այստեղ սակայն, ինչպես վերը նշվեց, առավելապես դերակատարում ունեցավ պոլսեցի երևելիների կարծիքը և հենց վերջիններիս խորհրդով էլ ի վերջո Խաչատուրը հրաժարվում է Եղիազարի հետ համագործակցելու գաղափարից: Գալով Արևելք սակայն երկու պատվիրակներն էլ ձախողվում են, նրանց չի հաջողվում տարհանոզել Եղիազարին հրաժարվել իր մտադրությունից: Նման պայմաններում Խաչատուրին ոչինչ չէր մնում, քան ենթարկվել սուլթանական հրահանգին և նույն 1664 թ. վերջին կաթողիկոս օծել Այնթապցուն: Այնուամենայնիվ, վերադառնալով Կիլիկիա, Գաղատացին կարողանում է հիմնականում լուծել իր կաթողիկոսության միասնության խնդիրը: Բանն այն է, որ Դավիթ Կարկառեցին վերա-

<sup>16</sup> Նույն տեղում:

դառնալով Հալեպ տեղի բնակչության կողմից չի ընդունվում որպես կաթողիկոս: Դա սակայն չի խանգարում վերջինիս հետագայում ևս օգտագործել կաթողիկոսական աստիճանը տարբեր տեսակի գրագրություններում: Այդուհանդերձ, Կիլիկիո կաթողիկոսության միասնությունը վերականգնվում է:

Առանձին ուսումնասիրության նյութ է անշուշտ նաև Խ. Գաղատացու մասնակցությունը հայ ազատագրական շարժմանը: Հեռու լինելով փաստերը գունագարդելու գայթակղությունից նշենք՝ միայն, որ վերջինս 1662 թ. նամակով դիմում է Ալեքսանդր VII պապին, ընդունելով նրա գերիշխանությունը: Նույն 1662 թ. նամակով Գաղատացին դիմում է նաև Ֆրանսիայի արքա Լուի XIV-ին, ապա և 1663 թ. Անտիոքի հույների պարիարք Մակարի և Հալեպի հակոբիկ ասորիների կաթողիկոս Անդրեասի հետ միասին օգնություն է խնդրում Ֆրանսիայի արքայից թուրքական լծից ազատագրվելու համար<sup>17</sup>: Պետք է նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիական հնարավոր արշավանքի հավանականությունը բավական մեծ էր և խաչատուրի նամակները պետք է դիտարկել հենց այս համատեքստում: Հարկ է նշել, որ բավական ակտիվ էին Կիլիկիո նվիրապետի շփումները նաև վենետիկցիների հետ, այսպես 1657 թ. ապա և 1668 թ. խաչատուրն այցելում է Կանդիա՝ Կրետե, ուր հանդիպում է վենետիկցիների հրամանատար Ֆր. Մորոզինիի հետ<sup>18</sup>: խաչատուր Գաղատացու մահվան ստույգ թվականը ցավոք հայտնի չէ, հայտնի է միայն, որ 1674 թ. Կիլիկիո կաթողիկոս է ընտրվում Սահակ Քիլիսցին, որից էլ կարելի է ենթադրել, որ նրա նախորդ խաչատուրը մահացել էր նույն թվականին:

<sup>17</sup> Անասյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 98: Նամակի բնագիրը՝ էջ 279–285:

<sup>18</sup> Ալիշան Դ., Հայ-վենետ կամ հարընջությունը հայոց և վենետաց ի ԺԳ-դ և ԺԵ-գ դարս, Վենետիկ, սբ. Ղազար, 1896, էջ 179:

ДАВИД ТИНОЯН

*кандидат исторических наук*

**РАСКОЛ В КИЛИКИЙСКОМ КАТОЛИКОСАТЕ В  
ПРАВЛЕНИЕ ХАЧАТУРА ГАЛАТАЦИ**

**РЕЗЮМЕ**

Хачатур Галатаци один из самых неоднозначных деятелей в истории Армянского киликийского католикосата. Он стал первым епархом на Сисском престоле, после правления трех себастиийских католикосов. В 1642–1643 годах. Галатаци занимал пост главы константинопольской епархии. В 1657 г. Хачатур был помазан киликийским католикосом. Именно в годы его правления епархиат вновь оказался под угрозой раскола. Более того, в связи с деятельностью Егиазара Айтипацци перед такой угрозой предстал и Эчмиадзинский католикосат. Галатаци сам участвует там в междоусобице и, в частности, помазывает Айтипацци эчмиадзинским католикосом. За это Айтипацци помогает ему устранить от власти своего противника Давида Каркареци. Хачатур Галатаци является яркой персоной армянской национальной освободительной борьбы в позднем средневековье.

DAVIT TINOYAN

*PhD in History*

**THE SHCISM IN THE CILICIAN CATHOLICOSATE  
DURING THE REIGN OF CATHOLICOS  
KHACHATUR GALATACI**

**SUMMARY**

Khachatur Galataci was a famous figure in the history of the Armenian Cilician Catholicosate. Khachatur Galataci was a prominent figure of the Armenian national liberation struggle in the late Middle Ages.

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ՝ «ՄՇԱԿ»-Ի ԹՂԹԱԿԻՑ

XIX դ. 70-ական թթ. արևելահայ և արևմտահայ հատվածների հոգևոր-մշակութային, ինչպես և հասարակական շփումներն ընդլայնվեցին աննախընթաց չափերով: Հատկապես միջազգայնացած Հայկական հարցի զարգացումներն ազգը համախմբում էին համազգային գաղափարի շուրջ, որի հիմքում ընկած էր օսմանյան լծից արևմտահայերի ազատագրության ձգտումը: Վերոհիշյալ՝ ազգային, մտավոր-մշակութային և գաղափարական մերձեցումներին հայության երկու հատվածներում և գաղթօջախներում մեծապես նպաստեցին առաջավոր հասարակական գործիչները, մամուլն ու հրապարակախոսությունը:

Արևմտահայ և արևելահայ հատվածների իրական համագործակցությանը որակական նոր ազդակներ հաղորդեցին բարեգործական, հասարակական ընկերությունների մեջ համաձայնեցված գործողությունները: 1880 թ. Կ. Պոլսում «Միացյալ ընկերությունք հայոց» անվամբ, միավորվեցին մինչ այդ անջատ գործող երեք կրթական ու մշակութային բնույթի՝ «Արարատյան», «Դպրոցասիրաց-Արևելյան» և «Կիլիկյան» ընկերությունները: «Միացյալ ընկերությանց» հիմնադիր անդամների մեջ ակտիվ գործունեություն էր վերապահված Արփիար Արփիարյանին՝ հատկապես արևելահայ գործիչների, և, ամենից առաջ, Գր. Արծրունու և Ա. Հովհաննիսյանի ու նրանց համախոհ թիֆլիսահայ մտավորականության հետ մշակութային կապերն ամրապնդելու ասպարեզում:

Արևելահայ առաջադիմական մամուլի և հրապարակախոսների հետ ունեցած փոխադարձ առնչությունների ու

շփումների հետևանքով, որոնք իրականանում էին արևմտահայ պարբերականներին արևելահայ հեղինակների աշխատակցության, ինչպես և արևելահայ պարբերականներին արևմտահայ հեղինակների աշխատակցության գործընթացում<sup>1</sup>: Մեր կարծիքով՝ այս վերջին դեպքում ոչ մի թղթակից կամ հրապարակախոս չի ունեցել այնպիսի խոշոր, ծավալուն և ազդեցիկ դերակատարություն, որպիսին Ա. Արփիարյանինն էր:

Ա. Արփիարյանը «Մշակին» թղթակցել է 1878 թվականից՝ միանգամից լայն ընդունելություն գտնելով արևելահայ ընթերցող շրջաններում և՛ իր տպավորիչ ու իրապատում շարադրանքով, և՛ ժանրային թարմությամբ (քրոնիկի ժանրի ընծեռած լայն հնարավորություններով) ու ամենակարևորը՝ անկեղծությամբ: «Մշակ»-ի աշխատակից Ա. Արփիարյանը ներկայացնում էր ոչ միայն պոլսահայ իրականությունն իր ազգային մարմիններով, պատրիարքով ու պատրիարքարանի դիմագծով, այլև արևմտահայության հանդեպ Բարձր Դռան վերաբերմունքը, Արևմտյան Հայաստանի կացության պատկերները, Հայկական հարցի հանդեպ եվրոպական պետությունների և Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ ընթացող տեղաշարժերը, ինչպես նաև ազգային-մշակութային լայնախոհ շերտին առնչվելու ոչ միայն հոգեբանական, այլև առարկայական խնդիրը, նոր լսարանին հաղորդակցվելու, լրատվությունն անկաշկանդ

---

<sup>1</sup> Բավական է միայն հիշել դեռևս 1860–1870-ական թթ. «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին» և այլ պարբերականներում արևմտահայ թղթակիցների հողվածները՝ նվիրված արևմտահայերի Ազգային սահմանադրությանը, Ջեթթունի 1862 թ. ապստամբությանը և այլ հիմնահարցերի: Հայկական հարցի միջազգայնացումն էլ ավելի լայն ասպարեզ էր բացում երկուստեք լրատվության առջև: Նույն կերպ, 1880-ական թթ. «Արևելք»-ում ցարիզմի հակահայկական քաղաքականության համարձակ քննադատությամբ հանդես էին գալիս արևելահայ թղթակիցները:

ներկայացնելու հանգամանքը, որ «Մշակ»-ում Արփիարյանին լուրջ հնարավորություններ էր ընձեռում:

Արևմտահայ թղթակցի կայուն և մշտական ներկայությունը «Մշակում» ի հայտ էր բերում հայության զույգ հատվածների մտավոր ներթափանցումների նոր որակը 1870-ական թթ. վերջերից և հատկապես 1880-ական թթ.: Այս իրողությունը լրջորեն գիտակցվում էր արևմտահայ մտավորականների կողմից, որոնց կարծիքն էր արտահայտում Գր. Ջոհրապը, երբ գրում էր. «Բայց ինչ որ ալ ըլլա, սա ճշմարիտ է, որ լրագրությունը հառաջդիմելու էր մեր մեջ. մասնավոր թղթակից ուղարկելու նախաձեռնությունն հզոր ապացույց մըն է այս մասին»<sup>2</sup>:

Ավելացնենք, որ, որպես «Մշակի» թղթակից, Արփիարյանն առաջնորդվել է «Արևելքի» և «Մասիսի» տիրապետող այն մտայնությամբ, որ սահմանից այն կողմ գտնվող ազգակիցներին պետք է ծանոթացնել արևմտահայ կյանքին, նրա հրատապ խնդիրներին և, այսպիսով, հող նախապատրաստել դրանց համազգային լուծումների համար: Նա մեծապես նպաստեց այդ գործին՝ հանդես գալով որպես «նոր լրագրության» սկզբունքների արտահայտիչը արևելահայ մամուլում: Ճշմարտացի է Տ. Կամսարականը, երբ բնութագրելով այդ լրագրության դեմքերին, նկատում է, որ 80-ականների այդ սերունդը «նոր համոզումներով, նոր սկզբունքներով կնետվեր լրագրական ասպարեզը... հայ լրագրության տալու այն ազնվությունը, և արժանապատվությունը, զոր հին լրագրողներն շատեր չեն կրցած պահել՝ անձնական կիրքն և շահն մղված»<sup>3</sup>:

Հայկակ ստորագրությամբ Ա. Արփիարյանի թղթակցությունները «Մշակում» արևելահայ ընթերցողի առջև բացում են

<sup>2</sup> Ալպոյաճյան Ա., Անհետացող դեմքեր, Գրիգոր Ջոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 53:

<sup>3</sup> Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 251:

արևմտահայության և նրա կյանքի անժանոթ բազմաթիվ ծալքերը: Այս թղթակցությունների լուսաբանությունն ընթանում է երկու ուղղությամբ, երկուսն էլ կարևոր և հագեցած ճանաչողական մեծ լիցքով, այն է՝ պոլսահայ համայնքը և նրա հասարակական ու մշակութային կյանքը, և, մյուս կողմից, Արևմտյան Հայաստանի իրական կացությունն ու պատկերը: Լրագրական (լրատվական) և հրապարակախոսական լուսաբանումների այս անընդհատ, լարված հետաքրքրությունն առաջացնող շարքն էր, որը, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Օշականը, խորը կնիք թողեց արևելահայ հանրության քաղաքական մտքի զարգացումների վրա: «Մշակի» մեջ իր քրոնիկները, գրում է նա, թերևս, մուտք կը կազմեն մեր նոր պատմության: 1878-են Հայկակ ստորագրությամբ հողվածներն էին, որ արևմտահայերու շուրջ ծնունդ տվին այն հզոր, անսովոր ... հետաքրքրության, որմե կգատվին այն մեծ հոսանքները նոր հայության»<sup>4</sup>:

Հայկակի թղթակցություններում, որ հաճախ համապատասխան գրականության մեջ հիշվում են «քրոնիկներ» անվանումով, Արփիարյանը բացահայտում է Արևմտյան Հայաստանի իրական պատկերը՝ իր հարստահարվող, իրավազուրկ հայ բնակչությամբ, կենցաղով, բարքերով, առօրեական անզարդ մանրամասերով ու կենսական խնդիրներով: Հայկակը ո՛չ գունազարդում է այս պատկերները, ո՛չ էլ շրջանցում սուր անկյունները: Նրա գրիչը կաշառում է զանրամաստ ընթերցողին իր անկեղծությամբ ու անմիջականությամբ:

Ահա «Մշակին» ուղղված մի թղթակցություն, որ մերկացնում է թուրքական իշխանությունների և քրդական վերնախավի համագործակցությունը՝ հայերին կեղեքելու և նրանց հան-

---

<sup>4</sup> Օշական Հ., Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 22:



դեպ գործադրվող բռնություններն օրինականացնելու գործում: Հայկական իր նյութը շարադրում է փաստական համոզիչ տվյալներով, նրա դատողությունները բխում են իրական դիտարկումներից, ընթերցողին մղում էլ ավելի հիմնավոր եզրակացությունների, որ հուշում է հեղինակը: «Քյուրդ Իսակ բեյը, — գրում է Հայկակը, — 50-են ավելի մարդասպանություն ըրած է և նոր ամբաստանությամբ մը հարկ կըլլա, որ դատարանին ներկայանա, երբ ներս կը մտնե, նախագահը ոտքի կելլե և ընդառաջ կերթա նմա և յուր աթոռը կը բազմեցնե, ամբաստանողներն այս տեսարանին առաջ գլուխնին կախած դուրս կելլեն»<sup>5</sup>: Հայկակի թղթակցություններում բազմաթիվ օրինակներով հաստատվում է, որ սկսած 1880 թ. օսմանյան կառավարությունը բարենորգումների մասին եվրոպական տերությունների հարցապնդումներին պատասխանում է հայերին հարստահարելու և թշվառացնելու ամենուրեք կիրառվող քաղաքականությամբ: Կարինի գյուղերից մեկում հարկահավաք ոստիկանները լլկում են տեղի հայ բնակիչներին և ոտնահարում նրանց մարդկային պատիվն ու արժանապատվությունը, իսկ իշխանությունները խնամքով թաքցնում են այդ չարագործությունը<sup>6</sup>: Գավառի հայությունը մնացել էր անպաշտպան ու անօգնական և նրա այդ վիճակը էլ ավելի վատթարացնելու նպատակով, ինչպես գրում է Հայկակը, օսմանյան կառավարությունը դիմում է նոր միջոցների: Այդպիսին է պատրիարքարանի գործառույթները գավառներում ըստ հնարավորին սահմանափակելու, գավառներն առանց վիճակավոր առաջնորդների, ուրեմն՝ անտեր թողնելու նենգ գործելակերպը: Կառավարությունը, գրում է Հայկակը, «մեր պատրիարքարանը բոլորովին փճացնելու համար գաղափար ունի Հայաստանի առաջնորդներին կամաց-կամաց ան-

<sup>5</sup> «Մշակ», 15 մարտի 1880 թ.:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, 23 ապրիլի 1883 թ.:

կախ ընել պատրիարքարանե և Պոլսո պատրիարքը պարզապես Պոլսո առաջնորդ մը նկատել»<sup>7</sup>: Ավելին, թուրքական իշխանություններն Արևմտյան Հայաստանը բնակեցնում էին Բալկաններից գաղթեցրած մահմեդականներով<sup>8</sup>:

Արևմտայան Հայաստանի հայ բնակչության կացության, նրա հանդեպ օսմանյան պետության վարած վայրագ քաղաքականության ցայտուն օրինակները իրենց անընդհատ զգացնել են տալիս 1880–1890-ական թթ. Հայկակի անաչառ և շիտակ լրատվության մեջ, որով և մի հայտնի չափով պայմանավորված է դրանց հասարակական մեծ ներգործությունը «Մշակի» ընթերցողների շրջանում:

Նպատակադրվելով լայն հենքով լուսաբանել պոլսահայ հանրային կյանքը՝ Արփիարյանը ուշադրության կենտրոնում էր պահում ազգային մարմինների գործունեությունը: Այն ներկայացվում է և՛ քննարկված հարցերի, և՛ դրանց լուծման ձևով և, մյուս կողմից, Ազգային ժողովի անդամների և, առհասարակ, ազգային գործիչների բնութագրերով: «Մշակում» Հայկակը տալիս է Մ. Աղաբեկյանի, Մ. Խրիմյանի, Ն. Վարժապետյանի, Ստ. Փափագյանի, Հ. Մերենեմ-Գուլիի, Հ. Նուրյանի և մյուսների թռուցիկ դիմաստվերները: Դրանք շատ ավելի հպանցիկ են, քան «Մասիսում» Ա. Արփիարյանի «Օրվան կյանքը» խորագրի ներքո տպագրված քրոնիկներում, բայց և որոշակի պատկերացում են տալիս նշված գործիչների մասին: Արփիարյանը համառոտ է իր բնութագրերում, սակայն այդ ձևի մեջ էլ կարողացել է ցայտուն գծեր հայտնաբերել այս կամ այն գործչի դիմանկարում: «Պ. Մարկոս Աղաբեկյան այն հայերեն է, որը միայն խոսքով ազգասեր չեն: Ազգի համար զոհել անձնական շահը, և խեղճ ըլլալ, ահա առաքինություն մը, որուն համար

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, 20 հուլիսի 1882 թ.:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, 2 դեկտեմբերի 1883 թ.:

շռայլությամբ չենք կրնար պարծիլ»։ – գրում է Արփիարյանը Ազգային ժողովի երեսփոխանի մասին<sup>9</sup>։ Մ. Խրիմյանը Հայկակի գրչի տակ հանդես է գալիս իր մեծ հայրենասիրությամբ՝ իբրև անառարկելի հեղինակություն ամբողջ ժողովրդի, նույնիսկ իշխանությունների աչքին։ Նրա նկարագրում դարձյալ բնութագրման չափանիշն ազգասիրությունն է ու վայելած ժողովրդականությունը։ «Խրիմյան սրբազան լավ գիտե, – գրում է նա, – ինչ զոհողություններ ընդունելու է, ինչպես գործելու է հաշտ պահելու համար ազգին ընդհանրական շահերը վանեցվոց շահերուն հետ (որպես Ազգային ժողովի երեսփոխան – Գ. Ս.) և պետք է կատարյալ վստահություն ունենանք Խրիմյան սրբազանի ոգվույն և մտքին վրա»<sup>10</sup>։ Անձնավորություններին բնութագրելիս Արփիարյանը հաճախ անդրադարձ է անում անցյալի իրողություններին՝ անցյալի պատկերացումներն առավել ընդարձակելու նպատակով։ «Ոչ ոք Ներսես և Խրիմյան սրբազաններու չափ այդ սերը (ժողովրդի – Գ. Ս.) կվայելե, – գրում է նա։ – Ասիկա այնպես ստույգ իրողություն մ'է, որ տարակույսի տեղի չը ձգեր։

Ամեն տեսակ զրպարտությամբք կուզեն քողով մը սքողել այս երկու հսկա անձնավորությունները։ Մինչև իսկ խիղճ չըրին կեղծուպատիր դարձվածքներով արատավորել «Մասիսի» միջոցով Ներսես սրբազանի անբիծ և անարատ բարոյականը»<sup>11</sup>։

Հայկակի խոսքը ստանում է երգիծական սրություն և շեշտեր, երբ ներկայացնում է Ազգային ժողովի արգահատելի անդամներին։ Մի քանի ժլատ, բայց ընդհանրացնող որակումների շնորհիվ Հայկակն ընթերցողին օգնում է արագորեն ընկալելու տվյալ նկարագիրը։ Այդպիսին է ոմն Պետրոս Միսաքյան, որ

<sup>9</sup> «Մշակ», 3 հուլիսի 1882 թ.։

<sup>10</sup> Նույն տեղում, 1883, 3 նոյեմբեր։

<sup>11</sup> Նույն տեղում, 3 հուլիսի 1883 թ.։

«խարբերդեն ընտրված է, վասնզի ամենեն շատ ավելի չարիք խարբերդին հասուցած է: Ակնեցի, թե խարբերդցի՝ վաշխառու փաստաբան: Փաստաբանը վաշխառություն կընե... Միսաքլանի երևելի գործերն են պաշտպանել տաճիկ և քյուրտ այն պեյերը, որք այնքան անիրավաբար կը կեղեքեն խեղճ հայ գյուղացիները»<sup>12</sup>: Նույնչափ խոսուն է Ազգային ժողովի ատենապետ բժիշկ Թիրյաքլանին բնութագրող վրձնահարվածը. «Ատեն մը հայերենի դասատու էր և դեռ հետքը մնացած է, երբ ժողովի մեջ բան մը կարդա, կարծես տերտեր մ'է, որ Ավետարան կը կարդա»<sup>13</sup>: Հայկակը գրեթե սպառիչ նկարագրում է Ազգային ժողովի շատ անդամների, նաև՝ այդ ժողովի քննարկած հարցերը՝ միշտ իր ակտիվ վերաբերմունքով նպաստելով ընթերցողի կողմնորոշմանը:

Հայկակի թղթակցություններում բավական տեղ է տրված հայերի հանդեպ Բ. Դռան տնտեսական քաղաքականության մերկացմանը: Հատկապես հետաքրքիր են, այս առումով, 1880-ական թթ. սկզբների թղթակցությունները, որոնք ընդգրկում են Հայկական հարցը կոծկելուն ուղղված Բ. Դռան գործողությունների ժամանակաշրջանը՝ Բեռլինի վեհաժողովից հետո: 1880-ի սկզբներին Բարձր Դուռը առաջին հարվածն ուղղեց հպատակների խարխուլուն տնտեսական կայունությանը՝ շրջանառության մեջ դնելով արժեզուրկ թղթադրամներ: Դրանք մեծ քանակությամբ գտնվում էին հայերի ձեռքին, որոնք, խաբվելով կառավարության խոստումներից, թղթադրամի դիմաց տվել էին հնչուն ոսկի: Դրան հետևել էր այսպես կոչված «մեթալիկի» արծաթի և պղնձի համաձուլվածքով դրամի արժեզրկումը, մինչդեռ հենց դրանով պետք է վճարվեին տուրքերը. հնչուն ոսկու և «մեթալիկի» արժեքների տարբերությունը,

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

այսպիսով, պետք է վճարեին հարկատուները: «Խեղճ գյուղացիները, հայ բեռնակիրները, արհեստավորները, ամենքն ալ մեկ օրվա մեջ իրենց ունեցածին կեսը կը կորսնցնեն».— գրում է Հայկակը<sup>14</sup>:

«Մշակի» թղթակցի լրատվության մեջ շարունակաբար լուսաբանվում է քրդական հարստահարությունների թեման: Սեբաստիայում, Մուշում, Բաղեշում, Կարինում Խարբերդում և այլուր քուրդ բեյերը, միացած իշխանությունների հետ կան նրանց թաքնված համաձայնությամբ, կեղեքում էին հայ գյուղացիներին, ինչը Հայկակը ցույց է տալիս կոնկրետ փաստերով: Այս կերպ նա հիմնավորում է այն իրողությունը, որ օսմանյան պետությունը, հակառակ Բեռլինի դաշնագրով ստանձնած պարտավորությունների, իրականում արագացնում է հայերին տնտեսապես հյուժելը, նրանց հողագրկելը և վերջնականապես թշվառացնելը:

Ուշագրավ են Հայկակի ծանոթություններն ու մեկնաբանությունները Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթի և նրա բովանդակության վերաբերյալ: Լինելով այդ թերթի խմբագիրներից մեկը (բայց ոչ նրա վարչության անդամ)՝ նա «Մշակում» դրականորեն է արտահայտվում նրա 1884—1886 թթ. գործունեության մասին, դրվատում թերթի ազատամիտ ուղղությունն ու լայնախոհությունը:

«Մշակի» ընթերցողների համար բոլորովին նոր, իմացական տեսակետից անծանոթ աշխարհ է բացում Հայկակը, երբ նրանց իրազեկում է թուրքական մամուլի գրեթե ընդհանրական դարձած՝ հայերի և Հայկական հարցի հանդեպ թշնամանքի ու ատելության ոգով քարոզչության մասին: Ի դեպ, թուրքական մամուլը իր այսպիսի վերաբերմունքի և դրանից բխող քարոզչության ուժով նշանակալիորեն նպաստում էր թուրք հան-

<sup>14</sup> Նույն տեղում, 15 մարտի 1880 թ.:

րությանը՝ 1880-ական թթ. կոտորածներին նախապատրաստելու և նրան այդ սպանողի մասնակիցը դարձնելու գործընթացին՝ ենթարկելով նրան հոգեբանական մշակման և որը, իր հերթին, նախադուռ էր դառնալու ավելի ուշ՝ հայերի զանգվածային կոտորածների ու ցեղասպանության համար: Հենց այս՝ հայերի համար ոչ նպաստավոր հետևանքների վերացմանը և դրան հակառակ՝ հայերին սատարող հրատարակություն ստեղծելուն էր հետամտում Հայկակը՝ առաջարկելով Թիֆլիսում հիմնադրել եվրոպական լեզվով մի պարբերական, որը «կրնա եվրոպական գաղափարներն ի նպաստ մեզ մշակել»: Նա առաջարկում էր «Մշակին»՝ նախածեռնել այդ կարևոր գործը:

1882 թ. Արփիարյանն արդեն առաջարկում է համագործակցել ճանաչում գտած որևէ եվրոպական թերթի հետ՝ պարբերաբար այնտեղ հայանպաստ նյութեր տպագրելու նպատակով: Նա հարմար էր դատում այս գործում սուլթանի կիրառած քաղաքականությանը հակադրել նրա իսկ գեները. Աբդուլ Համիդը արտակարգ կարևորություն էր տալիս եվրոպական թերթերի միջոցով եվրոպայում ցրել թուրքերի և անձամբ իր մասին գոյացած աննպաստ հասարակական կարծիքը՝ այդ գործում չվարանելով նյութական միջոցներ շռայլելուց: Թուրքերն այս նպատակով վարձել էին մի քանի եվրոպական թերթեր, թղթակիցներ, Կ. Պոլսում ֆրանսերեն և թուրքերեն հրատարակում էին հրատարակվող «Օսմանլը» թերթը: Սուլթանն իր անձնական միջոցներից ամսական 2 հազար ռուբլու չափով դրամ էր հատկացնում համակիր ֆրանսերեն մեկ այլ թերթի և այլն: Հայկակն առաջարկում էր, որպես այդպիսի հայանպաստ հրատարակություն, նկատի առնել Վիեննայում հրատարակվող «Ժուռնալ դ'Օրիան» թերթը, որը հակումներ էր ցուցաբերել քննադատելու հայերի հանդեպ Բ. Ղռան քաղաքականությունը:

Արփիարյանի թղթակցությունները «Մշակում» հատկապես 1880-ական թթ. առանձնանում էին իրենց լրատվական կարևոր արժեքի շնորհիվ: Արևմտահայերն առավել բացահայտ և շիտակ վերլուծումների մեջ տեսնում էին իրենց իսկ կացությունն ու խնդիրները: Սրանում է, անկասկած, «Մշակ» լրագրում Արփիարյան-Հայկակի թղթակցությունների ազգային նշանակությունը:

**ГАЯНЕ СОГОМОНЯН**

*кандидат филологических наук*

**АРПИАР АРПИАРЯН – КОРРЕСПОНДЕНТ  
ГАЗЕТЫ “МШАК”**

**РЕЗЮМЕ**

С 1878-го по 1890-й год западноармянский публицист, писатель и общественный деятель Арпиарян являлся корреспондентом газеты “Мшак”, издаваемой Григором Арцруни. В своих материалах Арпиарян освещал множество проблем, являющихся злободневными для константинопольской армянской общины. С присущим ему мастерством публициста А. Арпиарян обсуждал на страницах газеты вопросы общественной жизни Константинополя и Западной Армении в целом. Его публицистические статьи, подписанные псевдонимом “Айкак”, являя собой огромную познавательную ценность, содействовали сближению восточно-армянской и западноармянской действительности.

GAYANE SOGHOMONYAN

*PhD in Philology*

ARPIAR ARPIARYAN – "MSHAK'S"  
CORRESPONDENT

SUMMARY

In 1878–1890s the Western Armenian publicist, writer and public figure A. Arpiaryan contributed to Gr. Artsruni's newspaper "Mshak". In his articles A. Arpiaryan touched many urgent problems of the Western Armenian life concerning Constantinople's Armenian community, its cultural and public life, as well as the realities of Western Armenia. His articles, bearing his signature "Haikak", have great cognitive significance, contributing to the union of the Armenians in Western and Eastern Armenia.



ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄՆԵՐԻ  
ԽՆԴՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ  
«ԱԼ-ԱՀՐԱՄ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ  
1894–1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Եգիպտոսում XIX դարավերջը հատկանշվում է հասարակական գիտակցության ընդերքում սկիզբ առած փոխակերպումների գործընթացով, ինչը երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի անմիջական արգասիքն էր: Երկիրը 1882 թ. դարձավ բրիտանական գաղութ, սակայն նրա միջազգային իրավական կարգավիճակը մինչև 1914 թ. փոփոխության չենթարկվեց: Մեծ Բրիտանիան չհայտարարեց Եգիպտոսի վերջնական բռնազավթման, կամ դրա նկատմամբ հովանավորչություն հաստատելու մասին: Այն համարվում էր Օսմանյան կայսրության մաս, իսկ Մեծ Բրիտանիան՝ «ժամանակավորապես օկուպացնող պետություն»<sup>1</sup>:

Օրաբիի ապստամբությունից հետո<sup>2</sup> եգիպտական հասարակական մտքի հետագա զարգացումները տանում էին դեպի ազգայնական գաղափարների, սեփական երկիրն օտար տիրապետությունից ազատագրելու ձգտումների ամրապնդմանը: Այս ամենի ուղղորդման խնդրում մամուլը կարևորագույն դեր

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Лудкиѣ В. Г., Новая история арабских стран, Москва, 1963, էջ 201–216,

157. سامي عزير، الصحافة المصرية وموقفها من الاحتلال البريطاني، القاهرة 1968، ص. 157. Եգիպտոսի մամուլը և նրա դիրքորոշումը բրիտանական գաղութատիրության նկատմամբ Կահիրե, 1968, էջ 157):

<sup>2</sup> Օրաբիի ապստամբության մասին տե՛ս Cromer, Modern Egypt, London, 1908, pp. 175–193, Лудкиѣ В. Г., նշվ. աշխ., էջ 186–196:

էր կատարում՝ լինելով գաղափարական տարբեր հոսանքների ձևավորման հիմնական խառնարան:

Եգիպտոսի ամենաերկարակյաց պարբերականներից մեկն է հռչակավոր «Ալ-Աիրամը»<sup>3</sup> (Բուրգեր), որն այսօր էլ երկրի հասարակական կյանքի անբաժան մասն է: Ի թիվս այլ պարբերականների՝ այն նույնպես պատկանում էր սիրիական տարածքներից (հատկապես Լիբանան) ներգաղթած մտավորականներին՝ ի դեմս Սալիմ և Բշարա Թակլա եղբայրների<sup>4</sup>: Պարբերականը որպես շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել Ալեքսանդրիայում՝ 1876 թ., սակայն հետագայում վերածվեց օրաթերթի և սկսեց հրատարակվել Կահիրեում<sup>5</sup> (1899 թ.):

XIX դարավերջին Եգիպտոսում հասարակական միտքն առաջնորդող պարբերականների եռանկյունին գլխավորում էր «Ալ-Աիրամը»<sup>6</sup> բրիտանամետ «Ալ-Մուքաթթամի» (Կահիրեում գտնվող բլրաշարքի անվանում) և իսլամական «Ալ-Մուայյադի» (Հաղթական) կողքին: Վերջին երկուսը նրա մրցակիցներն էին և ավելի ուշ էին հայտնվել ասպարեզում, ընդ որում, եթե «Մուքաթթամն» ու «Ալ-Աիրամը» հակառակորդներ էին, ապա «Ալ-Մուայյադը» հավասարապես նրանցից յուրաքանչյուրի թշնամին էր: «Ալ-Մուքաթթամը» ստեղծվել էր «Ալ-Աիրամին»

<sup>3</sup> Պարբերականի ամբողջական անվանումը՝ لأهرام جريدة يومية سياسية تجارية أنبية, Ալ-Աիրամ, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթ:

<sup>4</sup> Sté u Hartmann Martin, The Arabic Press of Egypt, London, 1899, էջ. 3 Հեղինակը հետաքրքիր համեմատություն է կատարում՝ «չափազանց ծույլ, թեթևամիտ, անտարբեր, ստրկամիտ, սակայն ոչ շնորհագուրկ» եգիպտոսցուն հակադրելով «ջանասեր, հետևողական և ուսումնաստենչ» սիրիացուն՝ միաժամանակ կարևորելով սիրիական տարրի խաղացած դերը Եգիպտոսի լրագրության զարգացման գործում:

<sup>5</sup> Պարբերականի գաղափարական ուղղվածության և հայերին վերաբերող հոդվածների մասին տե՛ս 1878 مصرية والقضية الأرمنية 1923, 7. ص. 2006, 9-القاهرة (Մուհամմեդ Ռիֆաթ Ալ-Իմամ, Հայկական հարցը և եգիպտական «Ալ-Աիրամը», Կահիրե, 2006, էջ 7-9):

<sup>6</sup> Sté u عازي, ماضي, 1924, 159-161:

հակակշռելու նպատակով՝ բրիտանական կառավարության հանձնարարականով և ֆինանսավորմամբ: «Ալ-Մուայյադի» հիմնական նպատակը եգիպտական հասարակության իսլամական ազգայնական շերտերի գաղափարական պայքարն էր բրիտանական գաղութատիրության դեմ և արաբական-իսլամական արժեքների վերահաստատումը, ինչը մինչ այդ իրականացնում էր Փարիզում լույս տեսնող «Ալ-Նուրուա Ալ-Նուսկա» (Անքակտելի կապ) իսլամական պարբերականը<sup>7</sup>:

Մարթին Հարթմանը 1899 թ. Լոնդոնում հրատարակած իր «Եգիպտոսի արաբերեն մամուլը» ուսումնասիրության մեջ «Ալ-Ահրամը» դասում է քաղաքական-պահպանողական ուղղվածության պարբերականների շարքին, որը «լողում էր Ֆրանսիական ջրերում», ծառայում լազալնական գաղափարներին՝ արժանանալով Բրիտանիայի հակակրանքին, և ամեն կերպ քծնում էր սուլթանին: Դրա ապացույց էր նաև այն, որ Բշարա Թակլային սուլթանը փաշայի տիտղոս էր շնորհել:

Հայերին առնչվող նյութը պարբերականի էջերում տեղ է գտել սեփական թղթակիցների, հայտնի քաղաքական գործիչների, միսիոներների նամակների, ֆրանսիական, ռուսական, գերմանական, ամերիկյան մամուլից արտատպված հոդվածների, Բ. Դռան հաղորդած լուրերի տեսքով: Պարբերականը, հիմնականում առաջնորդվելով եվրոպական ազդեցիկ լրատվամիջոցներով, հայերին առնչվող նյութը ներկայացրել է մեծ տերությունների վարած քաղաքականության համատեքստում: Թերթի լրատվությունը հիմնականում աչքի է ընկնում օսմանյան պաշտոնական տեղեկատվությանը չհակասելու միտումով: Այդ է վկայում հայկական կոտորածներին առնչվող հիշատակումների սակավությունը՝ ակներևաբար դրանք «չա-

---

<sup>7</sup> St' u Ahmed Jamal Muhammed, *The intellectual origins of Egyptian nationalism*, London, New York, Toronto, 1960, էջ 27-30:

փազանցված» բնորոշելու օսմանյան քարոզչությանը համաքայլ:

Թեև «Հայկական հարց» խորագրի ներքո թերթը հայտարարում է, որ հայկական կոտորածներին անդրադառնում է «ճշմարտությանը ծառայելու և հայրենակիցների կասկածները փարատելու նպատակով», այնուամենայնիվ եզրահանգում է. «այն, որ հայկական դեպքերը չափազանցված և ուռճացված են ներկայացվում այդ հարցում շահագրգիռ անձանց կողմից, կասկած չի հարուցում: Անգլիացիները լուր ուղտ են սարքել՝ ցանկանալով դա այդպես ներկայացնել իշխանություններին»<sup>8</sup>:

Նույնանուն հոդվածաշարի մեկ այլ մասում անդրադարձ է կատարված Բոստոնում լույս տեսնող հայտնի «Քոնգրեգեյշն-նալիստ» պարբերականում տպագրված ամերիկացի միսիոներ Սայրուս Համլինի հոդվածին՝ հայկական իրադարձությունների ու դրանց պատճառների մասին: Հեղինակը ներկայացրել է իր զրույցը մի հայի հետ՝ նրան բնութագրելով որպես «շատ խելացի մի հայ, որը խոսում է անգլերեն և հայերեն, բացի այդ, հեղափոխության կոչ անող կարևոր գործիչներից մեկն է»<sup>9</sup>: Վերջինս հավաստիացրել է, թե իր հայրենակիցները մեծ հույս են կապում օտար տերություններից մեկի՝ Փոքր Ասիա մուտք գործելու և այնտեղ իշխանություն հաստատելու հետ: Նրա կարծիքով, եթե Եվրոպան հետաքրքրվեց Բուլղարիայի խնդրով ու ազատագրեց այն օսմանյան լծից, պետք է, որ հայերին ևս ականջալուր լինի և օգնության ձեռք մեկնի: Տեղին է նշել, որ «Նյու Յորք հերալդի» 1894 թ. դեկտեմբերի 20-ի համարում լույս է տեսել Ս. Համլինի բացատրությունը վերոհիշյալ

<sup>8</sup> «Ալ-Ահրամ», 26 դեկտեմբերի 1894 թ.:

<sup>9</sup> Նույն տեղում, 22 դեկտեմբերի 1894 թ.:

հողվածի վերաբերյալ<sup>10</sup>: Հեղինակը պարզաբանում է, որ ցանկացել է միայն ընդգծել ազատագրական շարժումների աննշան լինելը, քանի որ հայերը, լինելով ազնիվ և աշխատասեր ժողովուրդ, այնուամենայնիվ, չափազանց սակավաթիվ են, որպեսզի ապստամբություն կազմակերպեն:

Հետագա համարներում պարբերականն ուշադրությունը բևեռում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրին՝ հետադարձ հայացքով կրկին ու կրկին արծարծելով հայկական կոտորածները չափազանցված ներկայացնելու Բ. Ռանտեսակետը: Դա էլ այդուհետ դառնում է ավաիրամյան լրատվության հայկական ընդգրկման հիմնական առանցքը. «Բ. Ռոմը համաձայնել է ստեղծել խառը հանձնաժողով՝ միմիայն Եվրոպային այդ չափազանցություններն ապացուցելու և ճշմարտությունը վերհանելու նպատակով, հատկապես այն բանից հետո, երբ Հայկական կոմիտեն Լոնդոնում սկսեց պահանջել իրականացնել 1878 թ. Նուբար փաշայի կողմից առաջարկված բարենորոգումները: Սակայն Արմինիայում<sup>11</sup> մուսուլմանները հայերից շատ են, և որևէ ազգի կամ վիլայեթի գերապատվություն տալը բացառված է: Մենք սպասում ենք հայկական կոտորածների և բարենորոգումների վերաբերյալ հյուպատոսների գեկույցների հրապարակմանը՝ մինչ կհայտնենք մեր անկողմնակալ տեսակետը»<sup>12</sup>: Դժվար չէ նկատել, որ հայերի կողմից Եվրոպայի միջամտության ակնկալումը և հայկական բարենորոգումները կայսրության ընդհանուր բարեփոխումների մեջ

<sup>10</sup> St'u Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, էջ 322–323:

<sup>11</sup> Արևմտյան Հայաստանը թերթում հիշատակված է Արմինիա (Հայաստան) անվանմամբ, ինչից կարելի է ենթադրել, որ այն դիտվել է որպես առանձին վարչական միավոր:

<sup>12</sup> «Ալ-Աիրամ», 26 դեկտեմբերի 1895 թ.:

չքացնելու գաղափարը Բ. Ղռան հին ռազմավարությունն էր, որը ջանասիրաբար կրկնում էր «Ալ-Ահրամը»:

Ուշագրավ է, որ Հայկական հարցի վերաբերյալ Հռոմի պապական աթոռի հայտնած պաշտոնական կարծիքը ևս մեկնաբանություն է գտել «Ալ-Ահրամում»: Շատ Հռոմի պապի՝ խնդիրն անհրաժեշտ էր դիտարկել երկու տեսանկյունից՝ կրոնական և ազգային: Կրոնական գործոնը նա ժխտել էր՝ վկայակոչելով, որ «արևելքի քրիստոնյաները վայելում են ապահովություն ու անդորր, նրանք շրջապատված են նախանձելի հոգատարությամբ և դժգոհելու իրավունք չունեն»: Հետևաբար՝ Հայկական հարցը միմիայն ազգային խնդիր կարելի էր համարել. «...սակայն, եթե ազգային գերապատվության խնդիր կա՝ մյուս ազգությունների նկատմամբ առավելություններ ունենալու ակնկալիքով, ապա դա արդարացի չէ: Եթե նպատակն ընդհանուր բարենորոգումներն են, ապա կասկած չկա, որ սուլթանը կցանկանա և կծգտի իրականացնել դրանք: Իսկ դրանք անհրաժեշտ է կատարել ոչ միայն Հայաստանում, այլև կայսրության բոլոր նահիեներում, որտեղ դրանց կարիքը կա»<sup>13</sup>: Երկու դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, Վատիկանն անվերապահորեն կրկնում էր թուրքական քարոզչության ստահող պնդումները՝ ճիշտ այնպես, ինչպես «Ալ-Ահրամը»:

«Բեռլինի պայմանագիրը» խորագրի տակ գետեղված հողվածում հեղինակը վերապահումներով է մոտենում բրիտանական մամուլում հայկական իրադարձություններին առնչվող տեղեկատվությանը՝ պատճառաբանելով, որ Մեծ Բրիտանիայում ստեղծվել են հայերի իրավունքների պաշտպանությանը նվիրված կազմակերպություններ: Հողվածն ավարտվում է հետևյալ հարցադրմամբ. «... արդյունքներին սպասելու ընթացքում լավ կլինի խորհենք, թե ինչն է պատճառը, որ

<sup>13</sup> Նույն տեղում, 12 հունվարի 1895 թ.:

անգլիական թերթերն անտեսում են Բեռլինի պայմանագրի այն հոդվածները, որոնք պարզորոշ կերպով սահմանում են Բ. Ղառնը տրված իրավունքները և շահագրգռված են միայն Օսմանյան կայսրությանը պարտավորեցնող պայմաններով՝ մշտապես Բ. Ղառնը հիշեցնելով հայերի պահանջները կատարելու մասին»<sup>14</sup>: «Ընդհանուր հայացք» հոդվածում հեղինակն արդեն ժխտում է հայկական բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով. «... եթե, օսմանցի լինելով հանդերձ, չունենք արտոնություններ աշխատավարձերի և պաշտոնների հարցում, ապա հայերը բացառություն չպետք է լինեն: Մինչդեռ, նրանց են պատկանում ամենաշատ պաշտոնները: Իսկ բարեփոխումներ անհրաժեշտ է իրականացնել բոլոր այն վայրերում, որտեղ դրանց կարիքը կա, ոչ թե միայն Հայաստանում»<sup>15</sup>:

«Այ-Աիրամի» էջերում լայնորեն լուսաբանված է Հայկական խնդրին վերաբերող ռուսական դիվանագիտությունը: Թերթը կարևորում է ռուս քաղաքագետների հետևյալ տեսակետը. «...ինչ Բրիտանիան ասում է Հայկական հարցի մասին, ուղղված է մեր դեմ՝ խոչընդոտելու մեր քայլերն Ասիայում, քանի որ նա վստահ է, որ Ռուսաստանը երբեք չի հանդուրժի Հայաստանի բաժանումը Թուրքիայից: Հայկական խնդրում մենք Օսմանյան Թուրքիայի լավագույն դաշնակիցն ենք...»<sup>16</sup>:

Ռուսական «Նովոյե Վրեմյա» թերթի հրապարակումներն են քննարկվում «Հայաստան» հոդվածում: Ղրանցում մատնանշվում է, որ հայկական բարենորոգումների մասին «Ռոյթերի» հայտնած տեղեկություններն անգլիական ծգտումների երանգով են ներկված: Հոդվածագիրը եզրակացնում է, որ Ռու-

<sup>14</sup> Նույն տեղում, 26 դեկտեմբերի 1895 թ.:

<sup>15</sup> Նույն տեղում, 22 հունվարի 1895 թ.:

<sup>16</sup> Նույն տեղում, 5 փետրվարի 1895 թ.:

սաստանը դրական վերաբերմունք ունի բարենորոգումների նախագծի նկատմամբ: Այն լիովին համապատասխանում է երկրի կարիքներին, սակայն չի կարող հանգեցնել Հայաստանի անկախացմանը, քանի որ վերջինս չի համապատասխանում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի շահերին: Ռուսաստանին շահավետ է Հայաստանը տեսնել օսմանյան իշխանության տակ և խաղաղ՝ անկախ և ինքնուրույն լինելու փոխարեն, քանի որ խռովություններն ու ապստամբությունները ցանկալի չեն<sup>17</sup>:

«Հայկական հարցը և Ռուսաստանը» խորագրի տակ զետեղված է ազդեցիկ «Նովոստի» պարբերականի հրապարակումը, որտեղ վերստին մատնանշվում է ընդդեմ ազատագրական շարժումների Ռուսաստանի որդեգրած քաղաքականությունը: Ռուսաստանը Հայկական հարցը դիտարկում է որպես իրեն ու Օսմանյան կայսրությանն առնչվող մի խնդիր, քանի որ Հայաստանը բաժանված է իրենց երկուսի միջև, ուրիշ ոչ մեկն այստեղ մաս չունի և իրավասու չէ միջամտելու այդ խնդրի լուծմանը: Այսքանից հետո զարմանալի չէ «Նովոստիի» տեսակետը, թե պետք չէ մեծ ճնշում գործադրել Բ. Ղազարյանի, քանի որ դա կհանգեցնի Բրիտանիայի մտադրությունների իրագործմանը Ռուսաստանի շահերին աղերսվող հարցերում, ինչպես դա կատարվել է անցյալում:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունն «Ալ-Ահրամը» դիտարկում էր դրանք Եգիպտոսում ևս կատարելու անհրաժեշտության գիտակցումից դրդված և սեփական երկրի խնդիրների մտահոգությամբ, առանձնացնելով ու մատուցելով ստեղծված իրավիճակը, որն արտացոլում էր կայսրության քաղաքական-տնտեսական ճգնաժամային կացությունը: Այն տարբեր դրսևորումներ էր

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, 29 մայիսի 1895 թ.:



ստանում՝ կախված կայսրության համապատասխան տարածքների նկատմամբ տերությունների հավակնություններից: Այս առումով բացատրելի է թերթի՝ հայկական բարենորոգումների խնդիրը Եգիպտոսի ազգային շահերին զուգադրելու և համեմատելու միտումը:

Գերմանական թերթերի անդրադարձներում Ալ-Աիրամը մասնավորապես կարևորում է Հայկական հարցի հետ խնդրի զուգադրման փորձը. «... լավ կլիներ, եթե տերությունները Եգիպտական խնդիրն էլ քննարկեն այն նույն միջազգային գազաթնաժողովում, որն Անգլիան պահանջում է գումարել՝ Հայկական հարցը կարգավորելու նպատակով»<sup>18</sup>: Իսկ մեկ այլ հոդվածում թերթը հայկական բարենորոգումների կատարումն անհավանական է համարում, քանի որ «իշխանության ներկայացուցիչներն այդ հարցում լիովին ողջամիտ են և տերությունների պահանջած բարենորոգումները չեն իրականացնի, մինչև դրանք վերջնականապես չփոփոխվեն ու ի նկատի չառնվի կայսրության մնացած մասերում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը»<sup>19</sup>: Այսպիսով, «Ալ-Աիրամը» հետևում էր Բեռլինի վեհաժողովից ի վեր օսմանյան պաշտոնական քարոզչությանն ու գաղափարախոսությանը՝ կայսրության ընդհանուր բարենորոգումների գերադասումը մասնակի բարենորոգումներից, ընդամին, անգիտանալով, որ միանում էր նույն՝ մասնակի բարենորոգումների ռազմավարությանը, երբ իր մտահոգության առանցքն էր դարձնում զուտ Եգիպտական խնդիրը:

Ուշագրավ է պարբերականի «Հայաստան ու Եգիպտոս» հոդվածը, որում վերլուծվում է իռլանդացի հայտնի լրագրող և

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում, 8 հունիսի 1895 թ.:

գիտնական էմիլ Դիլլոնի<sup>20</sup> կանխատեսումները՝ Բրիտանիայի զավթողական նկրտումների համատեքստում Եգիպտոսում մնալու նրա մտադրությունները: Նա քննում է հայկական և եգիպտական հարցերի շահարկումը մեծ տերությունների կողմից. «Բրիտանիան առաջադրեց Հայկական հարցը՝ մյուս կողմում դնելով եգիպտականը: Այնուհետև խաղի մեջ մտավ Ռուսաստանը, որին էլ հետևեց Ֆրանսիան, որոնցից յուրաքանչյուրը հետամուտ էր իր շահերին»<sup>21</sup>: Ըստ հրապարակման՝ Հայաստանում կատարվող ավերն ու սպանող լիովին ձեռնադրել էին Ռուսաստանին: Իսկ եգիպտական հարցով ու Անգլիայի՝ այնտեղից դուրս գալու մտադրությամբ շահագրգռված էր Ֆրանսիան: Եվրոպական երկրները հավանաբար կառաջարկեին նիստ գումարել՝ Հայաստանում բարենորոգումների անցկացումը քննարկելու պատրվակով, ինչից հետո Անգլիայից կպահանջեին լքել Եգիպտոսը:

Թերթի սեփական թղթակիցը Կ. Պոլսից գրում է. «Հայկական բարենորոգումները, մեր կարծիքով, չեն իրականացվի: Դրանք կարող են կատարվել բացառապես թուրքական կողմի մշակած ծրագրի համաձայն, ըստ որի, բարենորոգումներ անհրաժեշտ է իրագործել Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում՝ առանց որևէ երկիր առանձնացնելու: Ակնհայտ է, որ Բրիտանիան Հայկական հարցին և կայսրության մնացած խնդիրներին միջամտելիս առաջնորդվում է կայսրությունից Եգիպտոսը վերջնականապես անջատելու դիտավորու-

<sup>20</sup> Էմիլ Դիլլոնը «Положение дел в Турецкой Армении» հոդվածում ներկայացրել է արևմտահայերի կացությունը՝ շեշտադրելով տերությունների ընտրած դիրքորոշման բացասական ազդեցությունը Հայկական հարցում (տես Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, էջ 327–373):

<sup>21</sup> «Ալ-Ահրամ», 8 հուլիսի 1895 թ.:

յամբ»<sup>22</sup>: Այդ նույն տրամաբանությունը շարունակվում է հետագա համարներից մեկում. «... Բ. Ղուռը Բրիտանիայի առաջարկած պայմաններն ընդունելու մեջ տեսնում է միջամտություն երկրի ներքին գործերին: Բարենորոգումները հարկավոր է կատարել ամբողջ երկրում, որպեսզի կանխարգելի եվրոպական միջամտությունը: Թշնամիները սպասում են հարմար առիթի և, նույնիսկ Հայկական հարցին վերջ դրվելու դեպքում, նրանք կգտնեն մեկ այլ տարածք և էլի կառաջարկեն բարենորոգումներ իրականացնել ...»<sup>23</sup>: Հեղինակը եզրակացնում է, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը որևէ միջոց չեն ձեռնարկի՝ Բ. Ղռանը ստիպելու բարենորոգումներ իրագործել, քանի որ շատ լավ տեսնում են դրանց հետևում թաքնված սպառնալիքը, և վստահ են, որ Անգլիան դեռևս պատրաստ չէ նպաստելու բարենորոգումների կատարմանը՝ մինչև չհաղթահարի Եգիպտոսում իր առջև ծառայած խոչընդոտները:

Ընթերցելով «Ալ-Աիրամի» խմբագրի հոդվածը, որտեղ ներկայացված են Բրիտանիայի հավակնությունները Եգիպտոսում մնալու և Սուդանում հաստատվելու առնչությամբ, ակնհայտ է դառնում այն, որ թերթը լավ էր հասկանում բրիտանական դիվանագիտության և Հայկական հարցի՝ որպես երկուստեք զսպող հանգամանքի շահարկումն Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի կողմից. «... կարիք չկա լսել Ռ. Սոլսբերիի վերջին ելույթները Հայկական հարցի մասին: Նա հակասում է ինքն իրեն, խաբում իր ազգակիցներին: Իրականում անգլիացիները՝ ազատ, թե պահպանողական, թշնամաբար են վերաբերվում Բ. Ղռանը՝ վրեժ լուծելով սուլթանից, քանի որ նա հրաժարվում է ճանաչել Եգիպտոսի նվաճումն Անգլիայի կողմից: Այդ թշնամանքը նրանք բացեիբաց դրսևորեցին այն

<sup>22</sup> Նույն տեղում, 20 հուլիսի 1895 թ.:

<sup>23</sup> Նույն տեղում, 21 սեպտեմբերի 1895 թ.:

օրից, երբ տապալվեց նրանց գաղտնի համաձայնությունը<sup>24</sup>: Եթե Անգլիան սուլթանից Սուդանը տնօրինելու համաձայնություն ստանար, ընդմիջտ կմոռանար հայերին ու Հայկական հարցը, և վերջ կտրվեր այդ խառնաշփոթին»<sup>25</sup>:

«Ալ-Ահրամի» վերաբերմունքն արևմտահայության խնդիրների և Հայկական հարցի նկատմամբ պարբերականում ստացել է որոշակի ուրվագծեր, ինչը Եգիպտական հասարակական մտքի մի որոշակի շերտի մոտեցումների հանրագումարն է: Խնդրի քննարկումն «Ալ-Ահրամն» իրականացնում է իրեն հատուկ ոճով, որն անչափ կարևոր էր ժամանակի քաղաքական իրավիճակում խուսանավելու համար և որին նա անդամաձև հետևում է ցայսօր. մատուցել մի նյութ, որն ընթերցողին խորհելու և ինքնուրույն եզրակացությունների հանգելու առիթ կընձեռի՝ միաժամանակ հաճախ հիշեցնելով նաև իր դիրքորոշումը:

Ծանոթանալով «Ալ-Ահրամի» 1894–1896 թթ. համարներին՝ կարելի է փաստել, որ նշված ժամանակահատվածում պարբերականն առավելապես ցուցաբերել է հակաբրիտանական ուղղվածություն: Հստակ արտահայտված է պարբերականի՝ օսմանյան պաշտոնական լրատվությանը համահունչ քայլելու միտումը: Արևմտահայության խնդիրները պարբերականի էջերում արտացոլվել են՝ անցնելով Եգիպտական խնդրի կիզակետով՝ հստակ եզրագծելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության առանցքային շահերը և Եգիպտոսն անուղակիորեն շաղկապելով Արևմտյան Հայաստանին:

<sup>24</sup> Տե՛ս Лыткин В. Г., նշվ. աշխ., էջ 201–202:

<sup>25</sup> «Ալ-Ահրամ», 20 փետրվարի 1896 թ.:

ОСВЕЩЕНИЕ ПРОБЛЕМЫ РЕФОРМ В ЗАПАДНОЙ  
АРМЕНИИ В ЕГИПЕТСКОЙ ГАЗЕТЕ "АЛЬ-АХРАМ" В  
1894-1896 ГОДАХ

## РЕЗЮМЕ

Египетская арабоязычная газета "Аль-ахрам", представляла взгляды определенного слоя египетской общественной мысли к проблеме проведения реформ в Западной Армении, которая находилась в Османской империи. В 1894–1896 годах издание проявило преимущественно антибританское направление. Также четко выражена склонность газеты следовать османским официальным средствам информации. Вопрос осуществления реформ в Западной Армении на страницах издания отражен через призму "Египетского вопроса", определяя контуры основных интересов ведомой Великобританией политики, и этим косвенно привязывая Египет к Западной Армении.

THE ELUCIDATION OF THE PROBLEM OF REFORMS IN  
WESTERN ARMENIA IN EGYPTIAN PERIODICAL  
"AL-AHRAM" (1894-1896)

SUMMARY

The present article deals with the position of the Egyptian Arabic periodical "Al-Ahram" which represents the core views of the particular circles of the Egyptian public opinion about the problem of reforms implemented by the Ottoman Empire in Western Armenia. One may conclude that the periodical expressed an anti-British behaviour in most of the cases during a certain time interval (1894-1896), in addition the tendency that the "Al-Ahram" showed towards the Ottoman official press is brought to light. The question of reforms in Western Armenia is touched on the pages of the publication after being passed through the prism of "Egyptian Issue", thus defining the contours of the basic interests within the frames of the UK policy in the Ottoman Empire, and linking indirectly Egypt to Western Armenia.

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1909 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԹԱԿԱԴՂՈՒՄ»  
ԹԵՐԹՈՒՄ

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի հեղաշրջման արդյունքում երկրում վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը: Այդ փոփոխությունը ոգևորությամբ ընդունվեց կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կողմից: Որդեգրելով պանթուրքիստական գաղափարախոսությունը՝ երիտթուրքերը, սակայն հանդես եկան որպես մուսուլման ազգայնամուլներ և թշնամական կեցվածք ընդունեցին կայսրության ոչ թուրք բնակչության նկատմամբ: Նման վարքագծի ամբողջ էությունը բացահայտվեց 1909 թ. ապրիլին Կիլիկիայում՝ մասնավորապես Ադանայում և նրա շրջակա գյուղերում կազմակերպված կոտորածների ընթացքում, որին զոհ գնաց շուրջ 30000 հայ<sup>1</sup>:

Կիլիկիայի կոտորածները լուսաբանվել է նաև արաբական մամուլում: Կոտորածներից հետո Եգիպտոսի քրիստոնեական մամուլը՝ մասնավորապես Ալեքսանդրիայում ամերիկյան միսիոներական քարոզչություն իրականացնող «Մուրշիդ» ամսագիրը, Կիլիկիայի ջարդերի մասին մի շարք հոդվածներ հրատարակեց: Դրանցում որպես ջարդերի գլխավոր պատճառ

<sup>1</sup> Թուրքական 1892 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն Կիլիկիայում հայերի թիվը շուրջ 150000 էր, իսկ Համբարձում Առաքելյանը Կիլիկիայի բնակչության թիվը 1896 թ. հաշվում էր 500000, իսկ հայության՝ 150000-200000 (տե՛ս Առաքելյան Հ., Չեյթուն: Տեղեգրական, ազգագրական և վարչական պատմություն, Թիֆլիս, 1896, էջ 6-7): Ռ. Գասպարյանը Կիլիկիայում հայերի թիվը նշում է մոտ 400000, որից 22000-ը բնակվում էին Ադանա քաղաքում (տե՛ս Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, էջ 55):

նշվում էր կրոնական գործոնը: Սակայն Եգիպտոսի մուսուլմանական հասարակությունն անմիջապես հերքեց այն. մասնավորապես Ազհարի շեյխը Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ ֆեթվա (ուղերժ) հրապարակեց որտեղ նշվեց, որ իսլամը մեղավոր չէ քրիստոնյաների արյունահեղության մեջ: Եգիպտոսի չեզոք՝ մամուլի կողմից («Ալ-Ահրամ», «Ալ-Կահիրե», «Ալ-Ջարիդա», «Ալ-Աֆքար», «Ալ-Նար») երկու հատուկ թղթակիցներ ուղարկվեցին Ադանա՝ իրականությունը պարզելու համար: Ուսումնասիրությունն ավարտելուց հետո թղթակիցները նշում էին, որ կրոնական պատճառ չկար, զլխավոր պատճառն՝ Ադանայում առկա քաղաքական, տնտեսական ու հասարակական ոչ հայանպաստ գործոններն են<sup>2</sup>:

Կիլիկիայի հայության ջարդերի, պատճառների, դրան հաջորդած ամիսներին հայերի վիճակի, հայ որբերի խնդիրների և հայկական գաղթի լուսաբանմանն է անդրադարձել նաև սիրիական մամուլը՝ մասնավորապես Հալեպի «Ալ-Թակադդում»<sup>3</sup> (Առաջընթաց) թերթը: Թերթը սկզբում կոչվել է «Ալ-Հաուադիս Ալ-Ղախիլիա» (Ներքին իրադարձություններ), քանի որ հրապարակվում էին պետության ներքին գործերին վերաբերող

<sup>2</sup> Տե՛ս Մահմուդ Ռիֆաթ Ումամ, Ադանայի 1909 թ. կոտորածը և դրա արձագանքը եգիպտական մամուլում (արաբերեն), Կահիրե, 2010, էջ 2:

<sup>3</sup> 20-րդ դարի սկզբին Հալեպում տպագրվող ամենահայտնի թերթերից էր «Ալ-Թակադդումը», որը 1908 թ. օգոստոսից հրատարակվել է որպես քաղաքական շաբաթաթերթ: Թերթի գլխավոր խմբագիրը Շուքրի Քանիդոն էր: Այն լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, իսկ 1913 թ.՝ շաբաթական երեք անգամ: 1914 թ. կեսերին թերթը փակվեց և վերաբացվեց միայն 1919 թ. հունվարի 16-ին: Հրատարակվել է մինչև 1940-ական թթ.: Տեղեկությունների բազմազանությամբ թերթը գերազանցում էր սիրիական բոլոր թերթերին: Ազդեցիկ էր նաև Ղամասկոսում հրատարակվող «Ալ-Մուքթաբաս» թերթը: Այս երկու թերթերն աչքի էին ընկնում մանրագին ուսումնասիրություններով և դրանց հավուր պատշաճի ներկայացնելու կարողությամբ (տե՛ս Իլիաս Ժ., Սիրիական մամուլի զարգացումը վերջին հարյուր տարում (արաբերեն), Բեյրութ, 1983, մաս I, էջ 143):



տեղեկություններ: Արդեն 8-րդ համարից՝ 1908 թ. հոկտեմբերի 15-ից, այն անվանվել է «Ալ-Թակադդում»: Թերթը գովերգում էր ազատությունը, քննադատում բռնապետությունը, անօրինականությունը: Նրանում հրատարակվող տեղեկությունների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների՝ այդ թվում հայերի մասին հիշատակումները:

Փաստերի կեղծման ու խեղաթյուրման մոլուցքով բռնված երիտթուրքերը Կիլիկիայի ջարդերի զոհերի թվաքանակի մասին տալիս էին իրարամերժ տեղեկություններ: Զոհերի թվաքանակի մասին որոշակի տեղեկություն է տալիս «Ալ-Թակադդում» թերթի «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» վերնագրով հոդվածը. «Ըստ ուսումնասիրող խմբի և պատերազմական գրասենյակի կատարած մանրամասն հետազոտությունների՝ Ադանայի իրադարձությունների արդյունքում զոհվեց 5680 մարդ, որից 1480-ը՝ մուսուլման, 4190-ը՝ քրիստոնյա: Իսկ ինչ վերաբերում է Ադանայում առկա օտարազգի զոհերի թվին, ապա անունների մատյաններում և գրապահոցներում բացակա լինելու կամ թերի գրանցված լինելու պատճառով թվերը մոտավոր են, նույնիսկ՝ խիստ սակավ, կարող են գերազանցել մինչև 15000-ը և ամբողջական թիվը կդառնա 20680»<sup>4</sup>: Թերթի մեկ այլ համարում նշվում էր, որ «Կիլիկիայի կոտորածների զոհերի թիվն անցնում է նույնիսկ 30000-ը»<sup>5</sup>:

«Ալ-Թակադդումը» հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայի ջարդերի պատճառների ուսումնասիրմանը: Մասնավորապես թերթի 26-րդ համարում նշվում է, որ երբ բռնության ալիքը հասավ Ադանա, արյունահեղությունը միանգամից բոր-

<sup>4</sup> «Ալ-Թակադդում», Հալեպ, 1909, № 24:

<sup>5</sup> Նույն տեղում, № 5:

բոջվեց. «Կառավարությունն ի գորու էր կանխել սպանողը, սակայն հակառակ դրան ավելի բորբոքեց այն, և սա եղավ այն գլխավոր պատճառը, որ այս կոտորածը նման տեսք ստացավ»<sup>6</sup>: 1865 թ. Օսմանյան կայսրությունում կատարված վարչական ռեֆորմների արդյունքում Կիլիկիայի պատմական տարածքները մտնում էին Ադանայի վիլայեթի մեջ, իսկ նրա փոքր մասն ընդգրկված էր Հալեպի վիլայեթի մեջ: 20-րդ դարի սկզբին Ադանայի վիլայեթը համարվում էր Թուրքիայի համեմատաբար զարգացած շրջաններից մեկը, որտեղ կապիտալիստական արտադրանական անհամեմատ ավելի արագ էր արձատավորում, քան կայսրության մյուս վայրերում: Հայերը կարևոր դեր էին կատարում նահանգի և ընդհանրապես Կիլիկիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով ներքին շուկայում ծավալվող առևտուրը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները և գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը:

Թերթը Կիլիկիայի ջարդերի գլխավոր պատճառներից նշում է նաև հայերի տնտեսական վիճակը: Բանն այն է, որ 1895–1896 թթ. ջարդերի ընթացքում կիլիկիահայերը կրել էին մարդկային և նյութական կորուստներ: Սակայն հետագա տարիներին հայերը ջանասիրության ու աշխատանքի շնորհիվ վերականգնել էին իրենց տնտեսությունները, լուրջ հաջողությունների հասել առևտրի և արհեստների բնագավառում: Թերթի հոդվածագիրը գրում էր. «Արդար քրտինքով ձեռք բերած տնտեսական աճն առաջացրել էր մահմեդական բնակիչների և իշխանությունների դժգոհությունը: Թուրքերը և քրդերը չէին կարողանում հանդուրժել, որ քրիստոնյան գտնվում է բարվոք

<sup>6</sup> Նույն տեղում, № 26:

վիճակում: Վերոնշյալ պատճառներն էին այն գլխավոր պայմանները, որոնք կոտորածների պատճառ հանդիսացան»<sup>7</sup>:

Կիլիկիայի ջարդերի մեջ չարաղետ դեր խաղաց Ադանայում հրատարակվող «Ալ-Իթիդալ» (Չափավորություն) թերթը: Այն հայատյաց հողվածներ էր հրատարակում, որոնք Ադանայի ջարդերի երկրորդ փուլի սկսման պատճառներից հանդիսացան<sup>8</sup>: Թերթի խմբագիր Իսսան Ֆիքրիի հողվածներից որոշ քաղվածքներ լույս են տեսել «Ալ-Թակադդում» թերթի «Բաց գրություն մեծ վեզիրին» վերնագրով հողվածում: Նրանցից մեկում Իսսանը նշում է. «Ես ի վիճակի եմ ծանրակշիռ ապացույցներ ներկայացնել, որ Ադանայի հայկական կոտորածը տեղի է ունեցել մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի գիտությամբ ու նրա հրամանով, և այն, ինչ գրել է «Ալ-Իթիդալ» թերթն ի վնաս հայերի՝ Ադանայի իշխանության հրամանով է եղել: Իսկ Ադանայի մուսուլման հարուստ աղաները մեղավոր չէին ճանաչում մուսուլմաններին, մինչդեռ կոտորածից հետո նրանցից մեկը վերադարձել է Կ. Պոլիս և իր մոտ եղել է 15000 լիրա գումար: Հիմնական փաստաթղթերը, որոնք ուղարկվել են կառավարությանն այս թեմայով, պահվում են ինձ մոտ, և անհրաժեշտության դեպքում ես կարող եմ ցուցադրել դրանք, ինչպես նաև ապացույցներ, որ բազմաթիվ պաշտոնյաներ մեծ գումարներ են ստացել այս դեպքի առնչությամբ»<sup>9</sup>: «Ալ-Իթիդալ» թերթի այս հողվածները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել և իրականացվել են

---

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> 1909 թ. ապրիլի 7-ի համարը սովորականից ավել տպագրանակով լույս տեսավ և անվճար տարածվեց քաղաքում: Համարի էջերը լցված էին հակահայկական հողվածներով ու նյութերով: Զարդի ողջ պատասխանատվությունը թերթը բարդում էր հայերի վրա (տե՛ս Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2009, էջ 70–72):

<sup>9</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 52:

թուրքական իշխանությունների կողմից: Պետք է նշել, որ «Ալ-Թակադդումը» այս հարցում հետևողական չի եղել և տպագրել է իրարամերժ հոդվածներ: Մասնավորապես, թերթի «Ֆրանսիա և Թուրքիա» վերնագրով հոդվածում նշվում է, որ «1896 թ. ջարդերի և Ադանայի կոտորածի միջև կա տարբերություն: Եթե 1896 թ. ջարդերի ժամանակ կառավարությունը հենց ինքն էր անմիջական կազմակերպիչը, և Աբդուլ Համիդն օգտագործում էր ամեն տեսակի միջոց այն իրականացնելու համար, իսկ այստեղ այդպես չէ»<sup>10</sup>: Փաստորեն, հոդվածում ներկայացվում է Ադանայի կոտորածների պետական մակարդակով նախօրոք ծրագրված չլինելը, այնինչ իրականում ոճիրը կանխամտածված, ծրագրված գործողություն էր, որի նպատակը Կիլիկիան լիովին հայաթափելն էր, հայերի հողերին, բնակավայրերին, հարստություններին տիրանալը: Այն 19-րդ դարի վերջերին սկսված և մինչև 20-րդ դարի 20-ականների սկիզբը տևած Հայոց ցեղասպանության շղթայի մի փուլն է հանդիսանում:

Կոտորածներից անմիջապես հետո օսմանյան իշխանությունները մի քանի քննիչ հանձնաժողովներ ստեղծեցին, որոնց գործունեությունն իսկական պատուհաս եղավ հայերի համար<sup>11</sup>: Սկզբում այդ հանձնաժողովներին ներկայացված տեղեկությունների հիման վրա պատժվեցին որոշ մուսուլմաններ: Կոտորածի որոշ մեղսակիցների ձերբակալման մասին վկայում է նաև «Ալ-Թակադդում» թերթում տպագրված Ադանայի բնակիչներից մեկի գրությունը, որում տեղեկացվում էր քաղաքի բնակիչների, այդ թվում «Ալ-Իթիդալ» թերթի խմբագրի և գորքերի նախկին հրամանատարի ձերբակալման մասին<sup>12</sup>: Անկողմնակալ երևալու կեղծ կեցվածքով մի պահ իշխանութ-

<sup>10</sup> Նույն տեղում, № 4:

<sup>11</sup> Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 255–256:

<sup>12</sup> Տե՛ս «Ալ-Թակադդում», 1909, № 21:

յունները փակեցին «Ալ-Իթիդալ»-ը, սակայն իրականում թերթն անպատիժ մնաց. սոսկ ձևի համար փակվեց և վերահրատարակվեց իբրև օրաթերթ: «Ալ-Թակկադում»-ի «Անթալիայի դեպքեր» վերնագրով հողվածում տեղեկացվում է քաղաքացիական դիվանի կողմից կոտորածը հրահրելու և նրանում մեծ մասնակցություն ունենալու մեջ մեղադրվող Կուսեյրի Ջադահա Աբդ ալ Սամդ Ալայի ձերբակալման մասին. «Քանտարկվել են Օմար, Ամին, Քաուրշուկ, Օսման բեյերը, որոնք թաքցրել են այն մարդկանց անունները, որոնք հարծակվել են պատասպարվող հայերի վրա և կոտորել նրանց»<sup>13</sup>:

Ուսումնասիրող հանձնաժողովների իրականացրած անարդար ձերբակալությունների մերկացմանն է ուղղված «Ալ-Թակկադում»-ի «Տեղական իրադարձություններ» վերնագրով հողվածը: Այստեղ նշվում է, որ Հաճնի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդներից մեկը շարունակում է բանտարկված մնալ Սարաշում, և հետաքննող հանձնաժողովները, փոխանակ ուսումնասիրելու սպանություններն ու դատապարտելու իսկական մեղավորներին, դաժանությամբ հարցաքննում են հայերին: «Ջեյթունցի մոտ 400 հայ սպանվել են Ադանայի արվարձաններում՝ թողնելով մեծ թվով այրիներ և որբեր: Իսկ Սուլեյմանյում հայերի հոգևոր առաջնորդը նամակ է ուղարկել Բ. Դռանը, որում խնդրում է ուշադրություն դարձնել Սուլեյմանյում հայ ազգի դժբախտություններին, և այս վիլայեթի վալի նշանակել այնպիսի մարդու, ով առավել հակված է առաջնորդվել սահմանադրության դրույթներով»<sup>14</sup>: Հողվածում այնուհետև տեղեկացվում է, որ Ալեքսանդրիայում գտնվող Ադանայի հայերի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը հայկական թերթերից մեկում ներկայացրել է փաստեր, որոնք ապացուցում են

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում, № 23:

նախկին վալիի և Ադանայի պաշտոնյաների մասնակցությունը տեղի ունեցած հանցագործություններին<sup>15</sup>:

4. Պոլսի հայոց ազգային իշխանությունները, հայկական տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, մասնավոր անձինք կառավարության քննիչ հանձնախմբերի որոշումներն ապօրինի համարեցին ու բազմաթիվ հեռագրեր հղեցին սուլթանին, մեծ վեզիրին, խորհրդարանի նախագահին, ներքին գործերի նախարարին, որոնց լուսաբանմանը նույնպես անդրադարձել է «Ալ-Թակադդումը»:

«Ալ-Թակադդումը» մի քանի համարներում ներկայացնում է ողբերգությունից հետո Կիլիկիայում մնացած հայերի տխուր, անօգնական վիճակը: Մասնավորապես, ներկայացվում է Կիլիկիայի կաթողիկոսի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղարկած նամակը, ուր պատրիարքը պահանջում էր մինչ ծնռան գալն անհապաղ միջոցառումներ իրականացնել ժողովրդի տառապանքը թեթևացնելու համար<sup>16</sup>: «Մարաշում հայերի վիճակը» հոդվածում ներկայացվում է տեղի հայերի առաջնորդի նամակը. «Մարաշում իրավիճակը շատ վատ է, և հայերը վախենում են, որ կոտորածները կարող են նորից կրկնվել»<sup>17</sup>:

Կիլիկիայի կոտորածներից հետո Ադանայում և Կիլիկիայի հայկական մյուս բնակավայրերում բազմաթիվ այրիներ և որբեր էին մնացել: «Ալ-Թակադդումը» մեծ տեղ է հատկացրել հայերի կրած նյութական կորուստների, անօթևան մնացած հայերի, որբերի, այրիների վիճակի նկարագրություններին: «Ազո հավաքույթ Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ «պատրիարքարանը նամակ է ուղարկել Ադանայի եպիսկոպոսին, որում գրված էր, որ հրաժարվում է 600

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, № 50:

<sup>17</sup> Նույն տեղում, № 51:

ծնողագուրկ երեխաներին ուղարկել Ադանա»<sup>18</sup>: Իսկ «Հայերի պահանջները» վերնագրով հոդվածում էլ տեղեկացվում է, որ Կ. Պոլսում հայկական ֆինանսական խորհուրդը հատուկ նիստ է գումարել Ադանայում հայերի նյութական կորուստներն ուսումնասիրելու համար: Մտքերի փոխանակումից հետո խորհուրդը որոշել է նամակ ուղարկել սուլթանին: Նամակը պարունակում էր 3 սկզբունքային կետ.

1. Կառավարությունը պետք է իր բոլոր ջանքերը գործադրի ավերված հայկական եկեղեցիները վերակառուցելու համար:

2. Պարզաբանել հայ հոգևորականների կրած տառապանքները, բռնաճնշումները, հալածանքները:

3. Ուշադրություն դարձնել և լիակատար օժանդակություն ցուցաբերել անօգնական վիճակում հայտնված մարդկանց<sup>19</sup>:

Հայերի նյութական կորուստներն առհեղի էին. թուրքերն ու քրդերը թալանել, կողոպտել, ավերել էին բնակելի տներ, խանութներ, եկեղեցիներ: Այս հարցի վերաբերյալ որոշակի տեղեկություն է պարունակում «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» հոդվածը. «Իսկ ինչ վերաբերում է այրված կամ քանդված եկեղեցիների, տների ու խանութների թվին, ապա այն հասնում է 4823-ի, որից 4437-ը քրիստոնյաների, 386-ը՝ մուսուլմանների սեփականություն համարվող շենքեր: 30000 կանայք և երեխաներ, ովքեր ունեին սննդի, հագուստի և առաջին անհրաժեշտության իրերի կարիք, անօթևան մնացին»<sup>20</sup>:

Կիլիկիայի կոտորածներին առնչվող մյուս հոդվածներում թերթը ողջ ուշադրությունը կենտրոնացնում է կոտորածի

<sup>18</sup> Նույն տեղում, № 6:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում, № 24:

հետևանքով առաջացած հայկական գաղթի նկարագրություններին: «Հայերի գաղթը» վերնագրով հոդվածում նշվում է, որ Ամերիկայի, Եգիպտոսի հայ հարուստների մի խումբ հատկացրել է մեկ միլիոն լիրա Օսմանյան կայսրությունից դեպի օտար երկրներ՝ հատկապես Արգենտինա գաղթած հայերին օգնություն տրամադրելու համար<sup>21</sup>: «Իրավիճակն Ադանայում» հոդվածում տեղեկացվում է, որ 26000 հայ գտնվում է խղճուկ վիճակում և օգնության կարիք ունի: Նրանցից 6000 այրի են, իսկ Կուզանում 400 ընտանիք կացարան չունի: Նույն վիճակն է Քեսաբում (1000 ընտանիք), Դեռոթ Յոլում (500 ընտանիք), Բահիջահում (800 ընտանիք). «Վերջին երեք ամիսներին ավելացել է մահացածների թիվը, շարունակվում է արտագաղթը, և մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում 4000 մարդ արտագաղթել է դեպի արևմտյան պետություններ: Պատրիարքարանը Եգիպտոսից նամակ է ստացել Կահիրեում ու Ալեքսանդրիայում Ադանայից մոտ 900 գաղթական գտնվելու մասին, և նրանք չեն համարձակվում վերադառնալ Ադանա: Միաժամանակ իրավիճակն Ադանայում ավելի է վատթարանում. արդեն տարածվում են մի շարք հիվանդություններ, և անհրաժեշտ է անհապաղ հիվանդանոցներ կառուցել ու ժողովրդին օգնություն ցուցաբերել»<sup>22</sup>:

Պետք է նշել, որ օսմանյան իշխանությունները, բացի մի խումբ մուսուլմանների «պատժելուց», որոշակի օգնություն՝ մոտ 20000 ոսկի, տրամադրեցին Կիլիկիայի բնակչությանը՝ նրանց կյանքը որոշակիորեն բարելավելու համար: Սակայն այդ գումարները բաշխվում էին անարդար. մեծ մասը հատկացվում էր սպանված մուսուլմանների ընտանիքներին: «Իրավիճակն Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդ-

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, № 20:

<sup>22</sup> Նույն տեղում, № 29:



վում է, որ Ադանայում իրադրությունը չի բարելավվել. խոստացված բարենորոգումները չեն իրականացվել: Բանտարկված հայերը շարունակում են մնալ բանտերում՝ ենթարկվելով տարբեր տեսակի զրկանքների: Ադանայի նախկին վալի Ջևադ Բիքը և նախկին գորահրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան, ովքեր մասնակցություն ունեն հայերի ողբերգության մեջ, անհոգ թափառում էին, «ինչ վերաբերում է քանդված, ավերված տներին, ապա հարյուրավոր տներ քանդված են մնում, իսկ հարյուրավոր մարդիկ՝ անօթևան»<sup>23</sup>: Մեկ այլ հոդվածում ասվում է, որ «հայերի գաղթը շարունակվում է, և չկա մի հուսադրող բան, որը հետ կանգնեցնի բնակիչներին հայրենիքը լքելու մտքից: Յուրաքանչյուր օր մեծ թվով հայ երիտասարդներ Մերսինից մեկնում են դեպի Ամերիկա»<sup>24</sup>: Թերթի 49-րդ համարում տեղ գտած հոդվածում ներկայացված է Կ. Պոլսի հայոց պատրիարքի այցը Իսթենդերուն, Անթալիա, Ադանա, ուր ամենուրեք բնակիչները բողոքում էին, որ օգնություն չեն ստացել: «Ամենաժանր դրությունն Իսթենդերունում է, ուր օգնության տրամադրումը դադարեցվել է, և վիճակն ավելի է բարդացել», - նշում է հոդվածագիրը<sup>25</sup>:

Կիլիկիայի ջարդերի վերաբերյալ վերջին՝ «Հալեպի ու Ադանայի կոտորածների պատճառով բանտարկվածների համաներումը» վերնագրով հոդվածը «Ալ-Թակադդում» թերթում տպագրվել է 1910 թ. 209-րդ համարում, որում տեղեկացվում է Ադանայի և Հալեպի վիլայեթների կոտորածների կապակցությամբ պատերազմական դիվանի կողմից ցմահ կամ 15 տարվա

<sup>23</sup> Նույն տեղում, № 37:

<sup>24</sup> Նույն տեղում, № 47:

<sup>25</sup> Նույն տեղում, № 49:

ազատագրկման դատապարտված 36 անձանց համաներման մասին<sup>26</sup>։

Ամփոփելով՝ նշենք, որ 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների առնչությամբ սիրիական «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները կրկին վկայում են, որ կոտորածների հրահրման մեջ առաջնային դեր է խաղացել երիտթուրքական կառավարությունը։ Թերթը տվյալներ է հաղորդում հայերի զոհերի քանակի վերաբերյալ, որոնք կարևոր են հայերի կոտորածների ընթացքում սպանվածների ընդհանուր թիվը ճշտելու համար։ Պարբերականի տեղեկություններն օգտակար են նաև կոտորածների ժամանակ հայերի կրած նյութական վնասների հաշվարկման համար։

МЯСНИК ЕСОЯН

**ОСВЕЩЕНИЕ ИСТРЕБЛЕНИЯ КИЛИКИЙСКИХ АРМЯН  
1909 Г. В СИРИЙСКОЙ ГАЗЕТЕ  
“АЛЬ-ТАКАДДУМ”**

**РЕЗЮМЕ**

В результате истребления армян в Киликии в 1909 г. погибло около 30 тысяч армян. На эту трагедию обратила внимание сирийская газета “Аль-Такаддум” (Продвижение). В истреблении киликийских армян младотурецкие власти обвиняли самих армян: многочисленные невинные армяне были задержаны и брошены в тюрьмы. Истребление киликийских армян в 1909 г., безусловно, считается одним из этапов Геноцида армян, который начался в конце 19 века и продолжался до 20-ых годов XX века.

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, 1910, № 209։

ELUCIDATION OF THE EXTERMINATION OF  
CILICIAN ARMENIANS IN 1909 IN THE SYRIAN  
NEWSPAPER "AL-TAKKADUM"

SUMMARY

As a result of the Armenians' massacres in Cilicia in 1909 about 30. 000 Armenians were killed.

The extermination of Cilician Armenians in 1909 is considered as a stage of the Armenian Genocide which started at the end of the 19<sup>th</sup> c. until the 20-s of the 20<sup>th</sup> c.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՂԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլի: Միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին փուլը, ըստ էության, համընկնում է 1915–1923 թթ. հետ, որը պայմանավորված է այդ ընթացքում ընդունված միջազգային կարևոր փաստաթղթերով, որոնցում արտացոլվել է միջազգային հանրության վերաբերմունքը և գնահատականն այդ հանցագործությանը: Առաջին փուլի սկիզբ պետք է համարել Անտանտի (Համաձայնության) տերությունների 1915 թ. մայիսի 24-ի հայերի զանգվածային սպանությունները դատապարտող հռչակագիրը, իսկ ավարտը՝ 1923 թ. Լոզանի պայմանագիրը, որը Հայկական հարցի լուծումը դիտում էր լոկ թուրքիայի փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում: Այս փաստաթղթերի ընդունման միջև ընկած ժամանակաշրջանում ևս եղել են միջազգային մի շարք կարևոր փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Սևրի պայմանագիրը, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, Ազգերի լիգայի ընդունած բանաձևերը և Լոնդոնի պայմանագիրը և այլն, որոնք էլ ամբողջացնում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին փուլը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում 1915 թ. մայիսի 24-ի հռչակագիրն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ այդ փաստաթղթով Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պաշտոնապես դատապարտեցին հայկական կոտորածները՝ այն որակելով որպես մարդկության

և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն: Այս քայլը կարելի է համարել հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման առաջին փաստը և Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթը<sup>1</sup>:

Նշյալ հռչակագիրն առաջին դեպքը չէր, երբ մեծ տերությունները միջամտում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին՝ քրիստոնյա փոքրամասնությունների շահերի ու իրավունքների պաշտպանության պատրվակով: Այսպիսով, մեծ տերությունները գործնականում իրականացնում էին, այսպես կոչված, մարդասիրական միջամտություն (հումանիտար ինտերվենցիա)՝ հանդես գալով փոքրամասնությունների շահերի և իրավունքների պաշտպանության դիրքերից:

Հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հետ կապված հումանիտար ինտերվենցիա պետք է համարել 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որոնք բոլորն էլ բարենորոգումներ էին նախատեսում հայկական նահանգներում: Սակայն Օսմանյան կայսրությունը, օգտվելով իր համար նպաստավոր աշխարհաքաղաքական դասավորությունից, անընդհատ ոտնահարում էր կայսրության փոքրամասնությունների և հատկապես հայերի շահերն ու իրավունքները: Դա հանգեցնում էր եվրոպական տերությունների կողմից նրա սուվերենության սահմանափակմանը և կայսրության ներքին գործերին միջամտելուն:

Սակայն ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներից ելնելով մեծ տերությունները հանդես եկան նման հայտարարությամբ ար-

---

<sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Լ. Ա., Հայոց ցեղասպանության իրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915–2000 թթ.), Երևան, 2001, էջ 15:

դեն հայերի ջադերի ընթացքում և ի՞նչ քաղաքական շահեր էին հետապնդում:

Հարկ է նշել, որ 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրի նախապատրաստման փուլում կարևոր դեր խաղացին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի հեռագրերը՝ ուղղված Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին, Իտալիայի վարչապետին և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, որտեղ նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում էր արևմտահայության վիճակը՝ հայցելով մեծ տերությունների աջակցությունը: Ակնհայտ է, որ կաթողիկոսի այս քայլերը նախապես համաձայնեցված էին ռուսական արտաքին քաղաքական գերատեսչության հետ. սոսկ կաթողիկոսի նամակները ոչինչ չէին կարող փոխել, եթե այդ քաղաքական ակցիայի հետևում կանգնած չլիներ ռուսական դիվանագիտությունը: Ռուսական գերատեսչությանը հղած հեռագիրը, որով կաթողիկոսը «մարդասիրական հովանավորություն և պաշտպանություն»<sup>2</sup> հայցում էր ռուսական դիվանագիտությանը հնարավորություն էր տալիս մեծ տերությունների ամօք և պաշտոնապես բարձրացնելու արևմտահայության հարցը: Այդ մասին է վկայում Ս. Սազոնովի 1915 թ. ապրիլի 9-ի թիվ 1817 հեռագիրը՝ ուղղված Կովկասի փոխարքայի օգնական Վ. Վ. Միշլասկուն, որտեղ նախարարը նշում էր, որ Վաշինգտոնում և Հռոմում գտնվող ռուսական դեսպաններ Ն. Գիրսին և Գ. Բախմետևին հատուկ հանձնարարություն է տվել՝ պաշտպանելու Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի խնդրանքն այդ երկրների կառավարությունների ամօք<sup>3</sup>:

<sup>2</sup> «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու» Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 337:

<sup>3</sup> Տե՛ս «Международные отношения в эпоху империализма. Документы архивов Царского и Временного правительства, 1878-1917», серия III, т. 7, ч. 2, Москва-Ленинград, 1935, էջ 227:

Անդրադառնալով ռուսական դիվանագիտությանը նշենք, որ, անշուշտ, Ռուսաստանի քայլերը բխում էին կայսրության արտաքին քաղաքական շահերից ու հետաքրքրություններից, ինչը բնական է, սակայն կարևորն այն էր, որ Ռուսաստանի շահերը տվյալ պահին համահունչ էին ոչնչացման եզրին կանգնած հայության շահերին, ինչի արդյունքում էլ սկիզբ դրվեց հայերի զանգվածային սպանությունները դատապարտող մի շատ կարևոր միջազգային-իրավական նախաձեռնության՝ Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրին:

Հռչակագրի ընդունման գործընթացն ամենևին էլ դյուրին չէր: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը՝ հանձինս՝ նախարար Ս. Սազոնովի, փորձեց Անտանտի պետությունների հետ համատեղ հանդես գալ թուրքական կառավարության դեմ՝ քննադատելով Օսմանյան կայսրության վարած հայասպան քաղաքականությունը: Նման համատեղ քաղաքական ակցիան ընդգծելու էր «Համաձայնության» երկրների անխախտելի կապն ու ամուր դաշինքը:

Ապրիլի 26-ին Փարիզում և Լոնդոնում գտնվող ռուսական դեսպաններ Ա. Իզվոլսկուն և Ա. Բենկենդորֆին ուղղված հեռագրում Ս. Սանզոնովը հանձնարարում էր անգլիական և ֆրանսիական կառավարություններին առաջարկել համատեղ հանդես գալ հայերի զանգվածային սպանությունները դատապարտող բողոքի նոտայով: Ռուսական դիվանագիտությունը նախատեսել էր հայտարարության նախագծի մեջ անձնապես մեղադրել օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև այդ գործողություններին մասնակից դարձած քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներին: Հեռագրում Ս. Սազոնովը հիմնվում էր «հումանիտար ինտերվենցիայի» իրավունքի սկզբունքների վրա՝ հիշեցնելով 1860 թ. Եվրոպայի որդեգրած այն պատժամիջոցների մասին, որոնք հաջորդեցին

Սիրիայի կոտորածներին<sup>4</sup>: Ֆրանսիական և անգլիական կառավարությունների համաձայնության դեպքում Սազոնովը նախատեսել էր միևնույն օրը բողոքի նոտան հրապարակել երեք մայրաքաղաքներում:

Օսմանյան կայսրության դեմ նախատեսվող այդ գործողության մեջ Ս. Սազոնովը նախատեսել էր ընդգրկել նաև չեզոք պետություններ ԱՄՆ-ին և Իտալիային, որոնք շարունակում էին դիվանագիտական հարաբերություններ պահպանել Օսմանյան կայսրության հետ: Դա լավագույնս կընդգծեր հռչակագրի անկողմնակալությունը:

Վաշինգտոնում ռուսական դեսպան Ա. Բախմետևը, ստանալով Սազոնովի հրահանգները և որպես խաղաթուղթ ունենալով Պետրոս V-ի նամակը, սկսեց դիվանագիտական ակտիվ գործունեություն ծավալել ԱՄՆ-ում: Նշենք, որ ԱՄՆ կառավարությանը ներկայացնելով Օսմանյան կայսրությունում քրիստոնյա հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների քաղաքականությունը, Բախմետևը առաջ էր քաշել հետևյալ կարևոր հանգամանքը՝ Ռուսական կայսրությունում մեծ թիվ են կազմում մահմեդականները, սակայն նրանք պաշտպանված են ու նրանց հանդեպ բռնություն չի գործադրվում<sup>5</sup>:

Այս քայլով Բախմետևը ցանկանում էր շեշտել այն իրականությունը, որ Օսմանյան կայսրությունը մի երկիր է, որտեղ քրիստոնյա փոքրամասնություններին պարբերաբար ոչնչացնելու քաղաքականություն է իրականացված: Ուստի՝ մեծ տերությունները, համաձայն «հումանիտար ինտերվենցիայի» իրավունքի սկզբունքների, պարտավոր են միջամտել և կանխել այդ հանցավոր քաղաքականությունը: Ռուս-ամերիկյան

<sup>4</sup> Տե՛ս «Русские источники о геноциде армян в Османской империи 1915–1916 годы (сборник документов и материалов)», выпуск 1, Ереван, 1995, էջ 14–15:

<sup>5</sup> Տե՛ս Մարույան Ա., Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), Ереван, 2003, էջ 71:



դիվանագիտական շփումների արդյունքը հանդիսացավ ԱՄՆ պետքարտուղար Վ. Բրայանի 1915 թ. ապրիլի 27-ի հեռագիրը՝ ուղղված Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Սորգենթաուին՝ համաձայն որի ԱՄՆ կառավարությունը դեսպանին լիազորում էր միջամտել և ազդել թուրքական կառավարության վրա՝ հանդես գալով հայերի պաշտպանության դիրքերից: Արդեն հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Վաշինգտոնում ռուսական դեսպանը ստացավ Վ. Բրայանի հեռագիրը, որում նշվում էր, որ ԱՄՆ կառավարությունը հատուկ հանձնարարական է սվել Հ. Սորգենթաուին՝ կանխելու Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդես գործադրվող բռնություններն ու կոտորածը<sup>6</sup>:

Չնայած որոշակի խոստումներին՝ ԱՄՆ-ը խուսափում էր լուրջ քայլերից և Օսմանյան կայսրության վարած քաղաքականության դեմ սահմանափակվեց միայն ոչ պաշտոնական բողոքով՝ հանդես գալով հայերի պաշտպանության դիրքերից<sup>7</sup>:

Օսմանյան կայսրության որդեգրած քաղաքականության մասին տեղեկացվեց նաև Իտալիան, ինչի մասին վկայում է Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալի հեռագիրը՝ ուղղված Պետրոգրադում Իտալիայի դեսպանին, որում մանրամասն ներկայացնելով Վանի նահանգի վիճակը, դիվանագետը նշում էր անգամ զոհերի թիվը<sup>8</sup>: Չնայած իրազեկությանը՝ Իտալիան, իբրև չեզոք պետություն, որը Կ. Պոլսում ներկայացուցչություն ուներ, գործնականում ոչ մի քայլ չձեռնարկեց:

Հապաղում էին ոչ միայն չեզոք, այլև դաշնակից երկրները՝ Անգլիան և Ֆրանսիան: Իրականում թե՛ Անգլիան, թե՛ Ֆրանսիան ցանկանում էին սահմանափակվել միայն չեզոք երկրներ ԱՄՆ-ի և Իտալիայի միջոցով Օսմանյան կայսրության որդեգ-

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս Барсегов Ю., Геноцид армян – преступление против человечества, Ереван, 1990, էջ 20:

<sup>8</sup> Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 344–345:

րած քաղաքականությունը դատապարտելով: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Տեոֆիլ Դելկասսեն ապրիլի 27-ի գիշերը հեռագրել էր Լոնդոնում գտնվող Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին՝ հանձնարարելով ճշտել անգլիական կառավարության դիրքորոշումը<sup>9</sup>:

Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը, ժանոթանալով հռչակագրի բովանդակությանը, հապաղում էր՝ որևէ պատասխան չտալով: Անգլիական կողմն անընդհատ ձգձգում էր, անգամ առաջ էր քաշում այն պատրվակը, թե իբր հայերը Վանում ապստամբություն են բարձրացրել, իսկ թուրքական կողմը ձեռնարկել է պատասխան գործողություններ, որոնք էլ ավարտվել են կոտորածով: Սակայն դա իրականությանը չէր համապատասխանում, և այդ մասին է վկայում նաև Սազոնովի հեռագիրը՝ ուղղված Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆին. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չունեի մինչև մեր գործերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»<sup>10</sup>:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը չէր դադարեցնում դիվանագիտական ճնշումն Անգլիայի վրա՝ անընդհատ հարցում անելով, թե արդյո՞ք Լոնդոնը համաձայն է դաշնակից երկրների հետ համատեղ հանդես գալ բողոքի նուտայով, որը թուրքական կառավարությանը պատասխանատվություն էր սահմանելու հայերի դեմ կիրառվող բռնությունների համար: Նշված հարցադրմամբ ռուսական դիվանագիտությունը կարծես թե փակուղի էր մտցնում անգլիական բազմափորձ դիվանագիտությանը՝ նրան կանգնեցնելով բարդ ընտրության

<sup>9</sup> Տե՛ս Բաբերոս ԿՕ., նշվ. աշխ., էջ 19: Նաև՝ *Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918). Documents réunis et présentés par A. Beylerian, Paris, 1983, N 19, p. 15.*

<sup>10</sup> «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 340:

առջև: Լոնդոնից պատճառաբանում էին, որ այդ հռչակագիրը դրական ազդեցություն գործելու փոխարեն կարող էր հակառակ դեր ունենալ: Ավելին՝ անգլիացիները հույս չունեին, որ նման հռչակագիրն ինչ-որ բան կարող էր փոխել:

Մի կողմից Ռուսաստանի դիվանագիտական ճնշումները դաշնակիցների նկատմամբ, մյուս կողմից հայերի շարունակվող կոտորածները հռչակագրի ընդունումը դարձնում էին հրամայական: Այդ իսկ պատճառով ռուսական դիվանագիտությունը, չսպասելով որևէ պատասխանի, Փարիզում և Լոնդոնում գտնվող իր դեսպանների միջոցով մայիսի 11-ին վերոհիշյալ երկրների կառավարություններին է ներկայացնում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի կազմած հռչակագրի նախագծի տեքստը, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացված էր Արևմտյան Հայաստանի դրությունը:

Այս փաստաթղթի կարևորությունը կայանում էր նրանում, որ մեծ տերություններն Օսմանյան կայսրությանը մեղադրում էին ոչ միայն կատարված հանցագործության (1914–1915 թթ.), այլ նաև հայերի դեմ մինչ այդ գործած հանցագործությունների մեջ<sup>11</sup>: Սա ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու այն պարզ ճշմարտությունը, որ Օսմանյան կայսրությունը մի երկիր էր, որտեղ, ոտնահարվում էին քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները:

Հռչակագրի նախագծի տեքստին առաջինն արձագանքեց անգլիական կառավարությունը: Արտաքին գործերի նախարար էդուարդ Գրեյը Ռուսաստանի արտգործնախարարությանը հայտնեց իր կառավարության համաձայնության և հռչակա-

---

<sup>11</sup> St' u Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида армян (о концепции члена “Комиссия Примерения” Гюндуз Актана), Москва, 2002, էջ 20:

գիրը հրապարակելու պատրաստակամության մասին, եթե ֆրանսիական կառավարությունը ևս տա իր համաձայնությունը<sup>12</sup>:

Ծանոթանալով հռչակագրի բովանդակությանը՝ արդեն մայիսի 20-ին ֆրանսիական կառավարությունը՝ ի դեմս արտաքին գործերի նախարար Դելկասեի, համաձայնեց Փարիզում հրապարակել հռչակագիրը՝ միայն տերմինաբանական և խմբագրական որոշակի փոփոխություններ անելուց հետո՝ կապված հանցագործության որակման հետ: Հարցը կայանում էր նրանում, որ հռչակագրի ռուսական նախագծի տեքստում եղած հանցագործության որակումը՝ «ընդդեմ քրիստոնեության և քաղաքակրթության», որը ջարդերի քաղաքականությանը տալիս էր կրոնական տեսք, ֆրանսիական կառավարության համար անընդունելի համարվեց: Այն մոտեցումը, թե այդ ոճիրները գործում են քրիստոնեության դեմ, պաշտոնական Փարիզի կարծիքով կարող էր վիրավորել Ֆրանսիայի տիրապետության տակ գտնվող ոչ քրիստոնյա բնակչության կրոնական զգացմունքները: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը հույս էր հայտնում, որ Սազոնովի կողմից առաջարկված բնագրի երկրորդ պարբերության «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» բառերը կարող են առանց այլևայլության հանվել<sup>13</sup>: Ֆրանսիական կառավարությունն առաջ էր քաշում նաև այն թեզը, թե դրանք կարող են տեղիք տալ խորհրդածելու, թե Ֆրանսիան թուրքիային առնչվող խնդիրներում շահագրգռված է միայն քրիստոնյա բնակիչների հարցով:

<sup>12</sup> Տե՛ս «Русские источники о геноциде армян», էջ 27:

<sup>13</sup> Տե՛ս Պելլերյան Ա., Մեծ տեղությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հատոր I, առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանս. թարգմանեց Վ. Պողոսյանը, Երևան, 2005, էջ 96:

Չնայած նրան, որ հռչակագրի տեքստին առաջինն արձագանքել էր անգլիական կողմը, և հռչակագրի հրապարակման վերաբերյալ հայտնել էր իր պատրաստակամությունն ու այդ քայլին գնալու համար իբր թե սպասում էր ֆրանսիական կողմի արձագանքին, իրականում նա ինքն էր ձգձգում գործընթացը: Այդ մասին վկայում է Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆի 1915 թ. մայիսի 20-ի հեռագիրը՝ ուղղված Սազոնովին, որից պարզ էր դառնում անգլիական դիվանագիտության էությունը: Գրեյի այն հարցին, թե արդյո՞ք բավարար չի լինի, եթե Ռուսաստանը միայնակ հանդես գա Բարձր Դռան դեմ, Բենկենդորֆը տալիս է շատ դիպուկ պատասխան. «մինչ այժմ մենք հանդես ենք եկել միշտ երեքով, և, որ ինձ կարևոր է թվում, որ այդ կարգը կիրառվի նաև ապագայում...»<sup>14</sup>: Նման պատասխանով Բենկենդորֆը ցանկանում էր Անգլիային հիշեցնել Ռուսաստանի առջև ունեցած իր դաշնակցային պարտավորությունների մասին: Ավելին, Բենկենդորֆը Գրեյին հիշեցնում էր խիստ կարևոր մի հանգամանք, այն, որ իրենց ռազմական հետաքրքրությունների համար նախատեսվող հռչակագիրը, անկասկած, մեծ տպավորություն կգործի ողջ հայության շրջանում, ինչն իրենց ընդհանուր շահերի համար կարևոր նշանակություն ունի<sup>15</sup>:

Անգլիական կառավարությանը ոչինչ չէր մնում, քան տեղի տալ և միանալ հռչակագրին: Մայիսի 21-ին անգլիական կողմը Փարիզին տվեց իր դրական պատասխանը: Էդուարդ Գրեյը, համաձայնելով Դելկասեի արած առաջարկին, առաջարկում էր թուրքիայում հայերի կոտորածներին վերաբերող հաղորդագրության հրապարակման ամսաթիվ ընդունել մայիսի 24-ը:

<sup>14</sup> «Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին», կազմող, առաջաբանի, բարգմանության հեղինակ՝ Ա. Մարուքյան, Երևան, 2001, էջ 27:

<sup>15</sup> St u «Русские источники о геноциде армян», էջ 28:

Ֆրանսիայի և Անգլիայի մոտեցումը՝ կապված տեքստի փոփոխության հետ, Սազոնովի կողմից հավանության արժանացավ: Ռուսական կողմը հայտնեց իր համաձայնությունը «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» ձևակերպումը փոխարինել «մարդկության և քաղաքակրթության դեմ» տարբերակով և ընդառաջեց նաև Գրեյի ցանկությանը՝ «հայերի կոտորածներ»-ը փոխարինել «համանման կոտորածներ» բառերով<sup>16</sup>:

Նախատեսված օրը՝ մայիսի 24-ին, երեք մայրաքաղաքներում՝ Սանկտ-Պետերբուրգում, Փարիզում և Լոնդոնում հռչակագրի հրապարակվելուց հետո փաստաթղթի ֆրանսերեն տեքստը հանձնվեց «Հավա» հեռագրական գործակալությանն ու անմիջապես փոխանցվեց Կոստանդնուպոլիս և Բեռլին<sup>17</sup>: Քանի որ Անտանտի երկրների և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ չկային, թուրքական կողմին հայտարարագրի պաշտոնական հանձնումն Անտանտի երկրների անմիջական մասնակցությամբ ուղղակի հնարավոր չէր, ուստի ֆրանսիական կողմը հռչակագրի տեքստը ներկայացրեց Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Վ. Շարփին: Նրա միջոցով հռչակագիրը պետք է ներկայացվեր ԱՄՆ-ի կառավարությանը՝ Օսմանյան կայսրության վարչապետ Սայիդ Հալիմ փաշային փոխանցելու նպատակով: Մայիսի 28-ին Շարփը հռչակագրի պատճենը փոխանցեց Վաշինգտոն՝ պետքարտուղար Վ. Բրայանին, իսկ վերջինս մայիսի 29-ին այն հեռագրով ուղարկեց Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուին, որը և այն հանձնեց հասցեատիրոջը:

<sup>16</sup> Տե՛ս Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 99:

<sup>17</sup> Տե՛ս Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, 2009, էջ 174:

Չնայած նրան, որ Անտանտի երկրների հռչակագիրը հարուցեց թուրքական կառավարության և հատկապես Սայիդ Հալիմ փաշայի զայրույթը, սակայն իրականում այդ փաստաթուղթը ոչ մի ազդեցություն չգործեց օսմանյան կառավարության վրա: Ավելին, երիտթուրքական կառավարությունը ոչ միայն չընդունեց մեղադրանքները՝ նշելով, որ «հայերի դեմ գործադրված ջարդերի որևէ դեպք չկա և տերությունների զրպարտությունները բացահայտ սուտ են»<sup>18</sup>, շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը, այլև ինքը պատասխան նոտայով կասկածի տակ դրեց Անտանտի «մարդասիրական» ձգտումներն ու «քաղաքակիրթ» դիմագիծը: Օսմանյան կայսրության վրա ոչ մի ազդեցություն չգործեցին նաև չեզոք պետությունների «ներգործությունները», որոնք անարդյունավետ էին և ոչ մի կերպ չնպաստեցին ցեղասպանության քաղաքականության դադարեցմանը<sup>19</sup>:

Անտանտի երկրները նշյալ հռչակագրով հետապնդում էին քաղաքական որոշ նպատակներ: Տերությունների համար իրականում առաջնային էր հռչակագրի քաղաքական նշանակությունը, այն է՝ օգտագործելով Հայկական հարցը, փորձել ճնշում գործադրել Օսմանյան կայսրության վրա և սպառնալ հետպատերազմյան հաշվեհարդարով: Եթե այդ կերպ հաջողվեր կայսրությանը պատերազմից դուրս բերել, ապա Գերմանիան կզրկվեր իր դաշնակցի օժանդակությունից, ինչը համեմատաբար կհեշտացներ Անտանտի հաղթանակը: Մյուս կողմից՝ Անտանտի տերություններին հետաքրքրում էր բուն Օսմանյան կայսրությունը, որտեղ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր

<sup>18</sup> Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս., Թուրքերը թուրքերի մասին, վավերագրերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 200:

<sup>19</sup> Տե՛ս Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 61:

իր ազդեցության գոտին հաստատել (հետագայում դա արտացոլվեց 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրում):

Այն, որ Անտանտի տերություններն առաջնային պլան էին մղում քաղաքական շահը և իրականում կարևորում հռչակագրի ոչ այնքան իրավական, որքան քաղաքական կողմը, դա փաստ է, սակայն չմոռանանք, որ մայիսի 24-ի նոտան կազմվեց մի ժամանակաշրջանում, երբ ընթանում էր Առաջին աշխարհամարտը և երկու հակադիր խմբավորումների հաղթանակի հետ կապված կանխատեսումներ անելն ուղղակի հնարավոր չէր: Ղա շատ լավ գիտակցում էին նաև Անտանտի երկրները՝ քաջ իմանալով, որ օսմանյան կառավարության վրա հռչակագիրն ազդեցություն չէր գործելու: Ուստի կարելի է եզրակացնել, որ մայիսի 24-ի հայտարարությամբ Անտանտը գործնականում հետապնդում էր այլ նպատակ՝ քրիստոնյա փոքրամասնությունների, մասնավորապես հայերի (չմոռանանք, որ Անտանտի երկրներից Ռուսաստանի զինված ուժերում փոքր թիվ չէին կազմում հայերը) և միջազգային հանրության մոտ բարձրացնել Անտանտի հեղինակությունը՝ ի ցույց դնելով Քառյակ դաշինքի հակամարդկային դիմագիծը:

Եթե Անտանտի տերությունների համար մայիսի 24-ի հռչակագիրն իրականում սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակ թափահարելու համար, ապա ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի համար կարևոր էր հռչակագրի ոչ թե քաղաքական, այլ բարոյական և իրավական կողմը, որով դատապարտվում էր իր նկատմամբ կատարվող բռնությունները: Իրավական տեսանկյունից հռչակագրի կարևորությունը կայանում էր նրանում, որ հենց հանցագործության պահին Անտանտի տերություններն արձագանքեցին երիտթուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականությանը՝ որպես միջազգային իրավունքում գործող նոր-



մերի կոպիտ խախտում՝ այն որակելով որպես ոչ միայն հայ ժողովրդի, այլև «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործություն: Հռչակագրի հիմքում ընկած էին Հաագայի 1899 թ. և 1907 թ. խաղաղության կոնֆերանսների արդյունքում ընդունված «Պատերազմ վարելու օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթները:

Այս փաստաթղթի կարևորությունը և առանձնահատկությունը կայանում է ոչ միայն նրանում, որ այն Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ու դատապարտման միջազգային առաջին վավերագիրն է, այլև որ այն պայքարի հիմք հանդիսացավ նման տեսակի հանցագործության դեմ: Բնավ պատահական չէր, որ ցեղասպանության հանցագործության նշված ձևակերպումը՝ «հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ», հետագայում արտացոլվեց նաև ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի տեքստում, ինչը վկայում է այն մասին, որ Հայոց ցեղասպանությունը հանդիսացել է տվյալ հանցագործության առաջին օրինակը, որը հիմք է ծառայել միջազգային իրավունքում ցեղասպանության հանցագործության սահմանման ու պատժելիության համար:

МАНЕ КОНИНЯН

## ЗАРОЖДЕНИЕ ПРОЦЕССА МЕЖДУНАРОДНОГО ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН

### РЕЗЮМЕ

24 мая 1915 года державы Антанты – Россия, Англия и Франция, совместной декларацией осудили политику младоту-

рецкого правительства, направленную на массовое истребление армянского населения Османской империи, квалифицируя ее как "преступление против человечества и цивилизации".

Данный документ имеет не только политическое, но и международно-правовое значение, поскольку квалификация Геноцида армян – как "преступление против человечества", впоследствии именно так и была отражена в тексте Конвенции ООН "О предупреждении преступления геноцида и наказания за него" от 9 декабря 1948 года.

MANE KONINYAN

## THE BEGINNING OF THE PROCESS OF INTERNATIONAL CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE

### SUMMARY

May 24, 1915, at the time of the crime, the Entente powers - Russia, Britain and France, joint declaration condemned the Young Turk government policies aimed at the mass extermination of the Armenian population of the Ottoman Empire, classifying it as a "crime against humanity and civilization".

This document has not only political, but also international legal significance because qualifies the Armenian Genocide as a "crime against humanity" Subsequently it was also reflected in the text of the UN Convention "On the Prevention and Punishment" on December 9, 1948.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԻՆԿԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՊԱՌԱՋԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկն ազգային բանակի ստեղծումն է: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական ու ծանր փուլում՝ 1917 թ. դեկտեմբերին, ստեղծվեց Հայկական կորպուսը:

1918 թ. մարտի վերջին հայկական կորպուսի մարտական անձնակազմի թվաքանակը կազմում էր շուրջ 20000, որից մոտ 800-ը՝ սպա: 1918 թ. ամռանը Հայկական կորպուսը վերակազմավորվեց մեկ հետևակային դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը (1862–1937): Դիվիզիայի թվակազմը հասնում էր մոտ 16 հազարի<sup>1</sup>: 1919 թ. հունվարի դրությամբ այդ քանակը գրեթե անփոփոխ էր, իսկ նույն թվականի վերջին հայկական բանակի թվաքանակը կազմում էր ավելի քան 30000<sup>2</sup>:

1918 թ. դեկտեմբերի 11-ին սկսված հայ-վրացական պատերազմում մինչև դեկտեմբերի վերջը վրացական բանակը պարտություններ էր կրում ու նահանջում: Դեկտեմբերի 26-ի դրությամբ հայկական բանակը որպես ռազմավար վերցրել էր 400 վազոն, 25 շոգեքարշ, 39 զնդացիք և 3 զրահագնացք<sup>3</sup>: Արդեն 1920 թ. հունվարին հանրապետության բանակի թվաքա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1267, ց. 1, գ. 30, թ. 7, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1-2:

<sup>2</sup> Տե՛ս Կարապետյան Մ. Լ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920 թթ.), Երևան, 1996, էջ 45:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 91:

նակը հասնում էր 25000-ի, իսկ աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի շրջանում, շուրջ 40 հազարի<sup>4</sup>:

Բանակը սկզբից ևեթ հիմնականում զինված է եղել ռուսական բանակի սպառազինությամբ: Շարքային զինվորի հիմնական զենքը հանդիսացել է ռուսական երեքգծանի՝ 7,62 մմ "Мосин-Наган" հրացանը (7,62x54 R մմ փամփուշտներ), սահմանափակ քանակությամբ կային նաև գերմանական, ֆրանսիական և այլ տեսակի հրացաններ: Որոշ տվյալներով՝ ռուսական բանակի հեռանալուց հետո Հայաստանի Հանրապետությանը մնացել էր 100000 երեքգծանի հրացան, մեկ միլիարդ փամփուշտ, 3000 թնդանոթ, 3000 գնդացիր և այլն<sup>5</sup>: Կարծում ենք, որ այս թվերը չափազանցված են: Ռազմաճակատի կազմալուծումից հետո հեռացող զինվորները երբեմն զենքերը ոչ միայն չէին թողնում, այլ նաև տանում էին մեծ քանակությամբ: Ռուս-թուրքական ռազմաճակատն անգամ լավագույն ժամանակներում չուներ 3000 հրանոթ կամ գնդացիր<sup>6</sup>: Այս ռազմաճակատը համարվում էր երկրորդական և բոլոր մատակարարումներն անկանոն էին: Կովկասյան բանակի զորքերն ամենալավ ժամանակներում անգամ չեն ունեցել նույնիսկ 1000 հրանոթ<sup>7</sup>:

Նույնը վերաբերվում է նաև հրացանների և փամփուշտների թվերին: 1920 թ. հուլիսի 5-ին Բաթում հասած նավն Անգլիայից բերել էր 25000 միավոր "Ross Mark II" կամ "Ross Mark III" կանադական հրացան, 400 միավոր "Vickers" գնդացիր և

<sup>4</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ-հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Երևան, 1991, էջ 337–338:

<sup>5</sup> Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 295–296:

<sup>6</sup> Տե՛ս Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, Москва, 1946, էջ 8–25:

<sup>7</sup> Տե՛ս Военный энциклопедический словарь, Москва, 2002, էջ 1404, 1178, 1399, Корсун Н. Г., նշվ. աշխ., էջ 8–25:

մոտ 58000000 փամփուշտ՝ այս զենքեով կիրառման համար, ինչպես նաև մեծ քանակությամբ պարեն, հագուստ և այլն:

Հաճախ զենքերի անուրնները և այլ տեխնիկական մանրամասներ սխալ են նշվում: Կանադական վերը նշված հրացանները հայկական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանում են «Բոշ»: Ձեռքի գնդացիրները ամերիկյան "Lewis" մոդելի էին<sup>8</sup>:

Կանադական հրացանների մարտական հատկությունների մասին հայկական աղբյուրներում հիմնականում բացասական են նշում: Մեր զինվորականներն ու ղեկավարները դրանք համարում են ծանր, անհարմար և անպիտան<sup>9</sup>: Ջենքը, ճիշտ է, օգտագործում էր 7.7x56R մմ (303 British) հիանալի փամփուշտները, որոնք կիրառվում էին նաև այլ զենքերի վրա, սակայն զենքն իրականում խնդիրներ ուներ: Կանադական զորքերն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հաճույքով հրաժարվում էին դրանցից և անցնում նույն փամփուշտը կիրառող անգլիական "Lee-Enfield" հրացանին<sup>10</sup>: Ամենայն հավանականությամբ, այս զենքը և զինամթերքը բերվել էր ոչ թե գործարաններից, այլ նախկին ռազմաճակատներից, ուստի կարող էր անմխիթար վիճակում լինել: Այնպես որ, այս հրացանների Հայաստան ուղարկումն անգլիական հրամանատարության կողմից ձերբազատվելու քայլ էր:

---

<sup>8</sup> Ford Roger (2005). *The World's Great Machine Guns from 1860 to the Present Day*. London (UK), p. 68–71.

<sup>9</sup> Վրացյան Ս., Հայաստանի հանրապետություն, Երևան, 1993, էջ 508, Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» ամս., Բոստոն, 1926, թիվ 5, էջ 80:

<sup>10</sup> Rawlings Bill, *Trench Warfare, Technology and the Canadian Corps 1914–1918*, University of Toronto Press, 1992, p. 12, Dancocks Daniel G., *Gallant Canadians: The Story of the Tenth Canadian Infantry Battalion, 1914–1919* (Calgary Highlanders Regimental Funds Foundation, 1990).

Հունաստանը Հայաստանին փոխանցեց 10000 միավոր "Gras" ֆրանսիական հրացան և 400000 փամփուշտ<sup>11</sup>: Ղրանք արդեն հնացած զենքեր էին համարվում: Ռուսական սպիտակզվարդիական շարժման առաջնորդներ գնեցրալներ Ա. Ղենիկինը և Պ. Վրանգելը տրամադրել էին երեքգծանի հրացանի 3 մլն փամփուշտ և հրետանային արկեր: Փոխադրման դիմաց տրամադրված զենքերի որոշ քանակություն Հայաստանը ստիպված էր թողնել Վրաստանին: Ինչպես երևում է, այդ հարկը երբեմն կազմում էր ավելի քան 27%<sup>12</sup>: 1919 թ. Հայաստանի կառավարությունը դիմել էր ֆրանսիական կողմին՝ 10000 միավոր "Lebel" հրացանների գնման համար, որը նրանք շատ թանկ էին վաճառում<sup>13</sup>: 1920 թ. ամռանը ֆրանսիացիներն ամեն կերպ ցանկանում էին Հայաստանին վաճառել "Lebel" հրացանների մեծ, հավանաբար այլ խմբաքանակ<sup>14</sup>: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ կառավարությունը ցանկանում էր հավաքել ֆրանսիական այս հրացանները: Ներքին գործերի նախարարը դիմել էր բնակչությանը՝ որոշակի գումարի դիմաց այդ հրացանները հանձնելու խնդրանքով:

Հայկական բանակը գրեթե միշտ զնդացիոների պակաս է ունեցել, սակայն խնդիրը ոչ միայն դրանց քանակի մեջ էր, այլ նաև փամփուշտների: Հայկական բանակում կիրառվում էին ռուսական "Maxim"-ներ, սահմանափակ քանակությամբ անգլիական "Vickers", ամերիկյան "Lewis" և "Colt Browning M1895" զնդացիոներ: Փաստորեն՝ բանակը կիրառում էր մի քանի տեսակի զնդացիոներ և դրանց համար տարատեսակ փամփուշտների հայթայթումը մեծ խնդիր էր: Ղեռևս հայկական

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս 2, թ. 378:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 488, թ. 76:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 237, թ. 5:

<sup>14</sup> Տե՛ս Զոհրաբյան է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 133:

առանձին գումարտակների ժամանակ մոտավորապես 800–1000 զինվորին, որը կազմում էր մոտավորապես մեկ գումարտակ, բաժին էր ընկնում մինչև 4 գնդացի (այն էլ փամփուշտների համեմատաբար լավ մատակարարումների պայմաններում)<sup>15</sup>: 1918 թ. մարտի 31-ի տվյալներով՝ հայկական բանակային կորպուսի սպառազինության մեջ կար 170 գնդացի և ընդամենը 36 հրանոթ (20000/170=117)<sup>16</sup>: Նույնիսկ 1919 թ. մարտի դրությամբ Դրոյի ենթակայության տակ եղած ավելի քան 1400 հոգանոց զորախումբն ուներ ընդամենը 2 գնդացի<sup>17</sup>:

Հայկական բանակի սպայական և զինվորական կազմի որոշ մասը զինված էր նաև ռուսական բանակի "Nagant" թըմբկավոր ատրճանակներով (7,62x38 մմ փամփուշտով): Սակայն բոլորի կողմից առանձնահատուկ սեր էր վայելում մեծ տարածում գտած "Mauser K-96" ուղիղ փամփշտատուփով ատրճանակը (7,63x25 մմ փամփուշտով): Նման զենքերով զինված ջրկատները հաջողությամբ էին գործում դիվերսիոն գործողությունների ժամանակ: Ինչպես տեսնում ենք, հայկական բանակը հիմնական հրաձգային զենքերի առումով զինված էր բազմազան տեսակներով, ինչը լրացուցիչ խնդիրներ էր ստեղծում:

Հայկական կորպուսի հրետանին կազմավորված էր 2 հրետանային բրիգադից, 4 առանձին դիվիզիոններից և առանձին լեռնային մարտկոցից՝ ընդհանուր առմամբ մոտ 100 հրանոթ, որոնցից սոսկ կեսն էր պահպանվել համաշխարհային պատերազմից հետո: Վրաստանի դեմ պատերազմում հայկական բանակը բռնագրավեց 17 հրանոթ, որից 2-ը՝ հաուբից, գնդացիներ, հրացաններ, ձիեր և այլ զույք: Սա հնարավորություն

<sup>15</sup> Տե՛ս Կարապետյան Մ. Լ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում, Երևան, 1999, էջ 95:

<sup>16</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 88, թ. 1:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 146:

տվեց ձևավորել 2 մարտկոց՝ թեթև և լեռնային: Բացի այդ՝ բանակը համալրվեց նաև երկու զրահագնացքով:

Կարսում ևս թուրքական զորքերը թողել էին որոշ քանակությամբ կիսաթալանված, կամ կիսառչնչացված հրետանային զույք՝ հրանոթներ, զինամթերք, վառոդ և այլն: 1919 թ. վերջին բանակի հրետանին ուներ 130–140 հրանոթ, որոնցից 63-ը (15 մարտկոց) տրված էր հրետանային բրիգադին: Կարսի բերդի հրետանին ուներ 64 հրանոթ և 2 զրահագնացք՝ 4 հրանոթով: Հատուկ նշենք, որ 1914–1916 թթ. Կարսի ամրոցում եղել է մոտ 90 հրանոթ, հաուբից և հրասանդ, 5 հրետանային գումարտակ (դիվիզիոն)<sup>18</sup>: Այս թվից 29 հաուբիցը և 16 հրասանդն օգտագործվել է 1915 թ. նոյեմբերին և 1916 թ. փետրվարին Էրզրումի գրավման ժամանակ: Դրանից հետո հրանոթները մնացել են Էրզրումում և չեն վերադարձվել<sup>19</sup>: Կարսում եղած հրանոթներից ավելի քան 60-ը, ինչպես նաև մեծ քանակությամբ մարտապաշար և այլ զույք, անգլիացիներն իրենց հետ տարան, ինչի կապակցությամբ բողոքներ եղան, սակայն ապարդյունք<sup>20</sup>: 1919 թ. հուլիսի 16-ին Հայաստանում Ադրբեջանի ռազմական ներկայացուցիչը գաղտնի հեռագրով իր ղեկավարությանը հաղորդում էր, որ հայկական բանակում կա 12 հրետանային մարտկոց՝ 4-ական հրանոթներով<sup>21</sup>:

1919 թ. հետո հրետանու քանակը շատ չէր աճել: Հրետանու սպառազինությունը հիմնականում կազմում էին երեք դյուլմանոց՝ 76,2 մմ թեթև (1900 թ. նմուշի), լեռնային հրանոթները (1909 թ. նմուշի, ֆրանսիական "Danglise-Schneider" ընկերութ-

<sup>18</sup> Стен Корсун Н., Эрзерумская операция на Кавказском фронте Мировой войны в 1915–1916 гг., Москва, 1938, էջ 5–40:

<sup>19</sup> Стен նույն տեղում, էջ 53:

<sup>20</sup> Стен ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 109, թ. 251:

<sup>21</sup> Стен Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Երևան, 2012, էջ 26:



յան հրանոթը), ինչպես նաև հինգ դյույմանոց՝ 122 մմ հաուբիցները: Կան նաև չապացուցված տեղեկություններ այն մասին, որ հայկական բանակում եղել են նաև ութ դյույմանոց՝ 203,2 մմ-ոց հրանոթներ: Մենք կարծում ենք, որ սրանք կարող էին լինել միայն Կարսի ամրոցում, այն էլ սահմանափակ քանակով և հավանաբար անալիտան վիճակում: 1920 թ. Մեծ Բրիտանիայից Հայաստանին է փոխանցվել 44 հրանոթ<sup>22</sup>:

Ներկայացվածը լավագույնս ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության բանակը չէր կարող ունենալ որակյալ հրետանային միջոցներ.

1. Կովկասյան բանակում հրետանու գործը ավելի վատ էր, քան եվրոպական ճակատում:

2. Ամրոցների հրետանին առհասարակ, ինչպես նշվեց, վատ վիճակում էր:

3. Հայկական բանակում գրեթե իսպառ բացակայում էր ծանր հրետանին:

4. Ղաշնակիցներից չի ստացվել հրետանու համար շոշափելի օգնություն:

Ռուսական հրամանատարության կողմից հայկական կորպուսի տնօրինությանն էր հանձնված 2-րդ, այլ տվյալներով՝ 3-րդ Կովկասյան ավիաջոկատը, որը և դարձավ հայկական բանակի օդուժի հիմքը: Հայկական բանակի ավիաջոկատի հիմնադրման ամսաթիվ է համարվում 1918 թ. օգոստոսի 15-ը<sup>23</sup>: Ավիաջոկատի առաջին հրամանատարն էր պորուչիկ Վոիպովը, որին 1919 թ. սկզբներին փոխարինեց Արթուր Վասիլի Ղուլյան-Ռիլսկին (երբեմն նշվում է նաև Գուլյան): Սկզբնապես հայկական միակ ավիաջոկատն ուներ երեք ինքնաթիռ, երեքն էլ

<sup>22</sup> Տե՛ս Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 188:

<sup>23</sup> Տե՛ս Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35:

տարբեր մականիշների՝ "Nieuport", "Morane-Saulnier L" և "Voisin III" կամ "Voisin V":

Ինքնաթիռների պահեստամասեր չկային և թռիչքներ գրեթե չէին կատարվում: Քամին պոկել էր անգարի կտուրը, որի հետևանքով ջախջախվեցին ինքնաթիռներից երկուսը: "Voisin III"-ը մասնակցեց հայ-վրացական պատերազմին, սակայն շարքից դուրս եկավ Ալեքսանդրապոլում վառողի պահեստի պայթյունի ժամանակ: Այսպիսով, ավիաջոկատը, դադարեց գոյություն ունենալ: Սա նշանակում է, որ ավիաջոկատի փոխանցումից հետո հայ ավիատորները վերանորոգել էին այդ ինքնաթիռները և փորձել կիրառել: 1919 թ. փետրվարի 28-ով թվագրվող մի կարևոր զեկուցագրում, որը ռազմական նախարարն ուղարկել է նախարարների խորհրդին, մասնավորապես նշված է, որ տվյալ դրությամբ օդուժում կա ընդամենը մեկ գործող օդանավ և մի քանի ամսից երկու կոտրվածից կարելի է հավաքել մեկը: Բոլոր սարքերը հնացած են և մաշված: Ջոկատի կազմն էր՝ 5 օդաչու, 1 դիտորդ-օդաչու, 1 մեխանիկ-հրահանգիչ, 3 շարժիչագործ, 6 շարժիչագործի օգնական, 2 վարորդ, 2 վարորդի օգնական, 10 վարպետ: Ելնելով այս ամենից՝ նախարարն առաջարկում էր կազմալուծել ջոկատը, իսկ որոշ ծառայողների մեկ-երկու տարով գործուղել Ֆրանսիա՝ ուսումնառության և նոր սարքերի ձեռքբերման նպատակով: Նախարարը զեկուցում է նաև, որ ֆրանսիացի կապիտան Ա. Պուադեբարը կարծում է, որ ավիաջոկատը հարկավոր է սահմանի պահպանման համար: Վերջում նախարարը խնդրում է թույլ տալ, այնուամենայնիվ, ուսման նպատակով գործուղել 5-6 սպա և 15-18 զինվոր, իսկ Ֆրանսիայից գնել ինքնաթիռներ և սարքավորումներ<sup>24</sup>:

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 53:

Կարսի ազատագրումից հետո՝ 1919 թ. մարտից, փաստորեն, սկսվեց նոր ավիաջոկատի կազմավորումը: Կարգի բերվեցին թռիչքադաշտը, անգարներն ու պահեստամասերը, ստեղծվեցին ինքնաթիռների նորոգման ու հավաքման արհեստանոցներ: Սկսվեց նոր ինքնաթիռների սարքավորումը: 1919 թ. վերջին հավաքվեցին երեք "Morane-Saulnier L", երեք "Voisin" և մեկ "Nieuport", որոնց վերջնական շահագործման համար, սակայն դեռևս, անհրաժեշտ էր ձեռք բերել թևերի համապատասխան երեսպատման նյութեր և հայկական ավիաջոկատը կունենար 7-8 թռչող սարք: Ավելի ուշ Ֆրանսիայից ձեռքբերվեց երկու "Salmson 2 A2" ինքնաթիռ, որոնք տվյալ ժամանակի համար թռիչքային մեծ արագություն ունեին (200 կմ/ժ) և նախատեսված էին հետախուզական թռիչքների, ըստ հարկի՝ նաև ռմբակոծում իրականացնելու համար:

1920 թ. տարբեր երկրներից Հայաստան էին ժամանում նաև ավիացիայի ոլորտի մասնագետներ: Հայաստանը Մեծ Բրիտանիայից գնել էր որոշ քանակությամբ ինքնաթիռներ, որոնք, սակայն, 1920 թ. սկզբից կանգնած էին Բաթումում և Հայաստան չէին փոխադրվում<sup>25</sup>: Վերը նշված երկու ֆրանսիական ինքնաթիռները Բաթումից գնացքով Հայաստան են ուղարկվել 1920 թ. հունիսի 16-ին: Դրանք ուղեկցում էր Ղուլյան-Ոհլսկին<sup>26</sup>:

Ընդհանուր առմամբ, հայկական ռազմական ինքնաթիռների քանակը հասել է մինչև 12-ի, դրանք 1920 թ. թուրք-հայկական պատերազմում կատարել են շուրջ 30 ռմբանետում<sup>27</sup>: Կարսի անկման օրերին ավիաջոկատում դեռ կար երկու ինքնաթիռ, որից գործում էր միայն մեկը: Այդ մասին բավականին

<sup>25</sup> Տե՛ս Գալոյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 186:

<sup>26</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս 1, թ. 180:

<sup>27</sup> Տե՛ս Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35:

ցայտուն մանրամասնում է Կարսի օդանավային ջոկատի զինվոր, հետագայում խորհրդային հայտնի ավիակոնստրուկտոր Արամ Ռաֆայելյանը<sup>28</sup>: Նա նշում է, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 12-ի շրջանում, Կարսի անկման անխուսափելիության պայմաններում, նրանք ավիաջոկատից օդ բարձրացրեցին միակ սարքին ինքնաթիռը: Օդաչուներն էին վերը նշված կապիտան Դուլյանը և պորուչիկ Նիկոլայ Խորոզովը: Այդ սարքն օդ բարձրանալով նախ փորձեց իր գնդացրային կրակով օգնել հայկական զորքերին, իսկ հետո ուղևորվեց դեպի Երևան: Մյուս սարքը նրանք փորձել են տանել երկաթգծի կայարան և տեղափոխել Ալեքսանդրապոլ, սակայն չի ստացվել<sup>29</sup>: Նշվածից կարելի է կատարել որոշակի եզրակացություններ: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայից բերված ինքնաթիռների հետ միասին ջոկատը պիտի ունենար արդեն մոտ 9–10 ինքնաթիռ՝ իսկ Ա. Ռաֆայելյանը հայտնում է, որ հոկտեմբերի 30-ին Կարսում եղել է երկու ինքնաթիռ՝ մեկը սարքին, մյուսը՝ անսարք: Եթե հաշվի առնենք, որ մեր ունեցած տեղեկության համաձայն մինչև հոկտեմբերի 20-ն ինքնաթիռներն ակտիվորեն վերանորոգվում էին, նշանակում է նաև ակտիվորեն կիրառվել են: Սովորաբար այս ժամանակի համար առաջին մարտական խնդիրը համարվում էր հետախուզությունը, որի համար էլ, հավանաբար, ակտիվորեն կիրառվել են սարքերը: Պատերազմական իրադրությունում երբեմն ինքնաթիռներն օգտագործվում էին նաև կապի ապահովման նպատակով:

<sup>28</sup> Հրասայի թռիչքն ապահովող առաջին խորհրդային ճախրաթիռներից մեկի, խորհրդային առաջին ուղղահայաց-թռիչք և վայրէջք կատարող սարքի և բազում այլ նախագծերի հեղինակ (Տե՛ս Арутюнян К. А., Погосян Г. Р., Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне, Ереван, 2010, էջ 727–728):

<sup>29</sup> Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 257–258:

1918 թ. օգոստոսին ձևավորվեց բանակի ռադիոհեռագրական բաժանմունքը: Երկու ռադիոկայանից մեկը տեղակայված էր Քանաքեռի հրետանային պահեստում, մյուսը՝ Բաշ-Ապարանում: 1919 թ. սեպտեմբերին ռադիոբաժանմունքը վերափոխվեց ռադիոդիվիզիոնի՝ ավտոմոբիլային, դաշտային և 2 փոքր ռադիոկայաններով: Բացի այդ, դաշտային ռադիոկայանի առանձին մասերից սարքավորվեց ժամանակավոր բազիսային ռադիոկայան: Երևանի տեխնիկական ընկերությունը սարքավորեց և ռազմական գերատեսչությանը հանձնեց հզոր ռադիոկայան: Ռադիոհեռագրական ծառայության համար մասնագետներ պատրաստելու նպատակով, դիվիզիոնին առընթեր բացվեց հատուկ դպրոց:

Սևանա լճի նավատորմիկը կազմավորվեց 1919 թ. մայիսին: Կազմավորողն ու հրամանատարն էր ռուսական ծովակալության սպա Սերգեյ Թումանյանը: Նավատորմիկի բազան սարքավորվեց Ելենովկա գյուղում (այժմյան Սևան քաղաքում): Հիմնվեց նավահանգստային դարբնոց, փականագործական և ատաղձագործական արհեստանոցներ: Կառուցվեց «Աշոտ Երկաթ» ռազմաբեռնատար երկկայմ առազաստանավը, որի տարողությունը 1000 փութ էր: Այն զինված էր մեկ թնդանոթով, երկու գնդացիրով և ուներ լուսարձակ: Նավատորմիկը կոչված էր զորք և ռազմական բնույթի բեռներ փոխադրելու համար: Բացի ռազմանավից, նավատորմիկն ուներ նաև մի քանի շարժիչային թիանավ, իսկ 1920 թ. սեպտեմբերին Շահթախթից Սևանա լիճ փոխադրվեց ռուսական նավատորմի «Սեստրիցա Նյուշա» նավը, որը Հայաստան էր բերվել դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Վանա լիճ փոխադրելու համար: Այն վերանվանվեց «Գեղանուշ»<sup>30</sup>:

<sup>30</sup> Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35–36:

Հայաստանի անկախության հռչակման շրջանում ռազմական մատակարարման աղբյուրներն իսպառ բացակայում էին: Հարկ եղավ այդ նպատակով նոր միջոցներ գտնել, քանի որ նախկին ռուսական բանակի բոլոր պահեստներն ընկել էին թուրքերի ձեռքը, իսկ Թիֆլիսում եղածը փոխանցվել էր վրացիներին: Հաղորդակցությունն իրականացվում էր թուրքերի թուլատվությամբ, շաբաթը 1-2 անգամ՝ Ալեքսանդրապոլով, ընդ որում՝ կառավարության տնօրինության տակ կային 3-4 շոգեքարշ և 2 ապրանքատար գնացք: Բացի այդ, թուրքերն արգելում էին ռազմական գույք անցկացնելը:

Ղեկտեմբերին սկսված հայ-վրացական պատերազմի հետևանքով հաղորդակցությունն արգելակվեց մինչև 1919 թ. մարտ ամիսը: Ընդ որում, այդ հակամարտության ընթացքում ռազմական գույքի մեծ մասը Թիֆլիսում բռնագրավվեց վրացիների կողմից: Ահա այսպիսի պայմաններում էր կազմավորվում հայկական բանակը: Միաժամանակ աշխատանք էր տարվում զորքի համար անհրաժեշտ գույքի արտադրության համար: Սկսած 1919 թ. գարնանից, երկրի տնտեսական կյանքի աշխուժացմանը զուգընթաց, զինարտադրությունը սկսեց իրականացվել ավելի մեծ չափերով: Սպառազինության պակասը լրացվում էր համբարակային վարչությանը պատկանող արհեստանոցների արտադրանքի հաշվին: Երևանի և Կարսի ինժեներական արհեստանոցները հիմնականում թողարկում էին ռումբեր և այլ պայթուցիկ նյութեր, փամփուշտներ, իսկ Ալեքսանդրապոլի և Կարսի կարի արհեստանոցները՝ ռազմական հանդերձանք, անդրավարտիքներ, շապիկներ, գլխարկներ և այլն:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, բնականաբար, սպառազինությունն ունեցել է առանցքային նշանակություն: Ինչպես նշեցինք, Անգլիայից բերված հրացաններն

ունեին որոշակի խնդիրներ, սակայն դրանք չէին կարող որոշիչ լինել, եթե պատերազմը վարվեր ինչպես հարկն էր: Բացի այդ՝ հայկական բանակում անգլիական հրացանները դեռևս հիմնական չէին, իսկ եթե զինվորները դրանցից օգտվելու կարգը դեռ չգիտեին, դա արդեն հրամանատարների մեղքն էր:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1918–1920 թթ. հայկական բանակը զինված էր իր ժամանակի համար բավականին արդիական զենքերով, բայց, այնուամենայնիվ, կային որոշ խնդիրներ: Մասնավորապես՝ սակավ էր գնդացիների և հրետանային միջոցների քանակը: Հատկապես անմխիթար էր թեկուզ եղած զենքերի համար զինամթերքի մատակարարման գործը: Սպառազինության համար որպես թերություն կարելի է համարել նաև որոշակի բազմազանությունը: Դժվարություններ կային զենքերի զինամթերքի մատակարարման, սպասարկման և դրանց օգտագործման հմտությունների յուրացման հարցում: Այդուհանդերձ, Հայաստանի առաջին հանրապետության բանակի սպառազինությունը բավարար էր ռազմական գործողություններ իրականացնելու համար:

## АРЦРУН ОГАНИСЯН

### ВООРУЖЕНИЕ ВООРУЖЕННЫХ СИЛ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

#### РЕЗЮМЕ

Одной из самых мощнейших опор формирования Армянской независимой государственности является создание национальной армии. Армия Первой Республики Армения была создана в тяжелых условиях, в боях.

С самого начала армянская армия была вооружена основным вооружением российской армии. В дальнейшем применялись французские, немецкие и другие винтовки, а с осени 1920 года – также канадские винтовки Ross Mark II или Ross Mark III, присланные из Англии, пулеметы Vickers и т.д. Просуществовавшая всего два с половиной года республика, постоянно ведущая боевые действия, естественно, чувствовала нехватку вооружения и боеприпасов, что отражалось на боеспособности ее армии. Однако надо отметить, что в основном, вооружение армии было достаточным.

ARTSRUN HOVHANNISYAN

## THE WEAPONRY OF THE ARMED FORCES OF THE FIRST REPUBLIC OF ARMENIAN

### SUMMARY

One of the most important bases for the establishment of the independent Armenian statehood was the creation of a national army. The army of the First Armenian Republic was molded under harsh conditions: at battles.

At the beginning, the Armenian army was armed with usual armaments of the Russian army. Then they began to use French, German and other rifles. Starting from the fall of 1920, they started to use "Ross Mark II" or "Ross Mark III" Canadian rifles and "Vickers" machine guns that had been sent from England. Two and a half years old state, being constantly involved in military operations had lack of arms and ammunition.



**ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄ ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԵՎ ԼՈՆԴՈՆԻ  
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

1920 թ. ապրիլին կայացած Սան Ռեմոյի խորհրդատողովի նախօրեին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջի նախաձեռնությամբ Դաշնակից պետությունների զինվորական ներկայացուցիչները քննարկեցին Օսմանյան Թուրքիայի նկատմամբ գործադրվելիք ռազմական պատժամիջոցների հարցը, եթե վերջինս հրաժարվեր իրագործել Անտանտի երկրների հետ ստորագրվելիք հաշտության պայմանագրի դրույթները: Օսմանյան Թուրքիան ենթակա էր պատժի այն բանի համար, որ, չնայած նախկինում Անգլիայի ու Ֆրանսիայի ցուցաբերած օգնությանը Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պահպանման համար պայքարում, 1914 թ. անցել էր Գերմանիայի կողմը:

Նշյալ դիրքորոշումը բխում էր դեռևս 1916 թ. նոյեմբերի 9-ին լոնդոնյան Սիթիի քաղաքապետարանում պրեմիեր մինիստր Հերբերտ Հենրի Ասքվիթի Հայաստանի ազատագրության և հայ ժողովրդի փրկության մասին արած պաշտոնական հայտարարությամբ Մեծ Բրիտանիայի ստանձնած միջազգային-իրավական պարտավորությունից<sup>1</sup>: Քանի որ ռազմական

<sup>1</sup> Տե՛ս «Геноцид армяне: ответственность Турции и обязательства мирового сообщества: документы и комментарий», т. 2, ч. 2. составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, Москва, 2005, էջ 186: Հայաստանի ազատագրության վերաբերյալ Անտանտի կառավարությունների ղեկավարների և արտգործնախարարների հայտարարությունների

օժանդակության կազմակերպումը կախված էր նյութական միջոցների առկայությունից և «անհաղթահարելի բեռ» էր պատերազմական հսկայական կորուստներ ու վնասներ կրած եվրոպական պետությունների համար, ուստի 1920 թ. ապրիլի 18-ին Սան Ռեմոյի Դաշնան առանձնատանը կայացած հանդիպման ժամանակ Դ. Լյոյդ Ջորջը Մեծ Բրիտանիայի դաշնակից պետությունների՝ Ֆրանսիայի ու Իտալիայի պատվիրակությունների ղեկավարներին առաջարկեց դիմել աշխարհի ամենահարուստ ու ամենազարգացած պետությանը՝ ԱՄՆ-ին, որպեսզի վերջինս, իբրև օգնություն, 10 մլն ֆունտ ստեռլինգի փոխառություն տրամադրի Հայաստանին<sup>2</sup>: Միաժամանակ, 1920 թ. ապրիլի 20-ին Դաշնակից երկրների Գերագույն խորհրդի հանդիպման ժամանակ նա առաջարկեց դիմել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ վերցնելու Հայաստանի մանդատը՝ հովանավորությունը<sup>3</sup>: Ճիշտ է, այս տեսանկյունից Հայաստանն ուսումնասիրելու նպատակով դեռևս 1919 թ. աշնանը Հայաստան էր ժամանել ամերիկյան գեներալ Ջեյմս Հարթորդի բազմամարդ ռազմական հանձնախումբը, այնուամենայնիվ ԱՄՆ-ի կողմից հայկական պետության հովանավորը լինելու և Հայաստանի պետական սահմանների որոշման ժամանակ միջնորդի դերում հանդես գալու խնդիրները հանգամանորեն քննարկվեցին Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի 1920 թ. ապրիլի 19–26-ը Սան Ռեմոյում (Իտալիա) կայացած նստաշրջանում: Այն Օսմանյան Թուրքիայի հետ Դաշնակից

---

ու պաշտոնական ելույթների պատկառելի շարքում ժամանակագրական առումով առաջինը Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Հ. Հ. Ասքվիթի վերոնշյալ հայտարարությունն էր (տե՛ս նույն տեղում, էջ 225–226):

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)», Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, փաստ. N 331, էջ 619:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, փաստ. N 332, էջ 634:

տերութիւնների հաշտության պայմանագրի մշակման կարևոր շրջափուլերից էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները, ինչպես նաև Ճապոնիայի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչները՝ դիտորդի կարգավիճակով: Հունաստանի ու Բելգիայի ներկայացուցիչները խորհրդակցությանը մասնակցում էին միայն իրենց պետությանը վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

ԱՄՆ-ը հեռու էր եվրոպական պետությունների մրցակցությունից ու փոխադարձ անբարյացակամությունից: Նա մասնակցություն չէր ունեցել և, հետևաբար, շահագրգռվածություն չուներ եվրոպական դարավոր վեճերում, ինչը երաշխավորում էր այդ պետության անկողմնակալությունը Հայաստանի հովանավորի դերում և Օսմանյան Թուրքիայի հետ սահմանագծի որոշման ժամանակ: Իսկ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական հզորությունն ապահովելու էր Հայկական հարցի վերաբերյալ այդ պետության կայացրած որոշումների ազդեցիկությունը<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության հովանավորի դերում ԱՄՆ-ին տեսնելու Դաշնակիցների հույսերը չարդարացան: 1920 թ. հունիսին ԱՄՆ Կոնգրեսը մերժեց ՀՀ հովանավորությունը: Այդ առիթով անգլիացի դիվանագետ Դ. Լյոյդ Ջորջն իր հուշերում նշում է. «Հենց այդ պահից հայկական անկախ պետությունը վերածվեց անհուսալի նախագծի»<sup>5</sup>: Այնուամենայնիվ, ըստ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի, հենց ԱՄՆ-ի նախագահին վերա-

---

<sup>4</sup> Sten'u Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, том II, Москва, 1957, էջ 392:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 454:

պահվեց անկախ Հայաստանի սահմանների գծումը<sup>6</sup>: Սակայն Թուրքիայում իշխանության եկած քեմալականները ոչ միայն չձանաչեցին Սևրի պայմանագիրը և որևէ տարածքային զիջում չկատարեցին Հայաստանին, այլև 1920 թ. սեպտեմբերին ռազմական գործողություններ սկսեցին ՀՀ դեմ և, անտեսելով նոյեմբերի 22-ին հրապարակված ու անհապաղ ուժի մեջ մտած Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, զավթեցին Արևելյան Հայաստանի մեծ մասը: Այս առիթով հատկանշական է ՀՀ պաշտոնական պատվիրակության տեղեկատվական բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 15-ով թվագրված փաստաթուղթը, որում, որպես ՀՀ անկման երեք գլխավոր պատճառ, մատնանշված էին Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից այն չվավերացնելը, ՀՀ աննպաստ միջազգային իրադրությունը, նրա սահմանների անորոշությունը, ինչպես նաև Դաշնակիցների կողմից Հայաստանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական ու նյութական օգնության չտրամադրումը<sup>7</sup>:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան և մյուս Դաշնակից պետություններն անմիջականորեն մեղավոր են խոստացված ռազմական ու նյութական աջակցությունը Հայաստանի առաջին հանրապետությանը չտրամադրելու և, դրանով իսկ, նրա գոյությունը վտանգելու համար: Քննադատելով անդրկովկասյան անկախ հանրապետությունների նկատմամբ ոչ թե գործուն աջակցության, այլ սին խոստումների ու դատարկ քաջալերանքի՝ Դաշնակից պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի կործանարար քաղաքականությունը՝ անզլիացի պատմաբան և փիլիսոփա Առնոլդ Թոյնբին այն բնորոշել է որ-

<sup>6</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)», փաստ. № 338, էջ 676:

<sup>7</sup> Տե՛ս Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրուս, 1994, էջ 234:

պես «թե՛ բարոյական և թե՛ քաղաքական վրիպում»<sup>8</sup>: Դաշնակիցների վարած քաղաքականությունն անբարոյական էր ու անարդար, քանի որ, գիտենալով հանդերձ, որ մտադիր չեն գործնական օգնություն ցույց տալ Հայաստանին, նրանք շարունակում էին այդ երկրի կառավարությանը խաբել դատարկ խոստումներով: Մեղքի իրենց բաժինն ունեին նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության և կողմնորոշման պատասխանատուները:

Դաշնակից պետություններն անմիջականորեն մեղավոր են նաև Հայաստանն Անդրկովկասում քաղաքական գերիշխանության համար պայքարի գործիքի վերածելու և այն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի օգտագործելու համար: Արդեն 1920 թ. կեսերին ակնհայտ էր, որ Անդրկովկասի քաղաքական նոր իրադրությունը կենտրոնանում էր իրենց ընդհանուր թշնամիների դեմ պայքարում սերտ գործակցող, միաժամանակ ռազմաքաղաքական գերիշխանության համար միմյանց դեմ մրցակցող Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի ձեռքում:

Մեր կարծիքով՝ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը և նրան Ալեքսանդրապոլի ոչօրինական պայմանագրի պարտադրումը ոչ այլ ինչ էին, եթե ոչ բրիտանական մերձավորարևելյան քաղաքականության պարտություն, որը փաստացի դարձավ նաև Հայաստանի առաջին հանրապետության պարտությունը:

Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումից հետո առավել որոշակի դարձավ բրիտանական կառավարության պատրաստակամությունը՝ պաշտպանելու քեմալականներին ընդդեմ բոլշևիկների՝ քեմալական ռազմուժի միջո-

---

<sup>8</sup> Toynbee A. J., Survey of International Affairs 1920–1923, Oxford, 1925, p. 369, 373–374.

ցով Կարմիր բանակի առաջխաղացումը դեպի հարավ բացառելու նպատակով: Բրիտանական կառավարությանն այդ քաղաքական ուղու վրա դնելու գործում վճռորոշ եղան ազատագրական շարժումների վերելքն անգլիական գաղութներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում և Իռլանդիայում, ինչպես նաև Ղաչնակիցների միջև ներքին հակասությունների սրումը, ինչը բրիտանական կառավարող շրջաններին դրդեց վերանայելու մերձավորարևելյան քաղաքականության ընթացքը:

Մեծ Բրիտանիայում ուժեղացող թրքանպաստ կողմնորոշումը նախևառաջ արտահայտվում էր Սևրի պայմանագիրը հոգուտ թուրքիայի վերանայելու պահանջի մեջ: Ղրա բավարարումը, ըստ անգլիացի պետական գործիչների, պետք է գոհացներ մահմեդական աշխարհ, նպաստեր Անգլիայի իշխանության վերականգնմանը Հնդկաստանում և Եգիպտոսում, վերջ տար «երկարաձգված պատերազմի» դրությանն Արևելքում: Այս տեսանկյունից առանձնակի կարևորվում էր պայմանագրի տարածքային պահանջներին վերաբերող պայմանների վերանայումը: Ղա պետք է մղեր քեմալականներին խզելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչի արդյունքում թուրքիան պետք է վերածվեր Ղաչնակիցների և Խորհրդային Ռուսաստանի միջև պատվար պետության, իսկ Լոնդոնի կառավարությունն էլ՝ ստանար հզոր լծակ՝ վերացնելու իր գաղութային կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը սնող քաղաքական-գաղափարական հիմքերն այնքանով, որքանով դրանք կապված էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարի իրագործման հետ:

Խնդիրը Մեծ Բրիտանիայի համար ուներ նաև տնտեսական կարևորություն: Համաշխարհային պատերազմից նոր դուրս եկած և վերականգնման ճգնաժամի մեջ անխուսափե-

լիորեն ընկած երկիրը հնարավորություն կստանար թուրքական եկամտաբեր շուկայի հաշվին վերականգնելու բրիտանական արտաքին առևտրի նախկին ծավալները: Դրանք էապես կրճատվել էին բուլշևիկյան հեղաշրջման հաղթանակից հետո, երբ Մեծ Բրիտանիան, խզելով ռազմաքաղաքական հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ըստ էության, կորցրել էր ռուսաստանյան տարողունակ շուկան, իսկ քեմալական կառավարության հետ ունեցած խնդիրների հետևանքով թուլացել էին նրա տնտեսական դիրքերը Թուրքիայում:

Քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում Հայկական հարցի լուծումը ոչ միայն դուրս էր թողնվելու Մեծ Բրիտանիայի պետական հետաքրքրությունների ցանկից, այլև դրա փոխարեն օրակարգային էր դառնում վիլսոնյան սահմաններում Հայաստանի ընդարձակումը բացառելու խնդիրը, քանի որ Հայաստանի վրայով բուլշևիզմի ազդեցության մոտեցումը Կ. Պոլսին չէր բխում ո՛չ Մեծ Բրիտանիայի, ո՛չ էլ Թուրքիայի շահերից: Պատահական չէ, որ Լոնդոնի կառավարությունը հարմար առիթը բաց չէր թողնում կա՛մ սրելու, կա՛մ էլ հրապարակային բնույթ հաղորդելու խորհրդա-քեմալական հակասություններին և օգտագործելու դրանք ի շահ իրեն: Այսպես, 1921 թ. հունվարի 8-ին և 19-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզառյանը ԹԱՄԺ կառավարության արտաքին գործերի վարիչի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարին բողոքի հուշագրեր ներկայացրեց Ալեքսանդրապոլի և Կարսի գավառների ամբողջական ավերման առիթով ու պահանջեց, որ թուրքական զորքը հեռանա այդ շրջաններից: Այս առթիվ Հնդկաստանի փոխարքա լորդ Չելմսֆորդը հեռագրեց Լոնդոն՝ հասկացնելով, որ Մոսկվայի ու Անկարայի միջև «պառակտումը» «չեշտվի» մամուլում: Առավել գործնական էր նույն փաստի առիթով Մեծ Բրիտանիայի արտգործնախարար-

րության եզրահանգումը, թե Ռուսաստանի կողմից Թուրքիայի քայքայումը փաստ էր, որը Լոնդոնը պետք է օգտագործեր Թուրքիայի հետ բանակցությունների ընթացքում՝ Անկարային կանգնեցնելով Ղաշնակիցների և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև<sup>9</sup>։

Մեծ Բրիտանիայի նախարարների խորհուրդը Ղաշնակիցներին առաջարկեց, որ քեմալականներն «առանց նախապայմանի» հրավիրվեն 1921 թ. փետրվար-մարտին կայանալիք Լոնդոնի խորհրդաժողովին ու նաև պատրաստ էր անհրաժեշտության դեպքում Անկարային հասկացնել, որ կողմերի միջև գոհացուցիչ համաձայնության դեպքում Մեծ Բրիտանիան պատրաստ է նյութական օգնություն ցույց տալ Թուրքիայի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։ Քանի որ Ֆրանսիան ու Իտալիան չնվազող հետևողականությամբ շարունակում էին Թուրքիայից տնտեսական մենաշնորհներ կորզելու քաղաքականությունը, ուստի Մեծ Բրիտանիայի խնդիրն էր ոչ միայն այս հարցում ետ չմնալ դաշնակիցներից, այլև՝ առաջ անցնել նրանցից։ Այս պայմաններում Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության առաջնորդ, պառլամենտի Համայնքների պալատի ղեկավար Էնդրյու Բոնար Լոուն արտգործնախարար լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնին զգուշացնում էր. «Երկու հանգամանք ինձ թվում են կենսական։ Առաջինն այն է, որ պետք չէ պատերազմի մեջ մտնել հանուն Մոսուլի, իսկ երկրորդը՝ եթե ֆրանսիացիները ... չմիանան մեզ, ապա պետք չէ, որ մենք առանձին կռվենք թուրքերի դեմ՝ պարտադրելու համար ինչ որ մնացել է Սևրի դաշնագրից»<sup>10</sup>։ Ղաշնակիցների հարաբերություններում առկա տարածայնություններն

<sup>9</sup> Տե՛ս Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 244:

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 249: Նաև՝ Nicolson Harold, Curzon: The last phase 1919–1925: A Study in post-war diplomacy, Boston, New York, Mifflin, 1934, էջ 331:



ու Մեծ Բրիտանիայի կեցվածքում նկատվող զգուշավորութ-  
յունն ինքնավստահություն ու համարձակություն էր ներշնչում  
թուրք դիվանագետներին: Պատահական չէ, որ Լոնդոնի խոր-  
հորդաժողովում թուրքական պատվիրակությունը Հայաստանի  
հարցում որևէ էական գիշում չարեց:

Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականութե-  
յան փոփոխությունն անթաքույց կերպով դրսևորվեց, երբ  
1921 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի կառավարությունը  
վավերացրեց լորդ Քերզոնի առաջարկած նախագիծը հայ  
գաղթականների համար Կիլիկիայում «ազգային օջախ» ստեղ-  
ծելու վերաբերյալ: Այսպիսին էր Սան Ռեմոյի խորհրդաժողո-  
վից մինչև Լոնդոնի միջազգային խորհրդաժողովն ընկած ժա-  
մանակահատվածում Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի  
քաղաքականության աստիճանական փոփոխության ընթացքը,  
քաղաքականություն, որին հայ պետական այրերի ապավինելը  
կործանարար եղավ թե՛ Հայկական հարցի և թե՛ հայկական ան-  
կախ պետականության համար: Փաստորեն, Լոնդոնի խորհր-  
դաժողովը Թուրքիայի հետ Ղազնակից պետությունների հաշ-  
տության նոր պայմանագրի կնքման ճանապարհին կարևոր  
փուլ էր, որի արդյունքում անժամկետ հետաձգվեց Հայկական  
հարցի լուծումը:

ПОЛИТИКА ВЕЛИКОБРИТАНИИ В АРМЯНСКОМ  
ВОПРОСЕ В ПЕРИОД МЕЖДУ КОНФЕРЕНЦИЯМИ В  
САН РЕМО И ЛОНДОНЕ

РЕЗЮМЕ

В 1920–1921 годах в период между конференциями в Сан-Ремо и Лондоне политика Великобритании в Армянском вопросе подверглась постепенному изменению. Если на конференции в Сан-Ремо в апреле 1920 г. Великобритания поддерживала идею свободы армянского народа от турецкого господства и создания единого независимого армянского государства, то на лондонской конференции 1921 г. она уже выступала с позиции создания сильной Турции. Что касается необходимости выполнения своего официального обязательства – уважения права самоопределения армянского народа, то британская дипломатия выдвинула программу создания на территории Турции армянского “национального очага”, которая не имела ничего общего с законным стремлением самоопределения армян на своей исторической Родине – в Западной Армении.

Великобритания ответственна за задержку и, наконец, за затяжное откладывание освобождения Западной Армении от турецкого господства. Потому, что именно она в основном распорядилась решением всех вопросов, касающихся послевоенного политического устройства мира.

**THE POLICY OF GREAT BRITAIN IN ARMENIAN  
QUESTION IN THE PERIOD BETWEEN SAN REMO AND  
LONDON CONFERENCES**

**SUMMARY**

The policy of Britain in Armenian Question has undergone gradual changes in the period between San Remo conference (1920) and London conference (1921). If during the San Remo Conference Great Britain supported the idea of the freedom of the Armenians from Turkish Empire and the unity and independence of two parts of Armenia, in the London Conference it supported the establishment of powerful Turkey.

As for the necessity to realize the formal obligation of revering the right of self-determination of the Armenians, British Diplomacy put forward the plan of establishing Armenian "National Community" in the territory of Turkey in the agenda of London Conference. The latter has nothing common with the legal appeal of all Armenian Diaspora to establish the state in their own motherland -Western Armenia.

Great Britain is responsible for the delay of liberation of Western Armenia from the Turkish domination for it was Britain which managed the solution of all the questions referring to post-war rules of regulating the world order.

ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առօրեականության պատմությունը հանդիսանում է պատմական գիտության ճյուղերից մեկը, որի ուսումնասիրության առարկան բազմաբովանդակ, հաճախ վիճահարույց հարցերի մեծ շրջանակ է ընդգրկում: Առօրեականության պատմագրության մեջ չկա միասնական, ընդհանուր տեսակետ այն հարցի շուրջ, թե որ իրադարձությունները պետք է համարել առօրեական:

1950-ական թթ. ձևավորվեց առօրեականության պատմության դպրոցներից մեկը, որը համանուն պարբերականի անունով կոչվեց «Տարեգրության դպրոց»: Դպրոցի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ֆ. Բրոդելը գրում է. «Առօրեականությունը փաստեր են՝ հազիվ նշմարելի ժամանակի և տարածության մեջ: Ինչ-որ փաստ կրկնվում է և կրկնվելով դառնում է կառուցվածք՝ ընդունելով համընդհանուր բնույթ»<sup>1</sup>: Այսինքն՝ առօրեական փաստերին բնորոշ է կրկնողությունը, որովհետև իրենց կրկնվելու միջոցով սրանք ստանում են զարգացման օրինաչափություն և երևում են պատմական զարգացման գործընթացում:

Իսկ, օրինակ, Նատալիա Պուշկարյովայի կարծիքով՝ առօրեականություն ասելով պետք է հասկանալ.

ա) հասարակական առօրեական կյանքի իրադարձային ոլորտը՝ առաջին հերթին մանր, մասնավոր բնույթի իրադարձությունները, մարդկանց՝ արտաքին աշխարհի իրադարձություններին հարմարվելու ձևերը,

<sup>1</sup> [http://www.krugosvet.ru/enc/istoriya/ISTORIYA\\_POVSEDNEVNOSTI.html](http://www.krugosvet.ru/enc/istoriya/ISTORIYA_POVSEDNEVNOSTI.html)

բ) անձնական, մասնավոր կյանքի հանգամանքները, կենցաղը՝ ամենալայն իմաստով,

գ) իրադարձությունների և երևույթների էմոցիոնալ կողմը, առանձին մարդկանց կամ խմբերի կողմից առօրեական փաստերի և կենցաղային հանգամանքների հետ կապված ապրումները<sup>2</sup>:

Առօրեականության պատմության ուսումնասիրությունների մեջ բանավեճ է առաջացրել նաև պետություն-հասարակություն փոխհարաբերությունների հարցը: Արդյունքում ձևավորվել են երկու դպրոցներ՝ «ամբողջատիրական» և «ռևիզիոնիստական»: Առաջին ուղղության ներկայացուցիչները բացարձակաճանցում են պետության դերը հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ և գտնում են, որ առօրեական կյանքը նույնպես պետք է ուսումնասիրվի այս համատեքստում՝ հաշվի առնելով նրա վրա պետության քաղաքականության անվիճելի ազդեցությունը և հսկողությունը: Ռևիզիոնիստների կարծիքով հասարակությունը միշտ էլ պահպանում է իր ինքնակայությունը, յուրօրինակությունը՝ անկախ մնալով պետական իշխանության որոշումներից<sup>3</sup>:

Խորհրդային իրականության դեպքում, կարծում ենք, նախապատվությունը պետք է տալ ամբողջատիրական մոտեցմանը: Դժվար է ապաքաղաքականացնել խորհրդային ժամանակաշրջանի պատմությունը, որովհետև կոմունիստական կուսակցության մենատիրությունը, և այդ մենատիրության ամրապնդման դիրքերից գործող պետական իշխանությունը չէին կարող հասարակությանը չպարտադրել առանձնահատուկ կենսաձև ու մտածելակերպ: Այս մտածելակերպը ձևավորվում

<sup>2</sup> Տե՛ս [http://www.perspektivy.info/history/istorija\\_povsednevnosti\\_kak\\_napравlenije\\_istoricheskij\\_issledovaniy\\_2010-03-16.htm](http://www.perspektivy.info/history/istorija_povsednevnosti_kak_napравlenije_istoricheskij_issledovaniy_2010-03-16.htm)

<sup>3</sup> Տե՛ս [http://www.bankrabort.com/work/work\\_23865.html](http://www.bankrabort.com/work/work_23865.html)

էր ստեղծված գաղափարական հզոր մեքենայի միջոցով, որի աշխատանքի հետևում նույնպես կանգնած էր պետական իշխանությունը: Կարճ ասած՝ կոմունիստական մենատիրությունն առաջին հերթին գաղափարական մենատիրություն էր և ապահովվում էր ամբողջատիրական վարչակարգին բնորոշ մեթոդներով ու եղանակներով, որի նպատակն էր հասարակական գիտակցության մեջ պետական և կուսակցական գաղափարախոսության ամրակայումը: Օրինակ՝ 1921 թ. սեպտեմբերի 3-ին Երևան քաղաքի հեղափոխական կոմիտեի քարտուղարի՝ քաղաքի բնակխորհրդի նախագահին ուղղված դիմումում նշվում էր. «Վերջին ժամանակներս նկատվում է 20-րդ հրաձգային դիվիզիայի պահանջների լիակատար անտեսում բնակելի տարածքների հարցում, ինչը համարում եմ անթույլատրելի՝ հաշվի առնելով այն, որ ՌՍԴԽՀ Կարմիր բանակի ստորաբաժանումներին պետք է տրամադրվեն բնակարանային տանելի պայմաններ՝ որպես դաշնակցական լծից ՀՍԽՀ ազատարարների: Կամ, միգուցե հակահեղափոխության վտանգի թուլացման գիտակցությունից փոխվե՞լ է վերաբերմունքը ՌՍԴԽՀ Կարմիր բանակի նկատմամբ: Միգուցե մենք արդեն պետք չե՞նք Հայաստանին»<sup>4</sup>:

Դիմումի մեջ տեղ գտած «միգուցե մենք արդեն պետք չե՞նք Հայաստանին» ձևակերպման մեջ պահանջատիրական երանգներ կարելի է որսալ՝ ուղղված հասարակությանը և քաղաքացիական իշխանության մարմիններին: Այստեղ հարկ է նշել, որ Խորհրդային Հայաստանում իրագործված ռազմական կոմունիզմի քաղաքականության հետագա դրսևորումները մեծ մասամբ արդարացվել են Կարմիր բանակի կարիքները հոգալու անհրաժեշտությամբ: Սակայն Կարմիր բանակի և ուժային կառույցների նկատմամբ պետության ստեղծած, պարտադրած

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 59, թ. 154:

հատուկ վերաբերմունքը չփոխվեց նաև ՆԷՊ-ի տարիներին: Դիմումից պետք է ենթադրել, որ իրեն «Հայաստանի ազատարար» համարող կառույցն իրավունք է վերապահում պահանջել, որ իրենց բնակարաններից վտարվեն «մասնավոր բնակվողները», այսինքն՝ ոչ գինվորական մարդիկ, որովհետև վայելում է ամբողջատիրական պետության հովանավորությունը և անմիջական, ուղղակի ձևով միջամտում է քաղաքացիական գործառույթներին, տվյալ դեպքում՝ բնակարանների բաշխմանը: 1920-ական թթ. տարվող բռնագրավումների քաղաքականության համար սա ուշագրավ օրինակ է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ստացվում է ամբողջատիրական, ուժային քաղաքականության վրա հիմնվող պետության որոշակի պատկեր: Պարզ է նաև, որ հակահեղափոխության, դասակարգային թշնամու ակտիվացման վտանգների մասին կոմունիստական կուսակցության կողմից արվող անընդհատ հիշեցումները հասարակական գիտակցության վրա ներագդելու նպատակ ունեին:

Կոմունիստական գաղափարախոսությունը, գաղափարական պարտադրանքը և սահմանափակումներն անդրադարձվում էին նաև առօրեական կյանքում: Ասվածի համար օրինակ կարող է ծառայել 1930-ական թթ. ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումների քաղաքականության հետևանքով հասարակության մեջ ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը, որի ամենացայտուն բնորոշ գիծը երևի թե վախն էր, անորոշության և անվստահության զգացողությունը սեփական անվտանգության, ապահովության վերաբերյալ: Ինչպես նշում է պատմաբան Արմենակ Մանուկյանը, «Առաջին հայացքից բնական է դիտվում, որ կոմկուսն աշխատում էր մաքրել իր շարքերը գաղափարապես խորթ և այլ կարգի՝ իրենց պատշաճ չդրսևորող (դիրքը չարաշահողներ, խուլիգաններ և այլն)

մարդկանցից: Սակայն այդ միջոցառումների ընթացքում հենց կոմկուսի շարքերում և հասարակության մեջ մուտք է գործում այս կամ այն դրդապատճառներով մատնագրեր, հերյուրանքների գրելու սովորույթը, որը, ցավոք, իր կատարելությանն է հասնում 1930-ական թթ. և դառնում բազմաթիվ մարդկանց բռնաճնշումների ենթարկելու միջոց»<sup>5</sup>: Նշված մեջբերման մեջ մեզ համար կարող է հետաքրքրություն ներկայացնել, օրինակ, մատնագրեր և հերյուրանքներ գրելու սովորությունը՝ որպես այդ տարիների առօրեականության մաս կազմող իրողություն:

20-րդ դարի 60-ական թթ. Արևմտյան Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում, պատմաբանները սկսեցին իրենց ուսումնասիրություններում ավելի հաճախ ուշադրություն դարձնել աչքի չընկնող իրադարձություններին, հասարակական հարաբերությունները վերլուծել առօրեական իրողություններում դրանց արտահայտման տեսանկյունից: Արևմտեվրոպական պատմաբանների երիտասարդ սերունդն այնքան ոգևորվեց նոր մոտեցումներով, որ արդեն 80-ական թթ. առօրեականության պատմությունը դարձավ պատմական գիտության ուսումնասիրության ուղղություններից մեկը՝ իր ուսումնասիրության առարկայով, մեթոդներով, աղբյուրներով:

Ավանդական պատմագիտության կողմից հաճախ շոշափվում է այն հարցը, թե ինչ գիտական նշանակություն կարող է ունենալ գիտական ուշադրության շեղումը գլոբալ բնույթի հարցերից դեպի սովորական մարդկանց կյանքի պատմությունները, մասնավոր բնույթի իրադարձությունները: Այս հարցը, անշուշտ, տեղին է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմությունը գիտություն է, որի ուսումնասիրության առարկան հասարակությունն է ամբողջությամբ վերցված՝ իր սոցիալ-տնտես-

<sup>5</sup> Մանուկյան Ա. Ս., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Երևան, 2002, էջ 24:



սական, մշակութային, քաղաքական կառուցվածքներով և դրանց համակողմանի վերլուծությամբ: Սակայն այստեղ խնդիրն այն է, որ պատմագիտության մեջ դասական, ավանդական մոտեցումների շրջանառման պայմաններում անտեսվել են իրական կյանքի այն հանգամանքները, որոնց վերլուծությունը ոչ պակաս արդյունավետությամբ կարող էր ուղի հարթել պատմական անցյալի համակողմանի գնահատականների համար: Անտեսվել են մարդիկ կամ նրանց կենսագործունեության այն կողմերը, որոնք նույնպես էական են եղել պատմական գործընթացի ծավալման համար:

Անդրադառնալով 20-րդ դարի 80-ական թթ. գերմանական պատմագրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին՝ Ելենա Ջուբկովան նշում է, որ գերմանացի պատմաբաններին մտահոգում էր այն հարցը, թե արդյո՞ք հնարավոր է լիարժեք վերլուծել նացիզմի պատմությունը՝ չանդրադառնալով այդ ժամանակաշրջանի շարքային գերմանացու (այսպես կոչված՝ շարքային բյուրգերի) վարքագծին, կյանքի պայմաններին և, որ հատկապես կարևոր է, նացիստական ռեժիմին նրա վերաբերմունքին: Ըստ Ջուբկովայի՝ թեպետև 80-ական թթ. գերմանական պատմագրության մեջ շատ էր գրվել նացիստների մասին, բռնությունների, տնտեսական կյանքի առանձնահատկությունների մասին, բայց շարունակվում էր չնուսաբանված մնալ այն հարցը, թե ո՞րն էր հասարակ ժողովրդի մեջ նացիստների ունեցած հեղինակության պատճառը, ինչպե՞ս Հիտլերին հաջողվեց հեշտությամբ շահել գերմանական ժողովրդի վստահությունը: Գերմանացի պատմաբանները, որոնք զբաղվում էին առօրեականության պատմությամբ, չբավարարվեցին ավանդական պատմագրության կողմից տրված բացատրություններով, որոնք հենվում էին ամբողջատիրական ռեժիմին հատուկ ահաբեկման և պետական քարոզչության ծավալման

վրա և իրենց աշխատանքներում կարողացան հիմնավորել, որ ժողովուրդը վստահում էր նացիստներին, քանի որ իրեն ապահով ու պաշտպանված էր զգում. իր հետևում կանգնած ուժեղ պետությունը նրա համար ազգային վերածննդի հեռանկար էր ստեղծում<sup>6</sup>:

Նացիստական ռեժիմի պարտությունը նույնպես պատմագրության մեջ արժարժված է կարծես թե հիմնավոր ձևով: Սակայն բոլոր գնահատականները հանգում են ֆաշիզմի պարտությանը քաղաքական, դիվանագիտական և գաղափարական ոլորտում, երբ գերմանական ֆաշիզմի ժավալապաշտական հավակնությունները նրա դեմ հանեցին Խորհրդային Միությանը, եվրոպական առաջատար երկրներին և ԱՄՆ-ին: Հայտնի է, որ Խորհրդային և հետխորհրդային պատմագրության մեջ նույնպես շատ է խոսվել Խորհրդային Միության՝ ընդդեմ ֆաշիզմի տարած հաղթանակի մասին: Պատմագրության մեջ այս հաղթանակը թեպետ իրավացիորեն վերագրվում է ողջ Խորհրդային ժողովուրդներին, սակայն շեշտադրությունը մնում է բանակի, ռազմական գործողությունների, նշանավոր զինվորականների և պետական գործիչների վրա, իսկ հասարակ ժողովրդի ամենօրյա սխրանքը, հաղթանակի գործին նրա նվիրվածությունը մշտապես ներկայացվում է հավաքական, ընդհանուր նկարագրությամբ: Այս բացը լրացնելու գործում մեծ է պատերազմյան ժամանակաշրջանի առօրեական կյանքի ուսումնասիրությունների դերը, քանի որ նրանց միջոցով պատերազմող ժողովրդի առօրեական կյանքը, կենցաղը, հոգսերը դառնում են մեծ հաղթանակի գործին նպաստող կարևորագույն իրողություններ: Չէ՞ որ իրենց ամենօրյա մաքառումներով, ազատագրության, հաղթանակի մասին իղծերով, զրկանք-

<sup>6</sup> <http://www.urokiistorii.ru/learning/method/2009/11/istoriya-cherez-povsednevnost>

ներով ու անձնուրաց աշխատանքով խորհրդային սովորական քաղաքացիները մոտեցնում էին բաղձալի հաղթանակը:

Ռուսաստանում առօրեականության պատմության առաջատար մասնագետներից մեկը համարվում է Մարիա Պոտյոմկինան, ով առաջիններից էր, որ անդրադարձավ Հայրենական պատերազմի առօրեականության պատմությանը, այն ժամանակ, երբ կարծես ամեն ինչ ասվել ու գրվել էր պատերազմի մասին, և նրա նախաձեռնության նկատմամբ պատմաբանները թերահավատ վերաբերմունք էին ցուցաբերում: Ուսումնասիրելով գաղտնի պահվող եզակի արխիվային նյութեր՝ նա ցույց տվեց խորհրդային քաղաքացիների առօրյան թիկունքում, էվակուացիայի մեջ, շրջափակման մեջ: Նրա հիմնական գերխնդիրն էր ավելի իրական և ամբողջական դարձնել խորհրդային ժողովուրդների հաղթանակը՝ ցույց տալով հաղթանակի ճանապարհին հասարակ մարդկանց կրած տառապանքները, հույզերը, սպասումները, որոնք արտահայտված էին նամակներում, առօրյա խոսակցություններում, հուշերում, անգամ տարածված ոչ պաշտոնական լուրերում, ասեկոսներում<sup>7</sup>:

Առօրեականության պատմության մեջ պատմական հիմնախնդիրների ուսումնասիրության նոր մոտեցումներ են արժևորվում: Փորձենք դրանք դիտարկել նաև պատմության մեջ նշանավոր անհատների գործունեության վերլուծության տեսանկյունից: Անհատը պատմության մեջ մշտապես քննարկվող, վերլուծվող կատեգորիա է: Փաստ է, որ վերլուծման չափանիշները հիմնականում չեն փոխվում: Մենք հանդիպում ենք նշանավոր գորավարների, քաղաքական, պետական գործիչների, մտավորականների, դիվանագետների: Թվարկված կարգավիճակների հետևում գտնվող սովորական մարդն իր

<sup>7</sup> Տե՛ս [http://www.up74.ru/rubrics/vektor\\_zhizni/2009/oktjabr-09/istorija-povsednevnosti-marina-potemkina](http://www.up74.ru/rubrics/vektor_zhizni/2009/oktjabr-09/istorija-povsednevnosti-marina-potemkina)

հույզերով, ապրումներով, ցանկություններով, իրադարձությունների նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքով կարծես թե չի երևում: Իսկ թե որքանով են այս հատկանիշները կարևոր պատմագիտական տեսանկյունից, փորձենք պարզել օրինակով:

Միջնադարյան պատմիչների վկայությունների հիման վրա պատմաբան Երվանդ Մարգարյանը ներկայացնում է Անիի թագավոր Հովհաննես-Սմբատ Բագրատունու կյանքի այն կողմերը, որոնք առնչվում են նրա կենցաղին, նախասիրություններին: Թագավորը ներկայանում է մի մարդ, որին պետական գործունեությունն ընդհանրապես չի զրավում, ինչը նրան խոցելի է դարձնում որպես պետական գործիչ: Ու եթե ավանդական պատմագրության մեջ Անիի թագավորության անկումը բացատրվում է Բյուզանդիայի վարած զավթողական քաղաքականությամբ, հայոց արքունիքում բյուզանդասեր խմբավորման դավադիր մտադրություններով, այստեղ մենք հանդիպում ենք Հովհաննես-Սմբատի կողմից իր հանրահայտ կտակը գրելու մեկ այլ՝ զուտ անձնական պատճառաբանվածություն: Ղա այն է, որ «գրքասեր և շալլակյաց Հովհաննես-Սմբատն առանց երկմտելու զգում է իր վրայից քաղաքի և երկրի նկատմամբ պատասխանատվությունը և իշխանությունը զիջում է բյուզանդական կայսրին, ինչը, ըստ էության, նրան ազատում է Անիի «սանձարձակ ամբոխը» կառավարելու և նրա քմահաճույքները բավարարելու, նրա թելադրած օրենքներին հետևելու անհրաժեշտությունից»<sup>8</sup>: Փաստորեն՝ թագավորը հանդես է գալիս իր մարդկային որակներով, իր մտածողությամբ և, որպես բարձրագույն իշխանության կրող, ինքն էլ հանդես է բե-

<sup>8</sup> Маргарян Е. Г., Город – как форма жизни. «История повседневности в изучении истории стран СНГ, материалы международной IV летней школы, 15–21 июня 2009 г.», Ереван, 2009, с. 3–32.

րում որոշակի սուբյեկտիվ վերաբերմունք այդ իշխանության նկատմամբ: Իսկ այդ սուբյեկտիվ մոտեցումն արտահայտվում է արքայի կենցաղում, նրա առօրեական նախասիրություններում՝ երաժիշտների, խոհարարների ուղեկցությամբ մշտապես գտնվել քաղաքի աղմկոտ մթնոլորտից դուրս, հանգստանալ առանձնության մեջ: Հայոց արքան այն քաղաքացիներից է, որի առօրյա կյանքը, կենցաղը կառուցվում է հասարակական շահից, հանրային անհրաժեշտություններից անձնական շահերի գերադասման սկզբունքով, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նրա քաղաքական գործունեության վրա:

Այս օրինակն ակնհայտ ձևով ցույց է տալիս անհատի գործունեության այն կողմերի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որոնք արտահայտվում են առօրեական պրակտիկայում: Կենցաղ, սուբյեկտիվ վերաբերմունք արտաքին իրադարձություններին, անհատական պատճառաբանված վարքագիծ, որով անհատը փորձում է հարմարվել կյանքին, գործող օբյեկտիվ իրականությանը: Սրանք առօրեականության պատմության ուսումնասիրության առարկան կազմող երևույթներ են: Առօրեականության պատմաբանն իր հայացքն ուղղում է ընդհանուրից դեպի մասնավորը, արտասովորից դեպի սովորականը, բացառիկից դեպի կրկնվողը: Ապրելով իր սովորական կյանքը պատերազմական արտասովոր պայմաններում՝ խորհրդային քաղաքացին ամեն օր կրկնում է իր սխրանքը, ամեն օր պայքարում է, ամեն օր մոտեցնում է հաղթանակը: Հայոց արքան, ապրելով իր սովորական կյանքը, ամեն օր ցանկանում է ազատվել իրեն վստահված պատասխանատվությունից, ամեն օր ցանկանում է մեկուսանալ, ամեն օր մոտեցնում է իր քաղաքական անկումը: Ստացվում է, որ առօրեական պրակտիկայում ծավալվող գործընթացները ձեռք են բերում մեծ կարևորություն, իսկ նրանց մասնակիցները՝ սովոր-

րական կյանքով ապրող մարդիկ. դառնում են պատմություն կերտողներ: Ինչպես նշում է Նատալիա Պուշկարյովան, «Առօրեականությունն առաջնային է, բոլոր մարդկանց համար գոյություն ունի առանց պայմանների, ամենուր է և անընդհատ՝ չնայած որ տարբեր է իր բովանդակությամբ և նշանակությամբ»<sup>9</sup>: Պատմական նյութի ուսումնասիրության ժամանակ արժևորելով նման մոտեցումները՝ առօրեականության պատմության մեջ խնդիր է դրվում ձերբազատվել պաշտոնական պատմագրության մեջ ընդունված գիտական չափանիշներից, սահմանափակումներից, հասարակության պատմությունն ուսումնասիրել հասարակության սովորական անդամների կամ նշանավոր անհատների սովորական կենսաձևի, առօրեական խնդիրների հաղթահարման, հասարակական կյանքի նկատմամբ նրանց վերաբերմունքի հարթության մեջ:

Առօրեականության հետազոտողի աշխատանքն՝ ուրիշի մտքերի և բառերի մեկնաբանությունը, ուրիշի հուզական խոսքի «թարգմանությունն» է<sup>10</sup>: Նատալիա Պուշկարյովայի այս ձևակերպումը մատնանշում է աղբյուրների հետ աշխատանքում առօրեականության պատմաբանի աշխատանքի հիմնական միջոցը: Հետազոտության նման ճանապարհն առանձնահատուկ է՝ շատ տարբեր ավանդական պատմագիտության մեջ ընդունված ձևերից, երբ, որպես կանոն, պատմաբանը հրաժարվում է պատմական նյութի մեջ հուզական նրբերանգներ փնտրելուց: Առհասարակ հուզականությունն ընդունված չէ ավանդական պատմագիտության մեջ: Այնտեղ գերակշռում են փաստերը, տարեթվերը, որոնց վերլուծությունը պատմաբանի համար միջոց է գիտական հիմնավորված պատճառա-

<sup>9</sup> Տե՛ս [http://www.perspektivy.info/history/istorija\\_povsednevnosti\\_kak\\_napravlenije\\_istoricheskikh\\_issledovanij\\_2010-03-16.htm](http://www.perspektivy.info/history/istorija_povsednevnosti_kak_napravlenije_istoricheskikh_issledovanij_2010-03-16.htm)

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

հետևանքային կապեր տեսնելու, իրադարձությունների պատմական ազդեցությունները հասկանալու համար:

Առօրեականության պատմաբանն այլ բնույթի աշխատանք է կատարում աղբյուրների հետ: Օրինակ՝ Խորհրդային Հայաստանի հետախուզության աշխատակից, կոմունիստ Պատվական Գևորգովը 1922 թ. կուսակցական մարմիններին ուղղված դիմումում խնդրում է իրեն թույլ տալ տեղափոխվել Թիֆլիս, որովհետև 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ գլխի շրջանում ստացած վերքի պատճառով ընդունակ չէ գրասենյակային աշխատանք կատարելու: Թիֆլիս տեղափոխվելու ցանկությունը նա պատճառաբանում է այնտեղ գտնվող հարազատներին օգնելու անհրաժեշտությամբ<sup>11</sup>: Այս մասնավոր դիմումը դժվար թե հետաքրքրություն ներկայացնի ավանդական պատմագիտության տեսակետից ուսումնասիրություն կատարողի համար, որովհետև հազարավոր նմանատիպ դիմումներ տարբեր մարդիկ ուղարկել են ամենատարբեր գերատեսչություններ: Մանավանդ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դիմողն իր գործունեությամբ աչքի չի ընկել և պատմագիտության տեսակետից առանցքային դեմք չի համարվում: Սակայն առօրեականության պատմաբանի համար նշյալ դիմումը կարող է որոշակի հետևությունների հնարավորություն տալ: Առանցքային նշանակություն ունի դիմումի հետևյալ հատվածը. «ինձ կուսակցական դիսցիպլինան ստիպում է մոռանալ մայր, քույր, որդիական և եղբայրական պարտականություն, բայց ես չեմ կարող սովի և տանջանքի մատնել ծեր ու անօգնական մորս ու քրոջս»<sup>12</sup>: Պետք է ենթադրել, որ դիմումի մերժման պատճառը դիմողի նշված ձևակերպումն է, որի մեջ թաքնված բողոք է նկատվում կուսակցության կարգապահական պա-

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 36, թ. 117:

<sup>12</sup> Նույն տեղում:

հանջների հանդեպ: Այստեղ պարզորոշ ուրվագծվում է քաղաքացու հուզական ապրումները, որոնցով նա ընդդիմանում է կոմկուսի՝ հեղափոխության գործին անմնացորդ նվիրվելու պահանջին: Իսկ այս պահանջը, անշուշտ, որևէ մեկին չէր ապահովագրում անհրաժեշտության դեպքում իր ընտանիքից, հարազատներից հրաժարվելուց: Սա մի խոսույն օրինակ է, երբ սովորական, առաջին հայացքից աննշան դիմումի մեջ կարող է արտացոլվել ծանր ու դժվարին պատմական ժամանակաշրջանի ոգին:

Առհասարակ, խորհրդային առօրեականության պատմագրության մեջ մեծ կարևորություն պետք է տալ պետություն-հասարակություն փոխհարաբերություններին, հատկապես այս հարաբերությունների այն կողմին, որը ներկայացնում է մարդկանց՝ պետության ստեղծած դժվարին պայմաններին հարմարվելու ձևերն ու մեթոդները: Այս մտայնությունն իր «Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город» աշխատության համար ելակետ է դարձրել ամերիկյան պատմաբան, խորհրդային Ռուսաստանի սոցիալական պատմության հիմնախդիրների ուսումնասիրող Շելլա Ֆիցպատրիկը: Հեղինակն այսպես է ներկայացնում իր աշխատությունը. «Սույն գիրքն իրենից ներկայացնում է ստալինյան Ռուսաստանում առօրեականի (այս դեպքում՝ սովորականի – Գ. Ժ.) և արտակարգի ուսումնասիրությունը և դրանց փոխներգործությունը: Այստեղ նկարագրվում են այն մեթոդներն ու ուղիները, որոնց միջոցով խորհրդային քաղաքացիները փորձում էին սովորական կյանք վարել ստալինիզմի կողմից ստեղծված անսովոր պայմաններում»<sup>13</sup>:

<sup>13</sup> Фицпатрик Ш., Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город, Москва, 2008, с. 7.



Վերը բերված մտայնությունը խորհրդահայ հասարակության առօրեականության պատմության տեսանկյունից տեղայնացնելու համար առանցքային նշանակություն ունեն 1920–30-ական թթ. Խորհրդային Հայաստանին վերաբերվող արխիվային փաստաթղթերը: Սրանց մեջ հատուկ տեղ պետք է հատկացնել կուսակցական տարբեր գերատեսչություններ ուղարկված խնդրագրերին, դիմումներին և բողոքներին, որոնցում հասարակական տրամադրություններն արտահայտված են հենց քաղաքացիների կողմից: Սրանցում երևում է Խորհրդային Հայաստանի՝ կայացման բարդ ու դժվարին ճանապարհը՝ սկսած 1920-ական թթ. սոցիալ-տնտեսական անտանելի պայմաններից, պետության տնտեսական ձեռնարկումների, դասակարգային քաղաքականության արձագանքներից մինչև բյուրոկրատական համակարգի անկատարության, վարչական աշխատողների չարաշահումների նկարագրությունները: Սրանցում պարզորոշ արտահայտված են նաև առօրեական իրադարձությունների, պետության քաղաքականության նկատմամբ մարդկանց հուզական ապրումները, որոնց մասին արդեն նշվել է:

Ստորև ներկայացվող փաստաթուղթը խնդրագիր է՝ ուղղված ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Մռավյանին: Խնդրի առարկան դիմող քաղաքացի Հայկուհի Ասլանյանի այգին է, որը, ըստ նրա, իրավասու մարմիններին կաշառք տալու միջոցով նախկին (դաշնակցական) կառավարության օրոք նրանից խլել է ոմն թուրք՝ Հաջի Ջաբար Գուզուշ անունով: Ստորև ուշագրավ հատվածներ մեջբերենք այս խնդրագրից. «Ես տուժել եմ նաև նախկին կառավարության օրով, հալածվել եմ իբրև կոմունիստ ընտանիքի անդամ, համակրող և օժանդակություն ցույց տվող այս կուսակցությանը, որովհետև եղբայրներս, որոնց Դուք ճանաչում եք իբրև ջերմ կուսակցականներ՝

Խաչիկ և Գուրգեն Օհանջանյանները, ապրել են ինձ մոտ, նրանց կրթության և դաստիարակության հիմքը ինձնով է սկսվել. նրանց հալածելու դեպքում հալածել են և ինձ, քայքայել են թե՛ ֆիզիկապես, թե՛ նյութապես: ... Իմ այգին, եթե թուրքից վերցնեն, նա ոչինչ չի կորցնի, ... իսկ մենք՝ մի դժբախտ ընտանիք, այդ այգով կյանք կստանանք, և իմ դժբախտ երեխաները՝ 16, 12 և 4 տարեկան, կզգան և կհասկանան, թե ինչ է նշանակում ժողովրդական կառավարություն, ինչ է նշանակում ունենալ երկրի մեջ ժողովրդական կառավարիչներ, որոնք, իրենց ծրագրի համաձայն, սրբում են ճնշվածի, զրկվածի և կուլակներին զոհ գնացածների արցունքները: ... Իմ չքավոր պայմանները քննված է և հաստատված է շրջանային և տնային կոմիտեների և Սոբեսի կողմից, որ մենք բառի բուն նշանակությամբ ինտիլիգենտ աղքատներ ենք»<sup>14</sup>: Նշված մեջբերումներում արտացոլված է այն ընդհանուր առանձնահատկությունը, որն առկա է ժամանակաշրջանի գրեթե բոլոր նմանատիպ փաստաթղթերում, այն է՝ քաղաքացիների կողմից սեփական պահանջներին բավարարում ստանալու նպատակով այս կամ այն կերպ նոր իշխանությանն իրենց նվիրվածությունն ու հավատը, ինչպես նաև սոցիալիստական հեղափոխության գործին իրենց մասնակցությունը վկայակոչելը: Սա ստեղծված դժվարին պայմաններին հարմարվելու՝ սովորական մարդկանց գիտակցության մեջ մշակված մեթոդներից ու ձևերից մեկն էր, որի մասին արդեն նշվեց: Ոմանք վկայակոչում էին իրենց հեղափոխական անցյալը, մյուսները՝ կուսակցական գաղափարներին իրենց նվիրվածությունը, ոմանք էլ՝ դիմում մատնագրերի օգնությամբ: Սա հասարակական իրողությունների յուրօրինակ պատկեր է ստեղծում՝ ամբողջացնելով

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 1 և շրջ.:

պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ գիտական պատկերացումները:

Այսպիսով՝ գտնվելով պատմական գիտությունների ընդհանուր համակարգում՝ առօրեականության պատմությունն ընդլայնում է ուսումնասիրվող պատմագիտական նյութի շրջանակը՝ մի տեսակ լրացնելով, հարստացնելով այն: Առօրեականության պատմության միջոցով ստեղծվում է հասարակական հարաբերությունների առավել ամբողջական պատկեր, պատմական նշանավոր իրադարձություններն արծագանքվում են առօրեական պրակտիկայում, համադրվելով առօրեական գործընթացների հետ՝ առավել բնորոշ և ամբողջական տեսքով արտահայտելով պատմական ժամանակաշրջանի ոգին: Սրանով ուսումնասիրվող պատմական նյութն առավել կենդանի ու զրավիչ է դառնում, ավելի ակնհայտ է դառնում հասարակության այն անդամների մասնակցությունը պատմական գործընթացին, որոնք տեսանելի չեն մեծ պատմությանը: Փորձելով հասկանալ անհատների հուզական վերաբերմունքի դրդապատճառները, պետական մեխանիզմների գործունեության դրսևորումները դիտարկելով առօրեական պրակտիկայում՝ առօրեականության պատմաբանն իր առջև խնդիր է դնում կյանքի իրական պատկերը դիտարկել հասարակական-պատմական կենսափորձի մեջ, այլ ոչ թե նրանից մեկուսի: Առօրեականությունը՝ նրա փաստերը, մարդկանց հույզերը, ձգտումները, կյանքն իր բազմազանության մեջ դառնում են պատմական գործընթացի կարևոր բաղկացուցիչներից մեկը:

## СОДЕРЖАНИЕ И ЗАДАЧИ ИСТОРИИ ПОВСЕДНЕВНОСТИ

### РЕЗЮМЕ

В статье предпринята попытка показать проблему повседневности в историографии, дать основные, ключевые объяснения на вопросы о том, что нужно понимать под термином “повседневность”, что является предметом изучения истории повседневности, и какое значение имеют исследования повседневных практик в развитии исторической науки. История повседневности показывается как альтернатива исторических исследований, как средство создания более разнообразного и целостного исторического материала. Многие вопросы, которыми занимается традиционная историография (личность – как создатель истории, отношения между государством и обществом и т.д.) благодаря истории повседневности обретают возможность более перспективного и всеобъемлющего изучения. В статье также представлены некоторые научные точки зрения по истории повседневности принятые в российской и европейской историографиях. С помощью архивных материалов обосновано, что исследования по истории повседневности могут внести в армянскую историографию качественно новые изменения.

CONTENT AND PROBLEMS  
OF EVERYDAY LIFE HISTORY

SUMMARY

The article reveals everyday life history as a trend of historical investigation. An attempt is made to globalize the problem of everyday life history in historical science as well as give main, pivotal explanations of this issue: what should be understood by saying "everyday life", which is the subject of investigation of everyday life history and what the investigation and analysis of everyday life fact mean for the development of historical science. The author tries to represent everyday life history as an alternative of historical investigation, a means of making the historical material more varied and global. Notable examples are given, through which the author tries to justify the fact that it is more productive to carry out a long-term analysis of many questions which are vital for traditional historiography (an individual as a creator of history, country-society mutual relations, etc.). The article also reveals a number of viewpoints based on everyday life history which exist in Russian and European historiography. As everyday life history is not a studied subject in Armenian historiography, through a number of archival documents the author tries to ground that the studies considering everyday life history can make qualitative changes in Armenian historiography.

**«ՊՐՈՄԵԹԵՎՍ» ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ  
ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑԱԾ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

1927 թ. սկզբին վտարանդիության մեջ գտնվող նախա-  
խորհրդային շրջանի վրացի, ադրբեջանցի և հյուսիսկովկաս-  
յան լեռնական որոշ քաղաքական ղեկավար գործիչներ Փարի-  
զում հիմնադրում են «Պրոմեթևս» ամսագիրը, որի անունով էլ  
կոչվեց նրա տարածած գաղափարների շուրջ առաջացած  
շարժումը<sup>1</sup>: 1920–1930-ական թթ. հայկական սփյուռքում բա-

<sup>1</sup> «Պրոմեթևս» շարժման գաղափարական հիմքը հանդիսանում էր լեի մար-  
շալ Յոզեֆ Պիլսուդսկու այն մոտեցումը, ըստ որի Լեհաստանի անկա-  
խության հիմնական երաշխիքը տրոհված Ռուսաստանն է: Լեհաստանն էլ  
պետք է իր ազդեցությունը տարածեր Ռուսաստանից անկախացած ազգա-  
յին պետությունների վրա: Հատուկ «Պրոմեթևս» շարժման գաղափարախո-  
սության մշակման համար Վարշավայում հիմնվում է Արևելյան ինստիտուտ:  
Շարժումը ֆինանսավորվում էր Լեհաստանի Գլխավոր շտաբից, ներքին և  
արտաքին գործերի նախարարություններից: Պայքարի կովկասյան ճակատն  
ուժեղացնելու նպատակով լեիերը գործի մեջ ներառեցին թուրքերին, որոնք  
հետագայում փորձում էին իրենց ցանկացած ուղղությամբ տանել շարժումը:  
Պատմաբան Արսեն Ավագյանը գրում է, որ «Պրոմեթևս» շարժման հետ կապ-  
ված լեիական իշխանությունների հույսերը չարդարացան, քանի որ վերջին-  
ներիս չհաջողվեց կովկասյան քաղաքական վտարանդիությանը միավորել  
անգամ հակախորհրդային շահերի համակնման պարագայում: Ընդ որում,  
ընդգծելի է համարվում հայ քաղաքական վտարանդիության ինքնուրույն  
գործելու հանգամանքը: Լեիերը չէին հաշվարկել Թուրքիային պրոմեթևսա-  
կան շարժման մեջ ներքաշելու բոլոր նրբությունները: Թուրքերը, թեև ցան-  
կանում էին վերահսկել կովկասյան վտարանդի քաղաքական ուժերին,  
սակայն խուսափում էին ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները լարելուց: Ի  
դեպ, թուրքերի այս դիրքորոշումով պայմանավորված էր նաև այն հանգա-  
մանքը, որ վրացի վտարանդիները հետագայում պահանջեցին Կ. Պոլսում  
ստեղծված, Կովկասի անկախության կոմիտեի կենտրոնակայանը, տեղա-

վականին բուռն քննարկման արժանացավ «Պրոմեթևս» շարժման հետ Հայ Հեղափախական Դաշնակցության ունեցած առնչության հարցը:

«Պրոմեթևս»-ը<sup>2</sup>, որ պաշտոնապես համարվում էր «Կովկասի և Ուկրաինայի ժողովուրդների ազգային պաշտպանության կոմիտեի օրգան»<sup>3</sup>, հենց առաջին համարում հրապարակեց հիմնադիրների նպատակը՝ ստեղծել միասնական անկախ պետություն, որը ձեւավորվելու էր հետևյալ սկզբունքների շուրջ. համատեղ պայքար բոլշևիկյան բռնատիրության դեմ, միասնական արտաքին քաղաքականություն, բանակ, ֆինանսադրամական և մաքսային համակարգ, հաղորդակցության միջոցների, երկաթուղու, փոստ-հեռագրի միություն<sup>4</sup>:

Իր առաջին կոչով «Պրոմեթևս»-ը հայտարարում էր, թե մոտենում է բոլշևիկների անկման ժամը, պետք է ստեղծել կովկասյան հանրապետությունների համադաշնություն, ուստի անհրաժեշտ է կռվել ռուսական բռնապետական իշխանության դեմ<sup>5</sup>:

«Պրոմեթևս»-ի հիմնադրման գործընթացին պաշտոնապես ոչ մի վտարանդի հայկական քաղաքական կազմակերպութ-

---

փոխել Փարիզ (տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920–1971), Երևան, 2011, էջ 168–175):

<sup>2</sup> «Պրոմեթևս»-ի հիմնադիրներն էին՝ վրացի մենշևիկ Նոյ Ռամիշվիլին, ազգային-դեմոկրատ Չեռոզի ԳվազաՎան, Ադրբեջանի ազգային-դեմոկրատական կուսակցության հիմնադիր Խոսրով բեկ Սուլթանովը, մուսավաթի պարագլուխ, հայտնի պանթուրքիստ Մեհմեդ էմին Ռասուլ-Չաղեն, Լեռնականների հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար դադստանցի Հայրաբ Բամմատը: Ամսագրի պաշտոնական խմբագիրը ԳվազաՎան էր (տե՛ս «Յուսաբեր», 17 յունիսի 1927 թ.):

<sup>3</sup> Տե՛ս «Դրօշակ», 1927 թ., փետրուար, էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 37:

<sup>5</sup> Տե՛ս Շահան, Թիւրքիզմը Անգորայէն Բագու եւ թրքական օրիէնտասիօն (քննադատական հայ քաղաքական մտքի), Աթէնք, 1928, էջ 133:

յուն, այդ թվում և Հ. Յ. Դաշնակցությունը չմասնակցեց: Սակայն վերջինս հիմնադիրների կողմից առաջարկ ստացավ միանալու իրենց ստեղծած շարժմանը: Եվ այս հանգամանքն էլ հետաքրքիր քննարկումների և բախումների առիթ հանդիսացավ: Խնդիրը քննարկվում էր տարբեր տեսանկյուններից: Իրականում «Պրոմեթևս»-ը ոչ միայն միասնականության, այլ նաև քաղաքական կողմնորոշման խնդիր էր դնում՝ Ռուսաստան կամ Թուրքիա՝ ակնհայտորեն նախապատվությունը տալով վերջինին: Այս առումով քննարկումներն ու բախումներն ավելի սուր եղան:

Այսպես՝ Հ. Յ. Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ի 1927 թ. փետրվարի համարում վերլուծվում է «Պրոմեթևս»-ի ստեղծման պատճառները<sup>6</sup>: Հոդվածագիրը հետաքրքիր գնահատական է տալիս դրանց. «այն, ինչ իբր «1918-ի մայիսին շղթայ էր ու կապանք «կովկասեան ժողովուրդների» համար, այսօր դառնում է ազատութիւնն ու բարգաւաճումը ապահովող լավագոյն միջոց... Դառն է շատ պատմութեան հեզմանքը»<sup>7</sup>: Սրանով պարզ հասկացվում էր այն, որ նույն Նոյ Ռամիշվիլին, ով 1918 թ. մայիսին որևէ հեռանկար չէր տեսնում Անդրկովկասյան Դաշնության համար և արագացնում էր Սեյմի կազմալուծումը, ընդամենը մի քանի տարի անց անդրկովկասյան ժողովուրդների փրկությունը տեսնում էր համադաշնության մեջ, որի համար պայքարի էր դուրս գալիս խորհրդային իշխանությունների դեմ:

«Պրոմեթևս»-ը չէր հստակեցնում Թուրքիայի, Ռուսաստանի հետ արտաքին, ինչպես նաև կովկասյան հանրապետութ-

<sup>6</sup> Հոդվածն արտատպվել է նաև Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի 1927 թ. փետրվարի 12–16-ի թիվ 267–270 համարներում:

<sup>7</sup> «Դրոշակ», 1927 թ., փետրուար, էջ 37:



յունների ներքին սահմանները, որը «Դրօշակ»-ի համար շատ տարակուսելի էր<sup>8</sup>:

Այսպիսով՝ «Պրոմեթևս»-ի հիմնադրումից անմիջապես հետո արձանագրվում էր այն փաստը, որ 1918 թ. միասնական Անդրկովկասի կազմալուծումը նախաձեռնող քաղաքական գործիչները հանդես են գալիս այն վերականգնելու և միասնական ուժերով բուլշևիզմի դեմ պայքարելու կոչով: Հենց այս կտրուկ շրջադարձն էլ առիթ տվեց դաշնակցականներին խիստ վերապահումներով մոտենալ կովկասյան ժողովուրդների վտարանդի քաղաքական գործիչների անկեղծությանը:

Դաշնակցական մեկ այլ պարբերականի՝ Կահիրեում հրատարակվող «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանը ևս անդրադարձել է «Պրոմեթևս»-ի հիմնադրմանը: Թերթի 1927 թ. փետրվարի 19-ի խմբագրականում նա գրում է, որ այս դաշինքն ունի ընդգծված հակաբուլշևիկյան և հակառուսական գաղափարական-քաղաքական ուղղվածություն: Նավասարդյանի համար մտահոգիչ փաստն այն է, որ Անդրկովկասի երկու ժողովուրդներ ձգտում են անկախության՝ առանց հայերի համաձայնության կամ մասնակցության: Ավելին՝ վրացիների և ադրբեջանցիների համար հայերի կարծիքը կարևոր չի եղել, այլապես այդ միությունը չէր լինի առանց վերջիններիս ներկայացուցիչների մասնակցության: «Մինչդեռ, – գրում է Վ. Նավասարդյանը, – այն կազմուել է ոչ միայն առանց մեր մասնակցութան, այլ նաեւ հակառակ մեր հավանութեան»<sup>9</sup>:

1920–1930-ական թվականների դաշնակցական ամենաազդեցիկ թերթերից մեկը՝ «Հուսաբեր»-ը, բազմակողմանի վերլուծության է ենթարկում «Պրոմեթևս»-ի հիմնադրումը և մեկնաբանում Հ. Յ. Դաշնակցության մոտեցումներն այս կա-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 39:

<sup>9</sup> «Յուսաբեր», 19 փետրուարի 1927 թ.:

պակցությամբ: Թերթի համար մտահոգիչ է հայերի բացակայությունը կովկասյան վտարանդիների այս նախաձեռնությունից: Ավելին, ըստ «Հուսաբեր»-ի, թուրքերի հանդեպ հայության վանող մոտեցումն է եղել պատճառը, որ կովկասյան հարևանները լրջորեն չեն տրամադրվել հայերին ևս ներգրավելու իրենց շարժման մեջ<sup>10</sup>: Պետք է նշել, որ Ղազնակցության նման մոտեցումն ուներ իր պատճառաբանությունը, որի հիմքում ընկած էր Թուրքիայի չփոփոխվող հակահայ դիրքորոշումը:

«Պրոմեթևս»-ի հիմնադրումից հետո հայ վտարանդիության շրջանակներում քննարկվող քաղաքական կողմնորոշման հարցի կապակցությամբ դաշնակցական մեկ այլ ականավոր գործիչ, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Արտաշես Աբեղյանը գրում է. «Հայաստանի քաղաքական ճակատագիրը այսօր շատ աւելի մեծ չափերով է կապւած Անդրկովկասի հետ, քան երբէւէ՝ մեր պատմութեան մէջ»: Նա փորձում է ակնարկել այն մասին, որ հայ ժողովուրդը հանգամանքների բերումով դարձել է կովկասյան ժողովուրդ, և անպայման պետք է հաշվի առնել այդ հանգամանքը՝ մեր ճակատագիրը կապելով անդրկովկասյան ժողովուրդների հետ<sup>11</sup>: Աբեղյանն առաջարկում է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս, որ հայ-թուրքական թնա-մությունից օգտվում է վրացին, ընդ որում՝ ի վնաս մեզ:

<sup>10</sup> «Հուսաբեր», 23 փետրուարի, 13 մայիսի, 17 յունիսի 1927 թ.:

<sup>11</sup> Աբեղյան Ա., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, 1929 թ., դեկտեմբեր, էջ 111: Հայդար Բամմատի ցուցումներով վրացի վտարանդի հասարակական գործիչ և պատմաբան Ջուրաբ Ավալովը փորձում էր համոզել հայերին, որ իրենք Արևմտյան Հայաստանի կորստով արդեն կովկասյան ժողովուրդ են դարձել (տե՛ս Мамула Георгий, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация: Гаўдар Баммат у групна "Кавказ" (1934–1939), Историко-культурный журнал "PROMETHEUS", N 5, <http://www.chechen.org/page.9,393-zhumal-chast.html>).

Այսպիսով, մեծանուն մտավորական, դաշնակցական գործիչ Ա. Աբեղյանը հանդես է գալիս, մեր կարծիքով, խիստ իրապաշտական դիրքերից՝ առաջարկում է հաշվի առնել հանգամանքների բերումով հայերի կովկասյան ժողովուրդ դառնալու իրողությունը: Ըստ նրա՝ արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում, հարկ եղած դեպքում պետք է հրաժարվել բոլոր նախապաշարումներից և սառը դատողությամբ առաջնորդվել միայն Հայաստանի իրական շահի գիտակցումով:

«Պրոմեթևս»-ի շուրջ հիմնական խմորումներն ընթանում էին Փարիզում: Այս տեսակետից շատ կարևոր է այստեղի «Հառաջ» օրաթերթի մոտեցումները: Այսպես՝ ծանոթանալով «Պրոմեթևս»-ի առաջին համարին, թերթը գրում է. «Կարելի չէ համադաշնակցային անկախ պետութեան մը մասին խօսիլ, առանց ցոյց տալու անոր հողային կառուցուածքը լրիւ և առանց գծելու անոր սահմանային պատկերը, արտաքին և ներքին բաժանումներով»<sup>12</sup>: Այստեղ ևս մտահոգություն է հայտնվում, որ պրոմեթևսականներն ուղղորդվում են թուրքիայի կողմից:

Հ. Յ. Դաշնակցության բարձրագույն ղեկավարությունը ևս «Պրոմեթևս»-ին կուսակցության միանալու առաջարկին քննադատական մոտեցում ցուցաբերեց: Կուսակցության բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանը հետևյալն է գրում. «Մենք չենք կարող միանալ, որովհետեւ զիջում չի լինում այդ անպիտանների կողմից»<sup>13</sup>: Զիջում ասելով Ռուբենն ի նկատի ուներ կովկասյան հարեւանների կողմից հայերի իրավունքների ընդունումը թուրքիայի տիրապետության տակ գտնվող հողերի վրա:

<sup>12</sup> «Յառաջ», 3 մարտի 1927 թ.:

<sup>13</sup> «Ռուբենի նամակները», «Հայրենիք» ամսագիր, 1963 թ., էջ 21:

Այսպիսով՝ «Պրոմեթևս» հանդեսի հրատարակումը և նրա շուրջ ձևավորված շարժումը հիմնականում քննադատության ենթարկվեց տարագրության մեջ գտնվող դաշնակցական գործիչների և դաշնակցական մամուլի կողմից: Քննադատվում էր շարժման թուրքամետ ուղղվածությունը, կովկասյան ոչ բոլոր ժողովուրդների շահերը հաշվի առնելը և այլն: Ապահովված չէր կովկասցիների պայքարի ճակատի միասնականությունը: Պրոմեթևսականներն իրականում լուրջ քայլեր չձեռնարկեցին այդ միասնականության համար:

Ժամանակի ՀՅԴ բյուրոյի մեկ այլ անդամ՝ Շահան Նաթալին, սակայն, այլ վկայություններ է տալիս: Նրա տեղեկացմամբ՝ 1926 թ. նոյեմբերին վտարանդիության մեջ գնտվող Ադրբեջանի ազգային-դեմոկրատական կուսակցության հիմնադիր Խոսրով բեկ Սուլթանովը ժամանում է Փարիզ և այցելում այստեղ գնտվող ՀՅԴ բյուրոյի անդամ Սիմոն Վրացյանին, առաջարկում մասնակցել «Պրոմեթևս» շարժմանը: Նա հույս ուներ ՀՅԴ միջոցով հայերին ևս ներգրավել շարժման մեջ<sup>14</sup>:

Շ. Նաթալին հանգամանորեն անդրադարձել է «Պրոմեթևս»-ի հիմնադրման պատմությանը և պատճառներին: Նա որոշ դաշնակցական ղեկավար գործիչների մեղադրել է «Պրոմեթևս»-ի հետ համագործակցելու մեջ և անխնա քննադատել նրանց: Նաթալին բնական է համարում, որ Հայաստանը դեմ չէ և չի էլ կարող լինել Ռուկրախնայի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի անկախությանը: Սակայն նա այլ տեսանկյունից է հարցադրում կատարում. «... ճի՞շդ է, որ անկախություն է կովկասեան ժողովուրդներու միութեան առանցքը, թէ միայն անկախութիւնը Ռուսաստանէն եւ կախումը Թուրքիայէն, այսինքն՝ միայն տէր փոխելը, մինչեւ անգամ իրենց, «անկեղծ»

<sup>14</sup> Տե՛ս Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները, հ. Բ, Սարսէյ, 1935, էջ 80:

ծգտումներուն հակառակ»<sup>15</sup>: Նրա կարծիքով՝ կովկասյան այդ միության իրական բովանդակությունը թուրքական կողմնորոշումն է, ուստի Վրաստանը, Ղաղստանը և, առավել ևս, Ադրբեջանը կարող են, կամ նույնիսկ պարտավոր են ունենալ թուրքական կողմնորոշում, իսկ հայերը՝ ոչ: Նա ռուսների և թուրքերի տարբերությունը ներկայացնում է հետևյալ տպավորիչ բանաձևամբ. «ռուսը դէմ է Կովկասի ժողովուրդներու անկախութեան եւ ազատ զարգացման, իսկ թուրքը դէմ է Կովկասի ժողովուրդներու գոյութեան»<sup>16</sup>:

Շ. Նաթալին գտնում է, որ «Պրոմեթևս»-ի հիմնադիրները, չնայած իրենց ծրագրի թուրքամետ ուղղվածությանը, հույս ունեին, որ հայերը ևս կմիանան իրենց նախաձեռնությանը: Նման հիմքեր, ըստ Նաթալու, տվել էին Վրացյանի թուրքամետ կեցվածքը 1921 թ. փետրվարյան ապստամբության օրերին, Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ-թրքական կնճիռը» գրքի, ինչպես նաև Ռուբեն Ղարբինյանի «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հոդվածաշարի հրատարակումը («Հայրենիք» ամսագիր, 1922 թ. նոյեմբեր – 1923 թ. հոկտեմբեր), ուր թուրքերի համագործակցության գիծն էր անցկացվում<sup>17</sup>:

Մեր կարծիքով՝ Շահան Նաթալին թե՛ Ռուբեն Տեր-Մինասյանի, թե՛ Ռուբեն Ղարբինյանի տեսակետները շատ խիստ է մեկնաբանել, որը, թերևս, պայմանավորված է նրա ունեցած առավել ծայրահեղ մոտեցումներով: Մինչդեռ վերջիններիս մոտեցումներն էլ ունեին իրենց հիմնավորումները: Օրինակ՝ Ռուբեն Ղարբինյանն առաջարկում էր համագործակցել կովկասյան հարևանների հետ, այլապես հայերին կսպառնար մեկուսացման վտանգը: Ըստ նրա՝ «հայ ժողովուրդի ֆիզիքական

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> «Հայրենիք» օրաթերթ, 22 մայիսի 1927 թ.:

<sup>17</sup> Տե՛ս Շահան, Թիւրքիզմը Անգորայէն Բագու եւ թրքական օրիէնտասիօն (քննարդատական հայ քաղաքական մտքի), էջ 135:

գոյութեան տեսակէտով իր անմիջական հարեւաններու թշնամութիւնը անհամեմատ աւելի վտանգաւոր է, քան Խորհրդային Ռուսիոյ թշնամութիւնը»: Հետեւեալը՝ «հայկական օրինատափա ըսել այժմ՝ կը նշանակէ իրականին մէջ ըսել կովկասեան օրինատափա, բայց ոչ երբեք ռուսական կամ բոլշեւիկեան»<sup>18</sup>:

1925 թ. ավարտված Հ. Յ. Ղազնակցության 10-րդ ընդհանուր ժողովը հակաթուրքական որոշում էր ընդունել: Նաթալին պնդում է, որ այդ որոշումից շեղվելու համար պետք էր նոր ընդհանուր ժողով գումարել: Նա գրում է, թե իբր «Պրոմեթէս»-ի հիմնադիրներից Խոսրով բեկ Սուլթանովը, նախապես իմանալով ՀՅԴ ընդհանուր ժողովի հակաթուրք որոշումների մասին, բավարարվել է հայերի անհատապես մասնակցությամբ՝ պայմանով, որ այդ անհատները լինեին Ս. Վրացյանը և Ռ. Տեր-Մինասյանը: Ըստ նրա՝ 1926 թ. դեկտեմբերի 29-ին ՀՅԴ բյուրոն որոշեց անհատապես մասնակցել «Պրոմեթէս»-ի աշխատանքներին<sup>19</sup>: Եթե Ս. Վրացյանը կամ մյուսները փորձել են համագործակցել «Պրոմեթէս»-ի հետ, ամեն դեպքում, տեղին չէ այն մեղադրանքը, թե իբր նրանք ցանկացել են «Պրոմեթէս»-ի կան շարժումը դարձնել Հ. Յ. Ղազնակցութեան կուսակցական դաւանանքը»<sup>20</sup>:

Շ. Նաթալին, ի տարբերություն դաշնակցական այլ գործիչների, պնդում է, որ Ղազնակցության բյուրոյի մի հատվածը, այնուամենայնիվ, հակված էր համագործակցելու «Պրոմեթէս»-ի հետ, ինչը, նրա կարծիքով, անընդունելի էր: «Պրոմեթէս»-ը, ունենալով թուրքամետ բնույթ, չէր կարող ծառայել հայ ժո-

<sup>18</sup> Ղարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք» ամսագիր, 1923 թ., հոկտեմբեր, էջ 141:

<sup>19</sup> Տեն Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրին 1930-ի կովկասեան ապստամբութիւնները, հ. Բ, էջ 85-87:

<sup>20</sup> Վեհապետեան Թ., Նոր սերունդը՝ քաւութեան նոխագ, հ. Գ, Պէյրութ, 1986, էջ 16:

ղովրդի շահերին: Միաժամանակ, նրա համոզումով, այս մոտեցումը խորթ էր ամբողջ Ղաչնակցությանը:

Ղաչնակցության առավել ընդդիմադիր զանգվածի կողմից հիմնադրվեց «Մարտկոց» թերթը, որը կուսակցության ղեկավարության հրապարակային քննադատության բեմի վերածվեց<sup>21</sup>: ՀՅԴ բյուրոյի անդամությունից հրաժարվեց և մարտկոցական շարժմանը միացավ նաև Շահան Նաթալին: Թերթը անդուժ էր, որ «Բիւրոյի «կովկասեան գործունէութեան առանցքը եղած է պրոմեթէականութիւնը: Ասիկա բացարձակ է: Պրոմեթէին հետ խօսած ըլլալուն համար չէ որ խարանեցինք զինքը ու կը խարանենք»<sup>22</sup>:

Հաշվի առնելով հնչեցված մեղադրանքները՝ 1932 թ. դեկտեմբերի 15-ին ՀՅԴ բյուրոն հանդես եկավ հայտարարությամբ, ուր նշվում էր, որ չարամիտ խեղաթյուրվում է «Պրոմեթէս»-ի հետ իբր «գործակցությունը» կամ «թրքասիրական քաղաքականություն»-ը: ՀՅԴ բյուրոն հետամուտ է 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած սկզբունքներին: Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը միաժամանակ հերյուրանք էր համարում Խորհրդային Հայաստանի դեմ «զինյալ ապստամբությունը»<sup>23</sup>:

Անդրադառնալով Անդրկովկասում զինված ապստամբություն սկսելու «Պրոմեթէս»-ի ծրագրերին՝ նշենք, որ դեռևս Ղաչնակցության 11-րդ Ընդհանուր ժողովը (1929 թ.) հայտարարել էր, որ, դեմ լինելով խորհրդային կարգերին, դեմ է նաև այդ կարգերը բռնի տապալելուն: Կուսակցությունը նախընտրում էր պայքարը շարունակել գաղափարախոսական դաշտում:

<sup>21</sup> Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հատոր Դ, Հայ Սփիւռք, Գիրք Ա, Ֆրանսահայերու պատմութիւնը, Պէյրուս, 1975, էջ 103:

<sup>22</sup> «Մարտկոց», 25 յունուարի 1933 թ.:

<sup>23</sup> Տե՛ս «Յառաջ», 18 դեկտեմբերի 1932 թ.:

Սակայն ՀՅԴ բյուրոյի հայտարարութիւնից հետո էլ «Մարտկոց»-ը չփոխեց իր դիրքորոշումը: ՀՅԴ բյուրոյի վերոնշյալ հայտարարութեան առիթով առանձին հոդվածով հանդես էր գալիս Շահան Նաթալին: Նա գրում է, որ, իր ընդդիմախոսների պնդմամբ, չեզոքացման և լուսանցքում հայտնվելու մտավախությունն է ստիպում առնչվել պրոմեթէասական շարժմանը: Սակայն վախը չի կարող փոխել փաստերը: Եթե մեր թշնամությունը թուրքերի և ռուսների հանդէպ նշանակում է չեզոքացում կամ լուսանցքում հայտնվել, ապա այդ տրամաբանությամբ մենք պարտավորվում ենք նրանցից որևէ մեկի կողմում լինել: Միջանկյալ ուժերին հարելը ևս Նաթալին համարում է կամ ռուսի, կամ թուրքի կողմում լինել: Նա պնդում է, որ երկուսին էլ դեմ լինելը լավագոյն տարբերակն է, որը ըստ նրա, չի նշանակում չեզոք մնալ: Հնարավոր չի համարելով իրական բարեկամությունը ո՛չ ռուսների, ո՛չ էլ, առավել ևս, թուրքերի հետ, Նաթալին անկեղծ թշնամությունը գերադասում է կեղծ բարեկամությունից<sup>24</sup>: Եթե հնարավոր չէ քինել անկախ և չհետևել երկուսից որևէ մեկին, Նաթալին ռուսներին համարում է չարաց փոքրագոյնը, որի «մեծագոյն պատճառն այն է, որ Ռուսիա թուրքէն նուազ թշնամի է հայութեան: Ռուսիա անկախութիւնը կը խէղդէ. Թուրքիա՝ հայութիւնը»<sup>25</sup>:

Խոսելով Ղաշնակցութեան ղեկավարութեան «Պրոմեթէաս»-ի հանդէպ ունեցած, իր կարծիքով, դրական վերաբերմունքի մասին՝ Նաթալին համոզմունք է հայտնում, որ կուսակցականների բացարձակ մեծամասնությունը դեմ է թուրքերի հետ ցանկացած համագործակցութեանը, ինչպիսին ենթադրում է «Պրոմեթէաս»-ը: Նման պատկերացման պատճառն այն է, որ մի քանի անհատներ խոսում են այդ թեմայով, և այդ անհատները

<sup>24</sup> Տե՛ս «Մարտկոց», 20 յունուարի 1933 թ.:

<sup>25</sup> «Մարտկոց», 22 յունուարի 1933 թ.:



կուսակցական պատասխանատու դիրքեր ունեն: Այլապես անգամ առիթ չէր լինի խոսել այդ մասին<sup>26</sup>:

Ղաշնակցական թերթերը ևս սուր քննադատության էին ենթարկում «Պրոմեթևս»-ի մոտեցումները՝ միաժամանակ նշելով, որ կուսակցական ղեկավար մարմինները դեմ են դրան (քյուրոյի հայտարարությունը որպես վառ օրինակ): Օրինակ՝ անդրադառնալով «Պրոմեթևս» ամսագրում Կովկասյան համադաշնության ուխտի ստորագրման կանխատեսմանը՝ «Հառաջ»-ի խմբագիրը 1932 թ. գրում է. «Կովկասեան Կոմիտէին անդամները վերջին տարիներու ընթացքին բազմաթիւ փորձեր կատարած են Հայերն ալ իրենց ետեւէն քաշելու, ուղղակի կամ անուղղակի բանակցելով Հ. Յ. Ղաշնակցութեան հետ: Ղաշնակցութիւնը, այս ճակատին վրայ, ունի բացորոշ բանաձեւ մը, որ թոյլ չի տար նաւարկել պղտոր ջուրերու մէջ: Կը նշանակէ թէ՛ «Կովկասեան դաշինքը» պիտի ստորագրուի, դուրս ձգելով Հայերը: Պիտի ստորագրուի՝ դառնալով տեսակ մը ճնշումի միջոց: Ուրիշ խօսքով, անգամ մըն ալ պիտի հաստատուի, որ մեր դրացիները չեն խրատուած անցեալի դասերէն, եւ կը շարունակեն իրենց ճակատագիրը կապել թրքական շարժանիւին»<sup>27</sup>:

Այսպիսով՝ Ղաշնակցության ղեկավարությունն ու նրանց ընդդիմախոսները տարբեր ձևաչափերով քննարկում էին պրոմեթևսականների հետ համագործակցության թեման: Կուսակցության մամուլը և ազդեցիկ դեմքերը պնդում էին, որ «Պրոմեթևս»-ի թուրքամետ դիրորոշումն ականհայտ է, և նրանց հետ համագործակցելու որևէ հիմք չկա:

Հետագայում «Պրոմեթևս» ամսագիրը դադարեց հրատարակվելուց: Նրա հրատարակիչները սկսեցին տպագրել «Կավ-

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>27</sup> «Յառաջ», 1 սեպտեմբերի 1932 թ.:

կազ» ռուսալեզու հանդեսը, որը տարածում էր «Պրոմեթևս»-ի գաղափարները:

«Հառաջ»-ը շարունակեց քննադատել «Կավկազ»-ի քարոզած գաղափարները, որոնք չէին տարբերվում տարիներ առաջ «Պրոմեթևս»-ի որդեգրած սկզբունքներից: «Անոնք ալ, ինչպէս դիմակաւոր «Պրոմեթէ»ն, կովկասեան համադաշնակցութիւնը կը հիմնեն թուրքիոյ բարեացակամութեան վրայ, կը կապեն անոր շահերուն հետ եւ կը դնեն անոր հովանավորութեան տակ», – գրում է թերթը<sup>28</sup>:

1934 թ. հուլիսի 14-ին կնքվում է Կովկասյան Համադաշնակցության ուխտը, որը Ադրբեջանի կողմից ստորագրում են Ռասուլ Ջադեն և Թուփչիբաշիևը, Հյուսիսային Կովկասի կողմից՝ Գիրեյ Սուեշը, Իբրահիմ Չուլիքը և Թաուսուլթան Շաքմանը, Վրաստանի կողմից՝ Ն. Ժորդանիան և Ա. Չխենկելին<sup>29</sup>:

Կովկասցի վտարանդիները նախատեսում էին վերականգնել իրենց կորսված անկախությունը, ստեղծել համադաշնային պետությունը, որի հիմնական սկզբունքները հետևյալներն էին. համադաշնության յուրաքանչյուր հանրապետության ներքին ազգային ինքնուրույնություն, միասնական արտաքին քաղաքականություն, միասնական բանակ, ընդհանուր օրենսդրություն և սահմանադրություն<sup>30</sup>: Ուխտի մեջ տեղ էր հատկացված նաև Հայաստանին: Սակայն Ղաշնակցությունը մերժեց անդամակցել Ուխտին, որովհետև հարևանները, այնուամենայնիվ, չցանկացան ընդունել հայերի իրավունքները Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերի նկատմամբ<sup>31</sup>:

<sup>28</sup> «Յառաջ», 1 յունիսի 1934 թ.:

<sup>29</sup> Տե՛ս «Վեմ», 1934 թ., թիվ 4, էջ 126:

<sup>30</sup> Տե՛ս «Յառաջ», 7 սեպտեմբերի 1934 թ.:

<sup>31</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 406, ց. 1, գ. 94, ք. 21:

Հայ հասարակական-քաղաքական միտքն անդրադարձավ նաև այդ ուխտին միանալու հայերին ուղղված հրավերին և չմիանալու պատճառներին: Ռ. Տեր-Մինասյանն իր «Կովկասյան միությունը» հոդվածում նշում է, որ կովկասցի վտարանդիների նպատակն իրականում միայն հակառուսական է և պրո-թուրքական և նրանց կողմից հայերին տրված հավաստիացումները լուրջ չպետք է ընդունել<sup>32</sup>:

Կարծում ենք, իրականությանը չի համապատասխանում գերսամ Ահարոնյանի այն պնդումը, թե «առանց պաշտոնապէս յարելու ուխտին (Կովկասյան համադաշնության – Խ. Ս.)՝ Ղազնակցութիւնը գործակցեցաւ այդ կազմակերպութեան հետ»<sup>33</sup>:

Այսպիսով՝ պրոմեթէսական շարժումը երկար մաքառումներից հետո հիմնադրումից շուրջ տասը տարի անց հանգում է Կովկասյան Ուխտի ստորագրմանը, որին հայերը մասնակցություն չունեցան:

Վրացիները, մտավախություն ունենալով Ուխտի ներսում մահմեդականների գերակշռությունից, բանակցությունների մեջ մտան հայերի հետ<sup>34</sup>: 1936 թ. մայիսին ստորագրեց հայ-վրացական համագործակցության համաձայնագիր<sup>35</sup>:

Երկրորդ, աշխարհամարտի տարիներին պրոմեթէսական կովկասյան գործիչները տեղափոխվեցին Բեռլին, որտեղ նացիստների օժանդակությամբ յոթ լեզուներով հրատարակում էին «Կավկազ» հանդեսը: Հայերեն հրատարակությունն իրականացնում էր Վիգեն Շանթը:

---

<sup>32</sup> Տե՛ս Ռուբեն, Կովկասեան միութիւնը, «Հայրենիք» ամս., 1937 թ., մարտ, էջ 67:

<sup>33</sup> Տե՛ս Ահարոնեան Գ., Մեծ երազին ճամբուն վրայ, Պէյրուս, 1964, էջ 174:

<sup>34</sup> Տե՛ս Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 197:

<sup>35</sup> «Վէմ», 1937 թ., թիւ 1, էջ 64:

Այսպիսով՝ 1920-ական թվականներին կովկասյան վտարանդի քաղաքական ղեկավար գործիչների նախաձեռնությամբ ստեղծված «Պրոմեթևս» շարժումը նպատակ ուներ հասնել Խորհրդային Միությունից Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի անկախացմանը: Պրոմեթևսականներն իրենց միանալու առաջարկ արեցին նաև հայ վտարանդի ամենազդեցիկ քաղաքական ուժին՝ Հայ Հեղափոխական Ղազնակցությանը: Ղազնակցական ղեկավարությունը, մամուլը, ինչպես նաև ներքին ընդդիմադիր զանգվածը, հաշվի առնելով «Պրոմեթևս»-ի թուրքամետ կողմնորոշումը, ընդհանուր առմամբ քննադատաբար վերաբերվեց այդ շարժմանը: Նրանց տարօրինակ թվաց մի քանի տարի առաջ միասնական Անդրկովկասի կազմալուծումն իրականացնող քաղաքական գործիչների նախաձեռնությունը համատեղ ուժերով խորհրդային իշխանությունների դեմ պայքարելու վերաբերյալ: Խիստ մտահոգիչ էր Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարում Թուրքիայի օգնությանն ապավինելու մոտեցումը:

Միաժամանակ՝ կուսակցության մեջ քննարկվեցին քաղաքական կացությունն առավել իրատեսական գնահատելու մոտեցումներ: Նման մոտեցումները սուր քննադատության ենթարկվեցին դաշնակցական մի շարք մտավորականների (մարտկոցականների) կողմից: Վերջիններս կուսակցության ղեկավարությանը մեղադրեցին նախապես հռչակված սկզբունքներին չհետևելու, «թուրքամետ» քաղաքականություն վարելու մեջ: Նրանց կարծիքով, «Պրոմեթևս»-ը չէր կարող ծառայել հայ ժողովրդի շահերին:

Ղազնակցության ղեկավար մարմինը, որ սկզբում բանակցել էր «Պրոմեթևս»-ի հետ, ստիպված եղավ հայտարարել, որ չի ընդունի ցանկացած «թուրքամետ» դիրքորոշում, իսկ իր հասցեին արված մեղադրանքներն անհիմն են: Անընդունելի

համարելով պրոմեթևականների մոտեցումները հայկական պահանջատիրության նկատմամբ՝ Ղաշնակցությունը հրաժարվեց մասնակցել նաև վերջիններիս ստեղծած Ուխտին:

**ХАЧАТУР СТЕПАНЯН**

*кандидат исторических наук, доцент*

**К ВОПРОСУ О СВЯЗИ АРМЯНСКОЙ  
РЕВОЛЮЦИОННОЙ ФЕДЕРАЦИИ ДАШНАКЦУТЮН  
С ДВИЖЕНИЕМ “ПРОМЕТЕЙ”**

**РЕЗЮМЕ**

В 20-ых годах XX века изгнанными кавказскими деятелями было создано движение “Прометей” целью которого являлось отделение Кавказа от Советского Союза. Армянская Революционная Федерация Дашнакцутюн была приглашена присоединиться к прометеистам. Однако последние имели протурецкую ориентацию и в общих чертах были раскритикованы, а их предложение было отклонено. Основатели “Прометей” не захотели принять во внимание справедливые требования армян по отношению к Турции. Они напрасно пытались втянуть АРФД в борьбу против Советского Союза.

KHACHATUR STEPANYAN

*PhD in History, Associate Professor*

ON THE ISSUES OF RELATION OF THE ARMENIAN  
REVOLUTIONARY PARTY DASHNAKTSUTYUN TO THE  
MOVEMENT "PROMETHEUS"

SUMMARY

Movement "Prometheus" that was established by Caucasus pariah political leading actors in 1920s aimed at gaining independence of the Caucasus from the Soviet Union. Armenian Revolutionary Party Dashnaktsutyun was invited to join the movement refused and criticized the movement due to the latter's Turkish orientation. Founders of "Prometheus" did not take into account just demand rights of Armenians towards Turkey. In fact they failed to engage Dashnaktsutyun in struggle towards the Soviet Union.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
 ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), աջակցելով հայրենադարձներին, աշխատանքներ էր տանում նրանց տեղավորելու, բնակարանով, աշխատանքով ապահովելու ուղղությամբ՝ այդ նպատակով համագործակցելով արտասահմանի տարբեր հայկական կազմակերպությունների՝ մասնավորապես հայրենակցական միությունների հետ: Վերջինները հայրենիքից ու բնօրրանից (նույն գյուղից, քաղաքից, գավառից) արտագաղթած համերկրացի հայերին միավորող կազմակերպություններ էին:

Հայրենադարձների համար առաջին հերթին հարկավոր էր գլխավերևում տանիք ունենալ: Այդ նպատակով ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն իր մասնաճյուղերի միջոցով սկսեց հանգանակություններ կատարել արտասահմանում: Խորհրդային Հայաստանում ՀՕԿ-ին վստահվեց հայրենակցական միությունների և այլ հասարակական կազմակերպությունների կողմից ուղարկված գումարների տնօրինումը և բնակավայրեր հիմնելու կազմակերպչական և շինարարական աշխատանքների ղեկավարումը: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը 1924 թ. հունվարին շրջաբերականով դիմեց արտասահմանի բոլոր բարեգործական և հայրենակցական միություններին, կազմակերպություններին, հասարակական լայն խավերին ու անհատ-

ներին՝ այս ձեռնարկները համատեղ կյանքի կոչելու խնդրանքով<sup>1</sup>:

Տասներկու հայրենակցական միություններ ներկայացուցչություններ ունեին Խորհրդային Հայաստանում: Դրանք էին՝ Նոր Եվդոկիան, Նոր Խարբերդը, Նոր Արաբկիրը, Նուբարաշենը, Նոր Սեբաստիան, Նոր Թոմարզան, Նոր Մալաթիան, Նոր Կամիսը, Նոր Պարտիզակը, Նոր Քոչխարը, Դուզ Իսարը, Նոր Բութանիան (վերջին յոթը մտնում էին Սեբաստիայի հայրենակցական միության նյույորքյան կենտրոնի վարչության կազմի մեջ և համանուն ավանները համարվում էին Նոր Սեբաստիայի գյուղերը)<sup>2</sup>: Հայրենակցական միությունները նպատակ ունեին կազմակերպել Հայոց ցեղասպանության արդյունքում հայրենի բնակավայրերից բռնի տեղահանված ու գաղթական դարձած հայրենակիցների տեղափոխությունը Խորհրդային Հայաստան և ձեռնամուխ էին եղել վերջինի վերաշինության գործին: Այդ գործի առաջին նախաձեռնողներից էր Ամերիկահայ արաբկիրցիների միությունը, որը 1924 թ. հունվարին իր պատգամավորական ժողովում քննարկում է արաբկիրցի գաղթականներին Հայաստան տեղափոխելու հարցը, իսկ նույն թվականի ապրիլի 15-ին միության կենտրոնական վարչությունն արդեն նամակով դիմում է Հայաստանի կառավարությանը՝ հայրենիքում Նոր Արաբկիր անունով ավան կառուցելու համար հողատարածք հատկացնելու խնդրանքով<sup>3</sup>: Հայրենակցական միությունները ցանկանում էին նոր կառուցվող բնակավայրերը կոչել կորուսյալ հայրենիքի քաղաքների, գյուղերի անուններով, որպեսզի դրանք հավերժանային հայության հիշողության մեջ: Ամերիկահայ արաբկիրցիների միության ար-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 89, թ. 37:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 219, թ. 4:

<sup>3</sup> Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 84-85:



տակարգ պատգամավորական ժողովն ընտրում է երկու ներկայացուցիչ՝ Մկրտիչ Ղազիկյանին և Միսակ Վարդանյանին, որոնք անմիջապես մեկնում են Հայաստան՝ վարիի ընտրության և այլ հարակից հարցերով զբաղվելու նպատակով<sup>4</sup>:

Հայրենադարձների համար նոր բնակավայրեր կառուցելու համար հայրենակցական միությունների խնդրանքով ՀՍԽՀ ժողկոմխորհին է դիմում նաև ՀՕԿ-ը: 1925 թ. ապրիլի 3-ին ժողկոմխորհը հաստատեց «Նոր Արաբկիր» անունով ավան կառուցելու համար հողատարածք հատկացնելու մասին Երևանի քաղաքավարժկոմի նախագահության որոշումը, իսկ ժողկոմխորհին կից գաղթականության հատուկ հանձնաժողովի 1925 թ. ապրիլի 1-ի նիստում որոշվեց Նոր Արաբկիր ավանը հիմնադրել ՀՕԿ-ի հսկողությամբ: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն առաջարկվեց ցուցակագրել Հայաստանում գտնվող եվրոկացիներին: Երևանի քաղաքավարժկոմի և Ամերիկահայ արաբկիրցիների միության միջև 1925 թ. մայիսի 3-ին կնքվում է պայմանագիր, որի համաձայն ավան կառուցելու համար Երևանի, Քանաքեռի, Հրազդան և Գետառ գետերի միջև գտնվող տարածությունից հատկացվում է 600 դեսյատին հողատարածք<sup>5</sup>:

Նոր Արաբկիրը կառուցվեց 1926–1934 թթ. ընթացքում: Այն սկզբում ուներ 1200 շնչից բաղկացած բնակչություն, այստեղ կազմակերպվել էր գործվածքի արտադրություն, կառուցվել մանկապարտեզ ու դպրոցի շենք<sup>6</sup>:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը թե՛ արտասահմանում և թե՛ խորհրդային հանրապետություններում գործող իր մասնաճյուղերին հրահանգում էր սերտ համագործակցել հայրե-

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 85:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 330, թ. 56, գ. 327, թ. 6, գ. 223, թ. 74:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 798, թ. 2:

նակցական միությունների հետ: Այդ նպատակով ՀՕԿ-ի Խարկովի մասնաճյուղը որոշում է հանգանակություն կազմակերպել և այս գործընթացին ավելի լուրջ բնույթ հաղորդելու համար կոմիտեի կազմի մեջ են հրավիրվում տեղի հայրենակցական միությունների ներկայացուցիչների, քանի որ հայությունը սովորաբար խմբված էր որևէ հայրենակցականի մեջ<sup>7</sup>:

Ամերիկահայ արաբկիրոցիների միության օրինակով՝ 1928 թ. մայիսի 26-ին Սեբաստիայի վերաշինական միության 10-րդ պատգամավորական ժողովը որոշում է կայացնում Խորհրդային Հայաստանում հիմնել Նոր Սեբաստիա անունով ավան և 1929 թ. ապրիլի 20-ին այդ նպատակի համար ուղարկում է 5.000 դոլար: Նոր Սեբաստիան հիմնվում է Երևանից 8 վերստ հեռավորության վրա՝ Նոր Մալաթիայի կողքին: Այն արդեն ուներ մետաքսի գործվածքային և ոլորվածքային արտադրություն, կառուցվել էր 16 տուն՝ 420 բնակչությամբ, նաև մանկապարտեզ ու դպրոցի շենք<sup>8</sup>:

Էվջիլարի ջրանցքով ոռոգվող նախկին ամայի տափաստանում 1925 թ. գարնանը ՀՕԿ-ի կենտրոնական վարչության անմիջական վերահսկողությամբ հիմնվել էր նաև Նոր Եվդոկիա ավանը<sup>9</sup>: Սակայն շուտով պարզ է դառնում, որ ավանին հատկացված վայրը թե՛ կլիմայի և թե՛ հողի որակի տեսակետից անբարենպաստ է, որի համարել էլ Նոր Եվդոկիան 1929թ. տեղափոխվում է Էջմիածնից 4 կմ հեռավորության վրա գտնվող մեկ այլ վայր, ինչն էլ իր հերթին լրացուցիչ ծախսեր էր պահանջում<sup>10</sup>:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 306, թ. 18 շրջ.:

<sup>8</sup> Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 30-31, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 832, թ. 11, գ. 798, թ. 7:

<sup>9</sup> Տե՛ս «ՀՕԿ-ի տեղեկատու», № 1, էջ 51:

<sup>10</sup> Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 181:

1929 թ. մարտի 3-ին Ռեյսինում գումարվում է համաթոմար-  
զացիների հրապարակային ժողով, որի ժամանակ միության  
կենտրոնական վարչությանը կից ստեղծվում է Վերաշինաց  
հանձնախումբ: Վերջինին իրավունք է տրվում դիմել Հայաս-  
տանի կառավարությանը՝ թոմարզացիներին Հայաստան տե-  
ղավոխելու համար: Վերաշինաց հանձնախումբը ՀՕԿ-ի  
կենտրոնական վարչության միջոցով դիմում է կառավարու-  
թյանը՝ խնդրելով արտոնել 150 թոմարզացիների մուտքը  
Խորհրդային Հայաստան: 1929 թ. փետրվարի 17-ին ՀՕԿ-ի  
կենտրոնական վարչությունը հեռագրով տեղեկացնում է կա-  
ռավարության թույլտվության մասին և խնդրում ուղարկել  
10.000 դոլար: Արդեն 1929 թ. հունիսի 20-ին փորվում են Նոր  
Թոմարզայի առաջին 3 բնակարանի հիմքերը<sup>11</sup>:

Նոր Խարբերդի կառուցման նախաձեռնողը Խարբերդի  
կրթասիրաց և նպաստամատույց միացյալ ընկերությունն էր:  
Գյուղը հիմնվեց 1930–1934 թթ.: Սկզբնական շրջանում կա-  
ռուցվել էր 8 տուն, գյուղն ուներ 40 տնտեսություն՝ 250 շունչ  
բնակչությամբ<sup>12</sup>:

ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը 1935 թ. փետրվարին նա-  
մակ է ստանում նաև Կյուրինի հայրենակցական միության  
կենտրոնական վարչությունից, որով հայտնվում էր, որ  
Խորհրդային Հայաստանում Կյուրին անունով թաղամաս հիմ-  
նելու համար հանգանակել է 15.000 դոլար և ՀՕԿ-ին խնդրում  
են որոշել թաղամասի վայրը: ՀՕԿ-ի կենտրոնական վարչու-  
թյունն այդ ուղղությամբ լուրջ ուսումնասիրություններ է կատա-  
րում և, քանի որ Արևմտյան Հայաստանում Կյուրինը գտնվում  
էր Սեբաստիայի նահանգում, ապա նպատակահարմար է հա-

<sup>11</sup> Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 110–111:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 89, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 798, թ. 6:

մարվում այն հիմնել Նոր Սեբաստիայում, որն արդեն արդյունաբերական ավան էր դարձել<sup>13</sup>:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը մեծ աշխատանք էր տանում հայրենակցական միություններին և սորհրդային Հայաստանի հետ կապելու ուղղությամբ և կազմակերպում էր նրանց մասնակցությունը երկրի վերաշինության գործին: ՀՕԿ-ն իր մասնաճյուղերին հրահանգում էր ավելի սերտ համագործակցել արտասահմանի հայրենակցական միությունների հետ: Միայն ԱՄՆ-ում գոյություն ուներ շուրջ 130 հայրենակցական միություն<sup>14</sup>:

Ուսման վար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ Արշակ Չոպանյանը 1932 թ. լինում է Հայաստանում՝ որպես կաթողիկոսական ընտրությունների Լիոնի պատվիրակ: Վերադարձից հետո դեկտեմբերի 28-ի կուսակցության ժողովում նա զեկուցում է իր այցելության մասին: Ա. Չոպանյանը Ա. Խանջյանի հետ հանդիպման ժամանակ քննարկել էր նաև ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի հարցը և, թեև իր մտահոգությունն էր հայտնել որոշ կոմունիստների ոչ պատշաճ պահվածքի առթիվ, այնուամենայնիվ նշել է. «...Երեւանն մէջ համոզուեցայ, որ ՀՕԿ-ը մէծ դէր կը կատարէ արտասահմանեան Հայրենակցականներու կողմէ՛ ձեռնարկուած ավաններու շինութեան և գաղթականներու տեղաւորման գործին մէջ. յանգած եմ այն եզրակացութեան, թէ պէտք է շարունակենք մեր կողմէ բարոյական այն աջակցութիւնը, զօր ցոյց տուած ենք ներգաղթի եւ շինարարութեան գործին մէջ»<sup>15</sup>:

1934 թ. հուլիսի 30-ին ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը հրավիրում է հայրենակցական միությունների ներկայացուցիչների

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 1093, թ. 4-5:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 192, թ. 15:

<sup>15</sup> Տե՛ս Ղալաջյան Կ., ՀԲԸՄ նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Երևան, 1996, էջ 38-40:

ժողով, որի արդյունքում ստեղծվում է վարչական մարմին՝ Գր. Վարդանյանի նախագահությամբ: Այս ժողովը քննարկում է նոր ավանների շինարարական աշխատանքների ընթացքը և որոշում է ՀՕԿ-ի միջնորդությամբ դիմել ՀՍԽՀ կառավարությանը հայրենադարձության գործընթացը շարունակելու համար<sup>16</sup>:

Երևանի Նոր Մալաթիա, Նոր Արաբկիր, Նուբարաշեն, Յոնջալաղ և Նոր Բութանիա թաղամասերում, ուր տեղավորվել էր հայրենադարձված հայ ազգաբնակչությունը, բացվել էին բժշկական կայաններ, մալարիայով վարակված վայրերում կազմակերպվում էին տրոպիկական կայաններ՝ բուժօգնություն ցույց տալու համար<sup>17</sup>:

1935 թ. հունվարի 13-ին կայացած ՀՕԿ-ի նորընտիր գլխավոր վարչության նիստում որոշվում է սերտացնել կապը հայրենակցական միությունների հետ: Շեշտվում էր, որ սփյուռքի կազմակերպությունները պարտավոր են իրենց նյութական և բարոյական բոլոր գործառույթները կատարել արտասահմանյան ՀՕԿ-երի կենտրոնական վարչությունների միջոցով: Նույն թվականի փետրվարի 7-ին Երևանում հրավիրված հայրենակցական միությունների ներկայացուցիչների ժողովին մասնակցում էին նաև ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահ Գ. Վարդանյանը և նոր ավանների ներկայացուցիչները: Գ. Վարդանյանը հանդես եկավ զեկուցումով՝ նշելով նոր ավանների կառուցման գործում ՀՍԽՀ կառավարության հոգատար վերաբերմունքի մասին, որի ապացույցը ժողկոմխորհին կից Ներգաղթի հանձնաժողով կազմելն էր և հայրենադարձության գործընթացին նպաստելը: ՀՕԿ-ի գլխավոր վարչությունն իր հերթին կազմակերպել էր շինարարական բաժին, որը ղեկավարե-

<sup>16</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 232, ք. 16-19:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 72, ք. 43:

լու էր ավանների շինարարական և տնտեսական բոլոր տեսակի աշխատանքները<sup>18</sup>:

1933 թ. փետրվարին Գ. Վարդանյանն այցելում է Լիոնի շրջան: Լիոնի, Տեսսինի, Վիենի և Սենթ Շամոնի մասնաճյուղերը նրա պատվին ընդունելություն և հրապարակային ժողովներ են կազմակերպում: Հայրենակցական միությունները նույնպես ջերմ ընդունելություն են կազմակերպում Գր. Վարդանյանին և հրավիրում զեկուցելու Հայաստանում կառուցվող ավանների մասին: ՀՕԿ-ի Լիոնի «Ձորագետ» մասնաճյուղը Հայաստանի բնակարանային շինարարությանն աջակցելու համար իր շուրջն էր հավաքել հայրենակցական միություններին<sup>19</sup>:

ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի Դ (1933 թ. ապրիլի 29–30), Ե (1935 թ. մայիսի 30 – հունիսի 3), Զ (1937 թ. հունիսի 25–27) պատգամավորական ժողովներում կրկին կարևորվում է հայրենակցական միությունների հետ կապերի սերտացումը, վերջինների հետ փոխհարաբերությունների հարցում հրահանգվում է պահպանել բարիդրացիական համագործակցությունը և ջանքերն ավելացնել Խորհրդային Հայաստանում բնակարանային շինարարության ընթացքը նոր թափով շարունակելու ուղղությամբ<sup>20</sup>:

1923–1937 թթ. ընթացքում ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը գումարներ է ստացել Նոր Եվդոկիա (47361 ռ., 23 կ.), Նոր Սեբաստիա (27793 ռ., 50 կ.), Նոր Մալաթիա (19818 ռ., 75 կ.), Նոր Խարբերդ (57637 ռ., 45 կ.), Նոր Թոմարգա (38880 ռ.), Նոր Տիգրանակերտ (21760 ռ.), Նոր Կեսարիա (8564 ռ., 74 կ.), Նոր Քղի (37765 ռ., 63 կ.), Նոր Յոզղաթ (9110 ռ.), Նոր Կեմե-

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 236, թ. 10–11:

<sup>19</sup> Տե՛ս «ՀՕԿ» (Օրգան արտասահմանեան Հօկերու), Փարիզ, Ա տարի, թիւ 2, 1933 թ. մարտ, էջ 53:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, թիւ 3, 1933 թ. ապրիլ, էջ 51–63, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 566, թ. 12, գ. 682, թ. 1, 5–7:

րեկ (1395 ռ., 53 կ.), Նոր Բյութանիա, Նոր Կյուրին, Նոր Կամիս, Նոր Թոքատ և այլ հայրենակցական միություններից ու տարբեր անհատներից<sup>21</sup>:

Հայրենակցական միությունները 1930-ական թթ. ՀՕԿ-ի արտասահմանյան կենտրոնական վարչությունների միջոցով Հայաստան են ուղարկել 27 մարդատար և բեռնատար ավտոմեքենա, 79 գրամեքենա և այլ ապրանքներ, որոնք ժողկոմխորհի կարգադրության համաձայն հանձնվել են տարբեր պետական հիմնարկների<sup>22</sup>:

1920-ական թթ. վերջերին և 1930-ական թթ. սկզբներին հիմնադրվում են նաև Նոր Մալաթիա, Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ, Նուբարաշեն, Նոր Քղի և այլ ավաններ<sup>23</sup>:

Սակայն 1930-ական թթ. բռնաճնշումների շրջանում խորհրդային ղեկավարությունը փոխեց իր վերաբերմունքը սփյուռքի հայկական համայնքների և կազմակերպությունների նկատմամբ: Սփյուռքի հետ կապի սառեցման պայմաններում ՀՍԽՀ իշխանությունների համար նրանց գոյությունն այլևս չէր կարևորվում: ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի 1937 թ. նոյեմբերի 13-ի նիստում նշվում է, որ ՀՕԿ-ի անունից հայրենադարձվածների համար կառուցվում էին ավաններ, դպրոցներ, ջրմուղ և այլ կառույցներ, որոնք կոչվում էին հակահեղափոխական, դաշնակցական առաջնորդների և հայ կապիտալիստների անուններով (Նուբար փաշա, Մելքոնյան, Կարապետ Սարյան և ուրիշներ), որ ՀՕԿ-ի ու հայրենակցականների ներկայացուցիչների պատրվակով Հայաստան էին ուղարկվում արտասահմանյան էմիսարներ և գործակալներ՝ հակահեղափոխական, քայքայիչ աշխատանք կատարելու նպատակով: Դրանից

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 686, թ. 8–9:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 230, թ. 52:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 777, թ. 1, գ. 798, թ. 6, 8, 9, 11:

ելնելով՝ ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն ՀԽՍՀ Ժողկոմխորհին առաջարկեց լուծարել ՀՕԿ-ը և Երևանում գտնվող արտասահմանյան հայրենակցականների բոլոր ներկայացուցչությունները: Ինչպես նաև «Բարեգործական» և «Սելքոնյան ֆոնդ» միությունները: Կենտգործկոմին հանձնարարվեց վերանվանել այն ավանները, դպրոցները, հիվանդանոցները և այլ հաստատությունները, «որոնք կրում են հակահեղափոխական կուսակցությունների առաջնորդների և հայ կապիտալիստների անունները»<sup>24</sup>:

ՀՕԿ-ը մեծ ներդրում ունեցավ հայրենակցական միությունների հետ կապեր հաստատելու, համագործակցելու, վերջինների կողմից հանգանակված գումարները Խորհրդային Հայաստան փոխադրելու, նրանց կողմից կառուցվող նոր բնակավայրերի շինարարական աշխատանքները կազմակերպելու և տնօրինելու ուղղությամբ:

**ЛИЛИТ МАКАРЯН**

*кандидат исторических наук*

## **К ВОПРОСУ О СОТРУДНИЧЕСТВЕ КОМИТЕТА ПОМОЩИ АРМЕНИИ И ЗЕМЛЯЧЕСКИХ СОЮЗОВ**

### **РЕЗЮМЕ**

Спасшиеся от геноцида 1915–1922 гг. в Османской империи и нашедшие пристанище за границей армяне желали восстановления своих очагов на территории Советской Армении под их прежними названиями. Для реализации этой программы земля-

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 17, գ. 53, ք. 84, 89–90:



ческие союзы организовывали сбор пожертвований, а собранные средства направляли в Советскую Армению. Управление и организация на месте этих работ была доверена Комитету помощи Армении. Благодаря сотрудничеству комитета и земляческих союзов в Советской Армении были построены десятки новых поселений – Нор Арабкир, Нор Себастья, Нор Кесария, Нор Харберд, Нор Малатия и др.

LILIT MAKARYAN

*PhD in History*

**ON THE PROBLEM OF COOPERATION  
OF ARMENIAN RELIEF COMMITTEE  
WITH UNIONS OF COMPATRIOTS**

**SUMMARY**

Armenians who survived the Genocide in the Ottoman Empire in 1915-1922 and sheltered abroad wanted to construct their homes with their old names in Soviet Armenia. For realizing of these programs unions of compatriots organized donations and collected funds for sending to Soviet Armenia. Organization and management was trusted to Armenian Relief Committee of, which did everything for that. Thanks to cooperation of Armenian Relief Committee and the Patriotic Union of Soviet Armenia has constructed dozens of new settlements: Nor Arabkir, Nor Sebastia, Nor Cesaria, Nor Kharberd, Nor Malatia and etc.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԸ  
1939–1958 ԹԹ.

Հայկական ԽՍՀ Շահումյանի (նախկինում՝ Երևանի գյուղական, Բերիայի անվան) շրջանի վերաբերյալ հրատարակված աշխատանքներ չկան: Սույն ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ու նրա մասնաճյուղերի ֆոնդերում պահվող փաստաթղթերը: Դրանցից ամենակարևորներն են արխիվի՝ ՀԿԿ կենտկոմի (ֆ. 1), ՀՀ կառավարության (ֆ. 113), ՀԽՍՀ զերագույն խորհրդի նախագահության (ֆ. 207) ֆոնդերում պահվող վավերագրերը, որոնք պատկերացում են տալիս շրջանի հիմնադրման, անցած ուղու, Երևանին միավորվելու վերաբերյալ: ՀԿԿ Շահումյանի շրջկոմի (ֆ. 401), Հայկական ԽՍՀ աշխատավորների պատգամավորների Շահումյանի շրջխորհրդի գործկոմի (Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10), ՀԼԿԵՄ Շահումյանի շրջկոմի (ֆ. 1228) ֆոնդերի նյութերը համապարփակ պատկերացում են տալիս շրջանի անցած ուղու վերաբերյալ: Կարևոր են նաև Շահումյանի շրջանի կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունների (ֆ. 1463), շրջանի գյուղական և ավանային խորհուրդների նյութերը (պահվում են Երևանի քաղաքային մասնաճյուղում), կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների հաշվետվությունները (ֆ. 123), որոնք առատ նյութ են մատակարարում շրջանի բնակավայրերի պատմության, բնակչության առօրյա կյանքի վերաբերյալ: Շրջանի վերաբերյալ կարևոր վավերագրեր կան նաև ՀԱԱ այլ ֆոնդերում:

Հրատարակված աղբյուրների շարքում առաջնային դեր ունեն Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի տեղեկագրերը, ուր հրատարակված են նաև շրջանի վերաբերյալ ԳԽ ընդունած իրավական ակտերը:

Շահումյանի շրջանի պատմությունն ուսումնասիրելու համար սկզբնաղբյուրային նշանակություն ունի ՀԿԿ Շահումյանի շրջկոմի և շրջխորհրդի գործկոմի «Նոր Կյանք» պաշտոնաթերթը: Պարբերականը հրատարակվել է 1940 թ. նոյեմբերի 7-ից մինչև 1959 թ. հունիսի 18-ը: Այս տարիների ընթացքում լույս է ընծայվել թերթի 1310 համար: Հիմնադրման օրվանից թերթի պատասխանատու խմբագրի պարտականությունները կատարել է ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի առաջին քարտուղար Քրիստափոր Գալստյանը: 1941–1947 թթ. թերթի խմբագիրը Վաչագան Ենգիբարյանն էր, իսկ 1947–1959 թթ.՝ Հովհաննես Մերկյանը: Շահումյանի շրջանը Երևան քաղաքին միացնելուց հետո թերթի հրատարակությունը դադարեցվել է:

1939 թ. ամռանը Խորհրդային Հայաստանի իշխանությունները որոշում կայացրեցին Երևանին մերձակա գյուղական բնակավայրերի միավորմամբ նոր շրջան կազմակերպելու մասին: Օգոստոսի 28-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն որոշեց նոր կազմավորվող Երևանի գյուղական շրջանում նշանակել կազմակերպչական կոմիտե՝ Քրիստափոր Գալստյան, Արտեմ Գրիգորյան, Ջաքար Հարությունյան կազմով<sup>1</sup>: Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի 1939 թ. սեպտեմբերի 2-ի հրամանագրով վավերացվեց Երևանի քաղաքամերձ գյուղերից գյուղական շրջանի ստեղծումը: Նորաստեղծ շրջանի մեջ մտան Վերին Չարբախ, Ներքին Չարբախ, Ներքին Շենգավիթ, Նոր Կողբ, Նոր Արեշ, Նոր Կյանք, Սովետաշեն, Նոր Մեքաստիա, Նոր Մալաթիա գյուղերը, Երևան քաղաքի Նորք արվարձանը, Հայ-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 19, գ. 39, թ. 115:

կոնսերվորեստի խորհունտեսությունը, ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի անվան կոլտնտեսությունը, ներքին գործերի ժողկոմատի և ուղղիչ աշխատանքային գաղութի քաղաքամերձ տնտեսությունները, զոնալային փորձարարական կայանը, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) բուսաբանական այգու տարածքը, Ղամարլուի շրջանից՝ Շորբուլաղ, Կոտայքի շրջանից՝ Ջրվեժ և Ավան, Ջանգիբասարի շրջանից՝ Նորագավիթ գյուղերը<sup>2</sup>:

Նորաստեղծ շրջանը զբաղվելու էր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, ինչի արդյունքում նախատեսվում էր, որ հանրապետության մայրաքաղաքի ազգաբնակչությունը կապահովվեր թարմ մրգերով, բանջարեղենով ու կաթնամթերքով:

1939 թ. սեպտեմբերի 25-ին Երևան քաղաքին մերձակա Վերին Չարբախ գյուղում տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ Երևանի գյուղական շրջանի նորաստեղծ կուսակցական կազմակերպության անդրանիկ կոնֆերանսը: Իսկ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին, նույն Վերին Չարբախում գումարվեց ՀԿ(բ)Կ Երևանի գյուղական շրջկոմի առաջին պլենումը, որին մասնակցում էր նաև կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար Շմավոն Առուշանյանը: Պլենումը միաձայն շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Քրիստափոր Գալստյանին, երկրորդ քարտուղար՝ Բագրատ Խաչունցին: Ընտրվեց նաև շրջկոմի բյուրո՝ Քրիստափոր Գալստյան, Արտեմ Գրիգորյան (շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի կազմկոմիտեի նախագահը), Ջաքար Հարությունյան, Բագրատ Խաչունց կազմով, բյուրոյի թեկնածու՝

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 207, ց. 60, գ. 35, թ. 56: Ի դեպ, «Հայկական սովետական հանրագիտարանում» (հ. 13, Երևան, 1987, էջ 171) գրված է, թե Երևանի Գյուղական (Շահունյանի) շրջանը կազմավորվել է 1940 թ., ինչը սխալ է:

Հակոբ Մելոյան: Սեպտեմբերի 29-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն վավերացրեց կատարված ընտրությունը<sup>3</sup>: Երջանի կենտրոնը Վերին Չարբախ գյուղն էր:

ՀԿ(Բ)Կ Երևանի գյուղական շրջկոմի առաջին քարտուղար քրիստափոր Գալստյանը փորձառու կուսակցական-վարչական գործիչ էր: Պատահական չէր, որ նրան էր վստահվել նորաստեղծ շրջանը ղեկավարելու պատասխանատու գործը, երբ շրջանի բնակավայրերի զգալի մասը նոր էր ստեղծվում: Զ. Գալստյանը ծնվել էր 1899 թ. Նախիջևանի Վերին Ազա գյուղում: Մինչև ՀԿ(Բ)Կ Երևանի գյուղական շրջկոմի առաջին քարտուղար նշանակվելը տարբեր պատասխանատու ղեկավար պաշտոններ էր վարել. 1926–1927 թթ.՝ Թալինի, 1927–1929 թթ.՝ Ռուզբենդի (Ախուրյան) շրջկոմների առաջին քարտուղար, 1933–1937 թթ.՝ Բասարգեչարի (Վարդենիս), Մարտունու, Ապարանի շրջկոմների երկրորդ քարտուղար, իսկ 1937–1939 թթ. ՀԿ(Բ)Կ կենտկոմի կուսակցական կոլեգիայի անդամ էր<sup>4</sup>: Չզալի է Զ. Գալստյանի ներդրումը շրջանի կազմակերպման, նոր բնակավայրերի հիմնադրման, հարյուրավոր հեկտարներով անմշակ հողերի յուրացման գործում:

Փաստենք, որ ստեղծումից շուրջ մեկ տարի անց Երևանի գյուղական շրջանն անվանափոխվեց: 1940 թ. հունիսի 1-ին շրջանի կենտրոնը Վերին Չարբախից տեղափոխվեց Նոր Սեբաստիա: Համարելով, որ շրջկենտրոնի տեղափոխությունից հետո շրջանին չի համապատասխանում «Երևանի գյուղական շրջան» անվանումը, ՀԿ(Բ)Կ Երևանի գյուղական շրջկոմի բյուրոն 1940 թ. հունիսի 13-ին միջնորդեց ՀԿ(Բ)Կ կենտկոմին և Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդին՝ շրջանն անվանակոչե-

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 1ա, ք. 1-2, ֆ. 1, ց. 19, գ. 40, ք. 154:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 4, ց. 2, գ. 1595, ք. 3-4, «Նոր Կյանք», 28 հունվարի 1947 թ., N 6:

լու ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ, «Ստալինի մերձավորագույն զինակից» Լավրենտի Բերիայի անվամբ՝ «Բերիայի շրջան»: Առաջարկվեց նաև միավորել Նոր Սեբաստիա և Նոր Մալաթիա ավանները և կազմել միացյալ ավանային խորհուրդ՝ կրկին անվանակոչելով Լ. Բերիայի անունով<sup>5</sup>: ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի 1940 թ. հունիսի 15-ի որոշմամբ և Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի 1940 թ. սեպտեմբերի 28-ի հրամանագրերով հաստատվեցին կուսշրջկոմի որոշումները<sup>6</sup>:

Գյուղատնտեսության բնագավառում խորհրդային պետության համար արդիական համարվող նոր հողերի յուրացումը մեծ մասամբ տեղի էր ունենում գյուղացիության պլանային վերաբնակեցումների միջոցով: Հայկական ԽՍՀ-ում նոր այգիներ ստեղծելը համնկավ հանրապետության սակավահող, ոչ բերրի շրջաններից գյուղացիներին ավելի հողառատ, բերրի տարածքներ (մեծամասամբ՝ Արարատյան դաշտ) տեղափոխելու նախկինից շարունակվող պետական քաղաքականության հետ: 1939 թ. դեկտեմբերին շահագործման հանձնվող Դալմայի նոր ջրանցքը հնարավորություն էր տալիս ոռոգելի դարձնել խաղողի և պտղատու այգիների համար պիտանի հարյուրավոր հեկտարներ: Ջրանցքի կառուցմամբ պայմանավորված՝ առաջ էր գալիս ոռոգելի դարձող Երևանին մերձակա (Աշտարակի և Էջմիածնի ճանապարհին) Դալմայի ամայի, «ղըռ» հողերի յուրացման խնդիրը, ուր նախատեսվում էր խաղողի և պտղատու այգիներ հիմնել<sup>7</sup>: Նշյալ տարածքների յուրացման համար թիրախային էին համարվում հատկապես Ապարանի, Մարտունու, Նոր Բայազետի շրջանների լեռնային սակավահող գյուղերի բնակիչները:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 60, գ. 35, ք. 48, ֆ. 401, ց. 1, գ. 33, ք. 210:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 20, գ. 48, ք. 23, ֆ. 207, ց. 60, ք. 44-45:

<sup>7</sup> Դազախեցյան Վ. Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 453-454:

1939–1940 թթ. վերաբնակեցման ճանապարհով Երևանի մերձակայքում հիմնվեցին 4 նոր բնակավայրեր՝ Առաջին գյուղ կամ Ղավիթաշեն, Երկրորդ գյուղ կամ Անաստասավան, Երրորդ գյուղ կամ Սպանդարյան (Սիլիկյան), Չորրորդ գյուղ կամ Հաղթանակ: Վերջինները մտան նորաստեղծ Երևանի գյուղական (այնուհետև՝ Բերիայի անվան) շրջանի մեջ:

Նորաստեղծ, կայացման ուղին բռնող Բերիայի շրջանի բնակավայրերի առօրյա կյանքը խաթարվեց 1941 թ. հունիսի 22-ին սկսված Հայրենական մեծ պատերազմի պատճառով: Պատերազմի առաջին օրերից ռազմաճակատ մեկնեցին շրջանի երիտասարդ բնակիչները: Իսկ թիկունքում մնացածները տարբեր ճանապարհներով օժանդակում էին կարմիրբանակայիններին: Շրջանի բնակիչները տաք հագուստ, գումարներ, տարբեր իրեր էին ուղարկում ռազմի դաշտում կռվողներին, կուլեկտիվ և խորհրդային տնտեսությունները հայրենիքի պաշտպանության ֆոնդին էին հանձնում մսացու անասուններ, յուղ, պանիր, հացահատիկ, միրգ, բանջարեղեն և այլ գյուղատնտեսական մթերքներ: Տեղական ղեկավարները տարբեր ճանապարհներով օժանդակում էին կարմիրբանակայինների ընտանիքներին:

Հայկական ԽՍՀ-ում իրականացվող տարբեր ժրագրերի թվում՝ մինչև պատերազմի ավարտը հետաձգվեց նաև Ղալմաշի գյուղերի շինարարական աշխատանքները: Սա բխում էր ողջ Միությունում շրջանառվող «ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանից: Ելնելով այս հանգամանքից՝ ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի բյուրոն 1941 թ. հուլիսի 26-ին որոշեց կրճատել գյուղերի շինարարության հաստիքներն ու աշխատավարձի ֆոնդը: 1941 թ. աշնանը՝ շինարարական սեզոնի ավարտին, վերաբնակեցված որոշ գյուղերում շինարարությունը գրեթե ավարտվել էր: Ուստի՝

կուսշրջկոմի բյուրոն նոյեմբերի 12-ին վերանայեց շրջանի վերաբնակեցված գյուղերի շինարարության վրա աշխատողների հաստիքները, իսկ կիսատ մնացած շինություններն ավարտելու պատասխանատվությունը դրվեց կոլտնտեսությունների նախագահների վրա՝ առանց վարձատրության<sup>8</sup>:

Նորաստեղծ շրջանի բնակավայրերի համար առաջնային էր դպրոցների շինարարությունը: Ուստի՝ պատերազմական պայմաններում շրջանի բնակավայրերում ընթացող շինարարական աշխատանքների տեսակետից առաջնայնությունը տրվեց դպրոցների կառուցմանը: Հարկ է նշել, որ, նույնիսկ այս դեպքում, դպրոցաշինությունը չափազանց դանդաղ էր ընթանում: Այս տեսակետից նույնանման անմխիթար վիճակում էին նորակառույց գյուղերի մեծ մասը՝ Դավիթաշենը, Նոր Արեշը, Երրորդ գյուղը, Չորրորդ գյուղը և այլն: Նշյալ բնակավայրերում շինարարական աշխատանքներն ուշացումներով ու ձգձգումներով էր ընթանում<sup>9</sup>:

Ի դեպ, 1943 թ. ապրիլի դրությամբ Բերիայի շրջանի մեջ էին մտնում հետևյալ բնակավայրերը՝ Բերիա, Նոր Կյանք, Սովետաշեն, Թաիրովի անվան ավանները (վերջինի մեջ էին մտնում՝ Արարատ տրեստի Թաիրովի անվան 1-ին խորհուրդնտեսությունը, Նորագյուղը, Դալմայում գտնվող կուսակցության 18-րդ համագումարի անվան կոլտնտեսությունը, Ջանգուի փոստը), Նոր Արեշ (վերջինիս մեջ էր մտնում կոնսերվի 1-ին խորհունտեսությունը), Նոր Կողբ (վերջինիս մեջ էր մտնում կալանատան 2-րդ գաղութը), Շորբուլաղ, Նորագավիթ, Շենգավիթ (վերջինիս տարածքում էր գտնվում շրջանի աղյուսիկղմինդրի գործարանը), Ներքին Չարբախ, Անաստասավան, Դավիթաշեն (վերջինիս մեջ էր մտնում Ամո գյուղը), Երրորդ,

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 70, թ. 21-23, 68:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 68, թ. 11, գ. 69, թ. 121-122:



Չորրորդ գյուղերը<sup>10</sup>: Դեռևս 1940 թ. մարտին շրջանից անջատվել և Երևան քաղաքի սահմանագծի մեջ էր ներառվել Նորք բնակավայրը, իսկ սեպտեմբերին՝ Կոտայքի շրջանին փոխանցվել Ավանի և Ջրվեժի գյուղխորհուրդները<sup>11</sup>:

Պատերազմի պատճառով աշխատող երիտասարդ ծեռքերից զրկվելն առանձնապես խաթարեց գյուղատնտեսության զարգացմանն ուղղված քայլերը: Ծանր վիճակում հայտնվեցին նաև Բերիայի շրջանի կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները: Կարմիր բանակ զորակոչվածների թվում էին գյուղատնտեսական աշխատանքներում զգալի փորձ կուտակած մեծ թվով մասնագետներ: Ամենուր աշխատող ծեռքերի կարիք էր զգացվում: Շրջանի նորաստեղծ գյուղերի պարագայում խնդիրը բարդացնում էր այն հանգամանքը, որ իրենց նախկին բնակավայրերում գյուղացիները հմտացել էին անասնապահության, հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի մշակության գործում: Տեական ժամանակում մասնագետ գյուղատնտեսների շարունակական օգնության պայմաններում միայն նրանք կարող էին արդյունավետ կերպով զբաղվել այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ: Սակայն պատերազմական պայմաններում նման հնարավորություն չկար: Արհեստավարժ մասնագետների բացակայությունն ու գյուղացիների անփորձությունը գյուղատնտեսական աշխատանքներում բացթողումների էր հանգեցնում:

Պետությունը և կոմկուսը քարոզում էին, որ թիկունքում արդյունավետ աշխատանքն ու պետության կողմից առաջադրված պարտավորությունների անշեղ կատարումը, տնտեսության զարգացումը կնպաստի Կարմիր բանակի հաջողություններին:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 207, ց. 60, գ. 36, թ. 77-78:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 49, 48:

Ինչպես ամենուր, այնպես էլ Բերիայի շրջանի գյուղերում ռազմադաշտ մեկնած տղամարդկանց ամենօրյա աշխատանքներում փոխարինեցին մեծահասակները, կանայք և դեռահասները: Ղաշտային աշխատանքներին կանանց լիարժեք մասնակցությունն ապահովելու տեսակետից կարևոր էր մանկապարտեզների, մանկամսուրների, մանկական խաղահրապարակների առկայությունը: Հետևելով ՀԿ(Բ)Կ կենտկոմի և Բերիայի շրջկոմի հրահանգներին՝ շրջանի բնակավայրերում մանկապարտեզներ ու մանկամսուրներ էին հիմնվում: Դրանց ստեղծումով մանկահասակ երեխաներ ունեցող կանայք հնարավորություն էին ստանում շարունակել աշխատանքը կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում: Ստացած չնչին աշխօրը գյուղացիներին հնարավորություն էր տալիս պահպանել գոյությունը՝ սպասելով պատերազմի ավարտին:

Բացի ստացիոնոր մանկապարտեզներից՝ գյուղատնտեսական աշխատանքների սկզբից կազմակերպվում էին նաև ամառային մանկահրապարակներ և մանկամսուրներ՝ այդտեղ ընդգրկելով մանկահասակ երեխաներին: Սա տեղի էր ունենում կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների միջոցների հաշվին: Շրջանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում այս խնդրին: Չնայած պատերազմական պայմաններում կանանց աշխատուժը լիարժեք օգտագործելու հրամայականին՝ կոլտնտեսության ղեկավարները հաճախ անուշադրության էին մատնում մանկահրապարակներն ու մանկամսուրները, առանց շրջանի ղեկավարության գիտության փակում դրանք<sup>12</sup>: Գրեթե բոլոր բնակավայրերի դեպքում հանդիպում ենք այս իրողությանը:

Գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցում էին նաև դեռահաս երեխաներն ու երիտասարդները: Գյուղերի

<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 11, թ. 38–41, գ. 12, թ. 41–42:

ԼԿԵՄ (Լենինյան կոմունիստական երիտասարդական միություն, կոմսոմոլ) կազմակերպություններն օժանդակում էին կուլեկտիվ և խորհրդային տնտեսություններին, այդ նպատակով կոմերիտականներից կազմակերպում բարձր բերքի երիտասարդական օղակներ և այլն:

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի գյուղերի բնակչությունն ապրում էր սոցիալական ծանր դրության պայմաններում, ինչը հաճախ հանգեցնում էր հանրային սեփականությունից կատարվող «գողությունների» կամ «յուրացումների»: Այդ տարիներին հանրապետությունում բազում են մանր գողությունների համար (մեկ դույլ կարտոֆիլ, մեկ պարկ ցորեն և այլն) գյուղացիներին բանտարկության դատապարտելու: Կոմկուսի անդամ հանդիսանալու պարագայում կուսակցությունից հեռացնելու դեպքերը: Հաճախ միանշանակ պարզ չէր լինում, թե տվյալ անհատն իրականում մեղավոր է, թե՛ ոչ: Նման «հանցանքներում» մեղադրվում էին գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ղեկավար աշխատողներից շատերը: Օրինակ՝ 1943 թ. փետրվարի 28-ին ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի քյուրոն «պատերազմական պայմաններում հացի շալլումներ ու խարդախություններ կատարելու» մեղադրանքով աշխատանքից ազատեց շրջանի Երրորդ գյուղի գյուղխորհրդի նախագահ Հայրապետ Գրիգորյանին և գործը դատարան ուղարկեց: Վերջինիս «մեղքն» այն էր, որ նախատեսվածից ավել ստացած հացը գյուղի կոլտնտեսության վարչության նախագահի և սկզբնական կուսկազմակերպության քարտուղարի համաձայնությամբ բաշխել էր չքավոր կարմիրբանակայինների ընտանիքներին և կոլտնտեսությունում աշխատողներին<sup>13</sup>:

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 401, ց. 1, գ. 135, թ. 34, գ. 121, թ. 11:

Տարածված երևույթ էր նաև ավելորդ վարչարարությունը: Որպես շարքային կոլտնտեսականներին օժանդակություն՝ շրջանի նույն Երրորդ գյուղի կոլտնտեսության վարչությունը թույլատրել էր մեկ տնամերձից ավելի աշնանացան կատարել՝ փորձելով դրանով լուծել գյուղացիների ծնռան հացի խնդիրը: ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի բյուրոն 1944 թ. նոյեմբերի 26-ին կոլտնտեսային հաջողությունների համար դրվատանքի արժանացրեց կոլտնտեսության վարչության նախագահ Մկրտիչ Պողոսյանին և սկզբնական կուսկազմակերպության քարտուղար Երվանդ Հովհաննիսյանին, իսկ կոլտնտեսականներին ցուցաբերած արտոնության համար նրանց խիստ նախազգուշացում հայտարարեց՝ «կոլխոզային կանոնադրությունը կոպիտ կարգով խախտելու» համար<sup>14</sup>: Նման օրինակները բազում են: Խորհրդային համակարգի բնորոշ տարրը կազմող ավելորդ վարչարարությունը շատ հաճախ հակոտնյա էր հասարակ քաղաքացու շահերին:

Հայրենական պատերազմում ԽՍՀՄ ժողովուրդների տարած հաղթանակում կարևոր ներդրում ունեցան թիկունքի աշխատողները: Բերիայի շրջանի «Նոր Կյանք» պաշտոնաթերթը մանրամասն լուսաբանում էր շրջանի բնակավայրերում եղած աշխատանքային հաջողությունները՝ ներկայացնելով գյուղատնտեսության և անասնապահության մեջ աչքի ընկնող աշխատավորներին: Մեծ հայրենականի ավարտից անմիջապես հետո՝ 1945 թ. մայիսի 23-ին, Բերիայի շրջխորհրդի գործկոմը պատերազմի ընթացքում «գյուղատնտեսական աշխատանքների բնագավառում լավագույն գործունեություն ցուցաբերելու

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 154, թ. 217–218:

համար» գովասանագրերով պարզևատրեց շրջանի 45 աշխատավորների<sup>15</sup>:

Պատերազմի ավարտից հետո ռազմադաշտից հայրենի օջախները վերադարձած գյուղացիները խաղաղ շինարարական աշխատանքի լծվեցին՝ իրենց ներդրումն ունենալով շրջանի զարգացման, նաև հետպատերազմյան Հայաստանի տնտեսության վերականգնման գործում:

Շրջանի հետպատերազմյան տարիների պատմությունը ներկայացնելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև այստեղ հաստատված հայրենադարձների խնդրին: Բանն այն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, ընդառաջելով Հայկական ԽՍՀ ղեկավարության միջնորդությանը և ելնելով Միության համար առաջնային դարձող արտաքին քաղաքական խնդիրներից, ԽՍՀՄ կառավարությունը 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշեց սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպել դեպի Խորհրդային Հայաստան: 1946 թ. հունիսի վերջին հայրենիք ժամանեց հայրենադարձների առաջին խումբը: 1946–1948 թթ. ընթացքում աշխարհի շուրջ մեկուկես տասնյակ երկրներից հայրենադարձվեց շուրջ 90 հազար հայ: Իր ծավալների պատճառով այն ստացել է «Մեծ Հայրենադարձություն» բնորոշումը:

Հանրապետության մյուս շրջանների թվում՝ մի քանի հազար հայրենադարձ ընդունելու և տեղավորելու հրահանգ տրվեց նաև Բերիայի շրջանին: Սահմանված պլանի համաձայն՝ շրջանում հաստատվող հայրենադարձների հիմնական մասը տեղավորվելու էր շրջկենտրոն Բերիայում, Սովետաշենում և Նոր Կյանքում: Այդ նպատակով նշյալ ավաններում նախատեսվում էր 1947 թ. ընթացքում կառուցել 300 տուն: Չնա-

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 24, թ. 3 և շրջ.:

յաժ շրջանի ղեկավարության ջանքերին՝ բնակարանաշինութ-  
յունը դանդաղում էր, իսկ սահմանված վերջնաժամկետները՝  
ժամանակ առ ժամանակ փոփոխվում<sup>16</sup>: 1947–1948 թթ. հայրե-  
նադարձների համար որոշակի թվով բնակարաններ կառուց-  
վեցին նաև շրջանի մյուս բնակավայրերում:

Հետպատերազմյան առաջին տարիներին ևս չափազանց  
անմխիթար վիճակում էին գտնվում շրջանի գյուղերն ու ավան-  
ները: Ասվածն առավելապես վերաբերում էր նորաստեղծ  
բնակավայրերին: Այս իրողության պատճառով այստեղ հաս-  
տատված հայրենադարձների որոշ մասը տեղափոխվեց հան-  
րապետության այլ շրջաններ:

Չնայած շրջանի «Նոր Կյանք» թերթի հետպատերազմյան  
տարիների համարները լեցուն են Ղալմայի գյուղերը՝ Ղալի-  
թաշենը, Անաստասավանը, Սպանդարյանը և Հաղթանակը<sup>17</sup>,  
իբրև «ծաղկող, բարեբեր այգեստաններ» ներկայացնող հրա-  
պարակումներով, իրականում նշյալ 4 բնակավայրերը տնտե-  
սապես վատթար վիճակում էին գտնվում: Ցածր էր գյուղատն-  
տեսական մշակաբույսերի, խաղողի և պտղատու այգիների  
բերքատվությունը, անասնապահությունից ստացվող եկամու-  
տը: Բանն այն է, որ յուրացվող հող վատ որակի էր: Քարքա-  
րոտ հողում հաճախ ջարդվում էր գութանի խոփը: Շատ տեղե-  
րում հիմնաշրջման (պլանտած) խորությունը 50–60 սմ-ի փո-  
խարեն 30–40 սմ էր, որի պատճառով գյուղացիները քլունգնե-  
րով, լոմերով խորացնում էին և միայն դրանից հետո տնկում  
խաղողի որթը: Այլապես այն չէր աճի: 1948 թ. հոկտեմբերի  
2-ին տեղի ունեցած ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջանային կազմակեր-  
պության 6-րդ կոնֆերանսում ներկայացրած հաշվետու զե-

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 27, թ. 44 և շրջ., գ. 28, թ. 7:

<sup>17</sup> Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1947 թ. ապրիլի  
10-ի հրամանագրով Երրորդ գյուղը վերանվանվել էր Սպանդարյան, իսկ  
Չորրորդ գյուղը՝ Հաղթանակ (ՀԱԱ, ֆ. 207, ց. 60, գ. 35, թ. 41):

կուցման մեջ այս մասին բարձրաձայնեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Զ. Գալստյանը<sup>18</sup>: Գյուղերը նույնիսկ դժվարանում էին մարել բնակարանաշինության համար ժամանակին ԽՍՀՄ գյուղբանկի հայկական մասնաճյուղից ստացած վարկերի տուկոսները: Հաշվի առնելով կոլտնտեսությունների անվճարունակությունը՝ 1946 թ. օգոստոսի 17-ին ԽՍՀՄ մինիստրների խորհուրդը որոշել էր հետաձգել նշյալ գյուղերի կոլտնտեսությունների վարկերի վճարումը՝ մինչև 1951 թ. ներառյալ մարելու պայմանով: Սակայն դա էլ չէր օգնել:

ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի և շրջխորհրդի գործկոմի միջնորդության արոյունքում ՀԿ(Բ)Կ կենտկոմը և Հայկական ԽՍՀ մինիստրների խորհուրդը 1949 թ. մի շարք որոշումներ ընդունեցին նշյալ գյուղերի վարկային պարտքերի մարումը հետաձգելու, կոլտնտեսություններն ամրապնդելու վերաբերյալ, սակայն էական փոփոխություններ տեղի չունեցան<sup>19</sup>: Կոլտնտեսությունների ամրապնդմանն ուղղված քայլերը չափազանց դանդաղ էին ընթանում: Այս ասպարեզում իրական տեղաշարժեր կատարվեցին միայն 1960-ական թթ.:

ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի առաջին քարտուղար Քրիստափոր Գալստյանն իր աշխատանքում լճացել էր: Խաթարվել էր նրա հեղինակությունը: 1949 թ. հոկտեմբերի 27-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն Բերիայի շրջկոմի առաջին քարտուղար երաշխավորեց կենտկոմի կուսակցական, արհմիութենական և կոմերիտմիության մարմինների պատասխանատու կազմակերպիչ Դարչո Հովհաննիսյանին<sup>20</sup>: Նույն օրը տեղի ունեցած ՀԿ(Բ)Կ Բերիայի շրջկոմի պլենումն «այլ աշխատանքի անցնելու համար» շրջկոմի առաջին քարտուղարի պարտականու-

<sup>18</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 401, ց. 7, գ. 1, թ. 50-51:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 29, գ. 43, թ. 100, գ. 48, թ. 46, ֆ. 113, ց. 22, գ. 365, թ. 3-4, 23-29, գ. 927, թ. 2-3:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 29, գ. 53, թ. 154:

թյուններից ազատեց Զ. Գալստյանին և նրա փոխարեն ընտրեց Դ. Հովհաննիսյանին<sup>21</sup>: Վերջինս 1941–1948 թթ. Բերիայի շրջանում տարբեր պատասխանատու պաշտոններ էր զբաղեցրել՝ ընդհուպ մինչև շրջկոմի երկրորդ քարտուղար: Իսկ արդեն 1953 թ. մարտին Հայկական ԽՍՀ աշխատավորների պատգամավորների Բերիայի շրջխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում Արտաշես Բաբայանին փոխարինեց Թորգոմ Կիրակոսյանը: Վերջինս երկար տարիներ զբաղեցնում էր գործկոմի գյուղբաժնի վարիչի պաշտոնը:

Այդ ժամանակ Բերիայի շրջանի մեջ էին մտնում Բերիա, Նոր Կյանք, Սովետաշեն, Թաիրով ավանները և Դավիթաշեն, Անաստասավան, Սպանդարյան, Հաղթանակ, Ներքին Չարբախ, Նորագավիթ, Նոր Արեշ, Նոր Կողբ, Շենգավիթ, Շորբուլաղ գյուղերը<sup>22</sup>: 1952 թ. շրջանի Հաղթանակ և Սպանդարյան գյուղերը բնակչության նոր համալրում ստացան. պլանային վերաբնակեցման կարգով Կոտայքի շրջանի Սևաբերդ գյուղից այստեղ տեղափոխվեցին մի քանի տասնյակ ընտանիքներ:

1953 թ. ճակատագրական, շրջադարձային փուլ հանդիսացավ Խորհրդային Միության քաղաքացիների համար: Մարտի 5-ին իր մահկանացուն կնքեց «խորհրդային ժողովուրդների առաջնորդ» Իոսիֆ Ստալինը: ԽՍՀՄ առաջնորդի մահը ոչ միայն վերադասավորումներ առաջ բերեց իշխանության բարձրագույն մարմիններում, այլև հանգեցրեց Ի. Ստալինի անձի պաշտամունքի վերացմանն ու վարչահրամայական համակարգի թուլացմանը: Հունիսի 26-ին ձերբակալվեց ստալինյան բռնաձնշումներն իրականացնող «առանցքային» գործիչներից մեկը՝ ԽՍՀՄ ներքին գործերի մինիստր Լավրենտի Բերիան: Հուլիսի 2-7-ը տեղի ունեցած ԽՄԿԿ կենտկոմի պլենումը

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 401, ց. 7, գ. 67, թ. 21, «Նոր Կյանք», 1949 թ., N 44:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 60, գ. 36, թ. 66–67:



քննարկեց «Բերիայի հանցագործ կուսակցական և հակապետական գործունեության մասին» հարցը: Պլենումի որոշմամբ՝ Լ. Բերիան հեռացվեց կուսակցությունից, իսկ այնուհետև ենթարկվեց պատասխանատվության՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանի վճռով դատապարտվելով գնդակահարության<sup>23</sup>:

Կուսակցության հուլիսյան պլենումի արդյունքները և այդ առնչությամբ կուսկազմակերպություններին ուղղված ԽՄԿԿ կենտկոմի փակ նամակը լայնորեն քննարկվեց միութենական հանրապետություններում, այդ թվում՝ Հայկական ԽՍՀ-ում: Հուլիսի 14-ին գումարված ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի միացյալ պլենումը հավանության արժանացրեց Լ. Բերիայի առնչությամբ ԽՄԿԿ կենտկոմի պլենումի որոշումը: Հուլիսի 15-ին գումարված ՀԿԿ Շահումյանի շրջանային կոմիտեի պլենումի և ակտիվի համատեղ նիստում «Բերիայի հակապարտիական և հակապետական հանցավոր գործողությունների մասին» զեկուցումով հանդես եկավ շրջկոմի առաջին քարտուղար Դ. Հովհաննիսյանը: Ձեկուցման առթիվ ընդունված բանաձևում հավանություն տրվեց Լ. Բերիայի առնչությամբ ԽՄԿԿ կենտկոմի 1953 թ. հուլիսյան պլենումի որոշմանը՝ դատապարտելով «դավաճան Բերիայի ստոր գործողությունները»<sup>24</sup>: Շրջանի սկզբնական կուսկազմակերպությունների «դռնփակ» ժողովներում ևս խստորեն քննադատվեց «ժողովրդի դավաճան» Բերիան:

Լ. Բերիայի ձերբակալումից հետո նրա անունը կրող շրջանում ամենասուր կերպով դատապարտում էին նրան (մինչև իսկ շրջկոմի առաջին քարտուղարի գլխավորությամբ պատվանդանից իջեցրել էին Բերիա ավանում տեղադրված նրա

<sup>23</sup> Տե՛ս Վիրաթյան Ա. Ս., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Երևան, 2001, էջ 201–202:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 401, ց. 11, գ. 2, թ. 86, «Նոր Կյանք», 1953 թ., N 57:

արծանը): Եվ սա այն դեպքում, երբ մինչ այդ հպարտանում էին շրջանը Լ. Բերիայի անունով կոչվելու փաստով: Սա խորհրդային շրջանի հետաքրքիր իրողություններից էր: Հուլիսի 16-ին Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Բերիա ավանը վերանվանվեց Շահումյան ավան, իսկ Բերիայի շրջանը՝ Շահումյանի շրջան<sup>25</sup>:

Հանրապետության գյուղխորհուրդների խոշորացման միջոցառումների շրջանակներում Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի նախագահության 1954 թ. հուլիսի 3-ի հրամանագրով Շահումյանի շրջանում միավորվեցին Հաղթանակի (վերջինի մեջ էին մտնում Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի միացյալ փորձարարական բազայի, Թաիրովի անվան խորհունտեսության և Զաղցր Նուշի խորհունտեսության վարչական տարածքները) և Սպանդարյանի (կենտրոնը՝ Հաղթանակ), Դավիթաշենի (վերջինի մեջ էր մտնում Ամո գյուղը) և Անաստասավանի (կենտրոնը՝ Անաստասավան), Նոր Արեշի և Շորթուլաղի (կենտրոնը՝ Նոր Արեշ), Շենգավիթի և Ներքին Չարբախի (կենտրոնը՝ Շենգավիթ) գյուղական խորհուրդները, իսկ Նոր Կողբի գյուղական խորհուրդը միացվեց Շահումյանի ավանային խորհրդին<sup>26</sup>:

Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի նախագահության 1956 թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ Արտաշատի շրջանից Շահումյանի շրջանին փոխանցվեցին Թագագյուղի, Դուկասավանի, Վերին Նեջրլուի գյուղխորհուրդները և Հրազդանի ավանային խորհուրդը, իսկ էջմիածնի շրջանից՝ Գեղանիստի գյուղխորհուրդը՝ Գեղանիստ և Ազատաշեն գյուղերով և Փարաքարի գյուղխորհրդի մեջ մտնող Արգավանդ գյուղը: Վերջինս մտավ

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 207, ց. 60, գ. 35, թ. 38:

<sup>26</sup> Տե՛ս «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Պերագույն սովետի», 1954 թ., N 5, էջ 5, 20:

Գեղանիստի գյուղխորհրդի մեջ<sup>27</sup>: Այս վարչական փոփոխության արդյունքում շրջանում արտադրվող գյուղատնտեսական մթերքների ծավալը զգալիորեն ավելացավ, ինչին էլ միտված էր կայացված որոշումը:

Երևան քաղաքի ընդարձակման հետևանքով 1950-ական թթ. երկրորդ կեսին Շահումյանի շրջանի որոշ բնակավայրեր (Նոր Արեշ, Նոր Կողբ, Շենգավիթ, ևն) փաստացի մայրաքաղաքի տարածքում էին հայտնվել: Դեռևս 1954 թ. շահագործման էր հանձնվել 375 մ երկարություն և 60,5 մ բարձրություն ունեցող Հրազդանի Մեծ կամուրջը՝ առավել սերտացնելով կապը Երևանի կենտրոնի և հյուսիսային շրջանների միջև: Երևանի հյուսիսային տարածքներում արդյունաբերական և բնակարանային շինարարություն իրականացնելու, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքներով մայրաքաղաքի մատակարարումն առավել բարելավելու նպատակով Հայկական ԽՍՀ ղեկավարությունը նպատակահարմար համարեց հանրապետության Շահումյանի շրջանը վարչատարածքային կարգով ենթարկել Երևանի քաղաքային խորհրդին: 1958 թ. օգոստոսի 21-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունն այս մասին հրամանագիր արձակեց: Երևան քաղաքի շրջագծի մեջ մտան շրջանի մի շարք բնակավայրեր՝ Շահումյան քաղաքատիպ ավանը, Նոր Կողբ, Շենգավիթ, Նոր Արեշ, Անաստասավան, Դավիթաշեն և Ամո գյուղերի տարածքները: Նույն հրամանի համաձայն՝ Երևան քաղաքի շրջագծի մեջ մտան նաև Կոտայքի շրջանի Քանաքեռ քաղաքատիպ ավանը և Ավան գյուղը: Մինչ այդ՝ 1958 թ. օգոստոսի 19-ին, նման որոշում էր կայացրել ՀԿԿ կենտկոմի բյուրոն<sup>28</sup>:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 60, գ. 35, թ. 30:

<sup>28</sup> Տե՛ս «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի», 1958 թ., N 11, էջ 18, ՀԱԱ, ֆ. 1, ց. 38, գ. 30, թ. 34-35:

Շահումյանի շրջանի մեջ մտնող մյուս բնակավայրերն առժամանակ մնացին նախկին կարգավիճակում: Երևան քաղաքի Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 1958 թ. դեկտեմբերի 20-ի նիստում հաստատվեց շրջանի հողային բալանսը: Ըստ այդմ՝ շրջանն ուներ 21.047 հա տարածք, որից 5.625 հա-ն մտնում էր Երևան քաղաքի սահմանագծի մեջ (8 կոլտնտեսություն՝ իրենց տարածքներով), իսկ մնացած 15.422 հա-ն քաղաքին ենթակա տարածություն էր<sup>29</sup>: Ի դեպ, 1959 թ. հունվարին անցկացված համամիութենական մարդահամարի ամփոփ տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքային խորհրդին ենթակա տարածքում բնակվում էր 517.738 մարդ, որից 56.123-ը՝ Շահումյանի շրջանում<sup>30</sup>:

Արդեն 1959 թ. մարտի 27-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն հաստատեց Հայկական ԽՍՀ Պերագույն խորհրդի նախագահության հրամանի նախագիծը՝ Շահումյանի քաղաքային շրջանի որոշ թվով բնակավայրեր Երևան քաղաքի շրջագծի մեջ ներառելու մասին: Ապրիլի 7-ին Պերագույն խորհրդի նախագահության հրապարակած հրամանի համաձայն՝ Շահումյանի քաղաքային շրջանի Նոր Կյանք և Սովետաշեն ավանները, Թազագյուղի, Նորագավիթի, Ներքին Չարբախի, Հաղթանակի, Պեղանիստի և Դուկասավանի գյուղական խորհուրդների տարածքները ևս մտան Երևան քաղաքի սահմանագծի մեջ՝ մնալով Շահումյանի քաղաքային շրջանի կազմում: Ըստ այդմ՝ վերացվեցին նշյալ ավանային և գյուղական խորհուրդները<sup>31</sup>: Շրջանի Հրազդանի ավանային և Վերին Նեջրլուի ու Շորբուլաղի գյուղական խորհուրդներն առժամանակ մնացին նախկին կարգա-

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 65, թ. 252:

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 144, գ. 1, թ. 1-40:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 39, գ. 32, թ. 112, ֆ. 207, ց. 60, գ. 35, թ. 23, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Պերագույն սովետի», 1959 թ., N 5, էջ 5-6:

վիճակում<sup>32</sup>: Հետագայում վարչական տեսակետից Հրազդանն ու Վերին Նեջրլուն անցան Մասիսի շրջանին, իսկ Շորբուլաղը մտավ Երևանի Շահումյանի շրջանի մեջ:

Այսպիսով՝ քսանամյա գոյությունից հետո Հայկական ԽՍՀ Շահումյանի շրջանը միացվեց Երևան քաղաքին: Եթե շրջանի կազմակերպումը հիմնավորվում էր գյուղատնտեսական մթերքներով մայրաքաղաքն ապահովելու տեսանկյունից, ապա Երևանին միացնելն առաջին հերթին պայմանավորված էր քաղաքի ընդլայնմամբ և արդյունաբերական ու բնակարանային շինարարության աճող պահանջներով:

АМО СУКИАСЯН

*кандидат исторических наук*

## ШАУМЯНОВСКИЙ РАЙОН АРМЯНСКОЙ ССР

В 1939—1958 ГОДАХ

### РЕЗЮМЕ

Статья посвящена некоторым вопросам истории Шаумяновского района (ранее Ереванский сельский район) Армянской ССР с момента создания до объединения с Ереваном.

В 1939 году путем объединения сельских населенных пунктов около Еревана был создан новый район с целью обеспечения населения столицы сельскохозяйственными продуктами. В связи с расширением и растущими потребностями промышленного и жилищного строительства столицы, 21

<sup>32</sup> ՀԱՍ, Երևանի քաղաքային մասնաճյուղ, ֆ. 10, ց. 1, գ. 104, ք. 63:

августа 1958 г. решением Президиума Верховного Совета Армянской ССР Шаумяновский район был объединен с Ереваном.

**HAMO SUKIASYAN**  
*PhD in History*

**THE SHAHUMYAN REGION OF ARMENIAN SSR  
IN 1939–1958**

**SUMMARY**

The article is devoted to the brief history of the Shahumyan region (previously Yerevan rural region) of Armenian SSR since its establishment until the unification with Yerevan.

In 1939 a new region was founded by the unification of the rural settlements near Yerevan to supply the population of the capital by agricultural products. On 21 august, 1958 according to the decision of the Presidium of the Supreme Soviet of the Armenian SSR the Shahumyan region was connected with Yerevan, conditioned by the expansion of the city and by the increasing demands of industrial and housing construction.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋՆԵԿԻ՝ ԹԻՎ 447 ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ  
ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

1930-ական թվականների վերջին միջազգային իրադրության կտրուկ սրումը և Երկրորդ աշխարհամարտի սկիզբը նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց խորհրդային ողջ տնտեսությանը, այդ թվում՝ ռազմապաշտպանական արդյունաբերությանը: ԽՍՀՄ տնտեսության մեջ իրականացվող կառուցվածքային բոլոր վերակառուցումներն այսուհետ կրելու էին ռազմամոբիլիզացիոն բնույթ: Այսպես՝ 1939 թ. չորրորդ «հատուկ եռամսյակում» գործադրված Կարմիր բանակի սպառազինման մոբիլիզացիոն առաջին պլանում (ՄՊ-1)<sup>1</sup> հրամայական համարվեց ինչպես երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ամբողջական վերակառուցումը և վերազինումը, այնպես էլ ուրտի ձեռնարկությունների աշխարհագրության ընդլայնումը, նրանում ԽՍՀՄ բոլոր շրջանների ընդգրկումը: Հատուկ մոբիլաններ մշակվեցին և հաստատվեցին նաև հետագա՝ 1940 և 1941 թվականների համար: Դրանք կատարելու համար ռազմական արտադրանքի պատվերներ ստացան ԽՍՀՄ արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերի

<sup>1</sup> *Մոբիլիզացիոն պլան* (ծրագիր, հայտ)՝ ռազմական արտադրանքի և պատվերների հատուկ պլան, որը կազմվում է հնարավոր պատերազմին պատրաստ լինելու նպատակով: Մոբիլիզացիոն պլանով նախատեսված առաջադրանքների կատարումը հիմնականում դրվում էր ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների վրա:

ծեռնարկությունները: Ամբողջ երկրով մեկ ծավալվեց արտադրական գործընթացի արմատական վերակառուցում: «Մինչև պատերազմը ստեղծված ռազմական գործարանների արտադրական հզորությունները պատերազմի տարիներին մի քանի անգամ ուժեղացվեցին խաղաղ արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի հզորություններով: Դրանք դրվեցին ի ժառայություն պաշտպանական, առաջին հերթին՝ մեքենաշինական, էլեկտրատեխնիկական և մետաղամշակման ճյուղերի: Ռազմական ծեռնարկությունների արտադրական կարողությունների ավելացման խոշոր աղբյուր հանդիսացավ սարքավորումների, հատկապես հաստոցների վերաբաշխումը»<sup>2</sup>:

Ջուզահեռ մեծ թափ էր հավաքում քաղաքացիական ծեռնարկությունների փոխանցումը ռազմապաշտպանական արդյունաբերության համակարգին: Գործընթացը պայմանավորված էր նաև նրանով, որ Երկրորդ աշխարհամարտի բռնկումը խորհրդային ղեկավարությանը ստիպեց էլ ավելի խստացնել երկրում կիրառվող «գաղտնիության ռեժիմը»: Ռազմական արդյունաբերության ոլորտում դրա իրականացումն ավելի դյուրին էր, քան քաղաքացիական ծեռնարկություններում: Ռազմական արտադրանք թողարկող գործարաններն աստիճանաբար ընդգրկվեցին «հատուկ ռեժիմային գործարանների» համակարգում և համարակալվեցին: Խորհրդային Հայաստանում նման ծեռնարկությունների շարքում ընգրկվեցին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի Երևանի ինքնաթիռաշինական (թիվ 447) և ԽՍՀՄ ռետինե արդյունաբերության ժողկոմատի Երևանի Կիրովի անվան «Սովպրեն» սինթետիկ կաուչուկի (թիվ 742) գործարանները:

---

<sup>2</sup> Розенфельд С. Я., Клименко К. И., История машиностроения СССР (с первой половины 19-го в. до наших дней), Москва, 1961, с. 364.



Պետք է նշել, որ ռազմական արտադրանքի բնագավառում նախապատերազմյան վերջին տարիներին ԽՍՀՄ-ում առաջնությունը տրվում էր ռազմական ավիաարդյունաբերության ոլորտին: Խնդիր էր դրված ինչպես որակով, այնպես էլ արտադրանքի քանակով չզիջել Արևմուտքին՝ հատկապես Գերմանիայի ավիաարդյունաբերությանը: Վերջինիս միագումար հզորությունը 1939 թ. վերջի դրությամբ երկու անգամ գերազանցում էր խորհրդային ավիաարդյունաբերության համանման ցուցանիշը<sup>3</sup>:

Խորհրդային ղեկավարության կողմից ձեռնարկված անհետաձգելի միջոցառումների շնորհիվ, որոնք ուղղված էին ավիացիոն արդյունաբերության ծավալմանը և ինքնաթիռաշինական նոր գործարանների արագացված շինարարությանը, պատկերը շուտով փոխվեց հոգուտ ԽՍՀՄ-ի: Արդեն Հայրենական պատերազմի սկզբին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության համակարգում գործում էր ավելի քան 100 ձեռնարկություն, 1940 թ. և 1941 թ. առաջին կեսին արտադրվեց ավելի քան 12.000 մարտական ինքնաթիռ<sup>4</sup>:

1939 թ. ամռան-աշնանը ՀամԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոն կարևոր որոշումներ ընդունեց «Ավիաշարժիչ գործարանների զարգացման» և «Գոյություն ունեցող ինքնաթիռաշինական գործարանների վերակառուցման ու նոր գործարանների շինարարության մասին»: Նախատեսվեց մոտակա երկու տարիների ընթացքում կառուցել 9 ինքնաթիռաշինական և 6 ավիամոտորաշինական գործարան, ինչպես նաև վերամասնագիտացնել գործող 9 մեքենաշինական գործարանները: Երկրորդ աշխարհամարտի բռնկումը խորհրդային ղեկավարությանը

<sup>3</sup> Ст'ю Шахурян А. И., Крылья победы, Москва, 1990, էջ 105:

<sup>4</sup> Ст'ю Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), Москва, 2006, էջ 184:

ստիպեց ավելի վճռական միջոցների դիմել. որոշում ընդունվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի տնօրինությանը փոխանցել քաղաքացիական մեքենաշինության և 60 ձեռնարկություն<sup>5</sup>: Ավիացիոն արդյունաբերության ժողկոմատին հանձնարարվեց զարկ տալ ինքնաթիռաշինական ձեռնարկությունների ստեղծմանը Կովկասում ու Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում:

Ի կատարումն ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարականների՝ ՀամԿ(բ)Կ կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը 1940 թ. սեպտեմբերի 19-ին ընդունեցին թիվ 1724/693 «հույժ գաղտնի» որոշումը՝ Երևանում ինքնաթիռաշինական գործարան (թիվ 447) կառուցելու մասին<sup>6</sup>:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, որը ջանքեր էր գործադրել որոշման ընդունման համար, անմիջապես գործի անցավ: ՀԽՍՀ ժողկոմխորհի 1940 թ. սեպտեմբերի 25-ի «հույժ գաղտնի» որոշմամբ հանձնարարվեց թիվ 447 գործարանի շինարարության համար առանձնացնել Երևանի Լեպսեի<sup>7</sup> անվան գործարանի և ՀԽՍՀ անտառժողկոմատի փայտամշակման արտադրամասի տարածքները, ինչպես նաև դրանց միջև ընկած 46 հեկտար հողատարածք<sup>8</sup>: Շինարարությունն իրականացնելու համար թիվ 447 գործարանին փոխանցվեցին

<sup>5</sup> Տե՛ս *История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, Советская экономика накануне и в период Великой Отечественной войны. 1938–1945 гг.*, Москва, 1978, էջ 97:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 136, թ. 16:

<sup>7</sup> Լեպսե Իվան Իվանի (Յան Յանի, 1889–1929)՝ լատիշ խորհրդային կուսակցական, արհմիութենական գործիչ, 1924 թվականից ԽՍՀՄ արհմիութեությունների նախագահության անդամ: Լեպսեի անժամանակ մահվան կապակցությամբ Համառուաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն 1929 թ. հոկտեմբերին առաջարկեց նրա անունը հավերժացնելու նպատակով անվանակոչել ԽՍՀՄ բնակավայրերի փողոցներ և հրապարակներ, ինչպես նաև նրա անունով կոչել միութենական գործարաններ, ձեռնարկություններ և այլն:

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 129, թ. 1:

այդ տարածքում գտնվող բոլոր շենքերն ու շինությունները, մասնավորապես՝ Լեպսեի անվան գործարանը և փայտամշակման արտադրամասը, լաքերի և ներկերի գործարանը, տետրերի և երաժշտական գործիքների ֆաբրիկաները, Հայմարմար միավորման կիսակառույց շենքը և այլն: Կառավարության որոշումով շինարարական աշխատանքների իրականացումը հանձնարարվեց «Կաուչուկշին» տրեստին, որը փոխանցվեց ՀԽՍՀ կառավարության անմիջական ենթակայությանը: Գործարանի ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների համար առանձնացվեցին բնակելի շենքեր և տարածքներ: Կառավարության որոշման մեկ այլ կետով՝ ՀԽՍՀ Հայպետնախագիծ ձեռնարկությանը հանձնարարվեց «Լծել բոլոր ուժերը հույժ կարևոր այդ գործին»: Տրվեցին նաև այլ հանձնարարականներ<sup>9</sup>:

ՀԽՍՀ կառավարության 1940 թ. սեպտեմբերի 26-ի որոշումով «Կաուչուկշին» տրեստի դղերի վերանորոգման արհեստանոցը և Հայտրանսպորտի ավտոդպրոցի նորակառույց շենքը 1940 թ. հոկտեմբերից փոխանցվելու էին թիվ 447 գործարանին<sup>10</sup>: Որոշումները ստորագրել էր ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Արամ Փիրուզյանը:

Թիվ 447 գործարանի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացվելու էին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ: Շուտով Երևան ժամանեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովը, որը, ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 24-ի թիվ 505 «հույժ գաղտնի» հրամանի համաձայն, ուսումնասիրելու էր

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 1 և շրջ.:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 130, թ. 1:

Հայաստանի իշխանությունների կողմից գործարանի կառուցման համար նախատեսված տարածքները:

Ուսումնասիրություններն ավարտելուց հետո գործարանի բրիգադի պետ և նախագծի գլխավոր ինժեներ Ն. Ա. Սվայկինն ու նրա տեղակալ Ի. Գ. Ֆեդիչևը 1940 թ. հոկտեմբերի 15-ին արդյունքների մասին ընդարձակ զեկուցագրեր ներկայացրեցին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմ Ա. Ի. Շախուրինին և ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Ս. Փիրուզյանին: Ձեկուցագրերում մասնավորապես նշվեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է հետևյալ տարածքները. 1-ին՝ Վերին Չարբախ գյուղը և այն դաշտը, որը Վերին Չարբախից ձգվում է մինչև Ներքին Չարբախ և սահմանազատվում Ջանգու գետով ու թեքությամբ, որն իր հերթին ձգվում է Վերին Չարբախի և Ներքին Չարբախի միջև, 2-րդ՝ «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածքից մինչև Վերին Չարբախ գյուղը, 3-րդ՝ այն տարածքը, որը ձգվում է Երևան-Թբիլիսի երկաթգծի երկայնքով՝ մի կողմից սահմանազատված տրամվայի գծով, որը գնում է դեպի «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածք, մյուս կողմում գոյություն ունեցող օդանավակայանն էր:

Քննարկումների արդյունքում հանձնաժողովը հավանության արժանացրեց այն տարածքները, որոնք ընկած էին «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածքի և Ներքին Չարբախ գյուղի միջև՝ ներառյալ Վերին Չարբախ գյուղը: Ընդ որում՝ արտադրական տարածքի տակ էին ընկնում ինչպես նշված հողատարածքը, այնպես էլ «Սովպրեն» շինմիավորման և Վերին Չարբախի բնակելի տարածքների միջև ընկած քաղաքային շերտը, իսկ թռիչքային դաշտի տարածքը գտնվում էր Վերին և Ներքին Չարբախի բնակելի տարածքների միջև:

Ձեկուցագրում նշվում է նաև գործարանի կառուցման համար անհրաժեշտ տարածքների ընհանուր չափի մասին.

ա) արտադրական տարածքի համար հատկացվող հողեր քաղաքային հողերից՝ 105,4 հեկտար, բ) թռիչքային դաշտի համար հատկացվող հողատարածք Վերին Չարբախ գյուղից՝ 311,8 հեկտար, այդ թվում՝ ծառատնկարաններ և այգիներ՝ 74,04 հեկտար, գյուղացիական տներ և տնամերձ հողատարածքներ՝ 65,86 հեկտար, վարելահողեր՝ 147,9 հեկտար, այլ հողատարածքներ (ոչ գյուղատնտեսական նշանակության)՝ 24,0 հեկտար, Ներքին Չարբախ գյուղից՝ 14,0 հեկտար, այդ թվում՝ ծառատնկարաններ և այգիներ՝ 1,0 հեկտար, գյուղացիական տնակներ և տնամերձ հողեր՝ 1,40 հեկտար, վարելահողեր՝ 11,6 հեկտար: Ջեկուցագրի վերջում խնդրվում էր շինարարությունն իրականացնելու համար կառավարության որոշումով ձևակերպել նշված հողատարածքների օտարումը թիվ 447 գործարանի կառուցման համար<sup>11</sup>:

Նույն օրը՝ հոկտեմբերի 15-ին, ՀԽՍՀ ժողկոմխորից որոշեց գործարանի կառուցման համար հատկացնել հանձնաժողովի ընտրած հողատարածքները՝ ընդհանուր առմամբ 431,2 հեկտար, որից 105,4 հեկտարը՝ քաղաքային հողատարածք, 311,8 հեկտարը՝ Վերին Չարբախի հողատարածք և 14,0 հեկտարը՝ Ներքին Չարբախի<sup>12</sup>: Որոշման մասին Ա. Փիրուզյանի ստորագրությամբ զեկուցագիր ուղղարկվեց ԽՍՀՄ ժողկոմխորի նախագահ Վ. Մ. Մոլոտովին<sup>13</sup>: Նշենք, որ թիվ 447 գործարանի կառուցման աշխատանքների ընթացքի մասին ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը, ով «ամեն օր լինում էր շինարարական հրապարակում, տեղում լուծում բազմաթիվ հարցեր»<sup>14</sup>, 1941 թ. փետրվար-հունիս ամ-

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 136, ք. 4, նաև՝ նույն տեղում, ք. 10–11:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 15:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 16 և շրջ.:

<sup>14</sup> Ավետիսյան Հ. և ուրիշ., Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, Երևան, 2000, էջ 47:

իսներին կանոնավոր՝ ամիսը մեկ, երբեմն մի քանի անգամ, զեկուցագրերով տեղեկացնում էր անձամբ Ի. Ստալինին<sup>15</sup>։ Դրանցից մեկում Գ. Հարությունյանը հայտնում էր, որ նախատեսվում է գործարանի կառուցման աշխատանքներն ավարտել 1942 թ. փետրվար ամսին<sup>16</sup>։

Շուտով Ուկրաինայի հարավից Հայաստան տեղափոխվեցին ինքնաթիռաշինական գործարանի համար անհրաժեշտ սարքավորումներ, դրանք տեղադրելու համար ժամանեցին Միության ավիացիոն գործարանների որակյալ մասնագետներ և, ինչպես իր հուշերում վկայում է ՀԽՍՀ պետական-կուսակցական գործիչ Ե. Ասժատրյանը, գործարանում արագ կազմակերպվեց արտադրությունը։ Բայց, «ելնելով սկսված պատերազմի պայմաններից, կենտրոնական մարմինները որոշում են սառեցնել գործարանի շինարարությունը»<sup>17</sup>։

Պետք է նշել, որ Հայրենական պատերազմի սկսվելուց հետո ԽՍՀՄ կառավարության որոշումներով երկրում ընդհատվեց արդյունաբերական հարյուրավոր խոշոր ձեռնարկությունների շինարարությունը, Հայաստանում դրանց թիվը հասավ 30-ի։ Վերջիններիս շինարարության համար նախատեսված աշխատուժը, ֆինանսական և նյութական միջոցներն ուղղվեցին ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնմանը։

Այդուհանդերձ, արդեն 1942 թ. աշնանից գործարանում սկսեցին իրականացվել մարտերում վնասված ռազմական ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ։ Պետք է նշել, որ մարտական ինքնաթիռների վերանորոգման որոշակի փորձ Հայաստանն ուներ դեռևս Առաջին Հանրապետության տարի-

<sup>15</sup> Տե՛ս ԳԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 65, թ. 52-58, 63-71, 77-82, 89-94, 101, 102 և այլն։

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 57-58։

<sup>17</sup> Ասժատրյան Ե., 20-րդ դար. Հայաստանի կառուցման ճանապարհին (հուշեր), գիրք առաջին, Երևան, 2004, էջ 102։

ներից, երբ ազգային բանակում ձևավորվել և գործում էր տարբեր մակնիշի 12 ինքնաթիռներից բաղկացած հայկական ավիաջոկատ: Վնասված մարտական ինքնաթիռների վերանորոգումն իրականացնելու համար այն ժամանակ անգամ կազմակերպվեց հատուկ արհեստանոց<sup>18</sup>: Մինչև 1942 թ. ավարտը թիվ 447 գործարանում վերանորոգվեց 36 միավոր ինքնաթիռ: 1942 թ. համեմատությամբ՝ 1943 թ. գործարանն առաջադրանքները գերակատարեց 46,4 տոկոսով<sup>19</sup>:

Այս տպավորիչ արդյունքների շնորհիվ Երևանի թիվ 447 գործարանը շուտով հայտնվեց ԽՍՀՄ դեկավարության ուշադրության կենտրոնում: 1943 թ. դեկտեմբերի 1-ին լույս տեսավ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմ Ա. Ի. Շախուրիների թիվ 716 գաղտնի հրամանը<sup>20</sup>:

Ի կատարումն ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1943 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 4290 «գաղտնի» որոշման՝ Շախուրիները հրամայում էր.

1. Թիվ 447 գործարանում կազմակերպել Յակ-3 ինքնաթիռների ագրեգատների արտադրությունը և, առաջին հերթին, թիվ 31 գործարանի (գտնվում էր Թբիլիսիում – Կ. Խ.) համար պատրաստել ինքնաթիռների թևեր: Նկատի ունենալ, որ հետագայում թիվ 447 գործարանն անցնելու է ամբողջական կործանիչների ինքնուրույն թողարկմանը՝ թիվ 31 գործարանի հետ կոոպերացիայի միջոցով:

---

<sup>18</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Երևան, 2002, էջ 35:

<sup>19</sup> Տե՛ս Անանյան Լ. Ջ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1982, էջ 30:

<sup>20</sup> Հիմնախնդրի լուսաբանման համար կարևոր սույն նորահայտ արխիվային փաստաթուղթը նպատակահարմար գտանք ներկայացնել գրեթե ամբողջությամբ:

2. Թիվ 447 գործարանի բանվորներին և ինժեներական-տեխնիկական անձնակազմին դասել վճարման 2-րդ հատուկ կարգին:

3. Թիվ 292 գործարանի (գտնվում էր Մոսկվայում – Կ. Խ.) տնօրեն Լևինին պարտավորեցնել թիվ 447 գործարանին տրամադրել տեխնիկական փաստաթղթեր և գծագրեր՝ Յակ-3 ինքնաթիռների ագրեգատների արտադրությունը կազմակերպելու համար:

4. Կապիտալ աշխատանքների ծավալը թիվ 447 գործարանում 1943 թ. չորրորդ եռամսյակի և 1944 թ. առաջին կիսամյակի համար սահմանել 12 մլն ռուբլի:

5. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ Վիզիրյանին՝ թիվ 447 գործարանին հատկացնել շինանյութեր և անհրաժեշտ սարքավորումներ:

6. ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի սարքավորումների գլխավոր վարչության պետ ընկ. Գրիշինին և պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի արտասահմանյան բաժնի պետ ընկ. Ռոմանովին՝ վերահսկել, որպեսզի 1943 թ. չորրորդ եռամսյակում և 1944 թ. առաջին եռամսյակում թիվ 447 գործարանին տրամադրվեն արտասահմանից ներմուծվող դարբնոցամամլիչ և մետաղակտրիչ սարքավորումներ՝ ընդհանուր հաշվով 250 միավոր, լաբորատոր սարքավորումներ՝ 250 հազար, գործիքներ՝ 400 հազար ռուբլի չափով, ինչպես նաև Անդրկովկասին հատկացվող ընդհանուր քանակից 10 բեռնատար ավտոմեքենա:

7. ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի էլեկտրականություն մատակարարող գլխավոր վարչության պետ ընկ. Տեր-Եղիազարովային՝ թիվ 447 գործարանին հոսանք մատակարարելու համար հատկացնել անհրաժեշտ սարքավորումներ:



8. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ ընկ. Սանդլերին՝ 1943 թ. չորրորդ եռամսյակում գործարանում արտադրությունը սկսելու համար հատկացնել անհրաժեշտ նյութեր:

9. Թիվ 84 գործարանի (գտնվելու վայրը պարզել չի հաջողվել – Կ. Խ.) տնօրեն ընկ. Յարունինին՝ ս. թ. դեկտեմբերին թիվ 447 գործարանին տրամադրել մեկ Լի-2 ինքնաթիռ:

10. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ ընկ. Շորինին՝ 1943 թ. չորրորդ եռամսյակից թիվ 447 գործարանի աշխատողներին հատկացնել լրացուցիչ սնունդ:

11. Հիդրոավիաարդի պետ ընկ. Շտեյնբերգին՝ ապահովել գործարանի շինարարությունը տեխնիկական փաստաթղթերով, ինչպես նաև կազմավորել հատուկ բրիգադ՝ նախագիծը յուրացնելու նպատակով թիվ 447 գործարանին տեխնիկական այլ օգնություն ցույց տալու համար:

12. Թույլատրել թիվ 447 գործարանին Ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի առաջին գլխավոր վարչությանը կից կազմակերպել մշտական ներկայացուցչություն՝ երկու հաստիքային աշխատակցով:

13. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ ընկ. Տարասովին՝ թիվ 447 գործարանի արտադրությունը շտապ կազմակերպելու նպատակով հատկացնել բարձր որակավորում ունեցող բանվորական ուժ<sup>21</sup>:

Նշենք, որ ԽՍՀՄ Պաշտպանության պետկոմի 1943 թ. հոկտեմբերի 8-ի որոշումով՝ ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմ Անաստաս Միկոյանին կարգադրվեց թիվ 447 գործարանին հատկացնել արտասահմանից ներմուծվող մետաղակտրիչ և դարբնոցամամլիչ, լաբորատոր սարքավորումներ ու գործիքներ, բեռնատար ավտոմեքենաներ և այլն:

<sup>21</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 57, թ. 180 և շրջ.:

Պաշտպանության պետկոմը հանձնարարական էր իջեցնում նաև ՀԽՍՀ ժողկոմխորհին: Համաձայն դրա՝ վերջինս պարտավոր էր կապիտալ շինարարություններն (գործարանի արդյունաբերական մասնաշենքերի 60.000 մ<sup>2</sup> և բնակելի մասնաշենքի 8.000 մ<sup>2</sup> տարածքի վրա) ավարտել մինչև 1944 թ. կեսերը:

Նույն որոշմամբ ԽՍՀՄ ժողկոմխորհի աշխատանքային ռեզերվների վարչության պետ Մոսկատովին հանձնարարվեց 1943 թ. չորրորդ եռամսյակում թիվ 447 գործարանին կից կազմակերպել արհեստագործական ուսումնարան՝ 800 սովորողով, և ուսումնարանի ողջ թողարկումն ամրագրել գործարանին: Պաշտպանության պետկոմի որոշումով հանձնարարականներ ստացան նաև այլ գերատեսչությունների ղեկավարները: Մասնավորապես՝ ԽՍՀՄ առևտրի ժողկոմ կուրբիմովին հանձնարարվեց թիվ 447 գործարանի ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների մթերային մատակարարումը հավասարեցնել հատուկ ցուցակով մատակարարվող պաշտպանական ձեռնարկությունների մատակարարումների չափին և այլն<sup>22</sup>:

Խորհրդային ղեկավարության այս համալիր որոշումները (չէր անտեսվում անգամ գործարանի համար որակյալ երիտասարդ կադրերի պատրաստումը և աշխատողների մթերային հատուկ մատակարարումը), որոնց ընդունման գործում մեծ էր նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարության դերը, ոգևորությամբ ընդունվեցին Երևանում: Գործարանի աշխատողները՝ բանվորից մինչև տնօրեն, լծվեցին անդուլ աշխատանքի: Արդեն 1943 թ. վերջին գործարանը տվեց առաջին արտադրանքը՝ Յակ-3 կործանիչ ինքնաթիռների պահեստամասեր,

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 180 շրջ.:

թևեր և շասսիներ (գետնի վրա ինքնաթիռի շարժվելու անվահամակարգ):

Եթե սկզբնական շրջանում գործարանի արտադրանքն ուղարկվում էր Թբիլիսի՝ ինքնաթիռների վերջնական հավաքման համար, ապա նախատեսվում էր, որ 1945 թվականի առաջին կիսամյակից գործարանն անցնելու էր պատրաստի ինքնաթիռների արտադրմանը: Այդ մասին ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց 1944 թ. հունիսի 20-ին: Գործարանի տնօրեն Նաջարյանին<sup>23</sup> և գլխավոր ինժեներ Լիտվինենկոյին հանձնարարվեց 1944 թ. վերջին ավարտին հասցնել նոր արտադրամասերի կառուցումը: Հանձնարարվում է նաև ավելացնել բանվորների և ինժեներատեխնիկական անձնակազմի քանակը, կազմակերպել նրանց վերապատրաստումը, արտադրության մեջ ներգրավել գործարանին կից արհեստագործական ուսումնարանի շրջանավարտներին, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետների միութենական ինքնաթիռաշինական այլ գործարաններից և այլն<sup>24</sup>:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում արդեն Հայրենական պատերազմի ավարտական փուլում Երևանի թիվ 447 գործարանում կազմակերպվեց Ուտ-2Ս ուսումնամարզական թեթև ինքնաթիռների սերիական արտադրություն<sup>25</sup>:

---

<sup>23</sup> Հետաքրքիր է նշել, որ Նաջարյանից առաջ գործարանի տնօրենի պաշտոնում 1943–1944 թթ. միմյանց փոխարինել են Փափախյանը, Խաչատրյանը և Աթոյանը՝ յուրաքանչյուրը պաշտոնավարելով ընդամենը մի քանի ամիս:

<sup>24</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сборник документов и материалов, Ереван, 1975, էջ 280–281:

<sup>25</sup> Տե՛ս Մանուկյան Գ. Գ., Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Անժ պատերազմի հաղթանակում (1941–1945 թթ.), Երևան, 2000, էջ 65: Նաև՝ ԳԱԱ, ֆ. 313, ց. 1, գ. 8, ք. 103–104:

Վնասված ռազմական ինքնաթիռների վերանորոգումից, Յակ-3 կործանիչների պահեստամասերի, թևերի և շասսիների արտադրությունից բացի, թիվ 447 գործարանը պատերազմի տարիներին մասնակցեց նաև հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև կենտրոնական մարմինների կողմից դրված զինամթերքի, ռազմաճակատի համար այլ արտադրանքի պատվերների կատարմանը: Պատերազմի ընթացքում գործարանում արտադրվեցին ՍՏՄ, ՅՄ-5Մ և ՏՄՃ-Ե տեսակի հակատանկային, ինչպես նաև ՈՂՄ տեսակի հակահետևակային ականների պատյաններ, Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում արտադրվող 82 մմ բեկորային ականների համար հատուկ դարսելու արկղեր, ռազմական սայլակառքեր, բեռնատար սահնակներ և այլն<sup>26</sup>:

Պատերազմի ավարտից հետո Երևանի թիվ 447 գործարանը վերափոխվեց էլեկտրամեքենաշինական գործարանի, ներդրումներ կատարվեցին շինարարությունն ավարտին հասցնելու համար: Գործարանը վերամասնագիտացվեց գեներատորների, ուժային տրանսֆորմատորների, շարժական էլեկտրակայանների արտադրության գործում: Տարիների ընթացքում այն դարձավ ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի կարևոր ձեռնարկություններից մեկը:

---

<sup>26</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 8, գ. 75, թ. 3:

**ИЗ ИСТОРИИ ОСНОВАНИЯ И ЭКСПЛУАТАЦИИ  
ЗАВОДА № 447 – ПЕРВЕНЦА ВОЕННООБОРОННОЙ  
ПРОМЫШЛЕННОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ****РЕЗЮМЕ**

С началом Второй мировой войны высшее руководство СССР стало уделять особое внимание развитию советской авиационной промышленности и военного самолетостроения. Вскоре перед советским руководством стал вопрос о необходимости срочной реконструкции и переоборудования старых предприятий, а также основания новых, расширения географии самолетостроительных заводов, их строительства в отдаленных южных районах страны, в частности на Кавказе и в Закавказье.

По заданию политбюро ЦК ВКП(б) правительство СССР 19-го сентября 1940 г. принимает решение (совершенно секретное) о строительстве самолетостроительного завода в Советской Армении – в Ереване. Исходя из режима секретности, ужесточенного в СССР в связи с началом войны, заводу присваивается № 447 – как особо секретному предприятию военнооборонной промышленности.

Работы по планированию и строительству завода № 447 осуществлялись под особым руководством и надзором Наркомата авиационной промышленности СССР. О ходе строительства лично руководителю страны И. Сталину еженедельно докладывал первый секретарь ЦК компартии Армении Г. Арутюнян.

Строительство завода, которое должно было быть завершено к февралю 1942 года, в связи с началом Великой Отечественной войны было временно отменено. Однако уже с середины 1942 г. работы по строительству завода были возобновлены, а уже с осени – на заводе ремонтировались неисправные военные самолеты и истребители.

Согласно постановлению Государственного комитета обороны СССР от 8-го октября 1943 г. и приказу наркома авиационной промышленности СССР А. Шагурина от 1-го декабря 1943 г. – Ереванский завод № 447, в кооперации с Тбилиским заводом № 31, в кратчайшие сроки освоил производство шасси, крыльев и других агрегатов для советских истребителей Як-3. В конце войны на заводе было организовано серийное производство учебно-тренировочных легких самолетов Ут-2М.

После окончания войны завод № 447 был перепрофилирован в завод Армэлектромаш и в скором времени стал одним из важных предприятий советского военно-промышленного комплекса.

FROM THE HISTORY OF FORMATION AND OPERATING  
OF THE PLANT NUMBER 447 – THE FIRSTBORN OF  
DEFENCE (MILITARY) INDUSTRY OF SOVIET ARMENIA

SUMMARY

With the start of World War II the Soviet Union's leadership started to pay closer attention to the development of the Soviet aircraft industry and military aircraft construction. The Soviets were in urgent need to renovate and restore their old plants, as well as to establish new ones, expanding the geography of aircraft manufacturing plants. The Soviet leadership particularly emphasized the importance of aircraft plant construction in the remote south of the country; in the Caucasus and in Transcaucasia.

On the direct instructions of the Politburo of the Central Committee of the Communist Party, the government of the Soviet Union on September 19, 1940 decided (in secret) on the construction of aircraft manufacturing plant in Soviet Armenia - in Yerevan. On the basis of secrecy associated with the beginning of World War II, the factory was assigned number 447, as was the case at the time with particularly secret enterprise defense (military) industries.

The planning and construction of the plant № 447 were carried out under the guidance and supervision of special People's Commissariat of Aviation Industry of the USSR. During the course of the plant construction, the first secretary of the Armenian

Communist Party G. Harutyunyan personally did make weekly reports to the head of the Soviet Union Joseph Stalin.

Construction of the plant, which was planned to be completed by February of 1942, in close relation with the start of World War II was temporarily suspended due to unknown reasons. However, beginning about mid 1942 construction work of the plant was restarted, and by the fall of the same year the factory had already began to repair its first defective or damaged military planes and fighter jets.

In pursuance to secret decree from the State Committee of Defense, made on October 8, 1943, and an added order from the aviation industry of the USSR People's Commissar of A. Shakhurin from December 1, 1943, the Yerevan factory № 447, in close cooperation with the Tbilisi plant № 31, in very short time began the production of landing gears, wings and other components for the Soviet Yak-3. By the end of the war mass production of the training light aircraft Ut-2M had effectively been organized at the mentioned factory.

After the war, the plant № 447 was restructured to Armelectromash factory and soon became one of the most important companies of the Soviet military-industrial complex.



ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ 1970 Թ.  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԿՅԱԼՆԵՐԻ

Երկրորդ աշխարհամարտն ու Հայրենական Մեծ պատե-  
րազմը նոր իրողությունների առաջ կանգնեցրեց ԽՍՀՄ-ում  
բնակվող ժողովուրդներին, այդ թվում՝ հայությանը: Նախապա-  
տերազմյան՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով՝ ԽՍՀՄ հայ  
բնակչությունը կազմում էր 2.152.860 մարդ (ԽՍՀՄ ամբողջ  
բնակչության 1,26%-ը): Այս ցուցանիշը ԽՍՀՄ էթնիկ խմբերի-  
մեջ թվաքանակով 10-րդն էր: Վերոհիշյալ մարդահամարի  
տվյալներով՝ Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր 1.061.997 հայ  
կամ ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը  
49,33%-ը, իսկ մյուս միութենական հանրապետություններում  
միասին՝ 1.090.863 հայ կամ 50,67%-ը<sup>1</sup>:

Տարբեր հաշվարկներով Մեծ Հայրենականին ԽՍՀՄ-ից  
մասնակցած շուրջ 500.000 հայերից մոտ 200.000-ը ներկայաց-  
նում էին միութենական հանրապետությունները, 300.000-ը՝  
Հայկական ԽՍՀ-ն<sup>2</sup>:

Հայության վիթխարի ներդրումը Մեծ Հայրենականում,  
մարդկային կորուստները (շուրջ 200.000), սովը, համաճարակ-  
ները, զանգվածային աքսորը Ղրիմից և Հյուսիսային Կովկասից  
դեպի Միջին Ասիա, Ալթայ, Սիբիր, նկատելի փոփոխություններ

<sup>1</sup> Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետու-  
թյուններում 1917–1941 թթ., Երևան, 2011, էջ 94:

<sup>2</sup> Տե՛ս Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной  
войне (1941–1945), Ереван, 2010, էջ 45:

մտցրեցին միութենական հանրապետությունների և առանձին երկրամասերի հայության թվաքանակի ու տեղաբաշխման մեջ:

Պատերազմի հետևանքները ԽՍՀՄ-ի համար այնքան ծանր էին (ժողովրդագրական պատկերի բարդ իրավիճակ, սով, ավերված տնտեսություն և այլն), որ թույլ չտվեցին հերթական մարդահամարն անցկացնել 1949 թվականին՝ նախորդ մարդահամարից տաս տարի անց:

Հետպատերազմյան պռաջին Համամիութենական մարդահամարն անցկացվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1958 թ. մայիսի 5-ի թիվ 480 որոշման համաձայն:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները կարևոր նշանակություն ունեին, քանի որ առաջինն էին հետպատերազմյան շրջանում և բնակչության թվաքանակի վերաբերյալ նոր տվյալներ արձանագրեցին<sup>3</sup>:

Մարդահամարի անցկացումը 1959 թ. պայմանավորված էր ոչ միայն տնտեսական և կազմակերպական խնդիրներով, որոնք առկա էին հետպատերազմյան տարիներին, այլ նաև նպատակ էին հետապնդում թաքցնել, ի ցույց չդնել պատերազմում այն հսկայական մարդկային կորուստները, որը կարող էր արձանագրել մարդահամարը: Ակնհայտ է, որ, ելնելով նախորդ մարդահամարների քաղաքական նշանակության փորձից, նոր մարդահամարի արդյունքները դժվար թե կարելի լինեք օգտագործել քարոզչական նպատակներով, ուստիև Ստալինը մերժել էր մարդահամարի անցկացումը 1949 թվականին:

Մարդկային հսկայական կորուստներից, սեռատարիքային կազմի փոփոխություններից բացի, նկատելի փոփոխություններ էին կրել նաև ԽՍՀՄ սահմանները: Ուկրաինական ԽՍՀ-ին էին միացվել Արևմտյան Ուկրաինան և Անդրկարպատյան Ուկ-

<sup>3</sup> Տե՛ս [http://demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_59.php?reg=8](http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8)

րաինան, Բելոռուսական ԽՍՀ-ին՝ Արևմտյան Բելոռուսիան: Դեռևս 1940 թ. ԽՍՀՄ կազմի մեջ էին մտցվել մերձբալթյան հանրապետությունները՝ կազմավորելով Լիտվական, Լատվիական և Էստոնական ԽՍՀ-ները: Նույն թվականին կազմավորվել էր նաև Մոլդովական ԽՍՀ-ն: Նոր մարդահամարն անհրաժեշտ էր նաև այլ գործընթացներ վեր հանելու տեսակետից:

Այս համատեքստում կարևոր էր նաև բնակչության տեղաբաշխման շրջանների փոփոխության իրողությունը, նոր տարածքների շարունակական յուրացումը Ղազախստանում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում: Բացի այդ՝ հետպատերազմյան տարիներին փոփոխվեց ԽՍՀՄ քաղաքաբնակ և գյուղաբնակ բնակչության թվային հարաբերակցությունը, որը հիմնականում հետպատերազմյան շրջանում ավելի քան 1500 նոր քաղաքային բնակավայրերի և քաղաքատիպ ավանների կազմակերպման արդյունք էր:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ<sup>4</sup>, որից միայն Հայկական ԽՍՀ-ում՝ 1.551.610 մարդ կամ 55,7%-ը: Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչությունը մեծ թիվ էր կազմում Վրացական ԽՍՀ-ում (442.916 մարդ<sup>5</sup>), Ադրբեջանական ԽՍՀ-ում (442.089 մարդ), ՈՍԴԽՀ-ում (255.978 մարդ) և Ուզբեկական ԽՍՀ-ում (27.370 մարդ):

1959 թ. մարդահամարով առաջին անգամ հայ ազգաբնակչության քանակի վերաբերյալ թվական տվյալներ են առկա մերձբալթյան հանրապետությունների առումով (Լիտվայում, Լատվիայում և Էստոնիայում միասին՝ 2.179 հայ):

<sup>4</sup> Ст' у [http://demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_59.php?reg=8](http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8).

<sup>5</sup> Ст' у Мянэсян М., Этнические меньшинства Грузии; потенциал интеграции на примере армянского населения страны, Ереван, 2006, էջ 10:

Հաջորդ Համամիութենական մարդահամարն անցկացվեց 1970 թ. և միտված էր ապահովելու ԽՍՀՄ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ասպարեզների զարգացման վիճակագրական պատկերը:

1970 թ. մարդահամարն արձանագրել է ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ ամբողջական պատկեր<sup>6</sup>.

*Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի:*

	Թվաքանակը	ամբողջը %-ով
ԽՍՀՄ, որից՝	3.559.151	100
1. Հայկական ԽՍՀ	2.208.327	62.0
2. Ադրբեջանական ԽՍՀ	483.520	13.6
3. Վրացական ԽՍՀ	452.309	12.7
4. ՌՍԴԽՀ	298.718	8.4
5. Ուզբեկական ԽՍՀ	34.174	1.0
6. Ուկրաինական ԽՍՀ	33.439	0.9
7. Թուրքմենական ԽՍՀ	23.054	0.6
8. Ղազախական ԽՍՀ	12.814	0.4
9. Տաջիկական ԽՍՀ	3.787	0.1
10. Կիրգիզական ԽՍՀ	2.688	0.1
11. Բելոռուսական ԽՍՀ	2.362	0.07
12. Լատվիական ԽՍՀ	1.511	0.04
13. Մոլդովական ԽՍՀ	1.336	0.04
14. Էստոնական ԽՍՀ	604	0.02
15. Լիտվական ԽՍՀ	508	0.01

<sup>6</sup> Ст 5 "Итоги Всесоюзной переписи населения 1970 года", том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, Москва, 1973, էջ 324:

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդ մարդահամարի թվական տվյալների հետ համամետաժ զգալի աճ էր արձանագրել (772.239 մարդ), ընդ որում ոչ միայն բնական աճի, այլ նաև արտասահմանից սկյուռքահայ զանգվածների դեպի Հայկական ԽՍՀ շարունակվող ներգաղթի արդյունքնում: 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Հայկական ԽՍՀ-ից դուրս բնակվում էր ԽՍՀՄ հայության ընդամենը 38%-ը:

1970 թ. ԽՍՀՄ տարածքում Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչության թվաքանակով երկրորդն Ադրբեջանական ԽՍՀ-ն էր: Ադրբեջանական ԽՍՀ հայ բնակչությունը նախորդ մարդահամարի համամատ աճել էր ավելի քան 40.000 մարդով, մինչդեռ Վրացական ԽՍՀ հայությունը, նույն ժամանակահատվածում աճել էր ընդամենը 9.393-ով: Հետպատերազմյան տարիներին՝ 1959–1979 թթ., Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի աճի տեմպերի դանդաղումը պայմանավորված էր վրացականացման քաղաքականությամբ, հանրապետությունից հայության, ինչպես նաև ռուսների և հրեաների արտահոսքով<sup>7</sup>: Ադրբեջանական ԽՍՀ-ից նույնպես, մասնավորապես ԼՂԻՄ-ից և Նախիջևանի ԻԽՍՀ-ից, տեղի էր ունենում հայ բնակչության արտահոսք, որը երկրամասերը դանդաղ հայաթափելու քաղաքականության արդյունք էր: Միութենական այլ հանրապետություններում, այդ թվում՝ Հայկական ԽՍՀ-ում, հայ ազգաբնակչության թվաքանակը զգալի աճ էր արձանագրել:

1970 թ. ՈՍԴԽՀ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 298.718 մարդ կամ ԽՍՀՄ հայության 8,4%-ը: Նախորդ մարդահամարի համեմատ՝ գրանցվել էր հայության թվաքանակի աճ 42.740 մարդով կամ 16,7%-ով:

<sup>7</sup> St' u Suny R. G., *The making of the Georgian nation*, Stanford, 1988, էջ 299:

ՌՍԴԽՀ ամբողջ հայության 33%-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում (98.589 հայ), շուրջ 18%-ը՝ Ռոստովի մարզում: Այս երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում ՌՍԴԽՀ հայության կեսից ավելին: Հատկանշական է, որ հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում առկա էր ստվար հայ բնակչություն, ընդ որում ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային շրջաններում: Այսպես, օրինակ, Կովկասյան Հանքային Ջրերի (Միներալնիե Կոդի) ագլոմերացիային բնորոշ էր քաղաքաբնակ հայության բարձր տոկոսային կշիռը<sup>8</sup>:

Մոսկվայում էր կենտրոնացած ՌՍԴԽՀ հայության 8,5%-ը կամ 25.584 մարդ, որը նույնպես զգալիորեն բարձր ցուցանիշ էր նախորդ մարդահամարների համեմատ: Մայրաքաղաքի հայության միայն 35,2%-ի կամ 9.008 հայերի համար էր հայերենը մայրենի լեզու: Լենինգրադ քաղաքի հայության թվաքանակը կազմում էր 6.628 մարդ, իսկ հայերենը մայրենի լեզու էր քաղաքի հայերի 34,5%-ի համար: Ակնհայտ է, որ Մոսկվայի և Լենինգրադի հայության շրջանում մայրենի լեզուն աստիճանաբար մղվում էր երկրորդ պլան և հայերենը մայրենի լեզու էր ընդամենը 34–35%-ի համար: Մոսկվայի մարզի հայության շրջանում մայրենի լեզուն հայերենը նշողների ցուցանիշը մի փոքր բարձր էր՝ 40,4%:

Հետաքրքրական է, որ 1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ռուսերենը մայրենի լեզու էր Մոսկվա քաղաքի հրեա բնակչության 91,3%-ի, թաթար բնակչության 22,3%-ի և հայ բնակչության 65,8%-ի համար:

1970 թ. մարդահամարի տվյալներով՝ Մոսկվա քաղաքում բնակվող մեծաթիվ ազգային խմբերի շրջանում (հրեաներ, ուկրաինացիներ, թաթարներ, հայեր և այլն), ռուսերենը որպես

<sup>8</sup> St u Белозеров В., Этническая карта Северного Кавказа, Москва, 2005, էջ 115:

մայրենի կամ երկրորդ լեզու ազատ տիրապետողների կշիռը կազմում էր ավելի քան 95%, ընդ որում՝ այդ ցուցանիշով հայերը գերազանցում էին նույնիսկ մոսկվայաբնակ ուկրաինացիներին (համապատասխանաբար 97,3% և 96,9%)<sup>9</sup>: Այս գործընթացի ակտիվացման պատճառներն էին հայկական կրթական հաստատությունների բացակայությունը, ռուսիֆիկացման գործընթացի բարձր աստիճանը և խառնամուսնությունները:

Իրավիճակը նկատելիորեն այլ էր Հյուսիսային Կովկասի և Ղրնի հայության շրջանում, ուր, նախևառաջ, տեղաբնակ հայությանը հասու էր հայալեզու միջնակարգ կրթությունը, ապա նաև հիշյալ տարածաշրջաններում էր կենտրոնացած ՌՍԴԽՀ գյուղաբնակ հայության գերակշիռ մասը: Այսպես՝ հայերենը մայրենի լեզու էր Կրասնոդարի երկրամասի և Հյուսիս-Օսական ԻԽՍՀ հայության ավելի քան 77%-ի, Ստավրոպոլի երկրամասի հայության 68%-ի, Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ հայության 69%-ի, Ռոստովի մարզի հայության շուրջ 70%-ի համար:

Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը նախորդ մարդահամարի համեմատ 1970 թ. արձանագրել էր թվաքանակի ավելի քան 19% աճ՝ կազմելով 33.439 մարդ, որից Ղրիժում բնակվում էր հանրապետության հայության 9,24%-ը<sup>10</sup>: Ուկրաինական ԽՍՀ ստվար հայ բնակչություն ունեցող մարզերն էին Ղոնեցկը (6.029 հայ) և Խարկովը (4.832 հայ): Ուկրաինական ԽՍՀ հայության 58,5%-ի համար մայրենի լեզու էր հանդիսանում ռուսերենը, 38,4%-ի համար՝ հայերենը և ընդամենը 2,5%-ի համար՝ ուկրաիներենը: Ուկրաինական ԽՍՀ մարաքաղաք Կիևում բնակվում էր 2.976 հայեր:

---

<sup>9</sup> St u Выдро М. Я., Население Москвы (По материалам переписей населения 1871-1970 гг.), Москва, 1976, էջ 32:

<sup>10</sup> St u Бедварский И. Г., Атлас «Крым. Армяне», Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008, էջ 36:

Բելոռուսական ԽՍՀ հայությունը 1970 թ. կազմում էր 2.362 մարդ, որից գյուղաբնակներ էին ընդամենը 363-ը: Հանրապետության հայ բնակչության 2/3-ից ավելին արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ հայերենը մայրենի լեզու էր հայության շուրջ 45%-ի համար: Մոզիլյովի մարզում բնակվում էր 288, Կիտեբսկի մարզում՝ 335, Բրեստի մարզում՝ 266, Գրոդնոյի մարզում՝ 193 և Գոմելի մարզում՝ 316 հայ: Մինսկի մարզում բնակվում էին 277, իսկ մայրաքաղաք Մինսկում՝ 687 հայ<sup>11</sup>:

1970 թ. մարդահամարի համաձայն՝ հայ ազգաբնակչության թվաքանակի նկատելի աճ էին արձանագրել միջինասիական բոլոր հանրապետությունները, ուր, միասին վերցրած, բնակվում էր 76.517 հայ: Ստվար հայ բնակչություն ունեին Ուզբեկական ԽՍՀ-ն, Թուրքմենական ԽՍՀ-ն և Ղազախական ԽՍՀ-ն:

Հետաքրքրական է, որ միջինասիական հանրապետությունների հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ էին: Ուզբեկական ԽՍՀ 34.174 հայ բնակիչների 94,5%-ը քաղաքաբնակ էր, ընդ որում՝ Տաշքենդում բնակվում էր ավելի քան 13.000 հայ: Քաղաքաբնակ էր Թուրքմենական ԽՍՀ հայ ազգաբնակչության 97,4%-ը, իսկ մայրաքաղաք Աշխաբադում բնակվում էր 11.722 հայ կամ թուրքմենահայության կեսից ավելին: Գյուղաբնակ հայության համամեծատարար նկատելի ցուցանիշ ունեին Ղազախական ԽՍՀ-ն (հայության 24,5%) և Կիրգիզական ԽՍՀ-ն՝ 52%: Հայերենը մայրենի լեզու էր Ուզբեկական ԽՍՀ հայության 63%-ի, Թուրքմենական ԽՍՀ հայության 70%-ի, Ղազախական ԽՍՀ հայության 59%-ի համար:

Ուզբեկական ԽՍՀ հայության համախումբ բնակեցման մարզերն էին՝ Սամարղանդը (9.280 մարդ), Ֆերգանան (3.307

<sup>11</sup> Տե՛ս <http://babylon.iatp.by/nationalRegistry/1/nr1.html>



մարդ), Անդիժանը (2.254 մարդ): Թուրքմենական ԽՍՀ հայությունը, մայրաքաղաք Աշխաբադից բացի, համախումբ բնակվում էր Սառիի և Չարջուուի մարզերում, իսկ Ղազախական ԽՍՀ-ում ստվար հայ բնակչությունն ունեին Գուրևի մարզը (1.833 մարդ) և Ալմա-Աթա քաղաքը (1.516 մարդ): Կիրգիզական ԽՍՀ հայության թվաքանակը կազմում էր 2.688 մարդ, Տաջիկական ԽՍՀ հայությանը՝ 3.787:

1970 թ. Անդրկովկասի երկու հանրապետություններում՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում և Վրացական ԽՍՀ-ում միասին, բնակվում էր 935.829 հայ: Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաք Բաքվում (քաղխորհրդին ենթակա բնակավայրերով հանդերձ) բնակվում էր 207.464 հայ կամ ադրբեջանահայության 42,9%-ը: ԼՂԻՄ-ում էր բնակվում Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ հայության ուղիղ 25%-ը կամ 121.068 մարդ, իսկ Նախիջևանի ԻԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը շարունակում էր նվազել՝ կազմելով ընդամենը 5.828 մարդ:

Հայերենը մայրենի լեզու էր Ադրբեջանական ԽՍՀ հայության շուրջ 83,5% համար, ռուսերենը՝ 16,4%-ի: Հայության շրջանում գերակշռում էր իգական սեռը:

Վրացական ԽՍՀ հայության շուրջ 1/3-ը կամ 150.205 մարդ բնակվում էր Թբիլիսիում: Արխազական ԻԽՍՀ-ում էր բնակվում Վրացական ԽՍՀ հայության 16,5%-ը, Աջարական ԻԽՍՀ-ում՝ 3,4%-ը: Հետաքրքրական է, որ վրացահայության 7,1%-ի համար մայրենի էր վրացերենը, 8%-ի համար՝ ռուսերենը, ինչն էլ վիրահայ համայնքի մի հատվածի հայկական արմատներից հեռանալու և աստիճանական ծուլման ցուցիչ էր:

Ջավախահայության շրջանում հայերենի, որպես մայրենի լեզվի տիրապետում էր ճնշող մեծամասնությունը:

1970 թ. Համամիութենական մարդահամարը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել ոչ

միայն Հայկական ԽՍՀ հայ ազգաբնակչության, այլ նաև միութենական մյուս հանրապետությունների հայության թվաքանակի ու տեղաբաշխման, լեզվական պատկանելիության մասին: Հարկ է նկատել, որ 1970 թ. մարդահամարն արձանագրել է հետաքրքիր տվյալներ նաև հայության սեռատարիքային կազմի, կրթության, երկու սեռերի ամուսնացած հայազգի քաղաքացիների վերաբերյալ: Այս վիճակագրական տվյալների մի զգալի մասը ներկայացնում են նաև միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչությունը:

### Հավելված

աղյուսակ N 1

*ՈՍԴՆՀ որոշ ինքնավարությունների, երկրամասերի և քաղաքների հայություն թիվը, մայրենի, ժուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների*

ՈՍԴՆՀ առանձին երկրամասեր	Ամբողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ		
		հայ.	ռուս.	այլ	հայ.	ռուս.	այլ
ՆՍՉՄ	3.559.151	3.254.132	268.824	36.195	80.328	1.071.758	132.657
Կրասնոդար	96.589	76.207	22.263	119	7.910	64.295	405
Ադիգեական ԻՄ	5.217	4.088	1.119	10	370	3.617	42
Ստավրոպոլ	31.096	21.188	9.878	30	3.343	18.800	214
Աստրախան	1.784	861	912	11	228	819	22

բ. Լեհիզրադ /քաղ- խորհրդին ենթ. բնակավայրերով/	6 628	2 290	4 286	52	1 366	2 172	172
բ. Մոսկվա /քաղ- խորհրդին ենթ. բնակավայրերով/	25 584	9 008	16 448	128	5 595	8 453	741
Մոսկվայի մարզ	5 683	2 296	3 360	27	1 100	2 110	184
Ռոստով	53 620	37 383	16 220	17	5 287	31 471	164
Դաղստանի ԻՄՍՀ	6 615	5 041	1 563	11	276	4 530	95
Կաբարդինա- Բալկարական ԻՄՍՀ	2 033	1 364	647	22	120	1 241	40
Հյուսիս-Օսական ԻՄՍՀ	13 355	10 345	2 925	85	573	9 582	138
Չեչենա-Ինգուշ ԻՄՍՀ	14 543	10 081	4 437	25	1 017	8 896	107

## աղյուսակ N 2

*Ուկրաինական ԽՍՀ որոշ մարզերի հայություն թվաքանակը, հայերեն, ռուսե-  
րեն, ուկրաիներեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն  
ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների*

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ուկր.	այլ	հայ.	ռուս.	ուկր.	այլ
Ուկրաինական ԽՍՀ որից՝	33 439	12 853	19 587	855	144	5 257	11 805	3 772	605

Կիև	2.976	1068	1.853	40	15	569	997	482	58
Դոնեցկ	6.029	2.137	3.827	44	21	1.086	1.960	578	98
Հրիմ	3.091	1.372	1.706	2	11	436	1.217	46	67
Օդեսա	3.588	1.215	2.310	46	17	613	1.111	307	60
Խարկով	4.832	1.653	3.111	56	12	954	1.522	562	58

### աղյուսակ N 3

Բելոռուսական ԽՍՀ հայության բվաքանակը, հայերեն, ռուսերեն, բելոռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազա.տիրապետողներ			
		հայ.	ռուս	բելո	այլ	հայ.	ռուս	բելո	այլ
Բելոռուսական ԽՍՀ, որից*	2.362	1.055	1.224	74	9	319	962	103	83
քաղաքաբնակ	1.999	857	1.098	37	7	289	788	87	75
գյուղաբնակ	363	198	126	37	2	30	174	16	7
արական	1.615	871	698	40	6	223	794	42	55
իգական	747	184	526	34	3	96	168	61	27

Ուզբեկական ԽՍՀ որոշ մարզերի հայություն թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ուզբեկերեն և այլ լեզուների տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ուզբ.	այլ.	հայ.	ռուս.	ուզբ.	այլ.
Ուզբեկական ԽՍՀ, օրից՝	34.174	21.585	12.517	35	37	2.672	17.797	1.210	334
քաղաքային	32.309	20.083	12.171	25	30	2.642	16.832	1.058	307
ցամաքային	1.865	1.502	346	10	7	30	965	152	27
ք. Տաշքենդ	13.364	6.748	6.593	10	13	1.510	5.788	414	95
Տաշքենդի մարզ	1.621	997	617	2	5	113	826	60	19
Անդիժան	2.254	1.714	536	4	-	92	1.409	129	5
Մամարդանդ	9.280	6.600	2.661	9	10	626	5.430	242	97
Միրդարյա	1.206	996	208	1	1	31	753	37	16
Ֆերգանա	3.307	2.296	1.009	1	1	176	1.844	145	24

Ղազախական ԽՍՀ հայություն թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ղազախերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	Ղազախ	այլ	հայ.	ռուս.	ղազախ	այլ
Ղազախական ԽՍՀ, որից՝	12.814	7.604	4.752	5	453	800	6.899	82	298
քաղաքաբնակ	9.677	5.837	3.782	2	56	694	5.227	51	254
գյուղաբնակ	3.137	1.767	970	3	397	106	1.672	31	44
արական	8.357	5.523	2.614	2	218	521	5.072	46	218
իգական	4.457	2.081	2.138	3	235	279	1.827	36	80
Ալմա-Աթա	1.516	818	688	-	10	126	716	12	37
Գուրևի մարզ	1.833	1.165	657	-	11	145	1.041	15	77

Վրացական ԽՍՀ հայության բվաքանակը, հայերեն, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ավտոյցը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազգ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	վրաց.	այլ.	հայ.	ռուս	վրաց.	այլ.
Վրացական ԽՍՀ, որից՝	452.309	383.349	36.410	32.246	304	7.903	160.435	51.477	2.656
քաղաքաբնակ	255.115	194.200	35.019	25.656	240	7.050	109.778	45.371	1.075
ցուղաբնակ	197.194	189.149	1.391	6.590	64	853	50.657	6.106	1.581
արական	217.874	184.866	17.112	15.753	143	3.797	87.970	24.885	1.448
իգական	234.435	198.483	19.298	16.493	161	4.106	72.465	26.592	1.208
Թբիլիսի	150.205	108.867	25.941	15.224	173	4.609	59.169	36.928	482
Հանրապետական ենթ. շրջաններ	210.383	188.642	5.752	15.894	95	2.064	46.022	12.797	2.037
Աբխազական ԻՄՍՀ	74.850	72.151	2.577	108	14	757	45.659	420	71
Աջարական ԻՄՍՀ	15.614	13.405	2.053	153	3	456	8.997	1.211	22
Հարավ-Օսական ԻՄ	1.254	283	86	866	19	17	588	121	44

Կիրգիզական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, կիրգիզերեն  
և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վե-  
րաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի  
արդյունքների.

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	կիրգ.	այլ	հայ.	ռուս.	կիրգ.	այլ
Կիրգիզական ԽՍՀ, օրից՝	2.688	1.806	676	4	202	113	925	220	350
քաղաքաբնակ	1.288	660	598	1	29	106	594	10	50
գյուղաբնակ	1.400	1.146	78	3	173	7	331	210	300
արական	1.495	1.022	360	2	111	73	627	108	159
իգական	1.193	784	316	2	91	40	298	112	191

Տաջիկական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, տաջիկերեն  
և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վե-  
րաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի  
արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	տաջ.	այլ	հայ.	ռուս.	տաջ.	այլ
Տաջիկական ԽՍՀ, օրից՝	3.787	2.415	1.364	1	7	202	1.906	92	94



քաղաքաբնակ	3 422	2 095	1 372	1	4	196	1 794	79	73
գյուղաբնակ	365	320	42	-	3	6	112	13	21
արական	2 066	1 325	738	-	3	129	1 086	49	54
իգական	1 721	1 090	626	1	4	73	820	43	40

աղյուսակ N 9

*Թուրքմենական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, թուրքմեններեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների*

	Ամբողջը	Մայրենի լեզու				Ռբայն երկրորդ լեզու ազ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	թուրք.	այլ	հայ.	ռուս.	թուրք.	այլ
Թուրքմենական ԽՍՀ օրից՝	23 054	16 191	6 850	6	7	1 621	13 383	357	184
քաղաքաբնակ	22 463	15 692	6 758	6	7	1 598	13 145	350	179
գյուղաբնակ	591	499	92	-	-	23	238	7	5
արական	11 450	8 013	3 429	4	4	817	6 744	217	98
իգական	11 604	8 178	3 421	2	3	804	6 639	140	86
Աշխաբադ	11 722	8 153	3 566	1	2	869	6 971	146	73

Հանրապետ. ենթ. շրջաններ	4.865	3.518	1.342	3	2	240	2.883	41	65
Մտոի մարզ	4.903	3.539	1.360	2	2	379	2.813	115	23
Չարջոուի մարզ	1.307	792	514	-	1	121	600	42	13

### աղյուսակ N 10

Ադրբեջանական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջ	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ադրբ.	այլ	հայ.	ռուս.	ադրբ.	այլ
Ադրբեջան. ԽՍՀ, որից՝	483.520	403.610	79.123	700	87	26.814	168.545	43.549	467
քաղաքաբնակ	344.577	265.203	78.698	610	66	26.571	153.500	33.385	392
գյուղաբնակ	138.943	138.407	425	90	21	243	15.045	10.164	75
արական	231.222	193.287	37.712	185	38	12.699	87.114	23.847	227
իգական	252.298	210.323	41.411	515	49	14.115	81.431	19.702	240

ք. Բաբու քաղխորհրդին եեք. բեակավայրերով/	207.464	141.131	65.966	334	33	21.615	98.885	16.325	239
Հանրապետական եեք. շրջաններ	149.160	137.797	10.965	349	49	3.560	48.017	21.776	193
Նախիջևանի ԻԽՍՀ	5.828	5.738	77	11	2	30	800	1.306	6
Լեռ. Ղարաբաղի ԻՄ	121.068	118.944	2.115	6	3	1.609	20.843	4.142	29

արյուսակ N 11

Մոլդովական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, մոլդովերեն  
և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վե-  
րաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի  
արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ագ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	մոլդ.	այլ.	հայ.	ռուս.	մոլդ.	այլ.
Մոլդովական ԽՍՀ, որից՝	1.336	481	803	39	13	124	490	148	48
քաղաքաբնակ	1.154	381	732	34	7	113	394	136	38
գյուղաբնակ	182	100	71	5	6	11	96	12	10
արական	794	350	412	23	9	79	351	69	23
իգական	542	131	391	16	4	45	139	79	25

ԽՍՀՄ հայության լեզվական պատկանելիությունը և տարիքային կազմն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների<sup>12</sup>

	Ամբողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ		
		ազգ. լեզու		նչ իր ազգ. լեզու	ազգ. լեզու		նչ իր ազգ. լեզու
		հայերեն	րուս.	այլ	հայերեն	րուս.	այլ
Հայեր, այդ թվում՝	3.559.151	3.254.132	268.824	36.195	80.328	1.071.758	132.657
0-10 տարեկան	895.936	839.392	50.375	6.169	8.928	67.362	6.946
11-15	418.308	385.149	29.960	3.199	8.977	81.273	6.736
16-19	251.545	232.296	17.360	1.889	5.636	94.226	7.012
20-29	383.917	356.610	23.644	3.663	8.396	192.966	13.607

<sup>12</sup> Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, кзվ. աշխ., էջ 360-364: Հարկ է նշել, որ 1970 թ. Համամիութենական մարդահամարը վերահիշյալ արդյունքները հաշվառել է տվյալ ազգային հանրապետության (այս դեպքում Հայկական ԽՍՀ) և ԽՍՀՄ այն տարածաշրջանների բնակչության թվական տվյալների ամփոփումով, ուր ազգային խումբը (տվյալ դեպքում հայերը, վրացիները, ղազախները, ուզբեկները, ադրբեջանցիները, էստոնացիները և այլք) հիմնականում տեղաբաշխված է: Ընդհանուր առմամբ հայերին և մյուսներին վերաբերող տվյալները ներառում են այդ ազգությունների ներկայացուցիչների թվի 93-99%-ը, իսկ տվյալ էթնիկ խմբի, բնակչության մնացյալ թվաքանակը ներկայացվել է «ըստ տարիքային խմբի չբաշխվածներ» տողով:

30-39	572.356	492.918	24.248	5.200	9.253	235.104	25.673
40-49	382.454	358.564	19.168	4.722	7.894	169.041	23.924
50-59	187.892	184.808	9.854	3.230	4.298	73.609	13.879
60 տ. և ավելի	325.484	309.125	10.738	5.621	4.657	80.633	23.950
Ըստ տարիքային խմբի չափշղիտած	181.259	95.270	83.487	2.502	22.289	77.544	9.730

աղյուսակ N 13

Անուսնացած հայ տղամարդկանց և կանանց թվաքանակը ԽՍՀՄ-ում  
1959 թ. և 1970 թ.

Տվյալ սեռի և տարիքի 1000 մարդուց ամուսնացած																	
1970 թ.	1959 թ.		Հայեր		16-19 տ.		20-29 տ.		30-39 տ.		40-49 տ.		50-59 տ.		60 տ. և բարձր		
	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	տղ.	կին	
711	694	583	18	158	434	671	941	807	968	649	957	576	868	326			
630					692		923		861		960		808		990		619
15																	
152																	
434																	
692																	
923																	
861																	
960																	
808																	
990																	
619																	
872																	
395																	

Անուսնացած հայ տղամարդկանց և կանանց թվաքանակը Կրացական  
 խՍՀ-ում, Աղբրեջանական խՍՀ-ում, Թուրքմենական խՍՀ-ում, Հայկական  
 խՍՀ-ում 1959 թ. և 1970 թ.

Տվյալ սեռի և տարիքի 1000 մարդուց անուսնացած

1970 թ.	ՉՄՄՀ		ԹԽՄՀ		ԱՍՄՀ		ՎՄՄՀ		Հայեր	
	1959 թ.	1970 թ.	1959 թ.	1970 թ.	1959 թ.	1970 թ.	1959 թ.	1970 թ.	տղ.	ընդ. 16 տ. և բարձր
698	691	707	673	726	697	741	700	741	տղ.	16-19 տ.
640	592	582	558	615	589	632	575	632	կին	20-29 տ.
16	19	22	15	8	10	21	24	24	տղ.	30-39 տ.
160	166	107	149	127	167	151	142	142	կին	40-49 տ.
437	522	446	479	383	498	452	521	521	տղ.	50-59 տ.
695	674	663	644	683	690	700	660	700	կին	60 տ. և բարձր
931	952	894	913	913	927	915	930	930	տղ.	
865	822	852	789	867	801	850	788	850	կին	
967	977	923	961	952	964	953	954	953	տղ.	
826	682	762	650	791	632	792	652	792	կին	
956	964	910	941	949	951	938	947	938	տղ.	
642	579	537	487	583	580	681	588	681	կին	
878	865	852	845	877	895	859	855	859	տղ.	
419	332	268	219	350	293	409	381	409	կին	

ԽՍՀՄ հայ բնակչության կրթության աստիճանը 1959 թ. և 1970 թ.

10 տարեկան և ավելի 1000 մարդուց կրթություն ունեցող								
ԽՍՀՄ	Տարին	Բարձրագույն	Թեղիժով	Միջին մասն.	Շնդի. միջն.	Թեղի միջն.	Շնդամենը միջ. և բարձրագույն /մաս թերի/	Տարրական
Ամբողջը, որից՝	1959	38	14	38	120	233	443	252
	1970	55	20	50	185	208	518	271
քաղաքային	1959	58	21	47	156	238	520	238
	1970	76	27	59	224	205	591	242
ցուղային	1959	13	6	27	72	226	344	270
	1970	16	6	31	112	212	377	325

**АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ СОЮЗНЫХ РЕСПУБЛИК  
ПО ДАННЫМ ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ  
НАСЕЛЕНИЯ СССР 1970 ГОДА**

**РЕЗЮМЕ**

После Великой Отечественной войны армянское население проживало во всех союзных республиках СССР, армяне занимали прочные позиции в политико-экономической, культурной и в других сферах.

Послевоенную динамику роста численности армянского населения, ареал его распределения, соотношение городского и сельского населения, языковой принадлежности, грамотности, возрастные группы и число мужчин и женщин, состоящих в браке прослеживается с помощью проведенных переписей населения СССР в 1959 и 1970 годах. Кроме Армянской ССР, где в 1970 г. проживало 62% армянского населения СССР, армяне в большом количестве и компактно проживали в Грузинской ССР (452.309 человек), Азербайджанской ССР (483.520 человек), РСФСР (298.718 человек), Узбекской ССР (34.174 человек), Украинской ССР (33.439 человек), Туркменской ССР (23.054 человек) и Казахской ССР (12.814 человек).

По данным Всесоюзной переписи населения 1970 г. в Армянской ССР проживало 2.208.327 армян. Армянское население проживало во всех столичных городах – Баку (207.464 человек), Тбилиси (150.205 человек), Москва (25.584 человек), Ташкент (13.364 человек), Ашхабад (11.722 человек), Киев (2.976 человек), Алма-Ата (1.516 человек) и т.д.



**THE ARMENIAN POPULATION OF THE SOVIET  
REPUBLICS ACCORDING TO THE 1970 CENSUS DATA****SUMMARY**

The Armenian population of USSR continued living in all the Soviet republics after the Great Patriotic War (World War II), holding strong positions in the political, economic, cultural and some other spheres.

The dynamics of the postwar growth of Armenian population in the USSR, the area of their distribution, the ratio of urban to rural populations; the ethnic language affiliation and literacy of Armenian population; the age group and percentage of married men and women can be traced through the reports of the Soviet population censuses in 1959 and 1970. The data, compiled from the said censuses, certify that, except for the Armenian SSR, where 62% of Armenian population of the USSR was living as of 1970, a large numbers of Armenians were residing compactly in the Georgian SSR (452.309 people), the Azerbaijani SSR (483. 520 people), the RSFSR (298.718 people), the Uzbek SSR (34.174 people), the Ukrainian SSR (33.439 people), the Turkmen SSR (23.054 people) and the Kazakh SSR (12.814 people). According to the 1970 census data in the Armenian SSR were living 2.208.327 Armenians. The Armenian population lived in all capitals of Soviet republics- In Baku (207.464 people), in Tbilisi (150.205 people), in Moscow (25.584 people), in Tashkent (13.364 people), in Ashkhabad (11.722 people), in Kiev (2.976 people), in Alma-Ata (1.516 people), etc.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ «ՕՂԱԿ»  
 ՈԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԸ

Ահաբեկչական «Օղակ» ռազմագործողության սանձազերծման 1991 թ. ապրիլ-մայիս ամիսների ողբերգական օրերին աշխարհի առաջադեմ մտավորականությունը ԽՍՀՄ-ում, Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, սիյուռքահայ բազմաթիվ կառույցներ, հասարակական և կուսակցական կազմակերպություններ բողոքի ձայն բարձրացրեցին՝ իրենց զորակցությունն ու ցավակցությունն արտահայտելով կատարված անախադեպ պետական հանցագործության առնչությամբ:

Գետաշենի ենթաշրջանում Ադրբեջանի կողմից հայ ազգաբնակչության հանդեպ իրագործված ապօրինությունները գազաթնակետին հասան 1991 թ. գարնանը: Միջազգային մասնուլում պարբերաբար և հաճախակի տպագրվում էր տեղեկատվություն տարածաշրջանում խաղաղ հայ բնակչության հանդեպ Ադրբեջանի օմօնականների թույլ տված հանցագործությունների վերաբերյալ, հնչում էին դատապարտման և անօրինականությունները դադարեցնելու կոչեր: Տարածաշրջան այցելած օտարերկրյա լրագրողները, դիտորդներն ու փորձագետներն (ի տարբերություն խորհրդային պաշտոնական լրատվության, որը կեղծ, ստահող, ապակողմնորոշող, կողմնակալ լուրեր էր հրապարակում) անաչառ տեղեկատվություն էին մատուցում և միջազգային հանրությանը ներկայացնում ճշմարտությունը՝ նոր թափ ստացող հայ-ադրբեջանական զինված հակամարտության մասին:

1991 թ. մայիսի 1-ին հայտարարությամբ հանդես եկավ ՀՅԴ քյուրոն՝ դատապարտելով Գետաշենի և Մարտունաշենի, ինչպես նաև հայկական մյուս շրջանների խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի և միութենական իշխանությունների համատեղ ագրեսիան: Նույն մայիսի 1-ին Ադրբեջանի և կենտրոնի ուժազորության դեմ ԽՍՀՄ-ում առաջինը բողոքի ձայն բարձրացրեց Ռուսաստանի սահմանադրական ժողովրդավարների (կադետներ) կուսակցությունը: Բողոքի և դատապարտող հայտարարություններով հանդես եկան Կիպրոսի էՏԵՆ սոցիալիստական երիտասարդական միությունը, ՏԻՍԻ, ՏԻԶՕ, էՏԵՔ կուսակցությունները: Կիպրոսի պետական հեռուստատեսությունը՝ մայիսի 7-ին և 8-ին, «Աստրա» ռադիոկայանը՝ մայիսի 9-ին, լուսաբանեցին կատարվածը, դատապարտեցին՝ անվանելով հանցագործություն: Ամերիկայի Հայոց Առաջնորդարանը, Ամերիկայի հայկական համագումարի խնամակալների խորհուրդը, Ռամկավար Ազատական Կուսակցության Կենտրոնական վարչությունը կատարվող անօրինականությունների մասին նամակներ հղեցին ԱՄՆ պետքարտուղարությանը, նախագահ Ջորջ Բուշին, ԱՄՆ կոնգրեսի անդամներին: Կանադայի նոր ժողովրդավար կուսակցության անդամ, պատգամավոր Սվենդ Ռոբինսոնը դիմեց Կանադայի արտաքին գործերի նախարարին և Կանադայում ԽՍՀՄ դեսպանին՝ պահանջելով իր կուսակցության և կանադացիների մտահոգությունը հայտնել խորհրդրդային իշխանություններին: Կանադացի մեկ ուրիշ պատգամավոր՝ Անդրե Պուլերիսը, նամակ հղեց ԽՍՀՄ հյուպատոսին՝ խորհրդային իշխանություններից պահանջելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ «կասեցնելու հայերի նոր ցեղասպանությունը, որը դառնորեն շարունակվում է 1915-ից ի վեր»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Ազատամարտ» (բացառիկ), 3 մայիսի 1991 թ., «Հայաստանի Հանրապետություն», 2, 3, 4, 8 մայիսի 1991 թ., «Ազդակ», 27 մայիսի 1991 թ.:

Գետաշենում տեղի ունեցած դեպքերին լայնորեն անդրադարձան ամերիկյան և բրիտանական հեռուստատեսությունն ու մամուլը: Ամերիկյան «Ասոշիեյթեդ պրես», «Յունայտեդ պրես ինտերնեշնլ» գործակալությունները և «Էն Բի Սի» հեռուստաընկերությունը, բրիտանական «Ռոյթըր» և «Բի Բի Սի» գործակալությունները շուտերեն և անզլերեն լեզուներով կանոնավոր և օպերատիվ տեղեկատվություն էին հաղորդում Արցախում, Շահումյանում և Գետաշենի ենթաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ապրիլի 30-ին «Սի Էն Էն» հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվեց կես ժամանոց հատուկ թողարկում գետաշենյան դեպքերի մասին<sup>2</sup>:

Հատկապես ակտիվ էր ամերիկյան մամուլը: «Վաշինգտոն թայմս»-ում տպագրված «Հայաստան-Ադրբեջան. նոր ընդհարումներ», Վաշինգտոն պոստ»-ի՝ «Հայ-ադրբեջանական ընդհարում. կա առնվազն 25 զոհ», «Լոս Անջելես թայմս»-ի՝ «Ազգամիջյան պայքար. ուղղակի պատրվակ խորհրդային քախջախիչ բռունցքի համար» հոդվածներում անկողմնակալ լուսաբանվում էր Արցախում և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների իրադարձությունները: Հոդվածներում այն միտքն էր զարգացվում, թե անկախության ուղի բռնելու համար ՀՀ-ն ու հայ բնակչությունը պատժվեց խորհրդային Միության իշխանությունների կողմից, որոնք արտակարգ միջոցներ են ձեռնարկել՝ փրկելու համար մասնատվող միությունը: Նշվում էր, որ «տանկերով ու զրահամեքենաներով զինված» ադրբեջանական հատուկ ստորաբաժանումներին օժանդակել են ԽՍՀՄ ներքգործնախարարության զորամիա-

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2, 4 մայիսի 1991 թ.:

վորումները: Կենտրոնական իշխանությունները մեղադրվում էին «պետական ահաբեկչություն թույլ տալու համար»<sup>3</sup>:

«Ազատություն» ռադիոկայանով 1991 թ. ապրիլ-մայիսյան արյունալի իրադարձությունների շուրջ պարզաբանումներով հանդես եկան Ռուսաստանի մտավորականության «Ռարաբադ» կոմիտեի անդամներ Դմիտրի Կուլչեկը, Լեոնիդ Պոզմանը և ակադեմիկոս Անդրեյ Սախարովի գինակից Լեոնիդ Բատկինը: Հաղորդումներ հեռարձակեցին նաև «Էխո Մոսկվի» ռադիոկայանը և «Բալթֆաքս» գործակալությունը: Մայիսի 2-ին Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցչության դաիլիժում տեղի ունեցավ «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության մոսկովյան բաժանմունքի նիստը, որին ներկա էին Մոսկվայի հայ հասարակայնության ներկայացուցիչները: ՌՍԴԽՀ Չերագույն խորհրդի պատգամավոր Ալեքսանդր Շաբաղը հրապարակեց «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման կոորդինացիոն խորհրդի հայտարարությունը: «Մեմորիալի» անդամները կարծիք հայտնեցին, որ կենտրոնը հետևողականորեն իրականացնում է հայերի ցեղասպանության և տեղահանության քաղաքականություն ԼԴԽ-ում, Շահումյանի շրջանում և Չետաշենի ենթաշրջանում<sup>4</sup>:

Խորհրդային ժողովրդավար թերթերն ու ամսագրերը պարբերաբար վերլուծական հոդվածներ էին հրապարակում «Օղակ» գործողության ընթացքի վերաբերյալ: «Նեզավիսեմայա գազետա» թերթն այն հատուկ մշակված «պետական ահաբեկչություն» էր որակում: Թերթում տպագրված է «Օղակ» ռազմագործողության կողավորված պլան-փաստաթուղթը<sup>5</sup>:

<sup>3</sup> "Washington Times", 1 May 1991, "The Washington Post", 2 May 1991, "Los Angeles Times", 10 May, 1991.

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 մայիսի 1991 թ., "Голос Армении" ("Коммунист"), 7 мая 1991 г.

<sup>5</sup> Տե՛ս "Независимая газета", 5, 7 мая 1991 г.

Այն կարևորագույն փաստ է և ցույց է տալիս ռազմագործողության պետական ահաբեկչական բնույթը:

«Օղակ» ռազմագործողության ընթացքում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլումն են գտել միջազգային մի շարք կազմակերպությունների փաստաթղթերում, դարձել լսումների թեմա՝ ՌԴ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեում, գնահատվել Եվրախորհրդարանի և ԱՄՆ սենատի բանաձևերում: ԱՄՆ կոնգրեսում դեմոկրատների ղեկավար Դեյվիդ Բոնիփորը (Միչիգան) Ներկայացուցիչների պալատին ուղղված հայտարարության մեջ խորը ընդվզում էր արտահայտում ադրբեջանական և խորհրդային ներքին գործերի նախարարության ուժերի կողմից հայկական Գետաշեն-Մարտունաշենի ենթաշրջան ներխուժման դեմ: Շեշտելով, որ սպանվածների մեծ մասը կանայք, ծերեր և երեխաներ են, նա իր պաշտոնակից կոնգրեսականներից պահանջեց «իրենց ձայնը բարձրացնել հայ ժողովրդին ուղղված այս ահռելի բռնությունների դեմ»՝ Մոսկվային կոչ անելով պաշտպանել հայկական գյուղերը<sup>6</sup>: Իսկ կոնգրեսականներ Դեյվիդ Դրեյթերը և Մերվին Դիմալլին Ներկայացուցիչների պալատի անդամներին հղած նամակում խստորեն քննադատում էին խորհրդային զորքերի կողմից Գետաշենի և Մարտունաշենի գրավումը: Նրանք Կոնգրեսին առաջարկեցին որոշում ընդունել, որով խորհրդային ժողովուրդներին տրամադրվելիք օժանդակությունները կկատարվեն հանրապետական կառավարությունների մակարդակով, քանի դեռ խորհրդային զորքերը բռնարարքներ են գործում անկախության համար պայքարող հանրապետությունների դեմ: Գետաշեն-Մարտունաշենյան ոճրագործությունը դատապարտող հայտարարությամբ հանդես եկան նաև կոնգրեսականներ

<sup>6</sup> Տե՛ս «Ազատամարտ» (բացառիկ), 3 մայիսի 1991 թ.:

Ֆրենկ Անունիզիոն, Թոմ Դիլեյը, Ռիչարդ Լեհմանը, Ֆրանկ Փալլոուն, Դանա Ռոհաբաշերը<sup>7</sup>:

Մայիսի 21–25-ը Մոսկվայում իր աշխատանքը սկսեց հայտնի գիտնական, իրավապաշտպան Անդրեյ Սախարովի հիշատակին նվիրված առաջին միջազգային կոնգրեսը՝ «Խաղաղություն, առաջադիմություն, մարդու իրավունքներ» խորագրով<sup>8</sup>: Կոնգրեսին մասնակցում էին քաղաքական գործիչներ և իրավապաշտպաններ աշխարհի տարբեր ծայրերից՝ Ալեքսանդր Դուբչեկը, Ջորջ Սորոսը, բարոնուհի Քերոլայն Քոքսը, Անջեյ Ռոմաշևսկին, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Մարիո Սոարեշը և ուրիշներ:

Միջազգային կոնգրեսի պատվիրակությունն առաջին միջազգային փորձագիտական խումբն էր, որին թույլատրվեց այցելել ԼՂԻՄ: Բարոնուհի Քերոլայն Քոքսի ղեկավարությամբ 1991 թ. մայիսի 25-29-ին պատվիրակությունը առաջին այցելությունը կատարեց հայ-ադրբեջանական հակամարտության գոտի: Մայիսի 30-ին պատվիրակության հինգ անդամներից կազմված խումբը ժամանեց Բաքու: Մայիսի 31-ին նրանք հանդիպեցին պրեզիդենտ Ա. Սուբալիբովին, սակայն նրանց պահանջը՝ այցելել Լեռնային Ղարաբաղի Շուշիի, Հադրութի, Շահումյանի շրջաններ, Ստեփանակերտ, Խոջալու, մերժվեց ադրբեջանական իշխանությունների կողմից<sup>9</sup>: Կոնգրեսի պատվիրակությունը երկրորդ անգամ ԼՂԻՄ այցելեց հուլիսի 13–16-ը: Մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց զրուցելու ադրբեջանական բանտերում պահվող հայ պատանդներ:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> «Траада», 21 мая 1991 г.

<sup>9</sup> Caroline Cox and John Eibner: Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh: Institut for Religious Minorities in the Islamic World: Zurich, London, Washington, 1993. <http://www.sumgait.info/caroline-cox/ethnic-cleansing-in-progress/operation-ring.htm>

րի հետ, այցելելու այն գյուղերը, որոնց բնակչությունը բռնագաղթվել էր: Հուլիսի 17-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ք. Քոքսի գլխավորած պատվիրակության մի խումբ արտերկրյա փորձագետների մամուլի ասուլիսը՝ Հայաստան և Ադրբեջան կատարած նրանց երկրորդ ուղևորության արդյունքների շուրջ: Պատվիրակությունը հանդես եկավ «Օղակ» ռազմական գործողության վերաբերյալ զեկույցով՝ դատապարտելով բռնի տեղահանության, անհիմն ձերբակալությունների, քաղաքացիական բնակչության նկատմամբ դաժան վերաբերմունքի փաստերը<sup>10</sup>:

Աշխարհի տարբեր երկրներում սփռված հայությունն «Օղակ» ռազմական գործողության վերաբերյալ իր վերաբերմունքն արտահայտեց բողոքի զանգվածային ցույցերով և հավաքներով: Մայիսի 3-ին՝ Բեյրութում, իսկ մայիսի 4-ին՝ Վաշինգտոնում խորհրդային դեսպանատների առջև հարյուրավոր հայեր ցույցի դուրս եկան՝ իրենց բողոքն արտահայտելով Գետաշեն-Մարտունաշենում կազմակերպված բռնությունների դեմ: Սիդնեյում խորհրդային հյուպատոսարանի առջև բողոքի ցույց կազմակերպեց Ռամկավար ազատական կուսակցության «Արտակ Դարբինյան» ակումբը: Մայիսի 6-ին Ուրուզվայի հայ համայնքի բոլոր կազմակերպությունները միասնաբար խաղաղ ցույց կազմակերպեցին Մոնտեվիդեոյի խորհրդային դեսպանատան առջև: Մայիսի 11-ին Նյու Յորքի շրջանի հայկական բոլոր կազմակերպությունների և զույգ առաջնորդարանների մասնակցությամբ ժողովրդական բողոքի մեծ հավաք տեղի ունեցավ ՄԱԿ-ում խորհրդային ներկայացուցչության առջև: Բոլոր բանախոսները դատապարտեցին խորհրդային բանակի զորամիավորումների հարձակումներն Ադրբեջանի հայկական և Հայաստանի սահմանամերձ գյուղերի վրա և պահանջեցին

<sup>10</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25 հուլիսի 1991 թ.:



անհապաղ գորքերը հեռացնել այդ շրջաններից: Ամերիկյան հեռուստատեսությունն անդրադարձավ այդ բազմամարդ հավաքին<sup>11</sup>: Մ. Գորբաչովին բողոքի միասնական նամակ հղեցին նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն ու Եվրոպայի Եկեղեցիների համագումարը<sup>12</sup>:

Ռուս գրող Ինեսսա Բուրկովան ապրիլի 16-ից մինչև մայիսի 15-ը գտնվում էր Շահումյանում և կարողացավ ընդամենը 35 կմ մոտենալ Չետաշենին: Մայիսի 2-ից սկսած նա ականատեսներից ու տուժածներից վկայություններ էր հավաքում և այդ տեղեկությունները հեռախոսով հաղորդում Մոսկվա՝ «Կրիկ» կազմակերպության անդամներին, վերջիններն էլ՝ «Մեմորիալին», ԽՍՀՄ և ՌՍԴԽՀ ժողպատգամավորներին, անկախ ԶԼՄ-ներին, «Ազատություն», «Էխո Մոսկվի» ռադիոկայաններին<sup>13</sup>, որոնք օպերատիվ և հանգամանալի լուսաբանում էին գետաշենյան իրադարձությունները:

«Օղակ» ռազմական գործողության ծավալման օրերին ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում, Լենինգրադում (Սանկտ-Պետերբուրգ) և այլ քաղաքներում տարբեր ազգությունների պատկանող ժողովրդավարական ուժերի հասարակական և քաղաքական համախմբում տեղի ունեցավ ի պաշտպանություն հայության արդար պահանջների: Ցուցարարները դուրս եկան Կարմիր հրապարակ՝ «Դադարեցնել Չետաշեն գյուղի բնակիչների բռնազաղթը» և «Ողբում ենք մարդասպանների հոգիների համար» ցուցապաստառներով<sup>14</sup>: «Օղակ» ռազմա-

<sup>11</sup> Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 10 մայիսի 1991 թ., «Երեկոյան Երևան», 15 մայիսի 1991 թ.:

<sup>12</sup> Տե՛ս «Ազդակ» 27 մայիսի 1991 թ.:

<sup>13</sup> <http://sumgait.info/ring/seda-vermishsheva/karabakh-deportation-6.htm> (Инесса Буркова, писательское объединение “Апрель”, Я свидетельствую ..., Из сообщений переданных Инессой Бурковой из Шаумяновска, 30 апреля 1991).

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 մայիսի 1991 թ.:

գործողության ընթացքում՝ 1991 թ. ապրիլի վերջից մինչև հունիսի սկիզբը, մոսկովյան «Մեմորիալ» իրավապաշտպան միության կենտրոնն արձանագրել է մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների բազմաթիվ դեպքեր: Միության հայտարարություններից մեկում մասնավորապես նշվում էր. «Կոպտորեն խախտվել է յուրաքանչյուր մարդու կյանքի, ազատության, անձնական անձեռնմխելիության իրավունքը, կիրառվել են կտտանքներ, կատարվել՝ ինքնակամ կալանքներ և ձերբակալություններ, կատարվել են բազմաթիվ գույքային իրավախախտումներ: Բնակչության տեղահանումը կրել է զանգվածային բնույթ: Այդ խախտումներին հատուկ ցինիկություն է հաղորդում այն փաստը, որ խաղաղ բնակչության նկատմամբ զանգվածային բռնությունը կատարվել է հենց իրավապահ մարմինների կողմից»<sup>15</sup>: Մայիսի 12-ին «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման համակարգող խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որում տեղի ունեցածը բնութագրեց որպես ցեղասպանական ակտ: Բողոքի և կենտրոնական իշխանություններին ուղղված ողջախոհության կոչով հանդես եկավ նաև «ԼՂԻՄ-ի հայ բնակչության իրավունքների պաշտպանության ընկերակցությունը»՝ դիմելով երկրի բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգամավորներին, ամբողջ հասարակայնությանը: Դիմումի տակ ստորագրել էին տարբեր ազգությունների տաս հազար ներկայացուցիչներ<sup>16</sup>:

Մայիսի 7-ին ժողովրդական պատգամավորների Լենինգրադի քաղաքային ու մարզային խորհուրդների նախագահությունների համատեղ նիստում հայտարարություն ընդունվեց՝ ի

<sup>15</sup> <http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Getashen/index.htm> (Доклад Правозащитного центра общества «Мемориал»: Нарушение прав человека в ряде районов Азербайджанской Республики в период с конца апреля по начало июня 1991 г.).

<sup>16</sup> «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի, 1991 թ.:

պաշտպանություն ԽՍՀՄ ժողպատգամավորների արտահերթ համագումար հրավիրելու ՀՀ Պերագույն խորհրդի պահանջի: Լենինգրադի խորհրդի 8-րդ նստաշրջանում ընդունվեց ՌՍԴԽՀ ժողովրդական պատգամավորների համագումարին ուղղված դիմում, որով վճռականորեն դատապարտվեց քաղաքական հակամարտությունների լուծման նպատակով բանակի օգտագործումը: Մայիսի 18-ին Լենինգրադի Նևսկի պողոտայում պիկետ կարգվեց, որի կազմակերպիչներն էին քաղաքի մի շարք հասարակական կազմակերպություններ և հայ համայնքը: Կազմակերպվեց ստորագրահավաք ի պաշտպանություն Հայաստանի Պերագույն խորհրդի պահանջների<sup>17</sup>:

Մայիսի 16-ին Լատվիայի Հանրապետության Պերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց հայտարարություն, որով Պետաշեն-Մարտունաշենում, Ոսկեպարում կատարվածը բնութագրեց որպես ցեղասպանություն: Լատվիայի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Ղայնիս Իվանսը հայտարարեց. «ԽՍՀՄ-ի վարած քաղաքականության էությունն է. չլինի Ղարաբաղը, չի լինի և Ղարաբաղի հիմնահարցը»<sup>18</sup>: Մայիսի 17-ին ԱՄՆ սենատը միաձայն որոշում ընդունեց՝ դատապարտելով Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի հայ բնակչության դեմ ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի իշխանությունների սանձազերծած հանցագործությունները: Որոշման մեջ դատապարտվում էին Լեռնային Ղարաբաղում և հարակից հայկական բնակավայրերում անմեղ մարդկանց, կանանց և երեխաների վրա կատարված հարձակումները, ռազմական ուժի լայնածավալ կիրառումը, ինչպես նաև ՀՀ արևելյան և հարավային սահմաններին անզեն բնակչության գնդակոծումները և կոչ էր արվում վերջ տալ շրջափակմանը,

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, 8, 21 մայիսի 1991 թ.:

<sup>18</sup> "BNS-Baltic News Service", 16 May 1991.

ուժի գործադրման մյուս ձևերին, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂԻՄ-ի դեմ ուղղված ահաբեկչությանը<sup>19</sup>: Արցախում խորհրդային զինված ուժերի և Ադրբեյջանի ղեկավարության սանձազերծած ցեղասպանությունը դատապարտող բաց նամակով ԱՄՆ-ի պրեզիդենտին դիմեց հայտնի իրավաբան, մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Բոգորազը: Խորհրդային բանակի գործողությունները դատապարտող հայտարարություններով և նամակներով հանդես եկան նաև Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը, Մարսելի քաղաքապետը, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոլան Դյուման և ուրիշներ:

1992 թ. փետրվարին ԵԱՀԽ միջնորդական առաքելության փաստահավաք խմբի տարածաշրջան առաջին այցելությունից հետո՝ փետրվարի 28-ին, միջնորդական առաքելության հրապարակած զեկույցում մասնավորապես նշվում էր. «1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին իրավիճակը հատկապես սրվեց, երբ խորհրդային բանակը Ադր. ՆԳՆ ստորաբաժանումների օգնությամբ տարածաշրջանի շատ գյուղերից տեղահանեց հայերին: Տեղահանությունն իրականացվեց առանձնահատուկ դաժանությամբ»<sup>20</sup>:

Ինչպես տեսնում ենք, «Օղակ» ռազմական գործողության օրերին միջազգային լրատվամիջոցները լուսաբանել և իրենց արդարացի գնահատականն են տվել այդ ողբերգական իրադարձություններին: Այն արժանացել է նաև առաջադեմ գործիչների դատապարտմանը:

---

<sup>19</sup> Տե՛ս <http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c102:S.RES.128>. «Հայաստանի Հանրապետություն», 24 մայիսի 1991 թ.:

<sup>20</sup> Committee of Senior Officials-CSO, Journal No. 2, Annex 1, Seventh Committee on Senior Officials meeting, Prague, 27-28 February 1992. <http://www.nkr.am/en/statements/116/>

## ОТЗЫВЫ МЕЖДУНАРОДНОГО СООБЩЕСТВА И ПРЕССЫ О ВОЕННОЙ ОПЕРАЦИИ “КОЛЬЦО”

### РЕЗЮМЕ

В конце апреля – начале мая 1991 года специальные отряды милиции (ОМОН) Министерства внутренних дел Советского Азербайджана, при поддержке войск МВД СССР, начали крупномасштабную карательную операцию “Кольцо”. Суть операции заключалась в изгнании армянского населения из Шаумяновского района и Нагорно-Карабахской Автономной Области.

События, происходившие в ходе операции “Кольцо” нашли отражение в документах международных организаций, стали предметом слушаний в Комитете по правам человека Верховного Совета Российской Федерации и получили оценку в резолюциях Европарламента и Сената США.

Тем не менее, совершенные в ходе операции “Кольцо” преступления не получили должной политической и правовой оценки международного сообщества, а организаторы и исполнители не понесли должного наказания. Это в дальнейшем стало прецедентом для новых военных преступлений Азербайджана против мирного армянского населения, что в конечном итоге привело к полномасштабной войне.

INTERNATIONAL COMMUNITY AND MEDIA RESPONSES  
ON THE "RING" MILITARY OPERATION

SUMMARY

In late April - early May 1991, special police detachments (OMON) of the Ministry of Internal Affairs of Azerbaijan, with the support of the USSR Interior Ministry's troops, launched a large-scale punitive operation of *Ring*, the essence of which was to exile the Armenian population of the Nagorno-Karabakh Autonomous Oblast, the Shahumian region, and some regions of Northern Artsakh.

The events, which took place during the operation of *Ring*, were reflected in the documents of some international organizations, became a subject of hearings at the Human Rights Committee of the Supreme Soviet of the Russian Federation and got the corresponding assessment in the resolutions of the European Parliament and the U.S. Senate.

However, the crimes committed during the operation of *Ring* haven't got the proper political and legal assessment by the international community and their organizers and executors are still unpunished. This became a precedent for new military crimes and inhumane actions by Azerbaijan against the peaceful Armenian population, which turned into a full scale war.

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### *Ալիսա Դումիկյան*

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող

### *Արգիշտի Վարդանյան*

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

### *Արմինե Մելքոնյան*

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակից, ԵՊՀ աստվածաբանության ամբիոնի ասպիրանտ

### *Վրեժ Վարդանյան*

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր

### *Իրինա Հայուկ*

Ուկրաինա, Լվովի Արվեստի ազգային ակադեմիայի Արվեստի մենեջմենտի ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

### ***Դավիթ Թինոյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

### ***Նարինե Երանոսյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ավագ լաբորանտ, հայցորդ

### ***Գայանե Սողոմոնյան***

ԵՊՀ Մամուլի պատմության և տեսության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու

### ***Մյասնիկ Ետոյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ասպիրանտ

### ***Մանե Կոնինյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ լաբորանտ, հայցորդ

### ***Արծրուն Հովհաննիսյան***

ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար, ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ



### ***Լիլիթ Հովհաննիսյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ***Գագիկ Ժամհարյան***

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարանի ուսուցիչ, ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

### ***Խաչատուր Ստեփանյան***

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

### ***Լիլիթ Մակարյան***

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

### ***Համո Սուքիասյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

### ***Կարեն Խաչատրյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, առաջատար գիտաշխատող, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ***Հովհաննես Ալեքսանյան***

ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

### ***Իրինա Բարսեղյան***

Հայաստանի հանրային ռադիոյի լրագրող, ԵՊՀ հայցող

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՇՆԱՏՈՂՆԵՐԻ  
2010–2012 ԹԹ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թ.

Ամիրջանյան Հ. Հ., Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 163 էջ:

Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հողվածների ժողովածու), խմբ.՝ Կ. Հ. Խաչատրյան, Ա. Վ. Մաղալյան, Հ. Կ. Սուքիասյան, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 120 էջ:

Արծրունի Գրիգոր, Հրապարակախոսական հատընտիր, աշխատասիրությամբ՝ Լ. Գևորգյանի, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 337 էջ:

Բախչինյան Ա. Հ., Հայությունը սկանդինավյան երկրներում: Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 280 էջ:

Բարխուդարյան Վ. Բ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես – XX դարի սկիզբ), Եր., ԳԱԱ «Գիտություն», 420 էջ:

Բոյաջյան Հ. Ս., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 208 էջ:

Խաչատրյան Աստվածատուր, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Ա. Վիրաբյան, Ս. Միրզոյան, Հայաստանի ազգային արխիվ, ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., 287 էջ:

Խաչատրյան Վ. Ն., Հայոց հին պատմության հարցեր (ակնարկներ հայոց հին պատմության), Եր., Նաիրի, 40 էջ:

Կարապետյան Մ. Լ., Ռուսական կայսրության բանակի հայ զորապետերի, հայկական կազմավորումների և Հայաստանի Հանրապետության ռազմական պատմության աղբյուրագիտական ուրվագծեր (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 140 էջ:

Կիրակոսյան Գ. Լ., Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը XIX դարի 80–90-ական թվականներին, Եր., ԳԱԱ «Գիտություն», 228 էջ:

Հակոբյան Ա. Մ., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., ԳԱԱ «Գիտություն», 339 էջ:

Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), հ. 11, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 365 էջ:

Մելիքեան Վ. Հ., Հայկական պահանջատիրություն. Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, Եր., «Զանգակ-97», 120 էջ:

Մելիքյան Վ. Հ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի զործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 264 էջ:

Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխատասիրությամբ՝ Ա. Մաղալյանի, Եր., ԳԱԱ «Գիտություն», 168 էջ + 32 էջ ներդիր:

Զավախքը Հովհաննես Մկրտչյանի հուշերում: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Մելքոնյանի, կազմող և խմբագիր՝ Լ. Հ. Մկրտչյան, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 157 էջ:

Սահակյան Ռ. Օ., Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թ. և ՀՅ Դաշնակցությունը, Եր., «Հայ Դատ» հիմնադրամ, 72 էջ:

Սարգսյան Ս. Թ., 1885–1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 120 էջ:

Ստեփանյան Գ. Ս., Բաքվի նահանգի հայությունը ժԹ դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 234 էջ:

Վարդանյան Վ. Ս., Գրիգոր Նարեկացին և հայրենի Վասպուրական աշխարհը, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 149 էջ:

Арутюнян К., Литвин А., Армяне-герои Советского союза в боях за Беларусь (1941–1945), Минск, 63 стр.

Арутюнян К. А., Участие армянского народа в Великой Отечественной войне (1941–1945), Ер., “Зангак-97”, 144 стр. + 20 стр. илл.

Марукян А. Ц., Проблема Геноцида армян в современной геноцидологии, Ер., 79 стр.

Мелконян Э. Л., Армянский всеобщий благотворительный союз: неоконченная история, Ер., “Тигран Мец”, 485 стр.

Les massacres des Arméniens de Marache en 1920 (Recueil de documents), Documents réunis et présentés par Varoujean Poghosyan, Erevan, Akad. nat. d.s. de la RA IH, 163 p.

## 2011 թ.

Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ. – XX դ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Հայրապետյանի, Եր., ԳԱԱ «Գիտություն», 271 էջ:

Ալեքսանյան Հ. Ս., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 221 էջ:

Աճյան Մեսրոպ արքեպիսկոպոս, Կենսամատենագիտություն, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 216 էջ:

Թինոյան Դ. Ֆ., Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ., Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 195 էջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար). փաստաթղթեր, կազմող՝ Հ. Բ. Աբրահամյան, Եր., ԳԱԱ «Գիտություն», 196 էջ:

Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում: «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2010 թ. մայիսի 14-16-ը, Եր., Մուղնի, 348 էջ:

Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), հ. 12, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 272 էջ:

Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Եր., «Զանգակ-97», 704 էջ + 24 էջ ներդիր:

Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Եր., «Զանգակ-97», 800 էջ + 24 էջ ներդիր:

Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Հ. Խաչատրյան, Հ. Բ. Աբրահամյան): Առաջաբանը՝ Կ. Հ. Խաչատրյանի, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 175 էջ:

Մելքոնյան Ա. Ա., Կենսամատենագիտություն, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 80 էջ:

Մելքոնյան Ա. Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 556 էջ:

Մեծ Եղեռն. դատապարտումից հատուցում (հողվածների ժողովածու), խմբ.՝ Ս. Ս. Ստեփանյան, Ա. Յ. Մարուքյան, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 106 էջ:

Պողոսյան Բ. Պ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991–2007 թթ., Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 78 էջ:

Ստեփանյան Գ. Ս., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 650 էջ:

Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., сост. и пер. с англ. Г. Г. Махмурян, ред. В. Н. Казакецян, Ер., Институт истории НАН РА, 560 стр.

Арутюнян К. А., Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда (10 июля 1941 г. – 9 августа 1944 г.), Ер., “Гитутюн” НАН РА, 172 стр. + 1,5 п.л. илл.

Погосян В. А., В окружении историков (сборник статей и рецензий), отв. ред. А. В. Чудинов, Ер., “Эдит Принт”, 264 стр.

## 2012 թ.

Թաջիրյան Է. Խ., Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17–18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 115 էջ:

Խաչատրյան Վ. Ն., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում: Տեղագրական և ստուգաբանական քննություն, Եր., «Նաիրի», 180 էջ:

Խասիոտիս Իոաննիս Կ., Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876–1996), թարգմ.՝ Հ. Ս. Բարթիկյան, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 65 էջ:

Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), հ. 13, Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 338 էջ:

Հարությունյան Հ. Մ., Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ., Եր., ԳԱԱ «Գիտություն», 433 էջ:

Հովհաննիսյան Գ. Հ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915 թթ.), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 352 էջ:

Սարուխանյան Ն. Ս., Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին, Եր., ԳԱԱ «Գիտություն», 80 էջ:

Սուքիասյան Հ. Կ., Երրորդ գյուղից մինչև Երևանի Սիլիկյան թաղամաս (պատմության, տնտեսության, մշակույթի էջեր), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 208 էջ:

Арутюнян К. А., Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов, Ер.: Институт истории НАН РА, 142 стр.

Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений. Сб. статей и материалов, составители: К. Хачатрян, О. Алексанян, редактор К. Хачатрян, Ер., Институт истории НАН РА, 224 стр. + 4 стр. илл.

Магалян А. В., Арцахские меликства и меликские дома в XVII–XIX вв., Ер., “ВМВ-ПРИНТ”, 240 стр. + 32 стр. илл.

Khosroeva A. R., Assyrian Genocide During World War I, Center for Assyrian Genocide Studies, Chicago, 80 p.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղորդում ՀՀ զԱԱ պատմության ինստիտուտի երիտա- սարդ գիտաշխատողների խորհրդի XXXIII գիտական նստաշրջանի մասին .....	4
<b>Յուրի Սուվարյան</b> Ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի ծննդյան 85-ամյակի առթիվ .....	7
<b>Աշոտ Մելքոնյան</b> Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան (ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 65-ամյա հոբել- յանների առթիվ) .....	9
<b>Վլադիմիր Բարխուդարյան</b> Խորհուրդներ երիտասարդ գործընկերներիս .....	12

## ՀՈՂԱԾՆԵՐ

<b>Ալիսա Դումիկյան</b> Հայաստանին վրացիների կողմից տրված «Սոմխիթ» անվանան հարցի շուրջ և XIX դ. ֆրանսիացի հայագետ- ների մոտեցումները .....	18
<b>Արգիշտի Վարդանյան</b> Կամբեճան գավառի պատկանելիության հարցի շուրջ .....	33
<b>Արմինե Մելքոնյան</b> Դավիթ Անհաղթին վերագրվող երկերի վավերականու- թյան հարցի շուրջ .....	46
<b>Վրեժ Վարդանյան</b> Վերահսկողական գործառույթների իրականացումը Հայաստանում V–XIV դդ. ....	57
<b>Իրինա Հայուկ</b> Խաչքարերի սրբազան խորհրդանիշները .....	84

**Դավիթ Թինոյան**

Կիլիկիո կաթողիկոսության երկփեղկումը Խաչատուր  
Գաղատացու աթոռակալման շրջանում ..... 104

**Գայանե Սողոմոնյան**

Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից ..... 116

**Նարինե Երանոսյան**

Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի  
լուսաբանումը եգիպտական «Ալ-Աիրամ» օրաթերթում  
1894–1896 թվականներին ..... 128

**Մյասնիկ Եսոյան**

Կիլիկիահայության 1909 թ. կոտորածների լուսաբանումը  
սիրիական «Ալ-Թակադդում» թերթում ..... 142

**Մանե Կոնինյան**

Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման  
գործընթացի սկզբնավորումը ..... 155

**Արծրուն Հովհաննիսյան**

Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի  
սպառազինությունը ..... 170

**Լիլիթ Հովհաննիսյան**

Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական  
հարցում Սան Ռեմոյի և Լոնդոնի խորհրդաժողովների  
միջև ընկած ժամանակահատվածում ..... 184

**Գագիկ Ժամհարյան**

Առօրեականության պատմության բովանդակությունն  
ու խնդիրները ..... 195

**Խաչատուր Ստեփանյան**

«Պրոմեթևս» շարժման հետ Հայ հեղափոխական դաշնակ-  
ցության ունեցած առնչության հարցի շուրջ ..... 213

**Լիլիթ Մակարյան**

Հայաստանի օգնության կոմիտեի համագործակցությունը  
հայրենակցական միությունների հետ ..... 230

**Համո Սուքիասյան**

Հայկական ԽՍՀ Շահունյանի շրջանը 1939–1958 թթ. .... 241

**Կարեն Խաչատրյան**

Խորհրդային Հայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերության առաջնեկի՝ թիվ 447 գործարանի հիմնադրման և շահագործման պատմությունից ..... 262

**Հովհաննես Ալեքսանյան**

Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների ..... 280

**Իրինա Բարսեղյան**

Միջազգային հասարակայնության և լրատվամիջոցների արձագանքը «Օղակ» ռազմագործողությանը ..... 305

**Հեղինակների մասին** ..... 318

Պատմության ինստիտուտի գիտաշխատողների 2010–2012 թթ. հրատարակություններ ..... 324

## СОДЕРЖАНИЕ

Сообщение о XXXIII научной сессии молодых научных сотрудников Института истории НАН РА, посвященной 85-летию академика НАН РА В. Б. Бархударяна .....	4
<i>Юрий Суварян</i>	
К 85-летию со дня рождения академика В. Б. Бархударяна .....	7
<i>Ашот Мелконян</i>	
Академик Владимир Бархударян (к 85-летию со дня рождения и 65-летию научно-педагогической деятельности) .....	9
<i>Владимир Бархударян</i>	
Советы молодым коллегам .....	12

## СТАТЬИ

<i>Алиса Думикян</i>	
К вопросу о названии “Сомхити” данного Армении грузинами и подходы французских арменоведов XIX века .....	18
<i>Аргишти Варданян</i>	
К вопросу о принадлежности провинции Камбечан .....	33
<i>Армине Мелконян</i>	
К вопросу о подлинности трудов приписываемых Давиду Анахту .....	46
<i>Вреж Варданян</i>	
Осуществление контрольных функций в Армении в V–XIV веках .....	57
<i>Ирина Гаюк</i>	
Сакральная символика хачкаров .....	84
<i>Давид Тиноян</i>	
Раскол в Киликийском католикосате в правление Хачатура Галатаги .....	104
<i>Гаяне Согомонян</i>	
Арпиар Арпиарян – корреспондент газеты “Мшак” .....	116

<b><i>Нарине Ераносян</i></b>	
Освещение проблемы реформ в Западной Армении в египетской газете “Аль-Ахрам” в 1894-1896 годах .....	128
<b><i>Мясник Есоян</i></b>	
Освещение истребления киликийских армян 1909 г. в сирийской газете “Аль-Такаддум” .....	142
<b><i>Мане Конинян</i></b>	
Зарождение процесса международного осуждения Геноцида армян .....	155
<b><i>Арицун Оганисян</i></b>	
Вооружение вооруженных сил Первой Республики Армения ..	170
<b><i>Лилит Оганисян</i></b>	
Политика Великобритании в Армянском вопросе в период между конференциями в Сан-Ремо и Лондоне .....	184
<b><i>Гагик Жамарян</i></b>	
Содержание и задачи истории повседневности .....	195
<b><i>Хачатур Степанян</i></b>	
К вопросу о связи армянской революционной федерации Дашнакцутюн с движением “Прометей” .....	213
<b><i>Лилит Макарян</i></b>	
К вопросу о сотрудничестве комитета помощи Армении и земляческих союзов .....	230
<b><i>Амо Сукиасян</i></b>	
Шаумяновский район Армянской ССР в 1939–1958 годах .....	241
<b><i>Карен Хачатрян</i></b>	
Из истории основания и эксплуатации завода № 447 – первенца военнооборонной промышленности Советской Армении .....	262
<b><i>Ованес Алексанян</i></b>	
Армянское население союзных республик по данным Всесоюзной переписи населения СССР 1970 года .....	280
<b><i>Ирина Барсесян</i></b>	
Отзывы международного сообщества и прессы о военной операции “Кольцо” .....	305

<i>Об авторах</i> .....	318
Научные издания работников Института истории НАН РА за 2010-2012 года .....	324

## CONTENTS

The reports of the 33rd Scientific Conference of the Young Scientific Workers of the Institute of History of NAS RA (dedicated to the 85th birth anniversary of Academician of NAS RA V. B. Barkhudaryan) .....	4
<i>Yuri Suvaryan</i>	
To the 85 <sup>th</sup> birth anniversary of Academician V. B. Barkhudaryan .....	7
<i>Ashot Melkonyan</i>	
Academician Vladimir Barkhudaryan (to the 85 <sup>th</sup> birth anniversary and the 65 <sup>th</sup> scientific-pedagogical activity) .....	9
<i>Vladimir Barkhudaryan</i>	
Advice to young colleagues .....	12

## ARTICLES

<i>Alisa Dumikyan</i>	
On the question of the name "Somkhiti" given to Armenia by Georgians and the approaches of the 19 <sup>th</sup> century French Armenologists .....	18
<i>Argishti Vardanyan</i>	
On the problem of Kambechan province belonging .....	33
<i>Armine Melkonyan</i>	
On the problem of authenticity of the works attributed to David the Invincible .....	46
<i>Vrezh Vardanyan</i>	
Realization of control functions in Armenia in the 5 <sup>th</sup> -14 <sup>th</sup> centuries .....	57
<i>Iryna Hayuk</i>	
Sacral symbolism of Khachkars .....	84
<i>Davit Tinoyan</i>	
The schism in the Cilician catholicosate during the reign of catholicos Khachatur Galataci .....	104

<b><i>Gayane Soghomonyan</i></b>	
Arpiar Arpiaryan – "Mshak's" correspondent .....	116
<b><i>Narine Yeranosian</i></b>	
The elucidation of the problem of reforms in Western Armenia in Egyptian periodical "Al-Ahram" (1894–1896) .....	128
<b><i>Myasnik Yesoyan</i></b>	
Elucidation of the extermination of Cilician Armenians in 1909 in the Syrian newspaper "Al-Takkadum" .....	142
<b><i>Mane Koninyan</i></b>	
The beginning of the process of international condemnation of the Armenian Genocide .....	155
<b><i>Artsrun Hovhannisyan</i></b>	
The weaponry of the Armed forces of the First Republic of Armenia .....	170
<b><i>Lilit Hovhannisyan</i></b>	
The policy of Great Britain in Armenian question in the period between San Remo and London Conferences .....	184
<b><i>Gagik Zhamharyan</i></b>	
Content and problems of everyday life history .....	195
<b><i>Khachatur Stepanyan</i></b>	
On the issues of relation of the Armenian Revolutionary Party Dashnaktsutyun to the movement "Prometheus" .....	213
<b><i>Lilit Makaryan</i></b>	
On the problem of cooperation of Armenian Relief Committee with unions of compatriots .....	230
<b><i>Hamo Sukiasyan</i></b>	
The Shabumyan region of Armenian SSR in 1939–1958 .....	241
<b><i>Karen Khachatryan</i></b>	
From the history of formation and operating of the Plant number 447 – the firstborn of defence (military) industry of Soviet Armenia .....	262
<b><i>Hovhannes Aleksanyan</i></b>	
The Armenian population of the Soviet Republics according to the 1970 census data .....	280



***Irina Barseghyan***

International community and media responses on the "Ring" military operation .....	305
<i>About the authors</i> .....	318
The scientific publications of the researchers of the Institute of History of NAS RA in 2010-2012 .....	324

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«ՀԱՍ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» հանդեսին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Arial Armenian, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

*«Հայոց պատմության հարցեր» հանդեսի բոլոր համարների էլեկտրոնային տարբերակը տես*

<http://serials.flb.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

**THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA**  
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

**ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ**  
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

13

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 12.12.2012 թ.:  
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

INSTITUTE OF HISTORY OF NAS RA

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
РА, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4  
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>

